

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ ԵՐԵՒՈՅԹԸ

Այ գրականության «Տոհմածառ»ին վրայ փայլող աստղ մըն է Վեհանոյ թեքեանի անունը, որ իր ստեղծագործություններով կը պատկերէ խօսող հոգեվիճակներու «Բազմածուփ աշխարհ»ի մը մանրանկարը: Յոն տողերը սաղմոսներով հիւսուած «ուռկան»ներ են մեզ ներքաշող մինչեւ «Կիզակետ»ը բանին, մինչեւ ճշմարտութիւնը եսին: Յոն տողերը վահան են ամրացնող, նուաճելու՝ լեզու, սփիւռք եւ հայրենիք:

Թեքեանի անունը ինքնին եղաւ «Նշանագիր» մը, յիսուն տարուան վրայ երկարող շարժումի մը, բանաստեղծութենէն արձակ, արձակէն՝ բանաստեղծութիւն: Եղաւ գեղեցիկ այգաբաց մը գրականության, որ վաթսունականներու վերջաւորութեան եկաւ նորոգելու հին լեզուին պատկերներն ու բառերը, փունջ մը միջերկրականեան արեւով, ափ մը պէյրութեան լաւատեսութեամբ, ապագայի երագով բարախող սփիւռքեան սիրտով ու բառերու բոյրերուն հանդէպ անսահման սիրով: «Քսանամեայ ապրիլը աչքերուն» եւ ողջակիզուած հայուհիներու կանչը ականջներուն, կրցաւ ետեւ ձգել՝ ջարդ, պատերազմ, որբութիւն եւ տուններու երգ: Իրմով բացուողը աթոմական դարն էր, խրոխտ ինքնավըստահութեամբ մը՝ անպարոյկ եւ պարզ պատասխաններով:

Իր մէկ աչքը հայրենիքին սեւեռելով հանդերձ, Սփիւռքի վաւերականութիւնը հաստատող անկեղծ ու խրոխտ հոգին եղաւ Վեհանոյ թեքեանը, արեւմտահայերէնի իրաւութիւնն ու կենդանութիւնը ամրագրող գրիչը: Ան լեզուին տուաւ ինչ որ ուներ իր մէջ՝ սէր, աղօթք, մայրութիւն, կարօտ, ոգի ու վստահութիւն, որոնց շնորհիւ լեզուն շնչեց ու շրջագայեցաւ իր ընթերցողներուն մէջ ու դարձաւ «յիշողութիւնը ուժին», դարձաւ հայրենիք եւ գիտակցութիւն:

Ահաւասիկ ինչո՞ւ այսօր կանգնած ենք Վեհանոյ թեքեան երեւոյթին առջեւ:

Ահաւասիկ ինչո՞ւ «Բագին»ի այս բացառիկ թիւը կը նուիրենք գրողին յիսնամեայ վաստակին:

Բազմը

ՅՈՒՆԻՍԿՈՒԼ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019

ԾԸ. ՏԱՐԻ, ԹԻԷ 3 - 4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վեհանոյ թեքեան երեւոյթը Խմբագրական.....	1
Մայրը կը սպասէ որ սիրտը ժպտի Վեհանոյ թեքեան.....	5
Բառերու, մտածուի եւ սրբազան հարսնութեան մասին Յակոբ Կիւլլիւճեան	11
Ինքնակենսագրութիւն Վեհանոյ թեքեան	32
Վեհանոյ Մարուշ Երամեան	39
Սնունդը անդունդին ՄԷջ Միրնա Տուզճեան	43
Հայոց պատմութիւն Վեհանոյ թեքեան	49
Վեհանոյ թեքեան Յարութիւն Պերպերեան	58
Վեհանոյ թեքեան.«Մէկ բան յստակ է՝ դիմակ գործածած չեմ» Հենրիկ Էդոյեան	64

Խմբագիր | Սոսիա Զիլճեան-Աճեմեան
Խմբագրի օգնական | Արին Զեքիճեան
Զեւաւորում եւ էջադրում | Անոյշ Ակսերեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մարուշ Երամեան
Վիգէն Թիւֆէլքճեան
Յակոբ Կիւլլիւճեան
Աւետիս Հաճեան
Վարդան Մատթէոսեան
Շաղիկ Սկրտիչեան

Արքմենիկ Նիկողոսեան
Արամ Պաչեան
Սեւան Տէյիմէնճեան
Խաչիկ Տէր Ղուկասեան
Միրնա Տուզճեան
Յարութիւն Զիւրքճեան

ԲԱՅԱՌԻԿ ԹԻԻ

Նուիրուած՝ Վեհանոյ թեքեանի գրական գործունէութեան յիսնամեակին

Սփիւռք Վեհանոյ թեքեան	70
Փոխաբերութիւնը՝ սեփական առասպելի սպասին Յարութիւն Քիւրքնեան	72
Անտիպ բանաստեղծութիւններ Վեհանոյ թեքեան	89
Երեք նկարի պատմութիւն Վեհանոյ թեքեան	97
Սաղմոս Զ Վեհանոյ թեքեան	102
Կիները՝ Վեհանոյ թեքեանի էջերուն	105
ընդմէջէն Անի Աստուրեան	
Վեհանոյ թեքեան արձակագիր Րաֆֆի Աճեմեան	115
Միւռնոյի եւ աստղի պատմութիւն Վեհանոյ թեքեան	127
Գեղագիտական հաճոյքի ճանապարհին Վարդան Մատթէոսեան	133

Հրատարակութիւն՝ Համազգայինի Կեդրոնական վարչութեան

Հասցէ՝

Պուրճ Համուտ
Շաղղոյեան կեդրոն, Բ. յարկ
E-mail: pakin@hamazkayin.com
Հեռ. 00961 1 241072

Տպագրութիւն՝

Համազգայինի
«Վահէ Սեթեան» տպարանի

Յրուումի կեդրոն՝

Համազգայինի Գրատարած,
Շաղղոյեան կեդրոն,
Պուրճ Համուտ

Հեռ. (01) 241263/4

Ֆաքս. (01) 260329

Փոստարկդ. 80 1096 Պուրճ Համուտ

E-mail: print@hamazkayin.com



Վեհանոյ թեքեան իր մօր հետ

ՄԱՅՐԸ ԿԸ ՍՊԱՍԷ ՈՐ ՍԻՐՏԸ ԺՊՏԻ

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Յիշատակը լքուած քնար է

հնձուած դաշտի մէջ:

Կեանքը երկար է, յիշողութիւնը՝ աւելի երկար
Քունը երկար է, երազը՝ աւելի երկար:
Երբեմն յիշողութիւնը կը ջնջուի, կը կծկուի կեանքը,
Երազը կը ջնջուի, կը կծկուի քունը.
Պատուհանը կ'ընդարձակուի ու չես գիտեր թէ

նոր տեսած ես այս պատուհանը:

Բայց կ'երեւնան
Լուսոյ առաւօտ եւ թիթեղ մը կաթ
Դգալ մը ձկանիւղ՝ դարոց չգացած
Դալար ծառուղիներ, դարանակալ ոգի,
Ոչ ծառ, ոչ թուփ, ոչ իսկ ճիւղ մը կը ճեղքուի կայծակէն:

Ցաւ կամր, չկամր. չեմ գիտեր:
Շաղկաթափ մանկութիւն
Շողակաթ ու երկնահուպ.
Ցօղը կ'իյնար Աստուծոյ մատներուն մէջէն
Արեգակը կը յայտնուէր կը խմէր ցօղը,
Առտուան լոյսը՝ հալեցուած սպիտակ ոսկի էր:

Փառք կու տաս որ կ'ապրիս դեռ
Եւ կրնաս յիշատակներու մերկութիւնը գծել:

Յիմա յիշատակը
Բազմաշերտ խէժ է կոճղէն ծորած, անոր փակած:

Բուն պատմութիւնը հինգած տերեւներն են
հին գիրքերու մէջ.

Ձմեռնամուտի օճախ
Մանդալի ածուխ
Պատուհանին տկտկացող կարկուտ.
Մեսրոպ Մաշտոց ձեռքը կուրծքին՝ երկիւղահար,
Յսկայ սնտուկը ծածկող գորգիկին վրայ
գոյգ մը եղնիկ բարակ ականջներով.
Քանդոր է մօր յիշատակի հպման թեթեւութիւնը
Երկինքը կը սպասէ աչքերուն մէջ
Յոգելոյս գարուն է
Ափերուն մէջ ծիածանը չի մարիր,
Եղծագերծ ու խաղաղ ներաշխարհ
Կարեկից, անխորտակելի Էութիւն:

Տունը՝ հովերէն թեթեւ
Մարգրիտէ աւելի սպիտակ
Մշտահմայ, բաբախուն երակ
Ամէն բան կը հասկնայ, կը գթայ,
Միակ կարծրը՝ մահն է:
Աս ինչ բարձր ձայն ունի առաստաղը
Ամբողջ ըրածը՝ լապտեր մը գրկած է.

ուզածը ինչ է:

Տունը անմահ է, մահը՝ մահկանացու:

Մօր ձայնը՝ կեանքի ուղի է:

Երբ կեանքդ կը գործածես
Չի ծերանար երկինքը:

Դառնալ լեռը՝ որ իր բարձրակէտը կը պահպանէ:
Լռութիւնը լեզուի մէջ աւազի հատիկներ կը պահէ
Յարթել ճամբան բազմաձայն լռութիւններու:

Պատուհանէն հոսող մայրամուտին մէջ նստած
Դալար խոտի եւ աղօտած մշուշի միջեւ
Նորայայտ ծերութիւնը
շաղը կը քաշէ ուսերուն.
Աչքերուն մէջ մոմեր

Փետուրներ լռութեան
 Խլուած ու խախտած

պատկերներ կու գան քով-քովի.

Իր թելերը ծայրէծայր կը բանար արեւագայր
 Խնդուքը կը հոսէր տան պատերէն,
 Տունին թարմաթարմ շունչը
 Նորածինին ճիչը
 Չաւակներուն աչուկներու փայլքը
 Թաթիկները, տոտիկները,
 Յայկի ու Բէլի պատմութիւնը
 Սասունցի Դաւիթն ու Ծովինարը
 Երիտասարդ մօր երագներու կթկթօցը
 Խոհանոցը աշխատած պահուն՝ հոգեւոր երգերը
 Ինչ եղաւ մանկական բարձրաթոռը մարանի մէջ շարուած.

ամն ալ հրկիզուեցաւ:

Կը տեսնես հարկաւ, սերկելիլի անուշի մէկ շիշ կայ միայն
 տասի փոխարէն,

Յօդացաւին համար հաստ գուլպաներ հագած՝ կաթնապուր կ'եփէ,
 Ոչ թէ փոքր ամաններու, այլ՝
 Մեծ փայրէքսի մը մէջ կը լեցնէ, սառնարան կ'ուղղուի:

Ժամանակը՝ հողաթափ՝ կը մաշի.
 Այլեւս կիրակիները կու գան
 Միայնակ թգենիի տակ

տնտնացող կրիայի նման:

Ոչինչ կը փոխուի, բացի սա պատին փակած մարդէն
 որ չի դիտեր, կը նայի
 Կը յիշէ քեզ միշտ
 Գունաւոր երաժշտութիւնը որ ծննդավայրիդ մէջ թողուցիր,
 Երբ լուսինը լճակին սիրտը դարձաւ եւ դադրեցաւ բաբախելէ
 Աստղերը ինկան երախին մէջ ծովուն
 Առաջ երախ չէր, արեւ էր ճռուողին:
 Ծիւղերը չորցեր են
 Ինչ պիտի ընես
 Բարայիկ-մարայիկ ծխանի ծուխ մնացեր է
 Ելլեմ հո՞ն երթամ.
 Յարցումը վիզը կ'երկարէ
 Ծովանկարի նաւու ցռուկի նման:

Շայլ կը ձգէ թիկնաթոռին

Կը քաշէ վարագոյրը

Բացակայութեան բացութիւնները զոցելու համար.

Բերնին մէջ ծանրութիւն մը կայ

ձայնը թեթեւ է

բայց դգայլը շատ ձայն կը հանէ.

Չաւակները, ամէն մէկը առանձին, ո՛ր գացին,

Ինչ կ'ընեն, ամէն բան լամ է:

Լռութեան պղպջակներ կու գան չորս կողմը

Զ'ելլեր աթոռէն որ պղպջակներ չնստին.

Յետոյ ձեռքերը մշուշ դարձած կը շոգիանան

Ու կոպերը կը փակուին:

Յոգին կը մոռնայ

օթեկ պտուղները

պայթած ռումբերը

Անշարժ խաչմերուկներու երկրաշարժը.

Ինչո՞ւ տակաւին՝ կը դողդղան մահացած տան ոսկորները

ճամբաներ կան եւ տուններ դողդոջուն թելերով.

ճակատագրի վրիպակ եւ անարիւն վիժում,

Բեկորներ ահաբեկ ու թեւաբեկ.

Լուսինը այլեւս կամաց-կամաց կը կակուղցնէ քարերը:

Յեռանալով ու աւելի հեռանալով՝ մօտեցայ

եւ իրարու կապկպեցի

Մօր վերմակը որ վախերս կը ծածկեր

Անանուխի թէյը

Եռանդուն կեանքի համով ճաշերը:

Պատառ մը սիրոյ կարօտ քաշեցի

Ումպ մը ժպիտի կարօտ մնացի,

Սակայն ժպտեցայ

Ընդամենը հինգ տասնամեակ ապրեցայ իր հետ

Սուտակ աչքեր, շուշանաթոյր դեմքով

Ձայնը մեղրագոյն

Կարօտցայ, կարօտցայ:

Ո՛ր, տայր ինձ, ուրախ արցունքներու մնացորդը

Օշարակի ժպիտ ու խօսքերու պաղպաղակ:

Ովկիանոսը կտրեր եմ ահա առանց թելը կտրելու:

Յակառակ որ վայրը տեղտեղ աղամանդներ զետեղեր է
 Եւ հակառակ որ երկար տասնամեակները յոկեր են զանոնք
 Ոսկորներուս մէջ մոմ մը կը վառի
 Ինչպէս չվառի, տեսայ արեւում, աւարում, հեռացում, գաղթութիւն.
 Տեսայ ինչպէս իր վերջին շունչը փչեց մայրս
 Ամայութեան մէջ, ամպերու մէջ միսմինակը կը քալէ
 Ես ետեւէն կ'երթամ.

Մամա, ըսէ ո՛ր
 Ըսէ մեղմաձայն
 Մինչեւ ո՛ր պիտի երթայ ժամանակը:

Ինչպէս որ լեռը իր հողը կը պահպանէ
 Միտքը՝ հրաբուխէ յոյսը
 Սիրտը՝ բազմաշերտ հաւատքը,
 Երեխաները իրենց մանկութիւնը,
 Դեռ աշուղ զանգակը չհեռացած
 Եկեղեցիներու երփնանկարները չդալկացած
 Կը հասնի վերջին քունը
 Եօթ հրեշտակներ տան մէջ իրենց թելերը հանած
 կ'երթեն եկեն
 Լռութիւնը կը մսի, կը դողդղայ
 Վաղը գիշեր դարձեալ կու գամ, կ'ըսէ, կ'երթայ.

Մեռած մոլորակ մը կը սկսի փայլիլ

Սիրելի կը նշանակէ մոմեր վառել
 Եւ թողուլ որ այդ մոմերը աղօթեն:



Գեղարդ

ԲԱՌԵՐՈՒ, ՄՏԱԾՈՒՄԻ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐՍՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՅԱԿՈՒԲ ԿԻԼԼԻԻՃԵԱՆ

Նախ եւ առաջ յօդուածի ընթացքէն անկախ սա հաստատումը, որպէսզի ան չկորսուի պարբերութիւններու յորձանքին մէջ ու կասկած չմնայ անոր կեդրոնական կարեւորութեան. Սփիւռքի վերջին յիսնամեակի լաւագոյն *մտածողները* պէտք է փնտռել ոչ թէ քաղաքագէտներու, հրապարակագիրներու եւ մասնագէտներու մօտ, այլ մէկ ձեռքի վրայ համրուող անուններու ցանկի մը մէջ, ուր մեծամասնութիւն կը կազմեն բանաստեղծները: Անոնցմէ է Վեհանոյ թեքեան: Իր քերթողական արուեստին, բառերուն, ընթերցողին պատճառած զգայութիւններուն եւ վայելքին ու ի վերջոյ գեղագիտական յատկանիշներուն վրայ կեդրոնանալը պէտք չէ գեղչէ հիմնական այն երեւոյթը, որ այնտեղ արտակարգօրէն ներկայ են նորարար (ինչպէս տիրական լեզուով հիմա կ'ըսեն՝ «սնտուկէն դուրս») մտածումը, հոսանքին ամբողջովին հակառակ ու հիմնաւորուած կեցուածքները եւ անոնց պատճառաբանութիւնը, եւ ընդհանրապէս *միտքի* փնտռութիւնը:

Երբ փոքր էի, կարդացեր էի Վեհանոյ թեքեանի *Կապոյտ Ապրիլը* իր յարաբերաբար աւելի դիւրամատչելի տողերով, ապա *Ուտրէն*, որմէ բացի բառերու իմաստէն եւ քերթուածներու առինքնող, արտակարգ կշռոյթէն, քիչ մը եւս նուազ բան հասկցեր էի յղացքային առումով: Անկէ ետք անմիջապէս կարդացի *Կիլակէտը*, որուն միտք բանին դեռ աւելի հեռու մնաց ինձմէ այդ տարիքին, դեռ պատանութեան չհասած, բայց եւ այնպէս կը յիշեմ զայն քանի մը անգամ կարդացած ըլլալս, այսօրուան յետահայեաց դատումով՝ հաւանաբար թօթափելու համար մինչեւ այդ ատեն ըրած ընթերցումներուս արդէն յոգնած լեզուն, վայելելու բառերու նորանշանակ գործածութիւնը, պատկերներու խիզախութիւնը եւ շարահիւստութեան թարմ, նորովի շունչը (ինչ որ չի նշանակեր թէ այն ատեն այդ բաները կրնայի սահմանել անկախ անոնց զգայարաններուս վրայ բանեցուցած հմայքէն): Մինչեւ այսօր ալ, երբ այլեւս ենթադրաբար շատ աւելի բան կ'ըմբռնեմ հոն երգուած տողերէն, այդ հատորը կը մնայ թեքեանէն նախասիրածս:

Գրականութեան մօտ եղող անձեր հեղինակի մը տարբեր գործերուն կը ծանօթանան եթէ ոչ օրը օրին, այլ գոնէ տարիներու կամ տասնամեակներու վրայ երկարող ժամանակամիջոցի մը ընթացքին: Տարբեր փորձառութիւն է սակայն

վերադառնալ անոնց քիչ մը աւելի խելահաս տարիքով ու հմտութեամբ, բան մը որ կրնայ այլազան տիպի արդիւնքներ ունենայ: Կարգ մը հեղինակներու պարագային այդ փորձը կրնայ զոջումի տանիլ ընթերցողը, երբ նախապէս փառաւորուած անուն մը, որուն քերթողական մեղեդին տասնամեակներով կը յամենար ընթերցողի մտքին մէջ, կարծէք կը սահի իր պատուանդանէն վար ու կ'անցնի մոռացութեան: Ուրիշ գրողներու պարագային կրնայ պատահիլ, որ ինչքան ալ դրական ու հիացական տպաւորութիւն կրած ըլլար ընթերցողը ժամանակի ընթացքին, դարձեալ անակնկալի գայ հոն եղած գաղափարներու նախապէս չնկատուած կշիռքին ու գրական լուծումներու գեղեցկութեան դիմաց: ՎեհանոյՅ Թեքեանի վերընթերցումն այս երկրորդ դասին կը պատկանի: Գիտէի, թէ Ի. դարու երկրորդ կէսի սփիւռքահայ գրականութեան տիրական երկու-երեք անուններէն մէկն էր իր գեղեցիկ գրիչով, եզակի բառապաշարով եւ արտայայտչականութեամբ, սակայն թերեւս ամբողջովին չէի արժեւորած եօթանասունէն ինիսունականներուն հրապարակ եկած իր գործերուն մէջ տեղ գտած փիլիսոփայական կայծերը, մտաւորական խորութիւնը, սփիւռքահայու, գրողի ու մարդու

Թեքեանի գրականութիւնը ոչ միայն հայերէն, այլ նաեւ հայ ու սփիւռքահայ ըլլալու վիճակին մասին է, այդ վիճակին մէջ զգացուածներն ու չխօսուածները բիրտդասնող:

տազնապները պատկերելու նորարար ձեւերու առանձնայատկութիւնը, կնոջ խնդիրները գեղագիտացնելու վարպետութիւնն ու այդ խնդրի հիմնական (ու շուկայի վրայ գրեթէ մենաւոր) տեղը իր գործին մէջ: Այդ պատճառով ալ, այս գրութեամբ պիտի փորձեմ ժամանակա-

գրական, հետեւողական, թեւ պարտադրաբար մասնակի ու արագ ընթերցում մը կատարել իր երկերուն. վերընթերցում ու հետեւաբար վերընկալում մը, վերըստին քաղում մը:

Թեքեանի գրականութիւնը ոչ միայն հայերէն, այլ նաեւ հայ ու սփիւռքահայ ըլլալու վիճակին մասին է, այդ վիճակին մէջ զգացուածներն ու չխօսուածները բիրտդասնող: Ան կը պատկանի այն փոքրամասնութեան, որ ըմբռնած է կամ կը յայտնատեսէ թէ ինչն է կորիզը անոր, որ հայ ժամանակակից ինքնութիւն կը կոչենք, եւ որ մեծխօսիկ «մենք ենք»ներէն շատ անդին՝ կը կայանայ գեղեցիկը ընկալելու, ապրելու եւ փոխանցելու ձեւի մը մէջ, եւ կը մարմնաւորուի այդ գեղեցիկը արտայայտելու գլխաւոր եղանակին՝ լեզուով կատարուած ստեղծագործութեամբ:

Կը խօսինք երկար շարք մը հատորներու մասին, որոնք մէջտեղ բերուած են արտակարգ ժուժկայութեամբ. գրողը մտասելեռում դարձուցած է խնայել կըրկնութիւնները ընթերցողին եւ գլխաւորաբար իր իսկ եզակիօրէն պահանջկոտ ականջին: Չտալ լոկ էջեր աւելցնելու համար: Չստեղծել եթէ ատիկա նորութիւն մը պիտի չըսէ, կամ նոր ձեւով մը պիտի չըսէ. այսինքն հաւատարիմ մնալ բանաստեղծութեան բնութեան, *բան, լոյս, լոկոս* ստեղծելու առաքելութեան, որ անշուշտ չէ, ինչպէս գիտնալու ենք, ոտանաւոր ըսուածը գրելը:

Այնուամենայնիւ, ժուժկալուծեամբ հանդերձ, հակառակ մայրութեան ու յարակից գրադումներու եւ մտատանջութիւններու բերած ծանրաբեռնումներուն, գրողը ընթերցողին առջեւ դրած է տասներեք հատոր, որոնցմէ երեքը իր կողմէ խմբագրուած հատընտիրներ են, վերադասաւորուած բովանդակութեամբ եւ աւելի շեշտուած կիզակէտով: Անոնք կ'երկարին 1969էն մինչեւ օրերս: Չորսը արձակ գրութիւններ են. պատմընուածքներ, պատումներ, ինչպէս նաեւ՝ վերլուծական ու մշակութային քննադատութեան կտորներ:

Առաջին գիրքը յատկանշականօրէն լոյս կը տեսնէ 1968-69ին, այսինքն 1918էն այսօր երկարող հարիւրամեակի ճիշդ մէջտեղը. իր ետին յիսուն տարի, իր առջեւ յիսուն տարի: *Կապոյտ Ապրիլի* մէջ քսանամեայ հեղինակը մէկտեղած է ոչ միայն պատանեկան սերերու շուրջ հիւսուած կտորներ, այլեւ քանիներ (օրինակ՝ «...Եւ իմ դիմանկարը»), որոնք սփիւռքի համար բնորոշ ժամանակաշրջան մը կը խտացնեն:

Յրապարակ եկող հատորը կը բացուի տասնութ տարեկանին գրուած բարեւոյ, ուր բանաստեղծական ձայնի փնտռտուքը տակաւին կրնայ յուշել պատանի գրողին ընթերցումներուն շունչը, ծանօթ դասականներէն մինչեւ այդ ժամանակի տիրական ոճերը՝ սեւակներն ու շիրագները.

.....

Չեմ գիտեր խօսքս իմաստուն ուղերձ
թէ պարզ մէկ շունչն է իննթ պարմանութեան...

-Շլէք, ծաղիկներ, ու բոյրը բերէք,
բիլ ու արփաւետ իմ կեանքի զարնան.

Եւ թող ձեր բոյրով, անոյշ, կենսաշող,
յորդին դեռ գալիք երգերս բոլոր...¹

Ոստրէի մէջ (1974) բանաստեղծական արուեստը, ոճը կը զարգանան. առաջին գիրքի կարգ մը տողերու մէջ ժամանակակից ազդեցութիւններ յիշեցնող դարձուածքները այստեղ կ'անհետին, ձայնը կը զօրանայ, քերթողական հնարքները կը բազմանան առանց պոռալու կամ նոյնիսկ իրենց գոյութիւնը բռնաբարօսիկ կերպով զգացնելու: Կը տեսնուի բաղաձայնոյթներու բացառիկ տողանցք, բոլորագրաւ կշռոյթ: Դեռ աւելի կը խտանան, թռիչք կ'առնեն պատկերները («*Ովկիանոսը կ'ոռնայ ոստրէի բարակ պատերէն իլպթակ գիշերուան մէջ*»): «*վանքեր կան մերկ բաղերու նապանքով*»):

¹ «Ապրիլ», *Կապոյտ Ապրիլ*, 10:

Սփիւռքի երազն ու տազնապը կ'արտայայտուին շրջուած սահմանումով մը, «իմ երկիրս տխուր է քանի որ ես այդտեղ չեմ», որ ունի Գրիգոր Պըլտեանի 2005ին կատարած միւս շրջումին բնոյթը:² Այդ քերթուածէն³ «Անժողովուրդ լեզու»էն ընկալելի է այն, որ լեզուն կը ստանձնուի որպէս կորիզ, ու թէ ժողովուրդն է կորսուողը, ոչ թէ լեզուն. *Ոստրէի մէջ Թեքեան անհատը կը դնէ որպէս հայրենիքի կորիզ. «երկիրս» է որ «տխուր է» իմ հոն չըլլալու:* Բաներ որոնք

Ոստրէի մէջ Թեքեան անհատը կը դնէ որպէս հայրենիքի կորիզ. «երկիրս» է որ «տխուր է» իմ հոն չըլլալու:

հիմա կը կարդանք ու այն տպաւորութիւնը կը թողուն որ այսօրուան համար գրուած ըլլային: «Մանկապարտեւի տեսրակներուն մէջ թռչուն մըն ալ կայ մէկ թելով թռչող. հորիպոնիդ օմեկան եմ, կարօտս մի՛ լքեր, երկիր»:⁴ Նոյն

բանը, այսինքն ես եմ երկրի հորիզոնին օմեկան, ոչ թէ հակառակը, որ ֆեթիշացումի կը տանի. ես՝ ստեղծողը, երկիրը կայացնողը, զայն կատարողը: «Կարօտս մի՛ լքեր երկիր»ը այսօր կարելի է փոխարինել «լեզուս մի՛ լքեր, երկիր» կոչով. մի՛ կայէնանար, ձեռք տուր ինձի, ստանձնէ՛ զիս:

Հատորի մէջ կը սկսինք գտնել աստուածաշնչական միջգրութենականութիւն, առանց օտարոտի շեշտի: Քերթողը կ'առնէ, կը տանի ընթերցողը իր հետ թելածելու եւ մտնելու համար լեզուի ծերպերուն մէջ: Գիտակից է շուրջի գրականութեան վիճակին: Կ'ըսէ. «Ինչ որ գայ պիտի՛ խարխլեր է արդէն, ինչ որ եկեր է կրկնութիւն է խոր»: Նմանատիպ գանգատ մըն է որ իր սերնդակիցը Պըլտեան կը բիւրեղացնէր նոյն օրերուն *Հակաքերթուածի* մէջ ամեն ինչ քակել-խախտելու փորձով, բայց որ լաւագոյնս կարելի է հասկնալ հետագային «Նամակ»ի մէջ իր բացատրած կէտերով:⁵ Թեքեան, որու բանաստեղծութեան հիմնական մէկ մասը կը վերաբերի ստեղծագործ անհատի տազնապին, աւելի ուշ կ'աւելցնէ. «Մանուշակագոյն թիթեռնիկ / արուեստական երգի սահմանները լքէ / ճեղքեր եւ ճիչեր կան հորիպոնին վրայ / երթանք փակենք շրթները անոնց»:⁶ Երկու հատոր ետք նոյն քննադատութիւնը կը տեսնենք ժամանակակից գրականութեան մասին. «Խարեպատիր ու պատրալիր ճամբաներ, եւ հունախոյզ ճամբորդ՝ քալեցի այդ

² Տե՛ս «Անժողովուրդ լեզու», *Մանրաներ* (Երեւան, 2006), 599-618:
³ Կ'ըսենք *քերթուածը* ինք, եթէ ոչ բացայայտօրէն հեղինակը, քանի որ այդ բանաստեղծութիւնը հակազդեցութիւն մըն էր այդ թուականներուն ամերիկեան նախաձեռնութեամբ Եղեռնի շուրջ հայթրթական «մասնագիտական» բանակցութիւններուն. այդ ժողովասեղանին կը պակսէր լեզու մը, աթոռ մը զբաղեցնելիք այլ չբացած ժողովուրդը: Ըստ ընթերցողի ընկալման, քերթուածը դիւրաւ կարելի է կարդալ նաեւ որպէս Աղէտի վերջին գոհին՝ լեզուին ու անոր ժողովուրդին միջեւ յառաջացող ժամանակակից հոլովոյթին վերաբերող գրութիւն:
⁴ «Քանի որ ես այդտեղ չեմ», *Ոստրէ*, 25:
⁵ Տե՛ս Գրիգոր Պըլտեան, «Նամակ Հակաքերթուածի մասին» (ուղղուած Մ. Նշանեանի), *ԿԱՄ հասնէս վերլուծական*, Ե (2002), 211-230:
⁶ «Սաղմոս ձիւնահամ գեփիւռի», *Ոստրէ*, 89:

փողոցներեն: Պահ մը լսեցի ոսկորներու շիրտոցը, տեսայ գրականութիւն մը որուն բանալիները ժանգ կապած էին, որովհետեւ վաղուց չէին գործածուած»:⁷

Յաջորդ գիրքը՝ *Ճեղքուած մանրանկար* (1977) Լիբանանի քաղաքացիական պատերազմին շուրջ հիւսուած պատմութիւններու հաւաքածոյ մըն է, բայց որ գրեթէ իր ամբողջութեան մէջ չի դադիր բանաստեղծական արձակ ըլլալէ, այնքան ուժեղ է քերթողական թափը: Գործը արուեստով եւ մտածումով կը ստանձնէ ներկան գրելու աշխատանքը, մատնանշելով ընկերային անարդարութեան, իգական սեռի անիրաւուածութեան, պատերազմի անհեթեթութեան եւ համայնքի կազմալուծման ցաւերը: Յատկանշական է, օրինակ, «Էութիւն» պատմութեան, ուր միջինարեւելեան հայ գրականութեան համար անծանօթ հարագատութիւն մը կայ շրջակայքը տագնապեցնող խնդիրներուն, ըլլա՛յ ատիկա պաղեստինեան հարցը թէ կին արարածի անհաւասար ցաւը:

1978ին կը հասնի բանաստեղծական հատոր մը եւս՝ *Կիպակետ*, որ անոր յաջորդող *Նշանագիր*ին եւ *Բազմածուկ աշխարհ*ին հետ չեն դադիր վերընթերցելէ երեք, չորս ու աւելի անգամ: Գրական ծրագիրը յստակ է, ու գրելու մասին է, ինչպէս միշտ. կը սկսի «Կազմալուծում եւ հոգեկայան»ի տողերով. «Մեռած ձայներու ոստայններէն / ստուերս ճամբորդող սերմի նման / կը տեղաւորուի / ... բառերու վրայ»,⁸ յետոյ՝ «Դիր ծունկերուս մէջ որ շնչէ Էակը»:⁹ Գրողը լեզուին ու լոյսին կ'ըսէ. «Բերած եմ քեզի ամբողջութիւնս / երազ մը, լոյս մը, եւ բառերու մէջ / կիպանուտ կեանք մը»,¹⁰ եւ ատիկա կ'ընէ «շրթներս օծած ամենածեր երազներով եւ բառերով ամենատրիտասարդ»:¹¹ Խօսակցութիւն մըն է լեզուին հետ կամ անոր, որ պիտի կոչէի ստեղծարար ուժ, Լոյս. Նարեկի Բ. Բանին նման, ուր քերթելու ձեռնարկած բանաստեղծը կ'աղաչէ որ չըլլայ թէ իր գրութիւնն «ամպէ, ու ոչ անձրեւէ», Թեքեան կը հայցէ. «Դուն պիս մի տանջեր լռածութեամբ, մենք պատանի չենք / երազներուս մէջ ձմեռնային վարդերու հունտեր / կը ծնէի քեզի համար»:¹² ապա կասկածը, վախը ստեղծողի, լեզուի ու ընթերցողի միջեւ յառաջանալիք տագնապին, աղէտին, որ կը նախազգայ. «Կարելի հունտերը օր մը կը հիննան / եւ ծխարձակումը անկարելի կ'ըլլայ / կարելի

Ճեղքուած մանրանկարը ... արուեստով եւ մտածումով կը ստանձնէ ներկան գրելու աշխատանքը, մատնանշելով ընկերային անարդարութեան, իգական սեռի անիրաւուածութեան, պատերազմի անհեթեթութեան եւ համայնքի կազմալուծման ցաւերը:

⁷ «Նշանագիր XIV», *Նշանագիր*, 90-91:

⁸ «Կազմալուծում եւ հոգեկայան», *Կիպակետ*, 9:

⁹ Նոյն, 12:

¹⁰ Նոյն, 19:

¹¹ Նոյն, 24:

¹² Նոյն, 25:

ուկեզոյն երգերը / սառած թիթեռնիկներ կը դառնան / կարելի օր մը հայելին կը փշրուի / եւ աչքեր չ'ունենար»: Հայելին՝ արուեստի, վերկայացման այդ խորհրդովանիչը: Գրողը գիտէ իր կատարածը. «Երկինքին վրայ սպակի ուլունքներ կան եւ այդ ուլունքներուն վրայ հաստ մըն ալ կ'աւելցնեն՝ որո՞ն է այս ուլունքը մի՞նար ի՞նչ կարեւորութիւն ունի մենք բոլորս արծաթե ուլունքներ կը շարենք գիշերներու շրթներուն յետոյ կ'իջնենք կ'իյնանք մեր տառապանքին յատակը...»:

Կիզակէտը... Խօսակցութիւն մըն է լեզուին հետ կամ անոր, որ պիտի կոչէի ստեղծարար ուժ, Լոյս. Նարեկի Բ. Բանին նման, ուր քերթելու ձեռնարկած բանաստեղծը կ'աղաչէ որ չըլլայ թէ իր գրութիւնն «ամպէ, ու ոչ անձրեւ»

Վախը, «մեր չարձակած ճիշերուն» եւ «խեղդող լուսէ ձայնին» վախը միշտ ներկայ է: Ստեղծելը առաքելութիւն է, մտասուեցում:

Կոչումը յստակ է գրողին համար. կոչումէն անդին՝ հրահանգ մը: Պղատոնեան քարանձաւէն ներշնչուող լոյսի ու ստուերներու կառուցման տողերուն մէջ կը հանդիպինք վերջնագ-

րի մը որ ինքզինքին կ'ուղղէ. «Կամ ձայնդ բեր այստեղ / կամ չքացի՛ր աչքէս»,¹³ այսինքն գրէ՝ լոկոսը, որուն համար յետոյ պիտի ըսէ. «Ու այդ մեծ ու այրի Բանի կեանքին համար / ծփանքս կապոյտ վիհերուն տուի»:¹⁴ Ինչո՞ւ սակայն. «Կրնայի ոսկի քաղաքին մէջ վարդագոյն կոթողներ / բարձրացնել, յետոյ ծննդատու ճիւղի նման/ երակներս պարպել դէպի աշունը. / բայց եւ մարդերու քարայրին մէջ խոռոչ մը շինեցի / ուր ծալապատիկ նստած՝ բառերու մէջ / լոյսեր, ստուերներ կը տեղաւորեմ»:¹⁵

Գրողին, ընկալուող հեղինակին ու գրութեան միջեւ եռակողմանի շփոթը, մրցակցութիւնը, իրար հալածելու եւ իրարմէ փախուստ տալու հարցը տարբեր գրողներու մտահոգութիւնը եղած է, ու ատիկա Թեքեանի մօտ կանուխ է որ կ'արտայայտուի բազմաթիւ առիթներով. «*փախայ / փախայ / փախայ / (...) իմ մաքրութիւնս գինիով արբի / եւ նորութեանս շտեմարանը հրկիպուի / վախցայ*»: Բանաստեղծը կը նոյնանայ իր ստեղծածին, ու միաժամանակ փախուստ կու տայ անկէ, յիշեցնելով Պորխեսի ծանօթ գրութեան տողերը, ուր գրողը իր անուան տեր հեղինակին հետ տեւաբար գոյացող շփոթը կը փորձէ փարատել շարունակ փախչելով:¹⁶ Թեքեան կ'ըսէ. «*Շոգենաւերը այրելով կ'անցնիմ / եւ գովապղնեղը պատռելով կ'անցնիմ. ... Ստուերս ու եւ ձուլուած ենք այնքան / որ հիմա կարծես ստուերս միայն միմա՛կ կը փախի...*»:¹⁷

¹³ «Բառէ մոլորակներ», *Կիզակէտ*, 49:

¹⁴ Նոյն, 51:

¹⁵ «Չոգեկայան», 23:

¹⁶ Հմմտ. Խորխէ Լուիս Պորխես, «Պորխեսն ու ես». «Վյսպէս, կեանքս փախուստ մըն է եւ ամէն ինչ կը կորսնցնեմ ու ամէն ինչ մոռացութեանն է, կամ միւսին» (*El hacedor*, 1960):

¹⁷ «Բառէ մոլորակներ», 57:

Նշանագիր հատորը լոյս կը տեսնէ 1987ին, ու անհրաժեշտ ընթերցում պէտք է նկատուի գրողը ճանչնալ ու գողին համար: Այստեղ կը գտնուին իր ամենագայուն ու ամենէն խորը թափանցել փորձող քերթուածները, ինչպէս նաեւ քննադատութիւն որ կը տարածուի գրականութենէն ընկերային եւ ինքնութենական հարցեր, ներառեալ քննադատական վերընթերցում մը սփիւռքահայ կնոջ կերպարին ու անոր ընկալման:

Գիրքը կը սկսի «Մոխիրէ ծառ» ծաւալուն քերթուածով: Ատենին որոշ անձեր փորձած են համեմատել զայն Սեւակի *Անյրեւի փանգակատուն*ի եթէ ոչ ձեւաչափին, այլ գոնէ նպատակին հետ ինչ կը վերաբերի Եղեռնի ոգեկոչման: Խոնարի կարծիքովս, սակայն, «Մոխիրէ ծառ» կը գտնուի այլ հարթակի վրայ. ունի ռեքուիտմայինը, այո, այնուհանդերձ հիմնականին մէջ անիկա սփիւռքի բանաստեղծի մը խօսակցութիւնն է, առերեսումը, նոյնիսկ ճակատումը Աղէտին հետ. զայն խօսելու փորձէն աւելի՝ անով, անոր ներկայութեամբ խօսելու փորձ է, լեզուն անապատէն փրկելու, զայն կայացնելու այդօր, ի վերջոյ: Զերթուածը կը փորձէ խօսիլ ոչ թէ տասնհինգեան Աղէտը, այլ այն, որ ատոր հետեւանքով մեզ՝ այսօրինքն լեզուն մխրճած է երեւութաբար անելային վիճակի մէջ, եւ որմէ միայն քիչեր փորձը կ'ընեն դուրս գալու, նախ զայն հասկնալով, փորձելով խօսիլ անասելին, լեզուին բերելով բռն աղէտը որ լեզուինն է, խօսելով անապատը: Ստեղծագործական, մտաւոր, լեզուական այս անապատի յղացքին բազմիցս կը հանդիպինք բանալի հատուածներու մէջ, ոչ միայն Թեքեանի, այլեւ Պըլտեանի տարբեր գործերու երկայնքին: Այդ իմաստով ալ ան թերեւս լաւագոյններէն է որ գրուած ըլլայ նիւթին մասին, դժբախտաբար յարաբերաբար դուրս շրջանառութենէ ինչպէս մեր լաւագոյն գիրքերը, քանի որ անոնց տողերը չեն նպատակադրեր անճարակօրէն պոռալ արարատ ու ճանաչում. գիրքեր են որոնք փոխանակ հոգեհանգստեան ծեսի՝ կը դիտեն, կը մտածեն եւ ուղի կը բանան:

Այդ շրջարկին մէջ է որ բանաստեղծը կը յանդիմանէ. «Փորձէ որ ծնանիս / ինչ ամուլ արգանդդ բռնէր կեցեր ես»:¹⁸ Գրութիւնը չի խօսիր ոճիւրներու մասին, այլ լեզուին ու ստեղծագործ կենդանութեան հարցին, երբ կ'ակնարկէ ոսկորներուն, հողին *ամլութեան, լեզուի ու մտածումի ամլութեան, հատուած լեզուին*:

Ոսկորներուս խշրտուքը ծանրանալով
անլուծօրէն կը լծուի հողիս ամլութեան
Ամլութիւնը տարածուեր էր լեզուիս եւ գանկիս մէջ

¹⁸ «Մոխիրէ ծառ», *Նշանագիր*, 29:

«Մոխիրէ ծառ»... հիմնականին մէջ ... սփիւռքի բանաստեղծի մը խօսակցութիւնն է, առերեսումը, նոյնիսկ ճակատումը Աղէտին հետ. զայն խօսելու փորձէն աւելի՝ անով, անոր ներկայութեամբ խօսելու փորձ է, լեզուն անապատէն փրկելու, զայն կայացնելու այդօր, ի վերջոյ:

ուկորներուս վրայէն պէտք է անցնէի հասնելու
սահմանաւոր վայրիս վայրերը անսահման
անդրադարձայ որ լեզուս հատուած էր...¹⁹

Յաւիտենական սիրահարը սիրոյ նոյն ամարկային է որ կը խօսի, երբ իր մարմինն ու մորթը կը հիւսէ, կը կազմէ «բառերու ասեղով», դառնալու համար կորսուած բառերուն եւ խեղդուած ձայներուն գիւտարար սիրուհին.

Քու յիշած ձեւերովդ չէ որ գրեցի այբուբենիս տառերը խրթին
Գրեցի ինչպէս երեւացին ինձի
Բառերու ասեղը մերկ մորթիս վրայ կարելէ ետք երկար
կանգնեցայ ըսի՝ գեղեցկուհիդ չեմ
սիրուհիդ եմ ես
Մութին մէջէն գտայ բոլոր կորսուած բառերդ ձայներս խեղդուած²⁰

Անապատի առնչութեամբ մտածումի մասնակի, բայց ուշագրաւ հանգիտութիւն կայ Թեքեանի եւ վերը յիշուած «Անժողովուրդ լեզու»ի միջեւ, որոնք աղետը քերթողաբար ընկալելու աշխատանքը բիւրեղացնող յաջողագոյն երկերէն պէտք է նկատել, եւ որոնք տակաւին կը սպասեն հանգամանաւոր եւ, ինչո՞ւ չէ, համեմատական վերլուծման: Նոսրացող արիւն ու կենսունակութիւն, ու ապա՝ *«Աի կախուիր քղանցքես չեմ կրնար բուժել քեզ»:*

Ականջներդ պիտի ցաւին բայց յանցաւոր չեմ
Հասունցած կարծրացած մթապատ
փշածաղիկին հիւթը դրի աչքերուս
ինչի որ դայ՝ Անապատին մէջ ինկաւ
Անապատը խելագար մայր՝ գրկեր էր քեզ
Մինչդեռ իր բազուկներէն խլուեր էի հեռու
արիւնատուութեամբ կը տառապէի
Աս ինչ վայր է
ինչի որ հպիմ պատգամ մը կ'արձակէ
Կ'ուզէր որ ինքզինքս թաղէի մահուան երգերուդ մէջ
ամէն անգամ որ երգերդ մտիկ ըրի՝ նոսրացաւ արիւնս
Մի կախուիր քղանցքես չեմ կրնար բուժել քեզ

Հատորին մէջ աւելի ուշ՝ «Նշանագիր XIX»ին եւ XXIին մէջ կ'ընդլայնուի աղետին լեզուամերժ, լեզուն անկարող դարձնող որակի բացայայտումը, որմէ եւ «անանուանելիին» նկարագրութեան ձեռնարկողին յանդգնութեան նոյնիսկ լրբութիւն թելադրող անզգայութիւնը:

¹⁹ Նոյն, 30:

²⁰ Նոյն, 31:

Լեզուն իր լոյսը ուներ որ անոնց չէր հասներ. Ո՛վ պիտի տեսներ, որո՞ն նայուածքը պիտի բռներ լոյսը այն սանձարձակ սահմանին մէջ որ Արտասահման կը կոչուէր. հակառակ որ իր բնակավայրը ծնած մէկ օրէն հոն էր՝ իր լեզուն խօսողները իսկ եւ ամենէն առաջ անոնք զինք չէին հասկնար: ... Ո՛ր ժամուն, ինչ տրամադրութեամբ ալ նայէր անոնց աչքերուն՝ ճերմակի վրայ սեւ դրուած կը գտներ Աղէտը – կարելոր չէր որ մէկը – ինք Աղէտը կը տեսներ, սեւ կարծր սպառազինող եւ աշխարհին անհաղորդ բանի մը պէս:²¹

Յետոյ՝ ո՛վ պիտի ժպրհի նկարագրել Անանուանելին:²²

«Մոխիրէ ծամ»ի յատկապէս վերջին էջերը կը սահմանեն սփիւռքը ու զայն երգելէ անդին կը նշեն անոր ընտելքը եւ ըսելիքը: Հոն անգամ մը եւս կը սահմանուի «հայրենիքը», շեշտը խլելով հողէն ու սահմաններէն. այդ տողերուն մէջ հայրենիքը խօսք է, որովհետեւ անարձանագրելի խօսքերը գրողը զայն պէտք է «շալկէ ու քրտնաթաթախ տեղ հասցնէ» իբրեւ «պատկանելիութեան գտաթուղթէն անցած հեղանիւթ»:

Նշանագիրի մէջ Թեքեանի ձայնը հետզհետէ աւելի տագնապալի կը դառնայ, նոյնիսկ ցատումնալից, խարագանող: Սփիւռքի գրականութիւնը «աւեր չէ», այլ ինքնանպատակ. իր իսկ «սեփական մարմնէ բխած ...հող» պէտք է անոր, փոխանակ «փափկերգակ գրողներու բառերու ժապաւեններուն»:

Չփորագրուող խօսքեր կան՝ զորս շալկելու եւ քրտնաթաթախ տեղ հասցընելու սահմանուած ենք
Հայրենիքը պատկանելիութեանդ գտաթուղթէն անցած այդ հեղանիւթն է
հոգիիդ ամանակին մէջ՝ հնաւանդ պատարագի ընթացքին²³

Նախորդ հատորներու մէջ սփիւռքի գրականութեան արժեւորումներէն ու քննադատութենէն ետք, *Նշանագիրի* մէջ Թեքեանի ձայնը հետզհետէ աւելի տագնապալի կը դառնայ, նոյնիսկ ցատումնալից, խարագանող: Սփիւռքի գրականութիւնը «աւեր չէ», այլ ինքնանպատակ. իր իսկ «սեփական մարմնէ բխած ...հող» պէտք է անոր, փոխանակ «փափկերգակ գրողներու բառերու ժապաւեններուն»:

Որո՞ն պէտք են փափկերգակ գրողներու բառերու ժապաւենները
... Սեփական մարմնէ բխած արեւ եւ հող պէտք է
որ մեր տագնապի յայտարար նշանները ձեւէ

²¹ «Նշանագիր XXI», *Նշանագիր*, 133:

²² «Լուսագարթնում (Նշանագիր XIX)», 101:

²³ *Նշանագիր*, 54:

որպեսզի մեր գրադարաններու մէջ շարուած գիրքերը
չդիտեն մեզ իբրեւ յանցագործներ
Ոչ Սփիւռքի գրականութիւնը աւեր չէ շէնք չէ
բերդ է զգաստ եւ ինքնանպատակ²⁴

Կը կքի ստեղծարար կորովը, այլ խօսքով գրականութեան ու լեզուի կենսու-
նակութիւնը, որ կը դառնայ պահեստի դարան, պահածոյ ապրանք, ինքն իր
սահմանափակումը միայն արտայայտող:

Մեծ ուժ մը նսեմացուցած է իրը, ծառ մը որ չ'արտայայտեր, այլ միայն կը
ցուցադրէ ոչ թէ իր ոյժն ու կարողութիւնը, այլ՝ իր սահմանափակումը:
Ներողութիւն, հայ մշակոյթ, բայց բան մը կայ որ կը մեռնի կոր...²⁵

Ինչ պիտի ընէ ստեղծողը. ո՛չ թէ փնտռել, նկարագրել ու արտագրել դիւցազ-
ներգութիւն, այլ կատարողական (performative) գրութիւնով զայն արտադրել.
*«Չորոնէլ դիւցազներգութիւնը, չորոնէլ: Ոչ մէկ երաշխիք որ քարանձաւը բացուի
եւ Մհերը գտնենք այդտեղ: Վերջնականօրէն դուրս գալ միթի պարունակէն եւ
մտնել վիթխարի աչքիդ անթարթ կէտին մէջ: Այնտեղ Մհերը՝ իր սաղմէն դուրս
բաշել»:*²⁶ Այսինքն կազմել նոր պատում, հերոսը՝ աշխարհը փոխողը, փրկողը
արտաբերել եւ արտադրել մեր իսկ նայուածքով: Ստեղծումը, փրկութիւնը, Մհե-
րը՝ գրողի նայուածքին իսկ մէջ:

Գրողը չի դադրիր մտածելէ գրելու եւ ստեղծումի մասին: Ստեղծագործ պա-
հը, «պայթուցիկ եւ ամենախոր, հաճոյքը յանձնումի անըմբռնելի, անդիմադրելի,
անպաշտպան եւ անտուն», կը նկարագրուի գեղագիտութեան մէջ *վսեմի* աւան-
դական ստորոգելիներով. վիհը, ճանաչումէ ասդին մնացող որակը, ցաւին հաճոյ-
քը, բայց նաեւ անոր դարմանէն, այդ ցաւի կորուսումէն սարսափը.

Կացութիւն մը կայ որ ճանչնալէ եւ գիտնալէ անդին է, եւ այնտեղ խորխո-
րատ է եւ ձայնդ մէկը չի լսեր: Բայց այդ կացութեան մէջ ձայնդ այնքան
զօրաւոր եւ համապարփակ կ'ըլլայ որ կը լեցնէ տիեզերքդ, կամ ինչ որ
քեզմէ կը հոսի դէպի ուրիշ տարածութիւններ: Եւ բանի մը տենչանքը,
անձկոյթը չես զգար բացի վերստին վերստին այն բանին որ անուն չունի:
Այնտեղ կը խարանես եւ կը վիրակապես ինքնութիւնդ, եւ ցաւդ հաճոյք
կը պատճառէ քեզի եւ դարմանումը՝ սարսափ: Պետք է զգաս արիւնը
մարմնէդ դուրս հոսող, եթէ շնորհուած է քեզի ստեղծագործելու կարե-
լիութիւնը:²⁷

²⁴ «Նշանագիր XXI», 133:

²⁵ «Նշանագիր XIV», 82:

²⁶ «Ընթացք ծանրաբայլ», *Նշանագիր*, 121:

²⁷ «Նշանագիր XXI», 132-133:

Իսկ ստեղծումի գործընթացին ապրումը կը նկարագրուի հետեւեալ ձեւով: Միկողոս Սարաֆեանէն ետք քիչեր հայ գրականութիւնը հանդիպադրած են այս տիպի խոկումներու եւ պրպտած այս կարիքները.

Այնչէլի պարտք մը ունիմ որ պէտք է անվերջօրէն հատուցանեմ, իր մէջէն անցընելով բարձրութիւնները կիրքի եւ գրկանքի խորութիւնները: Անկէ ետք է որ կ'արթննայ ստեղծագործ երջանկութիւնը եւ հոգիս կը պտուտքի երաժշտութեամբ մը որ ոչ ոք պիտի լսէ: Անշուշտ ոչ ոք պիտի լսէ: Բացարձակ անտարբերութեամբ կը փետտէ ճամբան, կը փետտէ մարդերը իրենց տեղերէն եւ երթելէկ մը կը ստեղծէ իրեն համար: Ոչ մէկ երաշխիք կու տայ, ոչ մէկ վերջաւորութիւն: Ինչ տարօրինակ է վստահութիւնդ. կը բաւէ որ ոտքդ դնես անոր ծայրը եւ վստահ ես որ ելքը պիտի գտնես, պիտի հասնիս: Ճամբան անվերջութիւնն է: Ինքզինք չի գապեր, կը պայթի, կը բողոքէ, կը լքէ: Կնոջ մը պէս: Ընդհանուրին մէջ կ'անանձնականացնէ, յետոյ քեզ անհունօրէն ինքնախոյզ դարձնելու:²⁸

1993ին կու գայ վեցերորդ հատորը՝ *Բապնածուի աշխարհ*, երկու բաժիններու վրայ տարածուած բանաստեղծութիւններով: Այստեղ ոճը որոշ չափով կը դիմէ արձակին: Ֆեմինիզմի եւ սեռատեսակային (gender) հարցերու, բախումներու, տագնապներու արձագանգը, որ *Նշանագիրի* մէջ արդէն սկսած էր, հատորի առաջին բաժնին մէջ կը վերածուի առանցքային թեմայի: Ապահարզան, երազներու դիմաց պատրանաթափութիւն, անձկութիւն, մատղաշ թէ չափահաս կին գոհերու փորձառութեան գրականացում առանց բարկաճայթ ճառերու, այլ միայն վերկայացումով: Me tooի օրերուն հոն կը գտնենք բառորդ դար առաջ գրուած դիպուկ քերթութիւն.

Ֆեմինիզմի եւ սեռատեսակային (gender) հարցերու, բախումներու, տագնապներու արձագանգը ... կը վերածուի առանցքային թեմայի: Ապահարզան, երազներու դիմաց պատրանաթափութիւն, անձկութիւն, մատղաշ թէ չափահաս կին գոհերու փորձառութեան գրականացում առանց բարկաճայթ ճառերու, այլ միայն վերկայացումով:

Դիւրին է խօսիլ տանջանքի մասին ղժուարը լռելն է
 եւ մանաւանդ՝ չգիտնալ ցաւիդ անունը
 չգիտնալ թէ որքան բորբոքուն են կոպերդ
 բրտութեան համը չքացէր էր նախաճաշիդ
 Բարձ ունիս ճիւղ պիտի դնես գլխուդ մէջ սողացող կրակը
 ...Դժուարը՝ չճանչցած կեանքի եռուզերը,
 կաթոգնիլ փափուկ ափի մը բայց գտնուիլ կարծրութեան մէջ Տան
 ուր զօրաւորը կը հարուածէ տկարին

²⁸ «Նշանագիր XIV», 90:

Դժուարը՝ դպրոցական պայուսակիդ հետ
բանալ իրականութիւնը այն կիներուն որոնց հոգին փճացած է
երկարօրէն համտեսուած նուաստացման դժոխքին մէջ
Անոնք ալ տեղ մը փոքրիկ աղջնակներ են
ալ մտածելու շարժելու անկարող²⁹

Ո՞ր է այս բուն տողերուն ժամանակակից գնահատումը հայագիտութեան
մէջ նորոյթ այլ անհրաժեշտ ֆեմինիստ վերլուծաբանութեան բարեկամներու
կողմէ, որ ի տես այդ հարցի մասին հայ գրական յարաբերական երաշտին, կ'ա-
ճապարեն տօնակատարել կամ փառաբանել դոյզն իսկ արտայայտութիւններ,
հագիւ թէ որսացուած հարիւրամեայ (կամ անելի) էջերու մէջ, այն ալ նախընտ-
րաբար թարգմանովի (երբեմն դիւրին է հայ գրականութեան, ընկերաբանութեան
ու մարդաբանութեան մասին խօսիլ առանց հայերէն գրութիւններ ալ կարդալու
ժամանակը յատկացնելու չափ ստորանալու):

Ի դէպ, ժամանակն է որ դադրինք «կին գրող» կոչելէ կին գրողները. արդեօք
միւսները «այր գրող» կ'անուանուին: Ինչո՞ւ Վեհանոյ թեքեան – միւս բոլոր կի-
ներուն նման – պիտի ըլլայ «շնորհալի գրող», նոյնիսկ երբ ամենախիստ, սաս-
տիկ, ապտակիչ տողերը կարելի է գտնել իր մօտ: Ժամանակն է որ դադրինք նաեւ
գլխաւորաբար *կին* ըլլալուն համար փնտռել ու ֆեթիշացնել Չապէլ Եսայեան-
ներ, որոնք ունին իրենց սեփական գրական արժանիքը, որ շատ անգամ չի կար-
դացուիր իսկ ջատագովներու թէ երկրպագուներու կողմէ երբ նկատի կ'առնեն
միայն գրողի իգութիւնը. ու դարձեալ ինչո՞ւ երթալ հարիւր տարի ետ երբ մեզմէ
սոսկ կը պահանջուի ժամանակակից գիրքերը բանալ ու բարեբախտաբար հան-
դիպիլ ըմբռնիչ գրականութեան: Թեքեան առանց բառերը ծամելու կը բողո-
քէ. «Յայ ըլլալուս կին ըլլալուս՝ ստիպումս՞ծ եմ / պատաս պատաս երապները
բաղդրացնել»: ³⁰

Գիրքի երկրորդ, «Թոյն անմահութեան» բաժինը առանձինն դասընթացքի մը
նիւթ կրնայ հայթայթել, նորէն բանաստեղծութեան, լեզուի, անապատի,
քարանձաւի, լոյսի, քայքայման մասին իր մտորումներով: Խորհրդածութիւն
արարումի եւ իր բառերով այբուբենի *առեղծանումի* ու *վերեղծանումի* շուրջ:
Ինչպէ՞ս «վերեղծանել», վերծանել ստեղծելով «մեր հին լեզուն հաշմաձեռն»,
որուն գրող ձեռքը անպտուղ է դարձած:

մենք որ լեզուի սենեակներուն մէջ կ'ապրինք
հիանալի խենթերու համախմբում ենք
մահուան համաճարակէն եթէ վախնանք
երգ մը կը շինենք ու կը խցկենք
մեր լայնաբերան տխրութիւններուն մէջ

²⁹ «Վեցամեայ Լիզային», *Բազմածուի աշխարհ*, 36:

³⁰ «Տարիներու ընթացքին», *Բազմածուի աշխարհ*, 24:

.....

Տեղ մը պետք է անձրեւախառն քամին խօսի
 եւ բառերը շնորհաձիր շողերու պէս
 մարմնին ծուծին պետք է մտնեն
 ու մարմինս իր տունէն ներս պետք է մտնէ³¹

Այս երկրորդ մասի յիսուսի չափ էջերու մէջ տրուողը պատում մըն է բանաստեղծի երկունքին, անցած ուղիին, ձգտումներուն, պայքարին, հիասթափութիւններուն եւ արբշռանքին մասին: Վերնագիրներէն մէկ քանին՝ «Տաճարացում», «Միակեցութիւն», «Ասք երկիւղի եւ արարման», «Լուսաշթում», «Թոյն անմահութեան» տարտամօրէն կը յիշեցնեն Ահարոնի *Մագաղաթներ* հատորի (1937) «տաղաշրջան»ները, քերթողի ստեղծագործական գրեթէ կրօնական ուղիին մասին, թէեւ իրենց ըսածով ու ըսած ձեւով շատ հեռու են անոնցմէ, այսինքն 1914ի *Մեհեանի* գաղափարներուն ու շացած շարունակումէն: Այստեղ Թեքեանի լեզուն միաժամանակ ողբ է եւ կը դիւցազներգէ անվարժ ընթերցողին համար դժուար, սակայն գերագոյն լարմամբ արտաբերուած առնչութիւններով, ուր գրիչը խելացնոր թափ կը ստանայ, նորակազմ եզրեր կը ցայտեն պայթուցիկի պէս աջ ու ձախ, եւ մտածումը կը զօրէ, կը զարնէ բառերուն, պատկերներուն: Ո՛վ պիտի ընկալէ, ո՛վ պիտի հասկնայ սյնքան պրկում եւ սաստկութիւն ծորող «երկիւղի ալիքներն ու արարման ճառագայթներ»ը:

1997ին տպուած յաջորդ գիրքը *Տոհմաձառ* պատմուածքներու եւ այլ արձակ կտորներու հաւաքածոն է: Աւելի զաւելտական նոթերով, տեւաբար դիպուկ խայթերով, սակայն նաեւ միշտ բանաստեղծական, կշռութաւոր, հայերէնի այդ անսահմանելի, անորոշելի բոյրով, հեքիաթային շեշտով: Կապն է գերդաստանին, մեծ հօր գծած տոհմաձառին ու ատոր ընդմէջէն մեծ հօր լռութեան կնիքով դրոշմուած ներկայի մը, դէպի ապագայ հեռարձակումի մը. Սփիւռքի պատմութիւն մը մանկապատանեկան ու չափահաս տարիքի ընտանեկան փորձառութիւններով տրուած:

Նախորդ գիրքերուն մէջ ուրուագծուող հիասթափութիւնը պոռթկումի կը հասնի յաջորդ քերթողական հատորին մէջ՝ *Մնունդ եւ անդունդ* (2000, թէեւ գրուած իննսունականներու սկիզբը): Կասկածը կը շեշտուի, մայր որոնելու, հայր ու տուն փնտռելու ոգորումը, հողը ոտքին տակէն սահած ըլլալու գիտակցութիւնը, եւ նոյն ատեն չըսուող, բայց թելադրուող գիտակցութիւնը իր ըրածին,

³¹ «Մտաբախում», *Բազմածուի աշխարհ*, 74-75:

մատուցածին եզակիութան, նաեւ՝ անապատի յաղթանակին, կեանքին ու երագներուն անոր երախին մէջ կորսուելու զգայութեան: Տողերը իրենց քաղցրութեան մէջ սարսափելի են, փաստ որ անոնց մասին խօսող չկայ գրեթէ.

մինչ Անապատին ուրուականը կը դեգերեր
բոլոր պատմութիւններուն մէջ,
կ'ուզէի պատմութիւնս աւագներէն դուրս քաշել:

.....

Յետոյ վարժուեցայ խօսիլ մութին մէջէն
ժամանակի ու տարածութեան, ու ծերացայ:

Գրեցի. անդադար գրեցի, որպէսզի լոյսը վառած մնայ,
որքան մեծցաւ լոյսը՝ այնքան ծանրացաւ մոխիրը
ու ծածկեց լեզունս:

Յիմա անձայնութիւն է,
մեռելներու խլրտուք
ու ողջերու անդորրութիւն մահասարսում:

Պիտի չհասկնան անձայնութեան այս ահը,
ոգեղէնի շանթահար թաւալքը խաղաղականի կողին,
ծաւալումը անձայնութեան:³²

Ամայութեան մէջ առանձին մնացած գրողը կը շարունակէ. «*Բապմուղի ու իսաչակերպ ձայներէս ետք, / աղի մայրիներու քերմոցներէ ետք / անձայնութեանն այս ոլորտը / պիտի չհասկնասս*», «*նչ թէ համրութիւնը, / այլ՝ անձայնութիւնը, ... ո՛չ թէ ձայնի չգոյութիւնը, / այլ՝ պրկանքը ձայնի՛...*»:

Անյուսութիւնը, անագորոյն անապատէն սոսկումը սակայն կը վերածուի աղաչանքի, աղօթքի. «*Բարձրացնիր պիս աչքերուդ, / որ պարապին մէջ ձեռքդ մինակ չմնայ, / որ անձայնութեան / այս մահագոյժ անդունդին / հեղեղ մը լո՛յս ծնանիմ*»:

**Նախորդ գիրքերուն մէջ
ուրուագծուող հիասթափութիւնը
պոռթկումի կը հասնի յաջորդ
քերթողական հատորին մէջ՝ Սնունդ
էւ անդունդ**

Նոյնատիպ, թէեւ աւելի մաղթանայից խօսքեր կան նոյն հատորի այլ էջերու մէջ. գրողին ու լեզուի հարսին անհատնում ձգտումը բառերն ու կեանքը զուգաւորելու, ժամանակին մէջ երկարող խօսքեր հիւսելու. «*Աշխարհը եղկումեղկ պրինգի մէջ սեղմուի, / ու բառերը պզան իրենց պորութիւնը / մեր մահերը պզան իրենց կեանքը, / եւ աշնան խարտեաշ ծառերը / դարերու համար հիւսեն պասկներ*», մեծարենցեան շունչով աւարտելու՝ «*բերէի, / արշալոյսի ծիծողուն աիեր, / տառը՝ գետի, / գիրքը բուրգի վերածէի, / եւ հայ լեզուի խոսակին մէջ / մետաքս մետաքս սէր հիւսէի*», ու դեռ «*բերէի, / լուսնաշէր գիշերներ, / պտղա-*

³² «Քաղցրութիւն», *Սնունդ էւ անդունդ*, 107-111:

պայծառ ամրան հովեր, / անհատնելի՛ բերթուածներ / որոնց փարչէն մեղրը կաթեր / օղակ օղակ».³³

2015ին լոյս կը տեսնեն քերթողական *Աղօթքներ ուղկաններու մէջ* եւ արձակ ու հրապարակագրական գրութիւններու *Խօսող լեռան պատմութիւնը* հատորները: Առաջինին մէջ կը շարունակուին նախորդ թեմաները, նոր գաղափարներով, նոյնիսկ նորոգուած լեզուով, բայց որոնք արժեւորելու համար լաւագոյն է ծանօթ ըլլալ նախորդ գիրքերէն եկող տրամասութեան եւ մտահոգութիւններուն: Ոճը աստիճանաբար կը մեղմանայ ու աւելի լաւատես երանգ կ'ընդունի, որոշ չափով յուսադրելով ընթերցողը թէ նոր երկեր կրնան յաջորդել:

Սիրահարը անապատին մէջ

Ը սեր էի թէ նստայ ու Վեհանոյշ Թեքեանի բոլոր գիրքերը վերընթերցեցի ծայրէ ծայր, ժամանակագրական կարգով, յիշելով թէ որ տարիքին եւ որ տարիներուն գրուած են, շրջարկային եւ անձնական ինչ պայմաններու մէջ: Երբ բոլորը միասին կը կարդացուին կարճ ժամանակամիջոցի մէջ, համապատկերին մէջ կը նկատուի բան մը որ հաւանաբար նոյնինքն հեղինակը գիտակցօրէն նշմարած չըլլայ, քանի որ մեր առջեւ կը կազմաւորուին անոր թերեւս ենթագիտակիցէն ծնունդ առած եւ էջերու ընդերքէն ընթացող անտեսանելի թելերը. անոնք, որ կը միացնեն առաջին էջերը վերջիններուն, անդին անցնելով յիսուն եւ աւելի տարիներու բերած լեզուական ու ոճական փոփոխութիւններէն, արտայայտչաձեւի ու բովանդակութեան եւ նոյնիսկ թեմայի բնական զարգացումներէն:

Ընթերցումներէն նկատած առաջին կէտս, նախ քիչ մը տարակոյտով, այն էր որ սիրահարի բանաստեղծութիւն է գրեթէ իր ամբողջ վաստակը: Միայլ չհասկըցուիմ: Մարդ կրնայ սիրել ու գրել տղու մը մասին, աղջկայ մը մասին: Ու այդպէս ալ կը սկսի Վեհանոյշ Թեքեան, *Կապոյտ Ապրիլի* մէջ բանաստեղծութեան մասին գրելուն գուզահեռ գրելով պատանեկան սերերու շուրջ: Երկրորդ հատորին մէջ սակայն կապոյտ ապրիլն ու այդ սերերը տակաւ կը կոչուին հանգըստեան, ու սիրահարութեան երգերը կ'ուղղուին այլուր:

Սկզբնական թերահաւատութիւնս փարատած էր արդէն քանի մը հատոր ետք, երբ փորձեցի համեմատել *Յրագիր* հատընտիրը (2000) հոն մէջբերուած գիրքերու բովանդակութեան հետ: Ինչն էր որ փոխուած էր. գեղջուած էին, օրինակ՝ *Ուտրէ* սիրային այն քերթուածները որոնք արդէն իսկ սկիզբէն յայտնապէս կը խօսէին անձերու հանդէպ սիրահարական զգացումներու մասին. մնացեր էր մեծամասնութիւն մը որ ըստ երեւոյթին կ'ակնարկէր վերացական, բառային, գրութեանական, գեղագիտական, լեզուական պարունակով էութեան մը սիրահարութեան:

³³ «Ձրվեժներ», *Սնունդ եւ անդունդ*, 60:

Մեր մըն է որ մշտապէս ներկայ է եւ որուն գիտակցութիւնը հետզհետէ կը բիւրեղանայ.

Երբ Աստուած հրամայեց
որ լոյս ըլլայ յաւելեալ
մեր սերը եղաւ
Առաւօտները ցօղաթարմ էին
Ան ոսկեցուպը կռթնեցուց թզենիին
եւ հողմաբախ կոճղի մը վրայ նստած
տարբաղադրեց լոյսն իր խաւարէն,
ըսաւ որ լոյսը - հոգին կեանքի -
անբաժանելի է
յետոյ կանգնեցաւ անտառներու մուշ հովերուն ներքեւ
ստուարախիտ մօրուքը տատանելով
յայտարարեց որ մեր սերը անբաժանելի է

Այսպէս ըսաւ Աստուած,
ալ ինչ կրնանք ընել:³⁴

Մեր խօսող իր քերթուածները կը միտին գլխաւորաբար բանի մը, որ չ'անուանուիր իր տողերուն մէջ, բայց որ կը զգանք, թէ էութիւն մըն է որ կապուած է լեզուին, հայերէնին, ու դարերու բովին մէջ անով ստեղծուած գեղեցիկին, նաեւ անով ստեղծելու բաղձանքին, անոր մէջ ապրելու, անով օծուելու, անով սնանելու, անով արբենալու, անոր հետ նոյնիսկ անկողին երթալու ցանկութեան: Գրողը անոր հետ ընդելուզուած *կայն* իսկ կ'երագէ *անոր* ընդմէջէն: Առարկայ ու գործիք միաժամանակ: Սիրահարութիւն մըն է ստեղծագործութեան: Իր քերթողութեան մեծ մասը այդ է որ կ'երագէ. իր բառերով՝ կ'երագէ: Տեղ մը կ'ըսէ. «Չարմանալի է Մեսրոպ Մաշտոցը, ամէն հրաշքի պէս:

Մեր խօսող իր քերթուածները կը միտին գլխաւորաբար բանի մը, որ չ'անուանուիր իր տողերուն մէջ, բայց որ կը զգանք, թէ էութիւն մըն է որ կապուած է լեզուին, հայերէնին, ու դարերու բովին մէջ անով ստեղծուած գեղեցիկին, նաեւ անով ստեղծելու բաղձանքին, անոր մէջ ապրելու, անով օծուելու, անով սնանելու, անով արբենալու, անոր հետ նոյնիսկ անկողին երթալու ցանկութեան:

... Ես կը հարցնեի Վարդապետին՝ ինչն է մէջս դիր գերագոյն սերդ ու դրկեցիր այդքան հեռու, անջրդի, կիզահար անապատին մէջ ուր բառերը երապ են եւ գիշերները՝ մահաբորան»:³⁵

³⁴ «Երբ ձեռքերուդ վրայ տրտմութեան հինա կայ», *Կիզակետ*, 75:

³⁵ «Ճանապարհ», *Նշանագիր*, 96:

Սերն ու սիրահարությունը միայն յայտարարություն չեն, այլև պարտաւորություն, որ դուն՝ լեզուին պատկանողդ, ընթերցողդ, գրությունս բանալով «*քիչ մը լոյս, քիչ մը կիրք ու հեւք, եւ քիչ մը թախիծ ու պատրանք սգաս*»,³⁶ որովհետեւ «*հացագործի տրտում / տաք աղջկայ նման / թարմ բառերս ծախեմ / ու տանմ պիտի քեզի, / եւ պիտի թողում / որ հետպիտեւտ պիս ամբողջացնող կերպերս ճանչնաս*»: Կերպերը տակաւ «*կ'ամբողջացնեն պիս*», քանի քերթուածներն են որ կը կատարեն գրողը:

Կ'ակնարկեմ *Երգ Երգոցը* յիշեցնող սիրոյ մը,³⁷ քանի որ խորհրդագգած (mystical) սիրոյ նման, ասիկա եւս կ'ուղղուէր դէպի լոյս, զայն նուաճելու, իրը ընելու, բայց նաեւ անոր պատկանելու եւ անոր հետ միաձուլուելու, անոր մէջ այրելով՝ թէ անոր մէջ ու անով կայանալով վերջնագոյն փափաքով: Մնալ լեզուին մէջ, ըլլալ լեզուին համար ու անով: Խորհրդագգած տեսանողներու օրինակով ալ, բանաստեղծը իր տողերուն մէջ կը զոհուի թիթեռնիկին պէս լոյսին, բոցին միացած ատեն: Գիտէ որ ատիկա պիտի պատահի, բայց նուիրուած է անոր. քերթողը իր բանաստեղծական զգայնութեան եւ ստեղծագործական թափին ամբողջութիւնը զոհաբերած է այդ սերին: Չափազանցութիւն պիտի չըլլար ըսել ուրեմն, որ Վեհանոյշ Թեքեան կուսանոց մտնող այն վանական միանձուկին է, որ փեսային՝ լեզուին ու լոյսին կը նուիրէ իր հարսնութիւնը: Իր խօսքերը, բեմի ու ընկերային միջավայրի մէջ իր արտայայտութիւնները, գրոյցները ատիկա է որ կը դրսեւորեն: Կէս դար ետք դեռ նոյն հարսն է, ամբողջանուէր սիրահարը այբուբենով մարմնաւորուած լուսեղէն այդ ուժին:

Բանաստեղծ-սիրահարին վէճն ու սիրաբանութիւնը լեզուին ու ստեղծարար Էութեան հետ կը տանին անելի. «*Յոն ուր վարդերը կը մեղեդիանան / դուն լուսապատկեր սիրահարն ես / հոս առտուան դէմ բացուած շուշանին / սիրտդ թողած ես / մարմինդ չկայ*», ճարահատ հարցնելու համար. «*Ինչ կ'ուկես ինձմէ / շուշանին վրայ լոյս չվառեցի*»:³⁸ Յետաքրքրական է, որ սիրուհիին կողմէ սիրոյ առարկային ուղղուած հարցումը տառացիօրէն, թերեւս անգիտակցօրէն կը կրկնէ սպանացի մեծագոյն բանաստեղծներէն եւ ուշ միջնադարու ամենէն ակնառու միստիքներէն Թերեզա Աւիլյացիի³⁹ բառերը երբ Թեքեան երիցս կը պնդէ.

³⁶ Նոյն, 67:

³⁷ Հայ գրասերներ, թագմանիչներ եւ նոյնիսկ երգիչներ ստեպ շփոթած են աստուածային թէ ոչ՝ «վերիբական», ստեղծագործ լոյսին դիմող խորհրդագգած սիրոյ երգերը սովորական սիրահարութեան հետ, սկսելով դեռ միջնադարեան գրողներու արտադրութիւններէն: Առաքել Սիւնեցիի (1350-1425), Պաղտասար Դպիրի (1683-1768) կամ Վեհանոյշ Թեքեանի սիրակեդրոն քերթուածները օրինակներ միայն ըլլալու են այս երեւոյթին:

³⁸ «Կազմալուծում եւ հոգեկայան», *Կիպակետ*, 32-33:

³⁹ Սրբուհի Թերեզա (1515-1582) կը նկատուի սպանագիր բանաստեղծութեան եւ միաժամանակ խորհրդագգած շարժումի գագաթներէն, ինչպէս նաեւ Նարեկացիի խմբակից մը Կարողիկէ եկեղեցւոյ հռչակած 36 «տիեզերական վարդապետներու» շարքին մէջ: Իր քերթուածները կը խօսին անմատոյց Լոյսին միանալու փորձառութեան եւ այդ փորձառութիւնը կրկնելու իղծին մասին:

«Ի՞նչ կ'ուզես ինձմէ», «ինձմէ ի՞նչ կ'ուզես»: Յարցումը կը նշէ ինքզինք սիրոյ առարկային յանձնելու, բայց նաեւ անոր բանտարկեալն ըլլալու գիտակցութիւնը. ազատում չկայ լեզուէն եւ բառերով կայանալու յարաժամ փորձէն, քանի որ ենթական ինքզինք կ'ընկալէ որպէս այդ սիրոյն յօժար գերին:

Միստիք փորձառութեան յիշատակումն այլաբանութիւն կամ նոյնիսկ փոխաբերութիւն մը նշելու դիտաւորութիւնը չունի: Նման այն խորհրդագրածներուն (mystics), որոնք կը միտէին միանալ գլխազիր Լոյսին, Վեհանոյշ Թեքեան եւս կ'ապրի խորհրդական փորձառութիւն մը (mystical experience) գիրերուն, լեզուին եւ բանաստեղծութեան հետ: Իրը սակայն գուգահեռ մը ունի այդ փորձառութիւնը գերազանցօրէն ապրած ու արտադրած Նարեկացիին, որուն նման ինք եւս կը յայտարարէ՝ «մատենացայ»,⁴⁰ այսինքն վերածուեցայ, նոյնացայ լեզուին հետ, միաձուլուեցայ անոր: Այդպէս ալ է, որովհետեւ քերթողն ու իր ստեղծագործութիւնը այստեղ կը նոյնանան գրեթէ մէկ ու միակ, հեւ ի հեւ երկարող, ցաւող, ծիծաղող, յուսացող, յուսախաբուող, յուսահատող, այնուհանդերձ յարատեւող երկի մը մէջ:

Այդ ընդհանրական գիրքին Բաները, գլուխները օղակ առ օղակ շղթան կը կազմեն ողբերգութեան մատեանի մը: Թեթեւօրէն չեմ գործածեր «ողբերգութիւն» եզրը, ոչ ալ ատով կ'ակնարկեմ ողբի ու կոծի երգերու: Կ'ակնարկեմ անոր դասական, հին յունական իմաստին, ուր ողբերգութեան հերոսը, հակառակ աստուածներու կողմէ նախասահմանուած իր իսկ մահու գիտակցութեան, կը կանգնէր, կը պայքարէր, ինքզինք կ'ապրեցնէր մահուան ընդմէջէն յաղթանակ կորզելով պարտութենէն (ի դէպ, դասական ողբերգութիւնը յաղթանակի երգ է իր իսկութեան մէջ. մարդկային արժանապատուութեան հաստատում, ստոյգ պարտութեան դիմաց ուժի կամեցողութիւն, մարդու աստուածայնութեան ստանձնում անյեղի ծառացումով, ստեղծելու տեւական փորձով):

Պարտութիւնը չէ՛ այսօր լեզուին պարտադրուող կացութիւնը, որ կու գայ թէ՛ միջավայրէն, թէ՛ լեզուին իսկ զաւակներէն, զայն սնուցելու եւ աճեցնելու, կենսաւորելու կոչուած համայնքային ղեկավարութեան կողմէ անոր անտեսումէն, անոր ֆեթիշացումով եւ անոր ամուլ, անպտուղ ու ծիսամոլ կոթողացումով: Բանաստեղծը, բացի վարուժանեան գոհի դերին ստանձնումէն, այսինքն մերկանալով հրապարակ գալու, ինքզինք խորանին, զոհասեղանին վրայ դնելու որոշումէն, ոչ-տիրական (ու անտէր ու աներկիր) լեզուի մը պարագային նաեւ պիտի ըլլայ ողբերգական հերոս մը. եթէ մեռնելու իսկ սահմանուած ըլլայ, ինք պիտի խօսի իր մահը, որպէսզի ատով նոր կեանք մը յառաջ բերէ, որովհետեւ լեզուն կ'ապրի

Թերեգայի ամենէն ծանօթ քերթուածներէն մէկն է «Քուկո եմ», ուր ան սիրահարին՝ Քրիստոսի տասներկու անգամ կը հարցնէ՝ «Ինչ կ'ուզես ինձմէ». «...Քեզի այժմ տըր կ'երգես, / ... ըսէ՛. ո՞ր, ինչպէ՛ս, ե՞րբ. / ըսէ՛, քաղցր տըր, ըսէ՛, / ի՞նչ կ'ուզես ինձմէ»:

⁴⁰ «Քաղցրութիւն», *Մունդ եւ անդունդ*, 111:

խօսքով: Վեհանոյշ Թեթեանը այդ ողբերգական հերոսն է, որ ունի յամառութիւնը դեռ հաւատալու եւ խօսելու, նոյնիսկ երբ գիտէ ու կը դիտէ մահը:

Լեզուի նահանջին մասին իր տագնապը կը տեսնենք արդէն կանուխ գործերուն մէջ: Իսկ յետոյ, *Խօսող լեռան պատմութիւնի* մէջ պիտի ըսէ՝ գրողները «*Վաշխատին որ լեզուն գերի չդառնայ ափուռքեան կացութեան, ինքը պահանջատէր դառնայ... Պէտք է դիմադրէ լեզուն: ... Ես մայրն եմ մայրենի լեզուիս. ես է որ ապաստան պիտի տամ իրեն եւ իր գոյութիւնը պիտի պաշտպանէ պիստորոշութենէ»:*⁴¹ (Ի դէպ, գրողին համար «մայրենի լեզուին մայրը» ըլլալու կոչումը կը ստանձնուի նաեւ տառացիօրէն, յղացքի ընդհանուր գաղափարէն անդին. Թեթեանի բառաստեղծական վաստակը հազուագիւտ համեմատութիւններ միայն ունի հայ գրականութեան մէջ, ուր կը հետեւի գլխաւորաբար Նարեկացիի եւ Սիամանթոյի ճաշակին, հեռու մնալով անմարսելի արտադրութիւններէ):

Վերի հատուածը կը խօսի ինքնաստեղծումի մասին, որ է ինքնութեան փընտռութիւնը եւ կազմաւորում, ոչ թէ ընկալում պատկերի մը որուն գերին դառնայ մարդ: Ո՞րն է խօսող լեռը. իր մօտ *արարատը լեզուն է*, լեզուով ստեղծուողը, փոխանցուողը, ըմբռնողը. լեռը ուրեմն կ'ականահարուի իր սեփական բնակիչներուն կողմէ. կը փոշիանայ, կը վերածուի յուշարձանի, յիշատակի, սրբազան մասունքի, շատ յարգելի սակայն մեռելաբանի մը: Կ'ըսէ՝ (իրաւ) գրողները «*պանծայի անցեալը չերգեցին, այլ ներկան՝ իր սեւով ու մուրով*»:⁴²

Թանգարանի յիշեալ պատկերին մէջ երկար կը յածի Թեթեան, հոն «*դուրսին կ'ըլլայ / եւ մահուան տեսիլք / եւ կեանքի ցնորք*», բայց «*թանգարանիս մէջ ամէն կողմ դուն ես ... ձայներ կը խուժեն / ուժգին աւելի / աւելի կապող եւ անբռնելի / լոյսերը կը վառեն / բառերո՛ւ լոյսեր*», քանի որ «*պահ մը մեռած ես / պահ մը կենդանի... / այստեղ ամբողջ ես ու գեղեցկութեան կերպար ես անպոյզ / այստեղ հաշմանդամ ու արիւնյուս / անբառ ու անլուր շղթայուածի պէս*», որ չի խօսիր ու չի լսուիր, հակառակ որ «*անհունութեան մտածումն իսկ ես*»:

Փակեր եմ դուռը

այս թանգարանի մշտնջենական բնակիչն եմ ես
թանգարանիս մէջ միմիայն դուն կաս որովհետեւ
դուն ոչ անցեալ ես
ոչ ներկայ եւ ոչ
ապառնի ունիս

դուն այն լոյսն ես որ ստեղծուեցաւ Ըլլալ բային հետ

Դուն մշտահոյով խաւարիս ձայնն ես:⁴³

⁴¹ «Ահագանգ ու պատարագ», (2004, 2015), *Խօսող լեռան պատմութիւնը*, 183-184:

⁴² *Խօսող լեռան պատմութիւնը*, 192:

⁴³ Տես ծանօթագրութիւն թիւ 38:

Վեհանոյշ Թեքեանի գրականութեան ամենաբնորոշ յատկանիշներէն են անարատ կշռոյթը, անձանձրոյթ ընթեռնելիութիւնը, ձայնի, գաղափարներու եւ պատկերներու սակաւագիւտ ինքնատպութիւնը (որուն մասին կարելի է կարծիք

Վեհանոյշ Թեքեանի գրականութեան ամենաբնորոշ յատկանիշներէն են անարատ կշռոյթը, անձանձրոյթ ընթեռնելիութիւնը, ձայնի, գաղափարներու եւ պատկերներու սակաւագիւտ ինքնատպութիւնը ... բայց նաեւ անգիջող ցասումը լեզուի բեղմնաւորութիւնը վտանգողներուն եւ լեզուն ու լեզուի մշակները լուսանցքայնացնող մշակութային գործիչներու դէմ:

կազմել սոսկ քերթուածներու վերնագիրները կարդալով), բայց նաեւ անգիջող ցասումը լեզուի բեղմնաւորութիւնը վտանգողներուն եւ լեզուն ու լեզուի մշակները լուսանցքայնացնող մշակութային գործիչներու դէմ: Արեւմտահայերէնով շղթայագերծուած ստեղծագործական թափը այդ լեզուի գեղեցկութեան բարձրագոյն կատարներէն կը քալէ, զայն հարըստացնելով, անոր արտայայտչականութեան կարծես կատարելութիւնը ապացուցել փորձելով, այնուհանդերձ առանց մոռնալու զանազանել

կեղեւը միջուկէն. «Յաւատա քառերու՝ եթէ լուսեղ հոգի ունին / մի հմայուիր անոնց շքեղ հանդերձանքէն»: ⁴⁴

Մեծ բանաստեղծները ներքնապէս գիտեն որ իսկական բանաստեղծ են, թերեւս նոյնիսկ «մեծ», եթէ զեղչենք այդ մաշած, աժանցած որակաւորումի ընթացիկ իմաստը: Թեքեան չ'ըսեր, բայց իր միտքերը կը թուին գալ այդպիսի գիտակցութենէ, որ ստիպողաբար պատասխանատուութեան ծանրութիւնով մը օժտած է նախադասութիւնները ու վեհացուցած՝ ըսուածները:

Թէ՛ գրողը, եւ թէ՛ լեզուն փորձած ու յաջողած են լրացնել կէս դար առաջ կատարուած հռչակումի պէս խոստումը. «Պարզ արձագանգ չեմ, լեզուակն եմ պանգի, խօսքն եմ ինքնարուի, ձայն եմ վերջապէս»: ⁴⁵

Առանց լրջօրէն կարդալու գրականութեան մասին կարծիք կազմելը ընթացիկ երեւոյթ է գոնէ մեր լեզուին մէջ: *Հարկ է կարդալ* Վեհանոյշ Թեքեանի գործը, ուր տասնամեակներ առաջ գրուած կարգ մը յղացքներ մատչելի դարձած ըլլան թերեւս այսօր միայն, որոշ գաղափարներու տարածումէն եւ հանրայնացումէն ետք: Բառերով կամ յանգերով թուղթ մրոտողներէն շատեր մինչեւ վերջերս մերժեր էին Սարաֆեանն ու Պըլտեանը, վստահաբար ընդունելով կարդալ սակայն Թեքեանի գեղասահ տողերէն անոնք միայն, որ քնարերգական օրօրի իրենց կարիքը պիտի գոհացնէին, ընթերցումի իրենց աշխատանքին մէջ շրջանցելով անշուշտ մտածումը, փիլիսոփայութիւնը, իմաստի նորութիւնը, բողոքը, ի վերջոյ՝

⁴⁴ *Նշանագիր*, 53:

⁴⁵ «Եւ իմ դիմանկարը», *Կապոյտ Ապրիլ*, 91:

այժմեականությունը: Անոնց, եւ միւս կողմէ ժամանակակից (այսինքն «դուրս»ն ու այսօրուան տեսությունները ներծծած) շատ մտաւորականներու դեռ կը պակասի Թեքեանի գործին կարեւորագոյն մասին ընթերցումը, մեղեդիին եւ գեղատեսիլ բառերուն տակ պահուած աղաղակող իմաստին հետ առերեսումը, անոր ընկալումը:



Որոշում եւ իրագործում Երկիր մոլորակին վրայ ապրելու՝
10 Մարտ, 1948:

Երկիր՝ Լիբանան
Քաղաք՝ Պէյրուզ

Հասցէ՝ Քանթարի փողոց, առաջին շէնքին առաջին յարկը,
ուր Նշան Փալանճեան ճեմարանը հիմնուած էր ատենին:
Արաբ տանտիրուհին կը պատմէր թէ Նիկոլ Աղբալեան
մարդամօտ, ազնիւ մարդ մըն էր, մինչ Լեւոն Շանթ՝
«Փայլասուֆ»:

Ծնողք՝ Սարգիս եւ Մարի Թեքեան:

Որովհետեւ մեծմայրս նեղուէր է որ իր գաւկին առջինեկը
աղջիկ է՝ հայրս ըսեր է մօրը. «Հոգ մը ընէր, բու անունովդ՝
Վեհանոյշ կը կնքենք»: Մայրս, սակայն, յամառօրէն Սօսի
գրեր է ինծի համար ծրագրած հագուստներու նկարներուն
քով: Ծուտով միջին եզր մը ի յայտ եկեր է եւ տնեցիները գիս
կոչեր են Նուշիկ:

Հայ հին իշխանուհիի անուն է կ'ըսէին. թագս փնտռելէն
հոգիս ելաւ:

Բարեբախտաբար շատ չուշացան յաջորդներս՝ Անի, Արա,
Սեւան, Լենա: Մեր մանկութիւնը ուրախ էր:

Ընդարձակ, բարձր տուն էր. ճիշդ նախագահ Շամունի
պալատին քով Երկարահասակ յուսամուտներ: Դուրսը
արեւ ու անձրեւ. ներսը՝ գուրգուրանք ու ճողողիւն:

Հայրս դերձակ էր ձմրան եղանակին, իսկ միւս ամիսները
ունէր պանրագործութեան ընդարձակ գործատեղի Լիթանիի
ճոնչացող գետի եզրին: Պատանեկութենէն՝ ճեզուիթներու
ամբողջ դպրոցին առաջնութիւնը շահած է տարիներով,
ուզեր է բժշկութիւն ուսանիլ, ծնողքը բառացիօրէն
պարտադրեր են որ մեծ եղբօր նման դերձակ ըլլայ: Հօրը
հետ երթար պանիր շինէր. ընտանեկան գործը
ընդարձակուէր: Հայրս դերձակութիւն չէր սիրեր: Ամեն
ամառու կանուխ ամառ-ձմեռ ծով կ'երթար յողալու, երբեմն
մեզ ալ կը տանէր: Ծովաբնակ կենդանիներով տուն կու գար
եւ երգելով կ'եփէր զանոնք: Մարգիկ էր, արկածախնդիր,
բարեգութ, գուարթ: Երկար ձող մը բռնած տանիքին ծայրէն
կը քայլէր, աճաբարութիւն կ'ընէր: Չորս լեզու կը խօսէր:
Ուրիշ աշխարհի մարդ էր: Վարպետօրէն կը կապկեր
մարդիկը. եւ քանի որ ամբողջ աշխարհը չէր կրցած պատիլ,
մեծ մարմաջ ունէր մեզի աշխարհագրութիւն սորվեցնելու:


Մայրս բժշկութեան առաջին տարուան արձանագրուած էր,
«գլուխը տարեր են» ազգականները որ ասանկ բախտ չի
ներկայանար, եւ ուրեմն վեճը չշարունակուելու համար
խաղաղատենչ մայրս ամուսնացեր է. տասնութ տարեկան:
Հմայիչ արտաքին, բարձրագոյնին ձգտող, գրեթէ
կատարելապաշտ: Տաղանդաւոր տանտիրուհի, իմաստուն
մայր: Յոգնիլ չէր գիտեր: Անսպառ եռանդ ու ոգեւորութիւն:



Մօր ու հօր
հարսանիքը



Իր մօր եւ հօր հետ,
1949, Ծթորա,
Լիբանան



Ծնողքին եւ քրոջը
հետ, 1951, Չաիլէ,
Լիբանան



Թեքեան ընտանիքի բնակարանը, Պէյրուզ,
Լիբանան



Մայրը

Արդարադատ ու անզիջող, կը դիմադրէր ու կը յաղթահարէր: Կը յիշեմ որ յաճախ դժբախտ լքուած կիներու իրաւունքը կը պաշտպանէր. մեր տունը կը բերէր, կը խնամէր: Թուրքին կողմէ տարագրուած ծերուկին որ լուացք ընելով իր միակ գաւակը մեծցուցած էր ու հարսը դուրս դրած էր զինք՝ մայրս անկողին պատրաստեց անոր համար ու խնամեց չորս տարի մինչեւ հոգին աւանդեց մեր յա՛րիպին: Ամենակարող մայրս չեմ կրնար ըմբռնել թէ ինչպէս հինգ գաւակ գրեթէ միս մինակը մեծցուց, ամէն բան կանոնաւոր, կոկիկ, նրբագեղ ճաշակ: Գնեցաւ որ ամէնքս ալ համալսարանաւարտ ըլլանք:

Պատանեկութեանս երկուքն ալ իրենց անձերը նուիրեցին հաւատքին: Հայրս ու մայրս կը միացնէին քրիստոնէական անձնուէր կեանքը եւ աղօթքի կարեւորութիւնը:



1966, շրջանաւարտ Քաղաքի Հայ Աւետարանական Քոլէճի

Դեռ չափահաս չեղած՝ ընթերցումը օղի պէս, լոյսի պէս, հողի պէս, ջուրի պէս անհրաժեշտ էր: Միշտ գիտակից եղած եմ պարտաւորութիւններուս, բայց յաղթական հոգեկիցս՝ գիրք էր: Կը կարդայի մինչեւ իսկ լուսնի լոյսի տակ, որովհետեւ ժամը ուրին քնանալու համար լոյսերը կը մարէին: Գիւղը ելեկտրականութիւն չկար, գիշերները կը լուսցնէի լամբի լոյսի տակ կարդալով, արբշիռ, կը միանայի բանի մը որուն ինչ եղածը հասկցեր էի. ինչպէս եղածին մէջ է որ կը թափանցէի:

Մանկապարտէզէն մինչեւ աւարտական դասարան յաճախած եմ Հայ Աւետարանական Գոլէճ: Ծնողքս չուզեց որ մենք ուղեղալուացում ունենանք ազգային վարժարանէ ներս. աւետարանական դպրոցի չեզոքութիւնը իտեալական էր: Երկու տարի Հայկազեան Գոլէճ. ապա՝ Պէյրութի Ամերիկեան համալսարանը, ուր առաջին օրէն մայրս եղած է հրավառ լոյսը որ զիս առաջնորդած է մինչեւ այսօր: Հաւատացած եմ որ գրողի այս վաստակը չէի ունենար եթէ չըլլար իր անդադրում քաջալերանքը, եւ ինչո՞ւ չէ՝ պնդումը որպէսզի գրէի, կեանքիս ամենադաժան օրերուն անգամ:



Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին Թեքեաններուն հրկիզուած տունը

Մակայն, կ'ըսեն՝ առանց աստուածատուր տաղանդի կարելի չէր գրել այնպէս ինչպէս գրեցի: Նոյնիսկ եթէ ճիշդ ըլլայ, տաղանդը յիսուն առ հարիւրի անգամ հասնելու չէ, ու միշտ կը գիջի կոչումի գիտակցութեան ու տքնաջան աշխատանքի:

Տասնհինգ տարեկան էի երբ առաջին ոտանաւորս լոյս տեսաւ *Պատանեկան Արձագանգ*ին մէջ, սիրելի ուսուցչուհիին՝ Ժանէթ Քասունիի քաջալերանքով:

Անկէ ետք (այժմ դոկտ.) Չաւեն Մսրըլեանն էր հայերէնի ուսուցիչս: Բախտաւոր էինք: Միակ ուսուցիչն էր որ առանց ժամանակ վատնելու հետաքրքրաշարժ կերպով իսկապէս հայերէն կը սորվեցնէր: Երախտապարտ եմ իր քաջալերանքին համար:

Հայսքովէն հագիւ շրջանաւարտ՝ աշխատակցեցայ Սիրան Սեգայի *Երիտասարդ Հայուհի*ին:

Միրան Սեզան պիտի մեկնէր Պոլիս, իր եղբօր՝ Մատթէոս Չարիֆեանի գերեզմանին շիրմաքար գետեղելու. խնդրեց որ *Երիտասարդ Հայուհի*ի այդ ամսուայ թիւը սրբագրէի: Ծակատագրական եղաւ Տպարան Սեւան ուղղուիլս. Միմոն Միմոնեան հրաւիրեց որ *Սփիւռք*ին ալ աշխատակցիմ Գորովն ու գնահատանքը գոր Միմոնեան կը տածէր նոր գրողներու նկատմամբ բարեբեր դարձուցին հողը, ծնաւ *Սփիւռք-Գարունը*. մենք կոչուեցանք Գարունականներ: 1967-1978 յաւերժահմայ Սփիւռքի մէջ էի: Իր անսպառ եռանդը՝ աշխատասիրութիւնը, համեմուած երգիծանքով, համով դարձուցին մեր օրերը. ամէն առիթ ընծայեց որ մեր գրականութիւնը բարգաւաճի: Սասնոյ լոյսերուն մէջ թող պարուրուի իր հոգին:



Չաւէն Սարգեանի հետ

1969ին Միմոնեանի պնդումով եւ Գուրգէն Մահարիի խմբագրութեամբ ու յառաջաբանով, ինչպէս նաեւ Արմենակ Օհանեանի ինքնական մեկենասութեամբ հրատարակուեցաւ *Կապոյտ Ապրիլը*:



Յակոբ Կիւլոյեան, Երուանդ Փամպուքեան, Տորթ. Յարութիւն Կարեւորեան, Երուանդ Պարսումեան եւ տիկին Կարեւորեան

Այդ տարին տուէր էի ասմունքի երեկոյ մը, երաժշտութեան ու սահիկներու ընկերակցութեամբ, քիչ մը եւս բարեկամանալով բեմերու հետ:

Որոշած էի որ ապրուստս երբեք կախեալ չըլլայ հայկական հաստատութենէ մը – հազար յարգանք բոլոր անոնց որոնք կը ծառայեն հայկական հաստատութիւններու մէջ հմտութեամբ ու անմնացորդ նուիրումով: Իմս պարզապէս անկամս մնալու հարկադրանքն էր. գրականութեան պարագային զիջում պէտք չէ ըլլայ: Ազատութիւնս վտանգուելու հաւանականութենէ զերծ պէտք է պահէի, որ գրէի ինչ որ կ'ուզեմ, ինչպէս որ կ'ուզեմ: Հետեւաբար աշխատեցայ ակնոցավաճառատան մը մէջ իբրեւ վերակացու: Ապա կոյր, համր կամ օթիսթիք երեխաներու ուսուցիչ՝ պատրաստեցի արաբերէն լեզուով դասագիրք մը անոնց համար: Միսիոնարի գործս լրացած համարեցի եւ ցատկեցի Նիւ Եորքի Մերիլ Լինչ սակարանային ընկերութեան Պէյրոլթի ճիւղը, ուր մնացի երեքուկէս տարի, մինչեւ պատերազմը:



Ծնողներուն՝ Մարի եւ Սարգիս Թեքեանի հետ

Ամէն անգամ որ հատոր մը հրատարակեցի, Հայկազեան Գոլէճի գեղեցիկ սրահին մէջ շնորհանդէս տեղի ունեցաւ, ուր կը հաւաքուէին բոլոր կուսակցութիւններէն, յարանուանութիւններէն գրողներ ու գրասէրներ – չեզոք գետին էր:



Սոնա Յովհաննէսեան, Վեհանոյշ Թեքեան, Գալուստ Պապեան, Թորոնթօ, Մնունդ եւ անդունդ գիրքի շնորհահանդէսի ընթացքին

Եւ եղաւ որ 1975ին ահ ու խաւար տարածեց պատերազմը, մայրը լացուց մայրիներու երկրին: Մեր տունը առաջինն էր ուր խուժեցին զինեալները արեւելեան ափի: Աւարուեցաւ աւերուեցաւ տունը, բայց մնաց անոր կենսագրութիւնը:



Եփրատ գետի ափին

1978Էն ի վեր կ'ապրիմ Նիւ Եորք: Հայրս ու մայրս բժշկութեան քովէն սահեցան, սակայն ես սուսիկ-փուսիկ չանցայ: Ամուսնացայ սրտաբան Մկրտիչ Փանոսեանին հետ եւ ունեցանք երկու զաւակներ՝ Հայկ եւ Նայիրի: Երեք տարի ետք անհրաժեշտ էր փրկել իմ ու զաւակներուս



Քրոջ՝ Սեւանին, մօրը, զաւակներուն՝ Հայկին եւ Նայիրիին հետ, Նոր Ճըրզի, 1985



Զաւակներուն՝ Հայկին եւ Նայիրիին հետ, Նոր Ճըրզի, 1985



Մօրը եւ զաւակներուն հետ



Յակօր Կիլլիճեանի եւ Աննօ Երեցեանի հետ



Տիկին Քասունիի հետ, Լոս Անճելոս, 1998



Սեւան, Լենա, Արա, Վեհանոյշ եւ Անի Թեքեաններ, Նոր Ճըրզի, 2011

Կեանքը, ուրեմն Պէրժութի փլատակ տունէն հինգ տարի ետք ձգեցի նաեւ այս փլատակը: Բարեկամուհիներ սատարեցին որ անյայտ մնանք յաւելեալ փորձանքէ ազատելու համար: Մոթելի մը սենեակին մէջ, ուր երկու տարու եւ եօթ ամսու զաւակներուս կողքին՝ դեռ նոր սրտի ծանր գործողութեան ենթարկուած մայրս կը խնամէի, գիշերները Այքբենգիմը ասեղնագործեցի, որ հիմա կը ժպտի մէկուկէս տարեկան թռնիկիս, անոր անկողնին վրայէն:

Մինչ այդ, ամբողջ տասը տարի դատարան երթելէկէլ ետք յաջողեցայ ունենալ ամուսնալուծման փաստաթուղթը: Անձնական կեանքիս մէջ կատարելապէս բախտաւոր եղայ դժբախտութիւններով: Եթէ անհունի հունտը կ'ապրի մէջը՝ անոնք կրնան վիատեցնել բայց չեն կրնար ընկճել: Ոչինչ կրնայ ճնշել դիմադրականութեան ուժին վրայ:

Յոգեկան կեանքս անհուն էր գրականութեան շնորհիւ, հիմա ֆիզիքական կեանքն ալ անհունացաւ կենսախորհուրդ զաւակներուս հետ տարիներու մեծ երակի բաբախումով: Եթէ Հայկն ու Նայիրին հրաշք են, ո՞վ է հրաշածիրը:

Գրեթէ տասնհինգ տարի միակ սելեռումս զաւակներս էին. եւ եթէ չըլլար մօրս պնդումը, եւ իմ հագուադէպ անձկութիւնս ինզինքս ըլլալու՝ այդ քիչն ալ չէի գրեր: Կորսուած տարիներ չեմ համարեր երբեք, որովհետեւ տարբեր երկրի մը մէջ ուր հազիւ ոտք կոխած էի զաւակներս միսմինակս մեծցուցի: Կաշառակեր ու անարդար դատարանի մը մէջ՝ տակաւին ամուսնալուծման զիլ եղանակներուն ամբողջովին անծանօթ՝ բառացիօրէն տիւ ու գիշեր զաւակներս պաշտպանեցի ամէն չարիքէ:

Առաջին երկու բառերը փոխելով՝ դիպուկ է Չարենցի խօսքը. «Երգես անդին, դու գիտնս, ինձ ոչ ոք չի ճանաչում»:

Գրելէ զատ նաեւ դասաւանդեր եմ հայ գրականութեան պատմութիւն: Համազգայինի ընդմէջէն փորձած եմ ժամանակակից գրողներու եւ մտաւորականներու հետ ձեռնարկներ կազմակերպելով ներկայացնել ժամանանակից գրողները, քիչ մը հակակշռել յորելեաններու եւ ոգեկոչումներու յորձանքը:

Իսկ Հայաստանի հետ յարաբերութիւնս տասներկու տարեկանէս կը սկսի, երբ «Մովետական Հայաստան»ի գրութիւնները կարդալու կողքին՝ խաղող բռնած կոլխոգուհիին նկարը կը դիտէի ու կը դիտէի, մինչեւ հասայ Հայաստան, հասայ ու հոգիս յագեցաւ եւ հոգիս ծանրացաւ: Չուզեցի հայրենիք երթալ պարապ ձեռքով, Ուտրէի հրատարակութեանէն ետք միայն արժանի զգացի տեսնելու: Այնուհետեւ գոնէ տասը անգամ գացի: Պայծառ ծիածան կապուած էր երբ սել երանգն ալ տեղաւորուեցաւ: Վահագն

Դաւթեանի կողմէ հատընտիրս խմբագրուելէ ետք, «Գրական Թերթ»ը յայտարարելէ ետք որ մօտ ատենէն լոյս կը տեսնէ տպագրուող *Բառէ Մոլորակները*, յանկարծ անոր տպարանէն դուրս ելլելը խափանուեցաւ, որովհետեւ...

Դաշնակցական մամուլին մեջ լոյս տեսաւ «Կարս» քերթուած: Դաւթեան տրտմաթախիծ ըսաւ. «Յարցը մենք չենք, Սփիւռքի ձեր մարդիկն են»: Եւ ցոյց տուաւ նամակը ուր կ'ըսուէր թէ ես դաշնակցական ակումբէն դուրս չեմ ելլեր եղեր: Մինչդեռ բոլոր հայերս հոն կը հաւաքուէինք պատերազմի թէ՛ շրջանին, քաղաքի արեւելեան ամբիւն արեւմտեան ամի ապահով հասնելու: Նամակ գրողը ամբողջ կեանքը հայերէնի դասատու, տնօրէն, խմբագիր, նոր սերունդի հայ գիր ու գրականութեան անտարբերութեան հանդէպ աւաղող անձնաւորութիւն մըն էր: Դաւթեանը ըսաւ. «Եթէ մենք անտեսենք՝ մինչեւ Մոսկուա կը գրեն»:

Մնացի Սել Յանկին վրայ մինչեւ Հայաստանի անկախացումը: Հատընտիրիս երեսը տեսած չեմ:



Թորոնթօ

Հայաստանի գրական շրջանակները միշտ սրտաբաց ընդունեցին զիս: Յօր պէս, քրոջ պէս, յարգելի գրչակիցի պէս: Մենք ծաւալուն ու խորաթափանց խօսակցութիւններ ունեցանք:

Գիրքերուս հրատարակութեան ողիսականը, մասամբ տրուած է *Խօսող լեռան պատմութիւն* ընդ մեջ: Որեւէ կուսակցութեան չպատկանելուս համար, փշապատ ճամբաս միմակս հարթելու էի: Երբեմն ալ հնարամիտ դարձայ. օրինակ՝ *Նշանագիրի* էջերը մեծադիր են որովհետեւ գրաշարը ըսաւ թէ իւրաքանչիւր էջ տաս տողար պիտի արժէ: Թերթ թերթ ծաղիկներ բոյսեր փուշեր թուփեր, երանութեան պահերու արտադրանքներ, կը համադրես հեռու կը դրկես: Դափնեպսակ դարձած տունդ կը հասնի: Ինչ բախտաւոր եմ որ հայ գրող եմ եւ որոշեցի միայն հայերէն հրատարակել: Անտեսելով անգլիագիր գրող ըլլալու ընկերակցող փառքն ու պատիւը, մեր ազգային կազմակերպութիւններուն իսկ կողմէ, որոնք կ'անտեսեն հայ գրականութեան բուն բնակիչը, հայերէն գրողը: Եւ եթէ կարողացայ ներկայացնել Սփիւռքի Էութիւնը ու պանծացնել արեւմտահայերէնը, ուրեմն լոյսի ճառագայթը չհեռացաւ վրայէս:



Լոս Անճելոս

Անցեալ տարի սիրոս յուզումի մեջ թաթխուած էր: Միացեալ Նահանգներու արեւմտեան ամի ինչպէս նաեւ Գանատայի Համագգայինի նախանձեռնութեամբ, ծայրագոյն բժախնդրութեամբ ու գորովով՝ գիր ու գրականութեան հմուտ հայուհիներ – ինչպէս նաեւ գրականութիւն ջամբող դասախօսներ, տօնակատարեցին 70 տարիներու յիսունհինգամեայ վաստակս: Նուրբ շքեղութեամբ, ինքնատիպ ներկայացումներով, բիւրեղեայ սրտով: Աւելին պիտի գրեմ այս երեւոյթին մասին, եւ շնորհակալութիւն յայտնեմ Առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանին, Համագգայինի վարչութիւններու լուսապայծառ հոգի ունեցող տիկիներուն, իւրաքանչիւր ելոյթ ունեցողի եւ սիրելի, սիրելի աշակերտներուն որոնք ներկայացուցին գործերէս:

Հոս ալ, Պետրոս Դուրեանի մէկ տողը կը մեջբերեմ տարբեր բոնթէքստի մեջ. «Արշալոյս մը անցաւ սրտէս»:

Արփանճանչ ու երկարակեաց:



Նոր Երբք

Տասնչորս տարի Ն.Խ. Եորթի Գոյումպիա Համալսարանի մատենադարանին մեջ գիրքերու ովկիանոսի մեջ էի. երբեմն ժամանակակից գրողներու նոր հրատարակութիւնները՝ սեղանիս վրայ դրուած՝ Բարեւ կ'ըսէին ինծի: Հայերէն ձեռագիրներու, գիրքերու եւ հրատարակութիւններու (ինչպէս նաեւ թրքերէն եւ արաբերէն) մատենագրութիւնը կատարելէ ետք՝ երկու տարի առաջ դարձայ թոշակառու:

2012ին քրոջս եւ եօթնասուն ուխտաւորներու հետ Արեւմտահայաստան այցելութեամբ իրենց իսկ ծննդավայրին մեջ խօսեցայ Չարենցի, Վարուժանի, Սիամանթոյի, Մեծարենցի, Թէքէեանի հետ: Վերադարձ էր նախամօրս տունը, իսկական տունը Թալասի մեջ, ուր Թէքէեան տոհմածառի Սարգիսներէն Նիկողոսներէն Սմբատներէն Յակոբներէն գտուած միայնակ «գարմիկ» մը կ'ապրէր: Ընդարձակ վարդաթուփերու միջեւ տունը հարսի ճերմակ հանդերձանք էր: Սեւ էր պատմութիւնը, բայց Տունը մնացած էր սպիտակ:

Սպիտակի վրայ կենսախիտ պիտակ:

ՎԵՀԱՆՈՅԸ ԹԵՔԵԱՆ



Մոնթրէալ



Սան Ֆրանսիսքօ



Վեհանոյշ Թէքէանի մեծօր ու նախնիներու տունը, Թալաս

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ

Կապոյտ Այրիկ

(բանաստեղծութիւններ), 1969, Պէյրութ, Լիբանան

Ոստրէ

(բանաստեղծութիւններ), 1974, Պէյրութ, Լիբանան

Ճեղքուած մանրանկար

(պատմուածքներ), 1977, Պէյրութ, Լիբանան

Կիզակետ

(բանաստեղծութիւններ), 1978, Պէյրութ, Լիբանան

Նշանագիր

(արձակ եւ բանաստեղծութիւն), 1987, Ն.Խ. ճրգի, ԱՄՆ

Բազմածուխ աշխարհ

(բանաստեղծութիւններ), 1993, Ն.Խ. ճրգի, ԱՄՆ

Տոհմածառ

(պատմուածքներ), 1997, Ն.Խ. ճրգի, ԱՄՆ

Մնունդ եւ անդունդ

(բանաստեղծութիւններ), 2000, Ն.Խ. ճրգի, ԱՄՆ

Հրագիր

(քերթուածներու ընտրանի), 2000, Երեւան, Հայաստան

Խօսող լեռան պատմութիւնը

(գրավերլուծումներ), 2015, Ն.Խ. ճրգի, ԱՄՆ

Աղօթքներ ուռկանի մէջ

(բանաստեղծութիւններ), 2015, Ն.Խ. ճրգի, ԱՄՆ

Սփիւռքագիր

(բանաստեղծութիւններ), 2017, Երեւան, Հայաստան

Սփիւռքապատում

(արձակ), 2017, Երեւան, Հայաստան

ՎԵՀԱՆՈՅՇ

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

Վեհանոյշ Թեքեան որպէս բանաստեղծուհի ի յայտ կու գայ համեմատաբար անջրդի շրջանի մը, 1969ին, երբ երկար ժամանակ Սփիւռքէն ձայն մը, մանաւանդ՝ երիտասարդ, չէր լսուած:

Իր առաջին գիրքը՝ *Կասպոյտ Ապրիլ*, ցնցիչ յայտնութիւն մըն էր, հակառակ անոր, որ Թեքեան արդէն ծանօթ անուն դարձած էր մամուլին մէջ իր յաճախակի երեւումներով:

Այդ օրերուն թէեւ *Սփիւռքի* կամ *Սփիւռք-Գարունի* էջերուն ուրիշ անուններ եւս կ'երեւէին, սակայն յստակ տարբերութիւն մը կար անոնց եւ Վեհանոյշ Թեքեանի միջեւ, բանաստեղծական խառնուածքի եւ յարատեւութեան տեսակետներէն:

Թէեւ Թեքեան այսօր միակը չէ *Սփիւռք-Գարունի* անուններէն, որոնք կը շարունակեն գրական-ստեղծագործական երթը, բայց կը մնայ ամենէն ինքնուրոյն եւ յանդուգն ձայնը Սփիւռքի տարածքին, ամէն վիճայարոյց խնդրի մէջ իր ձայնը բարձրացնող, խօսքը ըսող, օրինակելի համարձակութեամբ մը:

Թեքեան մեր քերթողութեան կը բերէ արդիականութեամբ նորոգուած աւանդական ապրումներ՝ ինչպէս հայ լեզուն, հայրենիքի եւ երկրի սերը եւ հայ արդի կնոջ մը ներաշխարհը:

Թեքեանի լեզուն ապրող լեզու մըն է, հակադիրը գրքունակութեան, առանց մտնելու արդիական այնպիսի ոլորտներ, որոնք գայն քակէին իր ժողովրդային հիմէն եւ տանէին դէպի փողոսկրեայ աշտարակ:

Ամբողջական ընթերցումը անոր քերթողագիրքերուն ի յայտ կը բերէ երկու ուժեղ լարերու գոյութիւնը՝ հայրենասիրական լարը եւ անհատականը: Ըսուած է, որ 20րդ դարու գրականութիւնը ինքնակենսագրական բնոյթ ունի: Շատ յաճախ այս երկու լարերը կը ներհիւսուին անոր տողերուն մէջ, մակարդակներու բազմազանութիւն ապահովելով անոնց: Սակայն Թեքեանի հայրենասիրական լարը, որ արդի միջին սփիւռքահայուն կեցուածքը կ'արտայայտէ, յաճախ շատ աւելի ամբողջական կը հնչէ, քան անհատականը, ուր կեանքի ցաւայի փորձառութիւններն ու ցաւերը միշտ բանաստեղծութեան կը վերածուին:

Թեքեան մեր քերթողութեան կը բերէ արդիականութեամբ նորոգուած աւանդական ապրումներ՝ ինչպէս հայ լեզուն, հայրենիքի եւ երկրի սերը եւ հայ արդի կնոջ մը ներաշխարհը:

Թեքեանի քերթողութեամբ լսելի կը դառնայ սփիւռքահայ կնոջ ձայնը, շատոնց խափանուած Սփիւռքի տառապանքին մէջ: Այդ ձայնը առոյգ է եւ սփիւռքահայերէնին կու տայ փայլքը ժառանգուած արեւմտահայերէնին:

Անոր քերթողութիւնը առօրեայէն կը ծնի եւ իբր այդ, կ'անցնի ազատ չափին. իր տողերուն մէջ յաճախ կշռոյթի գնացքն ալ կը խախտի, կամ՝ ամբողջովին կը չքանայ, առանց սակայն վերածուելու պատմողական արձակի:

Թեքեանի քերթողութեամբ լսելի կը դառնայ սփիւռքահայ կնոջ ձայնը, շատոնց խափանուած Սփիւռքի տառապանքին մէջ: Այդ ձայնը առոյգ է եւ սփիւռքահայերէնին կու տայ փայլքը ժառանգուած արեւմտահայերէնին:

Այս քերթողութիւնը անմիջական է, օրագրային էջերու նման, ներաշխարհի ալեկոծ մտորում-ապրումներուն եւ անսահմանութեան վրայ բացուած:

Թեքեանի լեզուին յատկանիշներէն մէկն ալ, պատկերակերտումի կողքին, բառակերտումն է, որ քերթուածներուն մէջ կը շողայ (կաթնափրփուր, լուսաբախ, ձայնաբախում, լուսաշրթում եւ այլն), թէեւ երբեմն նոր բառեր շինելու կիրքը կը ծանրացնէ տողը.

«Դեղնամշուշ սահմանածուատ տաճար»:

Թեքեան կը պատկանի սփիւռքահայ գրողներու սյն փաղանգին, որ կը կենայ քանի մը մշակոյթներու հանդիպման կէտին (յաճախ ինք դառնալով այդ կէտը). արհեստավարժ են այս նոր գրողները եւ այնքան ալ չեն հաւատար ներշնչումի միթոսին: Տիրացած են արուեստի արհեստին՝ թեքնիքին, եւ կը կիրարկեն զայն

Թեքեան կը կենայ, հաւասարակշռութեամբ, աւանդականի եւ արդիականի սահմանին վրայ, օգտուելով երկուքէն, առանց կաշկանդուելու անոնցմով

համոզիչ հմտութեամբ: Կը պատահի սակայն, որ երբեմն այդ հմտութիւնը ինքզինք զգացնէ, կոտրելով բանաստեղծական մթնոլորտը քերթուածին մէջ:

Թեքեան կը կենայ, հաւասարակշռութեամբ, աւանդականի եւ արդիականի սահմանին վրայ, օգտուելով երկուքէն, առանց կաշկանդուելու անոնցմով, հետեւաբար կրնայ գրաւել ընթերցող հասարակութիւնն ու մտաւորական դասը միաժամանակ:

Սփիւռքը ուժգնօրէն զգացող եւ խիտ կերպով ապրող բանաստեղծ է Թեքեան: Իր երազը Երկիրն է, իրականութիւնը՝ Լեզուն: Յողն ու Երկիրը գլխազիր են ո՛չ միայն իր էջերուն, այլ գլխազիր ապրում են իր արիւնին մէջ, ամէն պահ արթուն, վազող, կանչող: Այդ կանչն է, որ կը թաւալի անոր տողերուն մէջ, բանաստեղծութիւն դարձած, չափածոյ ըլլայ գրածը թէ արձակ:

Ինչ որ կը գրէ Թեքեան, որպէս հայրենասիրական քերթուած, տարբեր է աւանդապահներու գրած տափակ տողերէն, որոնք անհոգի գրիչով շարուած

ըլլալ կը թուին: Ինք սփիւռքահայ գրողն է, որուն հայրենասիրութիւնն ալ բզկտուած է իր Էութեան պէս: Սփիւռքահայու հաւատք կայ Թեքեանի հայրենասիրութեան մէջ:

Վեհանոյշ Թեքեանի մօտ հայրենական գիծը ամբողջովին նոր որակ կը հագնի. հայու նոր տիպարի մը կեցուածքն է ասիկա, լրիւ տարբեր աւանդապահ բանաստեղծներուն կեցուածքէն. անորը իրապաշտ, բայց նաեւ խորունկ կապերով հողին կապուած մարդուն հոգեբանութեան արտայայտութիւնն է, հեռու՝ երազայինէն, անիրականէն.

Սփիւռքը ուժգնօրէն զգացող եւ խիստ կերպով ապրող բանաստեղծ է Թեքեան: Իր երազը երկիրն է, իրականութիւնը՝ Լեզուն:

Իմ երկիրս տխուր է,
Քանի որ ես այդտեղ չեմ:¹

Իր այս նախադասութենէն սկսեալ Թեքեան միշտ պեղած է իր նախնինէրուն երկրին պատմութիւնը.

Այս հանդիպումը արնոտ՝ ոչ թէ նարօտ ու պատարագ
վերածնունդ կը բուրբ
Սիրտ մը պահուած է հոս Յոս անթեղուած է բերդ մը ամրասիւն
Այստեղ ծննդավայր է:²

Իր պատկանելիութիւնը եւ իր յարաբերութիւնները հայրենիքի իր եղբայրներուն հետ.

Ես ուղեւոր չեմ Եկեր եմ այստեղ՝ ապրելու

...
Ձեռքդ սեղմելու՝ եթէ բարեկամ ես
Եկեր եմ օրերդ արիւնելու
Եթէ անտարբեր ես
տխրութեանս հալածանքին

...
Եկեր եմ մոխրագրելու ցաւդ
արեւախուրձ բառերով նկարելու կեանքդ
Եկեր եմ՝ որովհետեւ
կ'ապրիմ անմահութեան թոյնով:³



¹ Վ. Թեքեան, *Ոսորէ*, Պէյրուք, 1974, էջ 23:

² Վ. Թեքեան, *Ոսորէ*, Պէյրուք, 1974, էջ 23:

³ Վ. Թեքեան, *Բազմածուկի աշխարհ*, Նիու ճըրզի 1993, էջ 99 :

ՍՆՈՒՆԴԸ ԱՆԴՈՒՆԴԻՆ ՄԷՉ¹

ՄԻՐՆԱ ՏՈՒՉՃԵԱՆ

Ընդամենը հայելի մըն եմ
 ջարդուած հայելին զիս կրող պատկերներուն
 բաղաբներու պատերուն փակցուցեր եմ
 զիս կրող պատկերներուն անունները բաղաձայն
 բազմաձայնումը
 Ոսկորներուս խշրտուքը ծանրանայով
 անլուծօրէն կը լծուի հողիս ամլութեան
 Ամլութիւնը տարածուեր է լեզուիս եւ գանկիս մէջ
 ոսկորներուս վրայէն պէտք է անցնէի հասնելու
 սահմանաւոր վայրիս վայրերը անսահման
 անդրադարձայ որ լեզուս հատուած էր
 ձեռքերս զօրացած էին
 ոտքերուս մէջ մահուամբ աճող որդեր կային
 ողնայարս տեղ մը չունէր յենելու
 Տրտմամաշ պատկերները ինձմէ դուրս հանեցի
 արփեհարբած շարականներէն դուրս ելայ անդարձ
 մայթերուն ինկած լուսատ հեւքի պէս
 ծիրանի փողին մէջէն դուրս քաշեցի

Խիղճը
 եւ լեցուն եմ հիմա
 եւ յաւիտենական

ինչպէս ճիչը Կոմիտասի

Քու յիշած ձեւերովդ չէ որ գրեցի այբուբենիս տառերը խրթին
 Գրեցի ինչպէս երեւացին ինձի
 Բառերու ասեղը մերկ մորթիս վրայ կարելէ ետք երկար
 կանգնեցայ ըսի՝ գեղեցկուհիդ չեմ

սիրուհի՛դ եմ ես

Մութին մէջէն գտայ բոլոր կորսուած բառերդ ձայներս խեղդուած
 Ես ուրուայնամուտ պատմութիւնդ էի...²

¹ Վեհանոյշ Թեքեանի գործերուն նուիրուած գրական երեկոյ մը կազմակերպած էր հեղինակին ներկայութեամբ: Այս գրութիւնը հիմնուած է այնտեղ ներկայացուցած դասախօսութեանս վրայ, որ նաեւ մասամբ ծառայեց իբրեւ նախաբան այդ առթիւ Պրոբլիմի ուսանողներու պատրաստած բեմադրութեան՝ Թեքեանի «Յայոց պատմութիւն» քերթուածին:

² Թեքեան, Վեհանոյշ. «Մոխիրե ծառ», *Նշանագիր*. Նիւ Երրզնի, 1987. էջ 30-31:

հ^օնչ կը ներկայացնեն այս տողերը եթե ոչ բառի ու բանի սբանչելիութիւնը, գորութիւնը: Նախ եւ առաջ գոհունակութիւն պիտի ստանանք լեզուէն, լեզու մը որ մեզ կը հրաւիրէ երեւակայելու եւ խոկալու: Վեհանոյշ Թեքեանի քերթողութեան մէջ անթիւ են գեղարուեստական բարձրագոյն որակով տողերը, բազմազան, յաճախ անսպասելի ոճով գրուած՝ մէկը միւսէն աւելի գեղեցիկ ու եռուն: Տողեր, որոնց համը ընթերցողին բերանը կը մնայ:

Պատասխաններ փնտռող քննադատը միշտ պետք է յիշէ, որ զգուշօրէն պետք է մօտենայ Թեքեանի բանաստեղծութիւններուն. որովհետեւ այդ գրականութիւնը կը զբաղի գրելու գործողութեամբ, ոչ թէ պատասխաններ կամ պատգամներ հաղորդելով: Տեսլադաշտ ստեղծող է Թեքեան:

Պատասխաններ փնտռող քննադատը միշտ պետք է յիշէ, որ զգուշօրէն պետք է մօտենայ Թեքեանի բանաստեղծութիւններուն. որովհետեւ այդ գրականութիւնը կը զբաղի գրելու գործողութեամբ, ոչ թէ պատասխաններ կամ պատգամներ հաղորդելով: Տեսլադաշտ ստեղծող է Թեքեան:

Ուրեմն պիտի չփորձեն վերլուծել այս մէջբերումը, որ այնքան յուզում արթնցնելու կարողութիւն ունի, այլ՝ մի քանի մանրամասնութեան վրայ կեդրոնանալով պիտի անդրադառնան Թեքեանի ընդհանուր գրական յատկանիշներուն: Տողերը առնուած են *Նշանագիր* հաւաքածոյի առաջին գործէն՝ «Մոխիրէ ծառ» քերթուածէն: Կարճ հատուած մըն է համեմատաբար ծաւալուն 27 էջնոց գլուխ գործոցի մը: Այստեղ բանաստեղծութեան ես-ը կը պատկերէ աղետային մահը,³ մտային եւ լեզուական ամլութիւնը, եւ յետոյ տեսարանէն դուրս կու գայ իբրեւ բառերու տէրը՝ գտած է կորսուած բառերդ: Այսինքն այս գտնուած բառերը նաեւ քո՛ւ՝ ընթերցողիդ բառերն են: Բառերու փնտռտուքը եւ միաժամանակ անոնց նուաճումը ամէնուր է: Այս բառերով է որ հեղինակը կը կերտէ սփիւռքի լեզուն, սփիւռքեան հասկացողութիւնը, լեզուով մը որուն հայեացքը դէպի ինքզինք ուղղուած է: Ինք իրմով կը զբաղի: Անսպասելի բառեր քով-քովի կը բերէ, նոյն ձեւով եւս անսպասելիօրէն նիւթեր իրարու կը կապէ եւ այս բոլորը կը նպաստեն բանաստեղծութեան բարդ կառոյցին: Կարծես կը փափաքի որ ընթերցողը մնայ հակասութիւններու կամ ոչ բոլորովին յստակ պատկերացումներու մէջ եւ մտմտայ այդտեղ:

Թեքեան այսպիսով կը մշակէ լեզուական փիլիսոփայութիւն: Չինք կարդալով կը զգանք, կը հասկնանք լեզուի կեանքը, իր իսկ բառերով՝ իբրեւ «բաբախուն մարմին»:⁴ Լեզուի իր գործածութիւնը կը փաստէ թէ լեզուն ողջ է. մեզի կը մնայ

³ Հեղինակը հարցում-պատասխանի ընթացքին յիշեց թէ այս տողերը գրած էր Լիբանանի քաղաքացիական պատերազմի սոսկալի օրերուն, երբ ռմբակոծման սպառնալիքէն ազատելու համար իր դրացիներուն հետ ապաստանած էր շէնքին մութ ստորնայարկը:

⁴ Թեքեան, Վեհանոյշ. «Արեւմտահայերէնի վերջին ճգնաժամը», *Խօսող լեռան պատմութիւնը*. Նիւ

որոշել թե կ'ուզենք այդ իրողությունը ընդունիլ: Եթե լեզուն կեանքի անհրաժեշտ մասնիկն է, դժուար չէ հետեւցնել որ գրականությունը մարդկություն է եւ գրականը՝ ամենամարդկային հետամտումը: Այս պատճառով է որ բանաստեղծութեան եւ-ը՝ գիտակցելով որ իր լեզուն թէ՛ հատուած է, թէ՛ ուժգին, ինքզինք կը նկատէ իբրեւ «ուրուայնամուտ պատմություն»: Ուրեմն ունինք աշխարհահայեացք մը որ կը միաձուլէ կեանքն ու գրականությունը: Եւ իրօք այս միաձուլումը կայ Թեքեանի միւս գործերուն մէջ, ուր օրինակ՝ ան կը գրէ. «Մեզմէ իւրաքանչիւրը բաժնուած է եւ միացած՝ ինչպէս վեպի մասեր»:⁵ Եւ դարձեալ ուրիշ գործի մը մէջ, ուր մահամերձ անձ մը կը նկարագրէ՝ «կեանքիդ արարը պիտի լմնայ ինչպէս քարդուն»:⁶

Թատերական, գրական կառոյցի լեզուով կեանքը եւ մարդկությունը նկարագրելը անշուշտ նորություն մը չէ: Յետարդիական գրողները շատ կը սիրեն կեանքի եւ գրականութեան անբալտելիությունը ներկայացնել: Բայց Թեքեանի մօտեցումը եզակի է, որովհետեւ կեանք-գրականություն միաւորումն է որ առիթ կու տայ թէ՛ ողբայլու, թէ՛ անձնակերտման: Այլ խօսքով՝ գրականությունն է որ մահը, Աղէտի ողբերգությունը եւ յիշատակը, կեանքի տագնապը եւ սփիւռքի դրությունը կը դարձնէ շինիչ եւ արդիւնաւետ: Նոյն տրամաբանութեամբ՝ ուրիշ բանաստեղծութեան մը մէջ կը գրէ յետ-մահու նամակ իր մտերիմ բարեկամին՝ Ժիրայր Պոյաճեանին, եզրակացնելով թէ միայն բանաստեղծութեան միջոցաւ կարելի է փորձել կորուստին հետ հաշտուիլ.

Քառերու փնտռուքը եւ միաժամանակ անոնց նուաճումը ամենուր է: Այս քառերով է որ հեղինակը կը կերտէ սփիւռքի լեզուն, սփիւռքեան հասկացողությունը, լեզուով մը որուն հայեացքը դեպի ինքզինք ուղղուած է: Ինք իրմով կը գրադի:

Միայն այս մնաց
Բանաստեղծութեան բարի ճամբան,
Որ կը փորձէ վերածել մահը՝
Լեզուի եւ լուծեան.⁷

Ետ գալով «Մոխիրէ ծառ»ին, կ'ուզեմ մէկ բան եւս նշել: Բանաստեղծությունը առանց կետադրութեան գրուած է, ո՛չ ստորակետ, ո՛չ վերջակետ, ո՛չ միջակետ,

Երրգի, 2015. Էջ 11:

⁵ Թեքեան, Վեհանոյշ. «Ընտանեկան ատեան», *Բազմածուի աշխարհ*. Նիւ Երրգի, 1993. Էջ 35:

⁶ Թեքեան, Վեհանոյշ. «Երբ օրը յոգնութեան կապոյտ շապիկը հանէ», *Կիպակետ*. Պէյրուս, 1978. Էջ 103:

⁷ Թեքեան, Վեհանոյշ. «Յետ-մահու նամակ Ժիրայր Պոյաճեանին», *Սնունդ եւ Անրունդ*. Նիւ Երրգի, 2000. Էջ 89:

պատնեշ չկայ բառերու հեղեղին ընդդէմ: Բոլորը մէկ շունչ է: Կարծես կը հետեւինք մտքի թելի մը՝ անաւարտ, կենսայորդ շարանին, որ շերտ առ շերտ կը զարգանայ: Քերականական սահմանները քանդող հեղինակը նաեւ սահմանը

Քերականական սահմանները քանդող հեղինակը նաեւ սահմանը նիւթ կը դարձնէ երբ կ'ըսէ թէ կ'աշխատի հասնիլ իրեն սահմանուած վայրին անսահման վայրերը:

նիւթ կը դարձնէ երբ կ'ըսէ թէ կ'աշխատի հասնիլ իրեն սահմանուած վայրին անսահման վայրերը: Անսահման վայրեր հասնիլը կը նշանակէ ընթերցողին առջեւ նոր իմացական աշխարհներ բանայ: Սահմանը, կամ աւելի ճիշդ՝ անսահման ըլլալը, որ-

պէս սփիւռքի դրուծիւնը ներկայացնող հիմնական փոխաբերութիւններէն մէկը, մարմնաւորուած է Թեքեանի գործերուն կառոյցին, ոճին, մտածելակերպին եւ նիւթերուն մէջ.⁸

Եւ որովհետեւ միշտ, ամէն գետնի վրայ սահմանները կը հրէ Թեքեան, իր լայնածաւալ գրական գործունէութիւնը կը ներառէ ամէն ինչ՝ ամէն նիւթ որ կարելի է երեւակայել՝ սեր, մայրութիւն, պատերազմ, կնոջ տեսակետն ու կորովը, այրատիրութիւնը, եւ հայ եւ համաշխարհային գրականութիւնը, գրողի էութիւնը, երիտասարդութիւնն ու ծերութիւնը, յիշատակը, հաւատքը, ընկերութիւնն ու մշակոյթը: Եւ այս բոլորն ու աւելին կը քննարկէ թէ՛ առարկայական եւ թէ՛ վերացական մօտեցումներով ու բազմազան ոճերով:

Օրինակ՝ Պըրքլիի ուսանողները «Յայոց պատմութիւն» վերնագրով բանաստեղծութեան թատերական յատկութիւններէն օգտուելով զայն բեմականացուցին: Համեմատած «Մոխիրէ ծառ»ին, այնքան տարբեր է այս գործին ոճը՝ իր իրապաշտ յատկութիւններով, որ կարծես թէ ուրիշ հեղինակ մը գրած ըլլար: Բայց միւս կողմէն՝ կան բոլոր յատկանիշները որոնք վարժ ենք տեսնելու Թեքեանի գործերուն մէջ. անակնկալները, լեզուի ճկունութիւնը եւ սահմաններու քննարկումը, այս անգամ սփիւռքի տարածքի, տարածուածութեան եւ ժամանակի հոսանքի իմաստով:

Հաւանաբար այս վերնագիրը՝ «Յայոց պատմութիւն», այն տպաւորութիւնը կը ստեղծէ որ նիւթը պատմական անկիւնադարձերու մասին պիտի ըլլայ, անկիւնադարձեր ուր գլխաւոր հերոսները իրենց արարքներով ժամանակը եւ ժողո-

⁸ Քննադատները ընդհանրապէս չեն կրցած իմաստաւորել Թեքեանի կատարած կետադրական զիջումները որպէս գրական յեղաշրջում: Օրինակ՝ Գեորգ Քրիստիանեան համոզուած է որ *Բապմածուի աշխարհի* «միակ վրիպումը կետադրութեան անտեսումն է» («Վեհանոյշի Վեհասքանչ Խոյանքը», վերատպուած Թեքեանի *Սփիւռքագիրի* մէջ. Երեւան, 2017. էջ 366): Իսկ Երուանդ Ազատեան *Նշանագիրի* քերթուածներու մասին կ'եզրակացնէ. «Թեքեան հրաժարած է հայերէնի ընթացիկ կետադրութենէն. սակայն, շարադասութեանց յստակութիւնը, քերթողական ռիթմը, տողերու շարա-յարումը գրեթէ աննկատելի կը թողուն կետադրութեան այս զանցումը: Թէեւ տակաւին անհասկնալի կը մնայ ինծի բանաստեղծական արժէքի յաւելումը որ պիտի զար կետադրութեան զեղչումէն»: (*Նշանագիր*, վերատպուած Թեքեանի *Սփիւռքագիրի* մէջ. էջ 343):

վուրդը կը մղեն առաջ: Բայց ընդհակառակը՝ Թեքեանի բանաստեղծութիւնը կը նկարագրէ սփիւռքի իրականութիւնը անձնական, ընտանեկան յարաբերութիւններու ընդմէջէն: Այստեղ ներկայացուող ընտանիքը մայրիշխանական կը թուի, այն իմաստով որ կիները՝ հորաքոյր, զարմուհի, տալ, մեծմայր, մայր եւ հեղինակը յիշեցնող «ես» մը գլխաւոր դեր կը խաղան: Աւելին՝ Էրիկմարդոց մասին ընդհանրապէս կ'իմանանք միայն խօսակցութիւններու ընթացքին:

Թեքեան իր ընտանիքի անդամները իբրեւ տիպար ընտրելով մեզ կը տանի Պէյրուտ, Պոլիս, Պուէնոս Այրէս, Ուիսքանսըն եւ Բարամըս, Նիւ Ճըրզի, ուր ինք ներկայիս կը բնակի: Այս տիպարներու երթալ-գալերը, որոնք մաս կը կազմեն հեղինակին յիշատակներուն, որոշ չափով շփոթ կրնան ստեղծել: Ո՞վ հորաքոյր է, ո՞վ տալ եւ ո՞վ ուրկէ՞ եկաւ: Ընթերցողը հազիւ թէ սկսի բոլոր տիպարները ճանչնալ, յանկարծ նոր ազգականներ կը յայտնուին: Վերջապէս՝ յիշատակները եւ յիշելու գործողութիւնը կ'ապացուցեն թէ որեւէ ժամանակ, որեւէ պահ իր մէջ կ'ընդգրկէ այլ ժամանակներ: Այսինքն՝ գործին կազմն ու ձեւը կը լրացնեն անոր բովանդակութիւնը. կը ներկայացնեն Ադէտէն ետք արտագաղթերու բազմութիւնը եւ բազմապատկումը, վրայ վրայի գալը:


Քերթուածին պատկերաւորած ընտանեկան խճանկարին ետին նաեւ կայ մշակութային հարցադրում մը. Սփիւռքի մէջ ինչ կը պատահի մշակոյթին եւ լեզուին: Նոյնիսկ կարելի է մշակոյթը սեպել գործին հերոսը: Իրապաշտութեան մակերեսայնութիւնը ապացուցող տեսարանի մը մէջ ձուկի նաշխով ձեռագործ մը կ'ընդմիջէ բանաստեղծութեան առօրեան՝ ան հին օրերու, հեքիաթի ձուկն է, որ պատմութիւններ ունի պատմելիք, եթէ մտիկ ընող ըլլայ: Այս ձուկին յայտնութիւնը կը յստակացնէ թէ լեզուն ապրող, շնչող մասնիկն է սփիւռքեան իրականութեան եւ ո՛չ՝ ժառանգուած «գարդ»⁹ մը:

Յետաքրքրական է թէ կէս դար՝ երկու սերունդ ետք, 21րդ դարու աշակերտներուն տպաւորութեամբ ներկայացուած 1960ական թուականներու Պէյրուտը դեռ հարազատ կը թուէր: Ուսանող մը նշեց թէ կարծես իր տան մէջ տեղի ունեցած խօսակցութիւնները արձանագրած է Թեքեան: Յիշեցինք այն տեղերը, այն օրերը որ չէինք տեսած, բայց քերթողին երեւակայութեամբ մաս կազմեցին մեր անհատական փորձառութիւններուն:

«Հայոց պատմութիւն»ը լոյս տեսած է *Մունդ եւ անդունդ* խորագրին տակ քսաներկու այլ բանաստեղծութիւններու կողքին: Շատեր նշած են թէ *Մունդ եւ*

**Սահմանը, կամ ատելի ճիշդ՝
անսահման ըլլալը, որպէս սփիւռքի
դրութիւնը ներկայացնող հիմնական
փոխաբերութիւններէն մէկը,
մարմնաւորուած է Թեքեանի
գործերուն կառոյցին, ոճին,
մտածելակերպին եւ նիւթերուն մէջ:**

⁹ Թեքեան, Վեհանոյշ. «Հայոց պատմութիւն», *Մունդ եւ անդունդ*. Էջ 22:

անդունդը Սփիւռքը իր բոլոր վերիվայրումներով կը ներկայացնէ: Բայց հաւանաբար կ'արժէ անելցնել որ Թեքեան իր ընտրած վերնագրով եւ անոր գործածութեամբ կը լիցքաւորէ մեր ըմբռնումները Սփիւռքի մասին: Այս բանաստեղծութիւններու շարքին էջերուն վրայ երբեք «սնունդ» բառը չէ գործածուած, իսկ «անդունդ»ին յաճախ կը հանդիպինք՝ ընկերներ բաժնող տարածութիւններու, մահուան եւ մթութեան դէմ յանդիման: Ընթերցողը պիտի հետեւցնէ թէ սնունդը սահմանումի չի կարօտիր, որովհետեւ սնունդը ինք՝ բանաստեղծութիւնն է: Թեքեան սնունդին ծնունդ կու տայ՝ յատկապէս անդունդին մէջ: 

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Փափուկ արեւներ

Փափուկ լուսնահար արեւներ

Լուսնահար, դեղնախայտ սենեակներ:

Աղմկոտ մթութեան կաթիլները հաւաքած
ծովեր ծովեր կը շինէի.

Մեծհայր մեծմայր ամենքս մէկ՝ Կիրակի կէսօրէ ետք

Կանաչ պատերով սենեակի քիլիմին վրայ կեդրոնացած

Յաղթ ու խռպոտ ռատիոյին դիմաց մէկական խոշոր ականջ՝

«Երեւանն է խօսում»ը մտիկ կ'ընենք,

Մերթ ընդ մերթ կը թարգմանէ հայրս մեզի

«Հայաստանի լեզուն»:

Վարդերը կը բացուին ժամանակին,

Աքլորը թառեր է ցանկապատին, ցանկապատը՝ աթոռին,

Բարձր բժախնդի քանրվայի գործ է, ուր աքլորը արդէն

Ծերացեր փոշոտեր է, բայց իր անթարթ կուկուլիկուն

օդին մէջն է:

Յորաքոյրս եկեր է Պուէնոս Այրեսէն «մանչս մանչս»

Ըսելով ամբողջ օրը

երկու տարեկան տղուն ետեւէն կը վազվզէ:

Վարդաքը Ուիսքանսընէն հասեր է, տեսակ տեսակ

Սեւ գլխարկներ կը դնէ

ձախ ծռած, ետեւ ծռած, եւ ոսկեգոյն գրիչով

օրագրատետրեր կը բաժնէ.

«Կարծես քի կարեւոր բաներ կ'ընենք տա

Պիտի նստինք ամեն գիշեր գրենք եղեր»,

կը բրթմնջայ միւս հօրքուրս:

Իսկ Յեղինէն Պոլիսէն թոներով անձեռոց բերեր է,

Ո՛վ որ Բարի Եկար-ի գայ՝ անձեռոց մը կը հանէ կու տայ,

վերջին եկողներուն միայն դեղին անձեռոց մնաց:

Մարի հօրաքոյրս Պոլիս հարս գացեր էր.

Յիսունվեցի Սեպտեմբերին՝ սարսափահար

«Աս թուրքերը թո՛ւրք պիտի մնան» ճչացեր է.
 Իր նորօրեայ ամուսինն ու ապառիկ շունչը առեր
 հասեր է Արժանթին:
 Թանկօ պարել շատ կը սիրէ,
 Բոլոր նկարները որ ցոյց կու տայ
 Իր «պաշտելի ամուսին»ին հետ թանկօ կը պարէ,
 Եթէ չպարէ՝ կար կը կարէ:
 «Ճիկե՛րս» կ'ըսէ, այնպէս կը դիտէ այդ նկարները
 Որ մարդը ստիպուած դուրս կու գայ անոնցմէ
 Եւ լռիկ-մնջիկ տափատին ծալքերը կը շտկուտէ:
 Զօրաքոյրս երկար կարմիր եղունգներով
 Նկարին Էն ծայրէն բռնած
 ներս կը տանի որ ուրիշ բան չճանալի:
 Եկեր է հայրը մայրը տեսնելու
 «Կեանքի մէջ ի՛նչ կ'ըլլայ չես գիտեր»:
 Զօրեղօթօս հետ վեճի մէջ է, ժառանգը առնել երթալ կ'ուզէ:

Վարդաքը փաստաբանուհի է ամուսնալուծման,
 Մերինները չեն հաւատար որ գործ ունի, պոլ-պոլ
 դրամ կը շահի.
 «Օ ես» կ'ըսէ եւ կը պատմէ. ամեն մէկը աչքը լարած
 զարմանքէն ափը բերնին տարած մտիկ կ'ընէ.
 «Յաւատալիք բան չէ, մարդը կնկան տարեդարձը
 Չէ յիշած ըսելով
 կինը տիվորս ուզեր է եղեր»:
 «Պտըլիկ չոճուխները ձգեր՝ սիրածին հետ զացեր է»:
 «Աման, ադ Ամերիկան Սոդոմ-Գոմոր է»:
 Աշխարհի Էն զարմանալի դէպքերը
 Լարախաղացի դիւրութեամբ՝ իր վարդագոյն շրթներէն
 դուրս կը հանէ Վարդաքը՝ «դեռ ինչէր կան
 յարմար չէ որ պատմեմ ձեզի»:

Ուխտաբանսընի հարաւն են, երեք քոյր երեք եղբայր
 միատեղ կ'ապրին
 դաշնակահար, իրաւաբան, ուսուցչուհի,
 իրաւաբան, ազարակապան, դերձակ:
 Խոհանոցը մերինները իրարու կ'ըսեն՝
 Վարդաքենք այնքան ընդարձակ հողաշերտեր ունին
 Այնքան մեծ որ
 շոգեկառքը իրենց հողերուն քովէն

քառորդ ժամ կ'անցնի եղեր
առռռանց կենայու:

Իսկ Յեղիմեն տարիներ առաջ Պոլսոյ մէջ
Ախոյեան եղած է թենիսի եւ հեծիկի.
«Պառաւ աղջիկ, թուրքերուն մէջը դուն խլեցիր բաժակները»
կ'ըսէ մեծմամաս:
Յեղիմեն թուրքերուն մասին խօսիլ չի սիրեր.
«Դուք աստեղ կուսակցութիւն-մուսակցութիւն խաղալով
Մեզի անտեղ գիշեր-ցերեկ
սարսափի մէջ կ'ապրեցունէք կոր» կ'ըսէ:
Ինքը սփոր կը սիրէ, սփորն ալ՝ իր գեղաճեմ հասակը.
Ամեն առտու «հատէ՛ քեռայր» ըսելով՝ պապայիս հետ
Սէն Սիմոն կ'ուղղուին լողալու:

Երեքն ալ Յոկտեմբերին հասեր էին մեզի,
Տունը արդուկ եւ մաքրութիւն եւ սուրճ ու կաթօ կը հոտի.
Յեղիմեն բնականէն անոյշ խնձոր կը բուրէ,
Վարդաքը՝ սեւ կաշի եւ հին գիրքեր,
Յօրաքոյրս՝ քառասունմէկ տեսակ ծաղիկի անուշահոտ:
Ես դաս պէտք է սերտեմ, խելքս միտքս իրենց խօսած
գացած-եկածին վրան է,
Մանաւանդ որ շաբաթ մը ետք
Նարինէն ալ Փարիզէն հասաւ իր աղջկան հետ
Որ - ըստ մեր խոհանոցային խօսակցութեան -
«շփացածութեան գագաթնակէտն է»:
Նարինէին նեղ կոնքը համեմատութիւն չունի իր արեւածան
Կուրծքերուն հետ որ հազիւ հազ կը ծածկէ
սեւ տանթել պլուզներով.
«Ամուսինը ձգեր է իրեն, չի դիմանար կոր կինը»:
Բայց շատ չանցած մերիները զգուշութեամբ
Ծեր ազգականուհիի մը տունը ճամբեցին
«Երիկմարդէ չխայնող» այդ կնկան:

Ես դասերս պէտք է սերտեմ՝ խելքս միտքս
աս հիւրերուն վրայ է:
Խեղճ հօրքուրս «մանչըս» կ'ըսէ, կարծես
տղուն անունը Մանչ է.
Անոր ոսկի գլուխը ժամը մէջ մը կը սանտրէ,
Պարտէզ կը տանի, գոռով-մոռով կը կերցնէ.

«Փառաշատ» կ'ըսէ, «Քեզի այնպէս պիտի մեծցունենմ
դուն հայ ազգին նախաճաճիդ պիտի ըլլաս»:

Յեղիւնէն եւ Վարդաբըր ամեն օր հագուած շքուած
Սուրբ Թառուիկ կ'երթան, «Վիզիթա»ի կ'երթան
լեռ կ'երթան կու գան,
Շատ կ'ափսոսան որ այն Սեւ Օրերուն իրենց հայրերը
«աս Պէյրուտը» չեն հաստատուած:
«Տեղացի թուրքերը մեզ չհալածեցին,
մեզի հանգիստ ձգեցին» կը տրտնջայ Յեղիւնէն:

Յօրաբոյրս «կատարեալ եօթնօտարութեան մէջ»
Իր ընտանքէն հեռու՝ չորս գաւազ մեծցուց.
Ամենօրեայ հայ վարժարան տարաւ մեծէն մինչեւ փոքրը.
Ամեն օր շոգեկառք առաւ, մէկուկէս ժամ գնաց
մէկուկէս ժամ վերադարձաւ.
«Յայրիկ, անոնք աւագին վրայ՝ ես ալ շոգեկանքին մէջ
Յայերէն կը սորվեցունենմ կոր» գրեց:

Յիմա արդէն երկու փեսաները, մէկ հարսը հայ են,
թռնիկները՝ Նագան Սարգիս Կարապետ:
«Աւելին կ'ունենամ ամմա ասեղ քաշելով չորսէն աւելի
Չեմ կրնար հոգ տանիլ, Աստուած մեղք թող չհամարէ:
Լմման օտարութեան մէջ բերի ես գաւակներս, բայց
Յայ ազգին օգտակար ըլլան պիտի: Իրենց սորվեցուցած որ
օր մը անպայման պիտի երթան, պիտի կռուին մեծ եւ
անկախ Յայաստանի համար»:

Քանի մը տարի առաջ իր տալը՝ Յեղիւնէն եկեր էր մեզի,
Նոյն գեղեցիկ հաւկթածեւ գլուխը, արձանակերտ մարմինը.
Առտուները հեծիկ քշեցինք
Փարամըսի Վան Սոն Փարքին մէջ:
Օր մըն ալ պատմեց իր օրերէն,
Այն օրերէն երբ հայ աղջկայ մը համար արտօնուած չէր
Սիրահար ունենալ - ան ալ՝ թուրք -
«Թուրքին մէջն ալ աղեկը կայ, դուն սա փիլիսոփաներուն
ըսածին մի նայիր - ամէնը մէկ ջուրով կը լուան կոր.
համալսարան կարդացած աղջիկ ես, միտքդ բաց պիտի պահես:
Բայց տնեցիները գլուխս տարին, ալ ժառանգէ պիտի գրկէին, ալ դուռը վրաս
կղպեցին. ինչ էղաւ նէ՛ ինծի էղաւ: Յիմա ժամանակները փոխուեր են, նայէ՛

երկու հատ տաճիկ կայ մեր գերդաստանին մեջ. Նուռի պես Օհանեսը հայ կնոջմեն դժգոհ մնաց, տաճիկին հետ ամուսնացաւ. պըտըլիկ Սիրենան ալ մէկ բառ հայերէն չի գիտեր, խօսիս նէ՝ պիշպիշ երեսիդ կը նայի, սիրտերնիս կ'արիւնի ամմա միւսիւմաններուն երկիրը կ'ապրինք կոր, պոչերնուն չկոխես նէ՝ քեզի հանգիստ կը թողուն:

Իմ ատենս ատ Օհանեսին հայրն ալ, աղբարներս ալ ամենը մէկ առիւծի պէս դիմացս ցցուեր էին – ալ երբեմն կը պատահէր՝ պիտի մարիմ կը կարծէի: Ես անուն ունէի, ակումբին մեջ կը յարգուէի, ինքզինքս գովել չեմ սիրեր ամա քալած ատենս մարդիկ ետեւ կը դառնային ինծի կը նայէին: Ինքն ալ ամբողջ Պոլիսին մեջը յարգուած ճանչցուած մարդ էր: Ես անանկ դիւրին դիւրին չեմ լար չէ. գլուխս բարձր բռնեցի, ընտանիքիս ալ մեղքայ, վշտացնել չուզեցի շիտակը, մեր ամբողջ ժողովուրդին պատմութիւնը կար: Բայց մեր հայերն ալ հանգիստ չկեցան, գրգռեցին թուրքին որջը, մարդ ճիշդը ինչ է նէ՝ անիկա պետք է խօսի: Քս սատեղերը որքան մժեղ կայ, Տետեթ մը չընեն:

Մեր մտերմութիւնը տասը տարի տեւեց. ինքը կնոջը վերադարձաւ, ես ալ զարմիկներս մեծցուցի: «Ես քեզի անձամբ ինչ ըրած եմ» կ'ըսէր: Վեց ամիս ետքն ալ գնդակը գլխուն դրաւ, հայտէ, սպաննեց ինքզինքը:

Ախպօրս պզտիկ տղան Սեւանս հիմա տեսնելու ես, պոյով-պոսով – դուն անոր թրքերէն խօսելուն մի նայիր, մեր երկրին պայմանները տարբեր են – երկու տարիէն մեքանիք պիտի ելլէ: Զիմակուց ձեռքը ինչի որ դպցնէ՝ օսկի կը դառնայ. գիշեր ցերեկ կը կանչուի թելեվիզիոն կը նորոգէ, քիչ մը ուշանայ նէ մօրը Լուիզին սիրտը կը հատնի. Լուիզն ալ կը յիշէն ինչ համով միտիա եփեց – հա՛, քեզի ձուկերու շուկան ալ տարաւ – յետոյ ալ Մարմարային Զատտեճեանը եկաւ, Երուխան-մերուխան խօսեցաք, բանաստեղծներուն գերեզմանները գացիք: Յետոյ՝ երթանք նաւակ թիավարենք ըսի: Չէ, ըսիր: Ես հասկցայ քի սիրտ չունիս, փոխուիս ըսելով կ'ըսէի կոր, մենք գացինք, դուն Լուիզին եւ հոքային հետը միտիա տումասը շինեցիք – կը տեսնեն ինչպէս պզտիկ-պզտիկ բաները կը յիշեմ կոր:

Լուիզն ալ իմ ճանչցածներուս մեջ էն համով ձուկ եփողն է. հայրը ձկնավաճառ էր, ան ալ տարբերութիւն կ'ընէ, աղջկան արիւնին մէջը անցած է. ախպօրս անանկ հոգ տարաւ, վերէն կերցուց՝ վարէն առաւ, Աստուած ամենուն ասանկ հարս տայ: Զօրաբոյոդ աչքը բաց աշխատասէր էր, բայց նի նեղուիր՝ թէօք էր, թուրքը-մուրքը մահանա ըրաւ՝ ախպարս մեր ձեռքէն իլեց, ճեհէննեմին ճօթը տարաւ:

Անցեալ տարի գացի տեսայ. կեանքը անչափ սիրող, հոյի պէս դարձող եղբայրս տիվանին վրայ երկարած ժամերով թելեվիզիոն կը նայի:

Գասպարին մեծը՝ Յովաննեսն ալ ամուսնացաւ, զոց շուկային մէջ ոսկերիչի պաշտօնեայ էր, վարպետը մուշ գործերով՝ կարծես թէ դաշախճիութեամբ բռնուեցաւ, հազիւ ազատեցինք մերինը. Աստուած մանչուն երեսը նայեցաւ, որբ չմնաց պէպէքը:

Յիմա մինչեւ որ նոր գործ մը գտնէ ես կը նայիմ կոր իրենց, հապա իր օրուան հօրքուրն եմ, ճիկերիս պէս կը սիրեմ իրեն, մէկալն ալ ին թոռնիկս է կարծես քի, ճիշդ ինծի կը նմանի, ամբողջ սէրս իրենց վրայ թափած եմ, իրենք ալ նամբէօր չեղան, աստուածավախ բարի տղաք ելան:

Մատլէն հոբան, քեզի օրեր եղաւ. կէս դարէն աւելի, յիսունհինգ տարի սերունդ հասցուց, հայերէն, հայոց պատմութիւն, աչքերը ցամբեցան, գաւազանով գնաց վարժարան, «ասոնք բոլորը իմ գաւակներս են» կ'ըսէր: Վերջին տարիներուն հին աշակերտները կ'օգնէին իրեն: Մեռած օրը Աստուածածինը բերնէ բերան լեցուն էր, մինչեւ Գնալըն շոգեկառք առեր եկեր էին: Իրմէ ճիշդ տասը օր ետք Գասպարը գնաց – Աստուած հոգին լուսաւորէ – երկու շաբթուայ մէջ գնաց խիսպարս: Բայց թոռնիկները գրկեց սիրեց, աղքանը տեսաւ, արդէն ատկէ աւելի ինչ կայ կեանքի մէջ. պարսկ աշխարհ է, բան մըն ալ չիկայ: Քիչ մը շուրջիններուդ ուրախութիւն պիտի բաժնես, Աստուծոյ քով խաթեր ունիս նէ՝ ծերութեանդ քեզի մինակ չեն ձգեր»:

Ութ մդոն էր Փարամըսէն Ֆէր Լոն ու ետ,
պարտեզը մուշ կը հագուէր.
Յեղինէն եւ ես ամուր բռներ ենք
հեծանիւին թելերը, ուղի կը բանանք.
հսկայ ծառերու եւ սուրացող ինքնաշարժներու միջեւ
ամերիկեան մուշը կը դիտէ
Յեղինէին խոնաւ
խորհրդանոյշ աչքերը:

Ուխտանքներն ամեն կաղանդին քարտ մը կու գայ
Վարդաքին ընտանիքէն,
ամեն տարի ստորագրութիւններէն հատ մը կը պակսի,
մնացեր են Վարդաքը եւ Ագապին:
Անցեալ տարի երկու ժամ քշեր Շիքակօ եկեր էին
իրենց «նշանաւոր ազգականը» տեսնելու:
«Անգլերէն գրէ որ մենք ալ հասկնանք» ըսին
տխուր տխուր երեսս նայելով:
«Բանաստեղծները էքսանթրիք կ'ըլլան, ասանկ բաներ
կը սիրեն», հնդկական հոտաւետ վզնոց մը

երկարեց Ազապին:

Յետոյ՝ հորաքրոջս իրենց նուէր տուած ձեռագործը

երեսունհինգ տարի ետք յանձնեցին ինծի:

Միլանի գործ է ձուկի նախշով.

Խօսէ, կ'ըսեն.

«Ձգէ լողամ, հերիք է զիս տունէ տուն փոխադրէք

սնտուկներու մէջ բանտարկէք. ես օդ կ'ուզեմ,

զիս փոշոտած տեղ մի դներ, զարդ չեմ ես,

իւրաքանչիւր թեփս ասեղ ասեղ արարուած է.

մանկութեանս՝ յարգս զիտէին, օ՛իս, դաշնակ մտիկ կ'ընէի,

ծաղիկներու բոյրը կ'առնէի,

նոր նշանուածներու համբուրուիլը կը դիտէի,

մանդալին քով տաքուկ տաքուկ կը քնանայի:

Յիմա ինծի հետ չէք զիտեր ինչ պիտի ընէք,

հասակիս չափ տուփ մը ճարեր՝

ձեռքէ ձեռք, տունէ տուն կ'անցընէք.

հոս բարձիդ վրայ դիր, քիչ մը քնքանամ,

քեզի հին օրերէն պատմեմ,

եւ բու հեքիաթի ձուկդ եմ»:

«Վա՛խ եղաւ, հորաքոյրդ ահաւոր չարչարանքներով
աւանդեր է հոգին», ըսաւ Վարդաքը.

«Քանի՞ տարի տեւեց մինչեւ քէնսըրը տարածուի»

հարցուց Ազապին, մազոտ կզակը

եւ առնական նայուածքը ցցելով ինծի,

աս որքա՛ն ծերացեր է:

Վարդաքը իրմէ մեծ է, բայց հասակը ուղիղ,

ո՛չ օսթիոփերոսիս, ո՛չ արթրայթիս. փաստաբան ըլլալուն

դիւրին դիւրին չի վնասուիր.

կը տրամաբանէ.

«հիմա մենք Արմինիա Ֆանտին կ'օգնենք.

մէջտեղերը ահագին խնդիր կայ,

նորէն փիսութիւններ կ'ըլլան կոր,

բայց անոնցմէ անդին պէտք է մտածենք

որ Յայաստանը ձեռքերնէս չերթայ»:

«Իմ կարծիքովս ատիկա վատնուած դրամ է»

վճռեց Ազապին.

յետոյ նորէն աչքերը վրաս կեդրոնացուց՝ «Յեղինէ՞ն ալ»:

«Պոլիս վերադառնալէն տարի մը ետք սարսափելի

Գլխու ցաւով անկողին ինկեր Է, Երկուշաբթի գիշերը
Երեքշաբթի չէ ըրած»:

Գացին, գացին, գացին: Յանկարծամահ եղան,
անժամանակ մեռան, խոր ծերութեան մեռան.
Երբեմն մահագո ստացանք, երբեմն նամակով իմացանք,
Երբեմն տարիներ ետք լսեցինք
Աղաթոնին մահուան լուրին նման:
Յեղինէն Ֆրանսայի Աղաթոնին յարմար նկատուեր Էր
չեմ գիտեր որո՞ւ խելապատիկէն,
միակ նմանութիւնը՝ իրենց անուններու
երաժշտականութիւնն Էր.
«Յիսունէն ետք մարդ բարեկամ կ'ուզէ»
պնդեր Էին Աղաթոնին եղբայրները,
անոնց կիները հակառակ Էին –
Աղաթոնին ժառանգը որո՞ւն պիտի մնար:
Մինչ այդ՝ երկութիւն դիմանկարներն ու
կալուածներուն նկարները
Ֆեներպահչէ-Գլամար կ'երթելէկէին:
Աղաթոն աղաւնիներ կը խնամէր, մրցումի կը մասնակցէին.
«Ես մէյ մը որ այդ դժոխքէն դուրս ելայ՝ հայրս մայրս
կորսնցուցի՝ ալ չեմ իյնար
ադ ճանապարհներուն Պոլիսը» ըսաւ:
Յեղինէն ալ՝ «Ես հոս գոհ եմ
իմ զբաղումներս ունիմ» ըսաւ:
«Յօքքուր, մեզմէ մի բաժնուիր», ըսին իրեն չորս կողմէն:
Մէկը իր վանդակած թռչուններէն չբաժնուեցաւ,
միւսը անշարժ ջուրերուն մէջ թիավարեց.
Երկուքն ալ մահացան իրենց նշանակած
սահմաններուն մէջ:

Մայիսին նորէն պիտի տեսնեմ Վարդաբը,
անցնող Կաղանդին միայն ինք ստորագրեր Էր –
եղնիկ մը խփեր Է Ազապիին ինքնաշարժին:
Ուրեմն գոհի խորհրդանիշը երբեմն ինք ալ կը սպաննէ
մէկ վիճակէն միւսը անցած պահուն.
ան պիտի ապրի իր ոստումը, եւ չի գիտեր
որքան թաքուն անյայտ
յանկարծական արգելքներ կան,

խաչաձեւումներ ու ճամբաներ որ յիշատակ կը դառնան
երբ սերունդէ սերունդ
արմատ կապած արիւնը
առանց հաշիւ տալու
սահմանները հրելով, հրելով
կը տարածուի:

Քարտը ստորագրելէ առաջ Վարդաքը տող մը եւս գրեր էր,
«Դժուար է այսքան քոյր-եղբայրներ թաղել...»

Նիւ ճըրզի

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Վեհանոյշ Թեքեանի *Աղօթքներ ուռկանի մէջ* բանաստեղծութեան հատորը մեզ անմիջապէս կարգ մը մտածումներու կամ հաստատումներու կը մղէ:

Առաջին՝ որոշ տարիներու լռութենէ ետք գրողին վերադարձն է բանաստեղծութեան: Իր *Մնունդն ու անդունդը* 2000 թուականին լոյս տեսած Էր Նիւ Երրգի, իսկ նոյն տարին Յայաստան լոյս տեսած *Հրագիրը* ծաղկաքաղ մըն էր իր քերթողութեան: Այսպէս 15 տարուան բաց մը կայ նախորդ հատորներուն եւ այս մէկուն միջեւ եւ լռութեան նկատառելի ժամանակաշրջան մը:

Երկրորդ՝ գրքին 33 էջերը «սաղմոսներ»ու շարք մըն է, շուրջ 45 տարի առաջ գրուած, վերցուած իր *Ոստրէ* հատորէն: Յեղինակը հատորի սկզբնաւորութեան կ'ըսէ, թէ ընթերցողը պիտի հասկնայ, թէ ինչո՞ւ այս քերթուածները ներառուած են այստեղ:

Երրորդ՝ երբ գրքի երեք մասերու խորագիրներուն նայինք՝ «Ուռկանի մէջ», «Աղօթքներ» եւ «Սաղմոսներ», առաւել՝ նկատի ունենանք որ գիրքը նուիրուած է «բանաստեղծ ժագ Յակոբեանին որ հաւատաց ու վկայագրեց» մակագրութեամբ, այսինքն՝ սփիւռքի բանաստեղծներէն անոր, որուն համար կրօնական հաւատքը ներշնչումի մնայուն աղբիւր է, կ'անդրադառնանք այս գործի հոգեկան-նոզեղէն ոլորտին, սակայն ո՛չ անպայման կրօնքը կամ հոգեկանը զուտ կրօնական կամ եկեղեցական հաստատութեան առանցքէն կամ շրջագիծի մէջ դիտուած:

Երկրորդ հոս է որ կը սկսինք մտածել գործին խորագրէն իսկ մեկնած անոր տարբեր ուղղութիւններ առաջնորդող իմաստներուն մասին: Աղօթքը մարդու ամենէն խորունկ ու ներքին, նոյնիսկ՝ անձնական ապրումներն ու մտածումները կը պարփակէ, իսկ անոնց ուռկանին մէջ ըլլալը կրնայ տարբեր, նոյնիսկ հակասական մեկնաբանութիւններու առաջնորդել – աղօթքները բռնուած-որսացուած են հեղինակէն, թէ զայն խօսող «քնարական ձայն»ին պէս իրենք բռնուած են ուռկանին մէջ՝ տառապանքին կոչենք զայն, կամ՝ անհեթեթին ...

Վեհանոյշի *Ոստրէ*ն լոյս կը տեսնէր իր առաջին հատորէն՝ *Կապոյտ ապրիլ*էն հինգ տարի ետք՝ 1974ին: Եթէ Թեքեան առաջին հատորին մէջ բանաստեղծական ւաւանդական ձեւերու կիրառումը որոշ չափով կը կատարէր կամ անոնց տիրապետումին փաստը կու տար՝ սահուն ու անմիջական տողերով գրաւելով այդ օրերու գրական շրջանակը՝ իր երկրորդ հատորով կը փաստէր, որ հինգ տարուան ընթացքին յաջողած էր իր քերթողութեան ամբողջովին ինքնուրոյն նկարագիր տալ եւ ձերբագատուիլ ւաւանդական ձեւերէն:

Գիրքը կը բացուէր «Աղօթք միւս Աստուածամօր» խորագրով բանաստեղծութեամբ, որ կամրջում մըն էր կամ անցումը մէկ յղացքէն միւսը, եւ կարծէք քնարական գեղեցիկ գրոյց մը կը ստեղծէր Մեծարենցի Աստուածամօր հետ եւ իր ստեղծած մթնոլորտով, շատ դիւրութեամբ, մաս կրնար կազմել այս հատորին նաեւ:

Յետաքրքրականը այն է նաեւ, որ առաջին հատորի ներածականին մէջ, Գուրգէն Մահարի իր սովորական սրամտութեամբ բանաստեղծուհիին անունին վրայ բառախաղ մը կատարելով կ'ըսէր.

«Եւ վեհ, եւ անոյշ ... Զիչ մը շատ չէ: Թող վեհ լինի Թեքեանի ճանապարհը: Իսկական բանաստեղծի ճանապարհը միշտ վեհ է եղել, գալով «անոյշ»ին Ո՞ր բանաստեղծի ճանապարհը անուշ է եղել» (Կասպոյտ Ապրիլ, «Մուտք», Էջ 7):

Մահարի իր կեանքի դառն փորձով գիտէր, որ բանաստեղծի ճակատը յաճախ պիտի զարդարուի ... փշապսակով:

Ոստրէն կը բերէր անձնական, ազգային ու համամարդկային ցաւերով ու տագնապներով տուայտող անձն ու գրողը, որ կ'արձանագրէր.

Աղօթքներ ենք ուռկաններու մէջ:

Աղօթքներ ենք մենք ծակ ուռկաններու մէջ:

Մենք հասուն աղօթքներ ենք չոր ուռկաններու մէջ:

(*Ոստրէ*, Էջ 61)

Սաղմոսները այսպէս կը սկսէին եւ այսպէս ալ կը փակուէին, իբրեւ հասուն աղօթքներ ծակ ուռկաններու մէջ:

Մի՛ մոռնաք որ ձուկը կամ ձուկերու վտառը կը բռնուի, կը թակարդուի ուռկանին մէջ, եւ *Ոստրէ*ի շրջանին մէջ ճիշդ է որ ուռկանը չոր է, այսինքն՝ կարծրութեան դաժան նկարագիրը ունի, սակայն ճեղք կամ ծակ ունի տակաւին, կարելիութիւնը կայ ատկէ ճողոպրելու, որոշ անձերու փրկութիւնը կայ: Նոյնիսկ այնտեղ, կարգ մը գերիտապաշտ պատկերներով, այդ անհեթեթ բայց դժուար կացութեան մէջ բանաստեղծուհին կրնայ գրել.

Այսօր ես ծովէն կ'ետ ձուկ պիտի գտնեմ

Պիտի վիզէն պարան մը կախեմ

Եւ պտղտիմ ցուցափեղկերուն առջեւէն

(«Սաղմոս յետմիջօրէի», *Աղօթքներ ուռկանի մէջ*, Էջ 97)

Ինչպէս նշեցի արդէն, ասոնք յաճախ ընդհանրական կամ համամարդկային տագնապներ են, որոնց կ'արձագանգէ Վ. Թեքեան.

Մեծ քաղաքներու պզտիկ աղջիկները

որոնք ժամ չունին

Յերեկները ցանկապատներ կը կրծեն
 Իսկ գիշերները իրենց ձիւթահամ շրթները
 կ'երթելեն ծխամորճներու մէջ
 Որոնք օր մը, օ՛ր մը միայն – մարդ էակին զարմանալի
 թուելու չափ – ունայ մը զուտ սէր կը մուրան
 Ոսկի աղջիկներ որոնց մարմնի գինին
 Կը բխի արիւնի՛ նման
 Որոնք անլի ձուկերու պէս լուռ ու մուկ
 կը խարկուին արնաթոր ավերու միջեւ

(Սաղմոս Բ, Աղօթքներ ուռկանի մէջ, էջ 77)

Այսպէս, խորհրդանշականօրէն, ձուկի եւ ուռկանի պատկերը յաճախ կը յայտնուէր գրութեան մէջ: Դեռ ինք պիտի փնտռէ «անէացումի լոյս քարայրները», պիտի բարձրանայ Յիրոշիմայի ցցուած ձորերէն, պիտի պարէ որ անձրեւէ չոր ու ճեղքուած հողին վրայ: Առաւել՝ պիտի կասկածի, պիտի հաստատէ եւ միշտ տագնապի, պիտի աւելցնէ. «Մեր ոգեղինացած էութիւնն էին մեր աստուածները ... Միլիոն դար է մենք մեր զոհն ենք ու աստուածը» (նոյն, էջ 76):

Ուտրէէն տարի մը ետք կը պայթէր Լիբանանի քաղաքացիական պատերազմը եւ ինչ որ ընդհանրական տագնապ էր՝ կը դառնար անձնական, սեփական մաշկին վրայ ապրուած անձկութիւն ու տառապանք: Քաղաքացիական դաժան պատերազմի օրերուն՝ մասամբ կը հրկիզուէր ու կը կողոպտուէր բանաստեղծուհիին պապենական յարկը, կը սկսէր մեկնումներու շրջան մը, կը հաստատուէր Միացեալ Նահանգներ: Ամուսնութիւն մը կ'աւարտէր դժուար ապահարզանով, կ'աւելնար ծնողներու՝ հօր եւ մօր կորուստը եւ այլն:

Թեքեանի արձակ թէ քերթողական ժառանգութեան հետեւողը գիտէ արդէն, որ չեմ ուզեր ըսել զանոնք ստեղծողը, որքան ալ անձնական ըլլայ այդ ստեղծագործութեան նկարագիրը, հայաստանեան քերթողութեան սիրելի եզրով մը՝ ըսենք անոր քնարական հերոսը, հոս՝ հերոսուհին, շատոնց արդէն այդ չոր ուռկանին մէջ է: Կը բաւէ վերադառնալ ու թերթատել *Բայմածուի աշխարհի, Տհմածառի* կամ *Սնունդ եւ անդունդի* էջերը հաստատելու համար այս տեսակետը, եւ ես անձնապէս կը կարծեմ, որ այս ընդհանրական կացութենէն մեկնած հեղինակուհին ընտրած է իր խորագիրը, որովհետեւ այս հատորը շարունակական քերթողական արարումի մը մէկ մասնիկն է: Եւ ինչը ասոր համար ալ, երբ իր «Ինքնանկար»ը կ'ուզէ տալ այս գրքին մէջ՝ կ'արձագանգէ իր միւս բոլոր հատորներուն ըսելով.

Յանկարծ՝ անշարժ, քովէս քայող անծանօթը անհետացաւ
 Երբ տեսաւ կապոյտ ապրիլի խեղդուիլը
 Բայց ուտրէէն յառնող սաղմոսներու ծուխը
 Կիզակիտուած ծառերը տարբեր անտառներու
 Մանրանկարներ ու բրտութեամբ ճեղքուեցան

Յամառ ճառագայթը նշանագիրի
 Բազմաձև փ աշխարհի անբուն շոգեկառքը
 Անպատմելի կեանքը տոհմածառի
 Մնունդին անդունդն ու անդունդին սնունդը
 Յրագիր բառերուն անձայն, անհատնելի պաշտամունքը

(Աղոթքներ ուռկանի մէջ, էջ 16-17)

Այս բոլորէն ետք աւելցնելու համար, որ ամէն գիշեր մոխիրներ կը հաւաքէ, ամէն առտու հայերէն գիրք ստեղծելու համար:

Իր ուռկանին ու աղոթքներուն մէջ կ'իյնան իր ներաշխարհին սիրելի հայ թէ օտար բանաստեղծները, որոնց հետ գրոյցի մէջ Է՝ Վարուժանը, Մեծարենցը, Տերեանը, Էմիլի Տիքընսընը, այլ մեծ հայ արուեստագետ մը՝ Արշիլ Կորբին, իսկ մէկ նախորդ հատորին մէջ հանդիպած ենք իր գրոյցին՝ Չարենցի հետ, Կարսէն անցած միջոցին:

Բնականաբար անձնականէն անդին՝ հայուն հաւաքական տագնապները մաս պիտի կազմեն իր ներաշխարհին: Կորբին այդ ծիրին մէջ կու գայ արդէն, երբ Վանայ լիճէն, Ոստանիկի աշխարհէն անցած ատեն քիւրտ մը կու գայ ըսելու, որ հոն հայեր կ'ապրէին ...: «Թռռնուհին»ի մէջ կը տեսնենք մեծ մայրը, որուն ամուսինը թուրքերը

Իր ուռկանին ու աղոթքներուն մէջ կ'իյնան իր ներաշխարհին սիրելի հայ թէ օտար բանաստեղծները, որոնց հետ գրոյցի մէջ Է ... անձնականէն անդին՝ հայուն հաւաքական տագնապները մաս պիտի կազմեն իր ներաշխարհին:

մորթեր էին, երբ այդ կինը 17 տարեկան էր եւ մագերը մէկ տարուան մէջ ճերմկեր էին: Իսկ Վեհանոյշ, երբ Տեր-Չօրէն կ'անցնի՝ հետը ունի ողջակիզուած աղջիկներուն ճիչերը: Տակաւին, բոլորիս նման «Ընկերային հաւաքոյթ» կոչուած գործին մէջ քիչ մը զուարթախոհութեամբ, քիչ մը տխրութեամբ մեր ընկերային հանդիպումներուն տեղի ունեցող խօսակցութեան եղանակով պիտի ըսէ. «Է, *Հայ Ժողովուրդին վիճակը ինչ պիտի ըլլայ: Պիտի յարթէ, պիտի գարթէ, / պիտի շուարի, պիտի տուայտի: / Տունէն վտարուած՝ անկիւն մը ճարէ / տուն մնացողին հաց ապահովէ, / պիտի աղօտի, աղօթէ պիտի ... պիտի հառաչէ, պիտի շառաչէ, / պիտի չաղաչէ, այլ՝ աղաղակէ: / Յեղասպանութիւն բառն ուրացողը / դատի դուռ կանչէ» եւայլն (էջ 49): Ինչպէս կը տեսնենք՝ սովորականը կամ առօրեականը՝ անսովորին հետ մաս կը կազմեն այս բանաստեղծութեան, եւ միշտ ալ առօրեայի ցաւը պիտի դիտուի հեզանքով, հաւանաբար զայն թէթելցնելու համար:*

Յոս, ինչպէս ուրիշ բանաստեղծական կամ արձակ կտորներու մէջ ծննդավայրի, այսինքն՝ Լիբանանի կորուստը, անոր կապուած ցաւալի, յաճախ ողբերգական փորձառութիւններով, ծանր կը կշռէ.

Կորսուած ճամբորդն եմ ես: Ան՝ որ անհետացող ծննդավայրի
Եւ յասմիկներու եւ ձիւնասպիտակ կարտինիաներու լոյսը հետը առած
Կ՛երգէ ռեհանի բոյրը, կեանքի կայծն ու մեղրը, Փիւնիկէի հոգին:

(«Բոյր», Աղօթքներ ուռկանի մէջ, էջ 44)

Միշտ ալ Վեհանոյշի քերթողութիւնը խոստովանական շեշտ մը ունի եւ իր նախորդ հատորներուն գծով նախապէս արտայայտուած եմ այս առընչութեամբ: Երբեմն իր ամենէն անկեղծ, դաժան, կամ Օշականեան եզրով մը ‘իրաւ’ տողերը այս նկարագրի գրութիւններուն մէջ կը գտնենք: Ահա կարճ տաղի մը մէջ բանաստեղծուհին կ’ըսէ.

Յովուն ալիքներով եկուր
Մտքիս լուսամուտը բաց է
Լուսեղէն աչքերով եկուր
Սենեակս լման պարպած եմ
Փողոցէ փողոց պարելով
Երկինքը երկիրը մաղելով
Աշխարհս մերկացնելու եկուր
Բեհեզներ ու գմբուխտ չկայ
Կայ լեղի հրայրքը լացի:

(Աղօթքներ ուռկանի մէջ, էջ 36)

Ինչպէս կը տեսնենք վերջին երկու տողերու հակադրութեան մէջ, նոյնիսկ ներշնչումի ամենագուարթ տրամադրութիւններով սկսող պահերը յաճախ կը զարնուին տառապանքի դաժան իրականութեան, իսկ Վեհանոյշ չի խուսափիր այդ կացութենէն, այլ կը փորձէ դիմագրաւել զայն:

Ուրեմն այս հատորին մէջ ունինք ուռկանի մէջ բռնուած եւ երբեմն ուռկանի ճեղքէն փախած աղօթքը, անոր կողքին աւելի քան չորս տասնամեակներու

հեռուէն անոր արձագանգող սաղմոսը, որ յունարէն օրհներգութիւն բառին թարգմանութիւնն է, երբայերէն՝ թհիլ-լահին, ինչ որ կը նշանակէ, որ հոն ո՛չ միայն օրհներգութիւն կը տեսնենք, այլեւ ողբեր կամ օգնութեան կանչեր եւ

այլն: Յետեւաբար, բանաստեղծուհին շարունակ գրոյցի, վեճի, կասկածի թէ աղաչանքի մէջ է թէ՛ իր Տիրոջ եւ թէ՛ իր սրբութիւններուն հետ:

Այսպէս, ինչպէս աւելի քան դար մը առաջ Մեծարենց «Տո՛ւր ինձի, Տէ՛ր ...» ըսելով կը գրէր Արդի մարդուն Յայր Մերը, Ժագ Յակոբեան ամբողջ կեանք մը կը նուիրէր իր աղօթքները հիւսելու, Վեհանոյշ Թեքեան իր սերունդին անհեթեթին ու մարդկային ցաւին զարնուող աղօթքը կը բերէ մեզի:



Վեհանոյշ Թեքեան իր սերունդին անհեթեթին ու մարդկային ցաւին զարնուող աղօթքը կը բերէ մեզի:

*Վհանայի Քեզեանի ընթացակարգը այս շաբաթ — ՍՈՒՆՈՐԻՆԷ՛՛ —
 և՛ Գլախն որ բանասերմունքի կը գանուի սակեղակործանական համար
 բանակի մը տակ:*

*Հնայնա՛ն ճեղքադատում ըլլա՛ւ և՛ Քուի Թարգարտութեան նոր
 տակՔԻՆԵ, սոսր Նապոլեոնի սուրճը սառն հառ:*

*Եր նոր շաբթի ընթացակարգը աւելի զարման, խորացան ու իմաս
 սայնք են:*

*Եր սկիւնային ամենին ստղանկուտը, Նախառուտը, Նախկնայ ներ
 կարգադրելու և սե: Ս:*

Սազմուս բիւրեղեայ արձագանկներով

Որտեղէն պիտի գտնուի հեզ, Աստուած,
 Երակներուս մէջ բզաւոզ շարականներուն հարցուցի.
 Բոհն որ օր մը անցար այտեղէն
 և շատ գեղեցիկ երգ մը ցանկցիր,
 որուն պտուղը արեան համ ունէր
 գոյն ունէր սովի՛:

Եւ որոշեցի փնտռել հեզ միայն
 գեղեցկութեան մէջ:

Երեկոյեան ես որոնեցի՛ հեզ
 հզկայ գամբիւրէ՛ ֆառակներուն մէջ,
 Եւ բաց տղիկ մը դուրս համեցի
 որուն աղիքները փսած էին շուտ
 և դէմքը չգործածուած ք-ք խօտի պէս էր.
 Ապակիացած ուղեղներուն մէջ փնտռեցի կրկին,
 Կարմիր մազերով պոռնիկներուն մէջ արհնդ կար պաղ,
 Տնակներուն մէջ ախապուրի սակ սնունդին վերեւ
 վերջին բնրբիի լուս ազօրէ՛ղ կար,
 Առատագներուն փակած հառաչներուն մէջ
 յաւերժ բացկայ ներկան էր դուս,
 Եւ փոկերու պէս ցատկատու դրամներէն
 ուղեղիս համոզ գտնուութիւնն էր:

Այդ ինչպէ՛ս, ե՛րբ էր, ո՞ր տարիութիւն
 Անէ՛ծի փոխան ես սարվեր էի տալ հեզի ազօրք,
 հաւատ ու կարօտ.

Ու այսպէս՝ եզա՛ւ որ հաւատահար մտադրեցի
 որ գոյզ աչքերուց պիտի նս երկու փամփո՛ւշու արձակիմ
 և յետոյ քրքջամ որ կուրծուցեր եմ չաւ
 քիչ մը տկար տեսողութիւնդ,
 Ու ծառին վրայ չըրած խնձորի կոպերդ պիտի
 պրկուած բուլաման.

Ու յանկարծ՝ չհաւատաս որ պիտի չլամ...
 Որովհետեւ ճարճն պիտի սպաննեմ հեզ,
 Ետէ՛ն բիւրեղեայ ափերս հչան
 Գարձեայ գունագեղ գամբիւրէներու մէջ
 եւ ապրիմ պիտի,
 Եւ պիտի ապրիմ՝ սպաննելով հե՛զ,
 Հգօրի՛դ, Գութի՛դ, Բարձրագո՛ւյն Սուրբիդ...
 Ամէ՛ն:

Սազմուս լիախառ

Հաւատացեա՛լ եմ.
 Աշխարհի բոլոր խորան-խուցերուն, մայր-սանաբաններուն,
 Արեւազային ու մութ գիշերին
 Ե՛ւ փոքորիկին ե՛ւ շոգ շողերուն
 Խունկ տատկկներուն, ալրի կիներուն
 Քով միմակ կանգնած հաւատացեալն եմ,
 Բոլոր բաները մարեգէ՛ւ ալիւս,
 Պիտի ազօրեմ:

Արարի՛չ, գիտես,
 Եւ երկիւցեցի ազօր քներս վեհ
 Մեծեաններու մէջ սիրոյ ու սիրոյ.
 Գեղեցկութեան մէջ, համոյքի, երգի՛
 Ամոխում չկար ցուերուս բորբոք:
 Հաւատացեալդ եմ արդ. միայն, միայն



Սուրբ, սուրբ եղիցի մութ անունը քո...

Հասեր եմ այտեղ քառուղիներէն սարսափող մանուան,
 Օղանակներէն շարուած ռումբեր՝ ափերուս փափուկ,
 Բորբ հայեացքիս մէջ՝ տնփացող հառաչ,
 Ճայներ քաւ ու քաց՝

... եկեցէ՛ արեւայութիւն քո...
 ... եղիցին կամք քո...

... Որպէս
 Մնացեալը ընդուր է, Տէր, անգործակա՛ն էր այդքան:
 ... Ջիւզ մեր համապարտը, տո՛ւր մեզ այսօր,
 Հաւատացեա՛լն եմ
 Մեր բանիքներուն:

Ամենակա՛լ Տէր,
 Քոզ աշխարհի մէջ երաշտ չմնայ,
 Քո՛զ մեր արտերը
 Մեր մամ ու պապի ծայտով ծաղկին,
 Կազուկ հասկերը
 Արեւատա օրհնութիւններով յղկանան,
 Ու Կաւարդին
 Հոյ-հոյ կաղեմք բոզ լույսերը բերրի,
 Այո, բոզ որ պ
 Մոխիր չբառի մեր աղ ու հացին
 Ու մեր սրտերուն ոյս չտրմանուի...

... Ինչպէս որ մեմք
 Քողու՛մ մերոց պարտազանաց...

Քոզ մեր հարստուն նրբազանց ծոցը
 Մի ու ծաղկի, լուսացան մնայ,
 Մեր մամուկներու բուշերուն վրայ
 Քո՛զ խաղաղութեան համը շիկանայ,
 Ու մեր հայրերուն, մեր ո՛րջ հայրերուն ափերուն միջիւ
 Գինին բոզ արին չհազուի յանկարծ...
 ... Եւ մի տանիք գեղեցի փորձութիւն...

Ես նաեւ եզօր հաւատացեալ եմ
 Մեր կամարներէն ու մայ-ու մայ ծխաղոջ շարականներուն,
 Մեր խաչաբերուն, ձեռագիրներուն,
 Եւ գրեթե՛րուն մեր գլխակորոյս...

Վերջին խնդրանքս, ամենագո՛ւր Տէր,
 Երբ ցանկա՛ս գինիի, արհի, երգի սիրահար
 այս աշխարհամասը խախտել վերստին՝
 Եայլ՝ Անիմ...

... Տախտեանս յախտնից, ամէն:

ՎԵՃԵՆՈՅԸ ԲԵԿԵՆԵ

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ.

«ՄԷԿ ԲԱՆ ՅՍՏԱԿ Է՝ ԴԻՄԱԿ ԳՈՐԾԱԾԱԾ ՉԵՄ»

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԵԱՆ

Սեղանիս վրայ դրուած են Վեհանոյշ Թեքեանի բոլորովին վերջերս հրատարակուած երկու գրքերը՝ մէկը բանաստեղծութիւնների *Աղօթքներ ուկանի մէջ* վերնագրով (ինքնատիպ եւ անսովոր վերնագիր, բայց արդարացուած եւ իմաստաւորուած՝ իր ներքին բանաստեղծական բովանդակութեամբ). եւ միւսը՝ յօդուածների եւ խոհագրութիւնների ժողովածուն՝ *Խօսող լեռան պատմութիւնը*, որն ունի յուզիչ եւ կողմնորոշիչ մի փոքրիկ ձօն «Բոլոր ժամանակակից գրողներուն, որոնք դուրս ելան իրենց ծննդավայրէն, բայց ապրեցան Յայ Լեզուէն ներս եւ փառահեղ դարձուցին Յայ Բանը»:

Այսպէս, երկու գիրք, երկու հանդիպում Սփիւռքի ականաւոր բանաստեղծուհու հետ, որից բաւական երկար ժամանակ չէի կարդացել որեւէ նոր ստեղծագործութիւն, եւ այն կարծիքն ունէի, որ նա թերեւս շատերի պէս յոգնել է, վիատուել եւ տրուել կեանքի «անցողիկ առօրեային», այն, ինչը, ցաւօք, անհաւատալի երեւոյթ չէ ժամանակակից աշխարհի, այդ թւում նաեւ՝ հայ իրականութեան համար: Բայց ճիշդ է նաեւ այն կարծիքը, որ բանաստեղծութեան սահմանն անցնողի համար այլեւս վերադարձ չկայ. ով մտաւ այդ աշխարհը՝ այլեւս չի կարող այնտեղից դուրս գալ, դա մի ճակատագիր է, որից պարզապէս «ազատում» չկայ: Վեհանոյշ Թեքեանը ծնուել է այդ ճակատագրի «աստղի տակ», նրա կեանքը լցուած է եւ իմաստաւորուած այդ աստղի ներկայութեամբ՝ սկսած Պէյրութից մինչեւ Նիւ Երրզի, շուրջ յիսուն տարիների մի կեանք, ուր ես տեսնում եմ կենսախիւնոյ, բանաստեղծական տեսիլքներով ներշնչուած աղջկան, որ տարիների ընթացքում նոյնն է մնացել, թէւ դարձել է աւելի խոհուն, հանդարտ, աւելի հաւասարակշռուած, եւ արդէն կարող է ասել. *«Դանդաղ քայլերով պահ մը ետ դարձիր / եռուկեռ չկայ»*: Այո, բանաստեղծութիւնն ընդհանրապէս, անկախ միւս հարցերից, դէմքով շրջուած է դէպի անցեալը, բանաստեղծութիւնը ուղեւորում է դէպի անցեալը, այն իրական ժամանակը, որը մարմին է առել բանաստեղծի հոգեւոր փորձի մէջ: Բանաստեղծի դէմքը ուղղուած է դէպի անցեալը, կրօնական մարդու դէմքը՝ դէպի ապագան (նա աշխատում է ազատուել նախկին սխալներից, նախկին կեանքից՝ փրկութիւնը տեսնելով ապագայի մէջ), իսկ բուն

աշխարհիկ մարդը ուղղուած է դէպի ներկայ ժամանակը: Ի հարկէ, սրանք կապուած են միմեանց, նրանց ճշգրիտ տարանջատումը գուցէ անհնար է, բայց այդ կառուցուածքի մէջ կան իշխող կէտեր, որոնք բնորոշում են անձնաւորութեանը՝ կախուած նրա ներքին կողմնորոշումից: «Դանդաղ քայլերով պահ մը ետ դառնայր» նշանակում է՝ խորասուզուել սեփական հոգեւոր աշխարհի մէջ, վերապրել անցեալը նոր իրավիճակում (բանաստեղծական համատեքստի մէջ): Բոլոր արժէքները վերստին ոգեկոչւում են նոր կեանքի համար, դառնում խօսք, լեզու, արուեստ: Սա չէ՛ արդեօք բանաստեղծական այն «գաղտնագործութիւնը» որի մասին գրում են համարեա բոլոր բանաստեղծները (էւ հայ, էւ օտար): Դա աչքի է ընկնում Վեհանոյ թեքեանի բանաստեղծութիւնների մէջ, որոնք ուղղուած են դէպի մանկութեան անմոռանալի պատկերները, դէպի կեանքի շարժումը, ժամանակը եւ ներկայ մերկ ու անողոք իրականութիւնը:

Յիմա զանգի նման պահանջկոտ է կեանքը,
Եւ չեմ գիտեր ինչ կ'ուզէ հետս քալող անծանօթը:

Այսպիսի շօշափելի, առարկայական, ներքին լարումներով եւ իմաստային խոր շերտերով յագեցած փոխաբերութիւնների, բանաստեղծական ճկուն պատկերների բանաստեղծ է Վեհանոյ թեքեանը, որի բանաստեղծութիւնը մի ճիգ է ըմբռնելու, հասկանալու, ճանաչելու այդ «քալող անծանօթին», բանաստեղծութեան այդ մշտական «ճանապարհորդին», որը տարբեր ձեւերով, տարբեր անուններով եւ կերպարներով ուղեկցում է բոլոր բանաստեղծներին որտեղ էլ նրանք լինեն (Յայաստանում, Սփիւռքում, կամ որեւէ այլ տեղ): *Արտաքին* աշխարհում ապրող հայ մարդու հետ «քայլում է» *ներքին* մարդը, որը ճակատագրի պէս հետեւում է նրան, անցնում նրա հետ կեանքի բոլոր ուղիներով՝ պատանեկութիւնից մինչեւ զանգի նման հնչող կեանքը (այստեղ յիշում ես տասնութերորդ դարի անգլիացի մետաֆիզիկ բանաստեղծ ճօն Դոնի ճակատագրական տողը «Ո՛ւմ համար է հնչում զանգը...»): Այս զանգի ղօղանջը հնչում է Վեհանոյ թեքեանի համարեա բոլոր բանաստեղծութիւններում՝ ընդգծելով նրա խօսքի փիլիսոփայական եւ հոգեբանական ենթաշերտերը:

Վեհանոյ թեքեանը մտածող, խորհրդածող, վերլուծող բանաստեղծ է, նա չի սահմանափակում սոսկ իր զգայական եւ ներանձնական տեսիլքներով, այլ ձգտում է այդ ամէնը մօտեցնել գիտակցութեանը, լուսաւորել եւ տեսանելի դարձնել առարկան, ճանաչել զգացմունքը

Եւ ընդհանրապէս Վեհանոյ թեքեանը **մտածող**, խորհրդածող, վերլուծող բանաստեղծ է, նա չի սահմանափակւում սոսկ իր զգայական եւ ներանձնական տեսիլքներով, այլ ձգտում է այդ ամէնը մօտեցնել գիտակցութեանը, լուսաւորել

եւ տեսանելի դարձնել առարկան, ճանաչել զգացմունքը, այսպէս ասած՝ կատարել իր գիտակցուած *ընտրութիւնը*, կողմնորոշուել իրերի եւ զգացմունքների բարդ աշխարհում: Նրա բանաստեղծութեանը պէտք է մօտենալ ժամանակակից ոչ միայն հայ, այլեւ միջազգային քերթողական արուեստի բարձր չափանիշներով, որոնց մէջ թերեւս առաջնայինը խօսքի վերանձնական, առարկայական բնոյթն է, անձնական-ենթակայական *դիմակի* տակ դրուած անանձնական «*վիճակը*» (իշենք Միսաք Մեծարենցի «Տուր ինձի, ՏԵՐ, ուրախութիւնն անանձնական...» աղօթք-բանաստեղծութիւնը՝ նարեկացիական ոյժով լցուած պատանի հանճարի այդ յաւերժական աղաղակը): Բնորոշ են գրքի երկու բանաստեղծութիւնները՝ «Վահան ՏԵՐեան ճամբան» եւ «Արշիլ Կորքի», նուիրուած մեր ժողովրդի երկու լուսաւոր գաւակներին, որոնք թէեւ ապրեցան աշխարհագրական եւ մշակութային տարբեր վայրերում, բայց խմեցին ճակատագրի նոյն «դառը հեղուկը» (այն ճակատագրի, որը բաժին հասաւ մեր ժողովրդին՝ համաշխարհային պատմութեան մէջ թերեւս չունենալով այդքան ողբերգական մի ուրիշ օրինակ): Արշիլ Կորքիի կերպարը բանաստեղծը տուել է նրա կենսագրական եւ համազգային ամենացնցող պատկերների վրայ արուեստագետի կեանքը, մայրը, Վանայ լճի սրտառուչ բնանկարները, գիւղական պատկերները («Այստեղ հայեր կ'ապրէին») որոնց միջով անցնում է ստեղծագործ հանճարի տառապալից ուղին ի հակադրութիւն աւերի, փլուզման, կորստեան, աղետի («Ապրեցար դուն անապաստան, ապաստարան տուիր մեզի»): «Ուխտի եկանք շէկ հանճարիդ» – «շէկ» այստեղ նշանակում է կրակ, լոյս, ջերմութիւն, հրաշալի եւ ինքնատիպ մակդիր-փոխաբերութիւն, որոնք Վեհանոյ թեքեանի գրքում մեծ քանակութիւն են կազմում. «Շէկ»ը ցոյց է տալիս հանճարի ներքին բնութագիրը, նրա էութեան *արեւային* ոգին, որը ճեղքում է իրեն շրջապատած «դժոխքի» կաղապարները եւ հասնում

**Ինչի մասին էլ գրի բանաստեղծուհին՝
ի վերջոյ գրում է իր սեփական
ժողովրդի ճակատագրի մասին, իսկ
երբ գրում է իր ժողովրդի մասին՝
գրում է իր մասին:**

արարչական լոյսին, որտեղ «Սուրբ Խաչ անքուն ճգնաւորը կապոյտ աղօթք կը ծածանէ...»

Անհատական եւ ազգային ճակատագրերը խաչաձեւում են միմիանց: Ինչի մասին էլ գրի բանաստեղծուհին՝ ի վերջոյ գրում է իր սեփական ժողովրդի ճակատագրի մասին, իսկ

երբ գրում է իր ժողովրդի մասին՝ գրում է իր մասին: Անբաժանելի են անձը եւ ժողովուրդը, որոնք ստեղծում են մէկը միւսին, նրանք արտացոլուում են մէկը միւսի մէջ: Սփիւռքը հայ ժողովրդի անբուժելի վէրքն է եւ ոչ մի բանաստեղծ (մանաւանդ եթէ այդ բանաստեղծն իր ճակատին կրում է Աստուծոյ կնիքը) չի կրնար անտարբեր անցնել այդ վէրքի կողքով: Վեհանոյ թեքեանի բոլոր բանաստեղծութիւնները առնչւում են դրա հետ. նոյնիսկ մանկութեան վերյուշները (որոնք թէեւ չունեն թեմատիկ ուղղութիւն, բայց բոլորն էլ այսպէս թէ այնպէս

կապուած են նախնական տպաւորութիւնների եւ մանկութիւնից եկած անմիջական ընկալումների հետ) իրենց մէջ կրում են Պատմութեան անողոք շունչը, որի աներեւոյթ ներկայութիւնը զգացում է նրա համարեա բոլոր պատկերների, փոխաբերութիւնների, հնչերանգների, ռիթմների եւ կառուցուածքների մէջ:

Բանաստեղծն *ասարում* է իր ժամանակը, խմում նրա թոյնը, նրա *ապսուրոտը*, ընդունում աշխարհի անիմաստ դաժանութիւնը, սարսափում պատմութեան մղձաւանջից եւ անմտութիւնից: Միայնակ նա կանգնած է գոյութեան առջեւ՝ ձգտելով իմաստաւորել այդ գոյութիւնը: Արտաքին օտար աշխարհը նա ձգտում է դարձնել անձնական, անհատական, նրան տալ դէմք եւ անուն, նրա մէջ ներարկել կեանք եւ իմաստ: Իսկ ինչ է բանաստեղծութիւնը, եթէ ոչ՝ տիեզերքի անձնաւորում, աշխարհի անհատական սկիզբի յայտնագործում: Սեփական կեանքը մի *միկրո-տիեզերք* է, որի մէջ բեկւում է մեծ տիեզերքը, ինչ որ կատարւում է *վերելում*, արտացոլւում է *ներքեւի* մէջ, հետեւաբար անձնական կեանքը մի ընդարձակ փոխաբերութիւն է, որը բացւում է աշխարհի վրայ: Խոստովանական բանաստեղծութիւնը, որը մեծ աւանդոյթներ ունի 20րդ դարի եւրոպական եւ ամերիկեան բանաստեղծութեան մէջ (սկսած Շամլ Պոտլերից մինչեւ ամերիկեան պիթնիկների լաւագոյն ներկայացուցիչները – Ճեք Քրուաք, Ալէն Կինգալըրկ, Լորընս Ֆրոյենկելթըթի, Եւլին) մեծ տեղ է գրաւում Վեհանոյ թեքեանի ստեղծագործական համակարգի մէջ: «Սպիտակ իբրեւ թէ» բանաստեղծութիւնը այդ ժանրի լաւագոյն օրինակներից է. «*Եթէ ըսեմ ոստրեկապոյտ ջրվեժներու թաւալքին մէջ սոյգ թելերս կոհուած են, պիտի չհաւատաս // եթէ ըսեմ այրիացայ ստուերներու հետ խօսելով, պիտի չհաւատաս // եթէ ըսեմ գորշ կղզի մը կերայ կարիճներով, ճահիճներով, պիտի չհաւատաս*»:

Խոստովանական բանաստեղծութեան կատարեալ նմոյշներից է «Ինքնանկար» բանաստեղծութիւնը, որը շատ յատկանշական է Վեհանոյ թեքեանի համար: Պատկերների հոսքը, փոխաբերութիւններու կուտակումները, բանաստեղծական ռիթմի եւ տաղաչափութեան ազատ ծաւալումը ստեղծում են մի իւրօրինակ բանաստեղծական վիճակ, ուր բացայայտւում է հեղինակի ներքին կենսագրութիւնը. «*Մէկ բան յատակ է՝ դիմակ գործածած չեմ*»: Բանաստեղծական բնութագիրը ազատ խօսքն է, սեփական Էութեան անկաշկանդ բացայայտումը (յիշենք Ալէն Կինգալըրկի «Ունոցը»): «*Սեփական մարմնի տաք մոխիրներէն կը ծնին բառերը, արիւնլուայ ու սուրք*», գրում է Վեհանոյ թեքեանը: «*Ամէն գիշեր մոխիրները կը հաւաքեմ // ամէն առտու հայերէն գիրք շինած կ'ըլլամ*», ապա յայտնւում է յայտնի հեքիաթի ենթագիտակցական յղումը. «*Պիտի մտնեմ անտարին հին տնակէն կարմիր գլխարկս գտնեմ*»:

Արտաքին օտար աշխարհը նա ձգտում է դարձնել անձնական, անհատական, նրան տալ դէմք եւ անուն, նրա մէջ ներարկել կեանք եւ իմաստ:

Աղօթքներ ուռկանի մէջ ժողովածուն բաղկացած է երեք մասերից՝ «Ուռկանի մէջ», «Աղօթքներ», «Սաղմոսներ»: «Սաղմոսներ»ը գրուած են 1970ական թուականներին եւ հրատարակուած *Ոստրէ* հատորին մէջ, Պէյրութում, 1974 թուականին: «Թէ ինչո՞ւ կցուած են այս հատորի քերթուածներուն՝ ընթերցողին կը թողում մեկնաբանել», գրում է Վեհանոյ Թեքեանը: Կարելի է կարծել, որ հեղինակը այդ բաժինը մտցրել է ներկայ հատորի մէջ՝ ցոյց տալու իր հոգեւոր եւ մտաւոր զարգացման գիծը, ստեղծագործական այն ուղին, որ սկսուել է 1970ական թուականներին (նախքան Պէյրութի պատերազմական իրադարձութիւնները, երբ Լիբանանի հայկական գաղութը գտնուում էր ազգային եւ մշակութային լիակատար ծաղկման մէջ) եւ հասել ներկայ պահը, որով ընթերցողը հնարաւորութիւն է ստանում ոչ միայն հետեւել նրա ներքին զարգացման ընթացքին, այլեւ համեմատել անցեալը ներկայի հետ. տեսնել այն տարբերութիւնները, որոնք բնականաբար պետք է ի յայտ գային քառասուն տարիների ընթացքում, երբ երիտասարդ յախումն աղջիկը դառնում է խոհուհու, իմաստուն, մտածող եւ կշռադատող *կին*, որի համար էականը արդէն ոչ այնքան զգացմունքների պոռթկումն է, ինքնահաստատման կիրքը, որքան հաւասարակշռուած, իրերը առարկայաբար տեսնելու, անցեալը ճանաչելու եւ արժեքաւորելու ձգտումը, բանաստեղծական միտքը, գաղափարը, այսինքն՝ ոչ այնքան զգացմունքը, որքան՝ *առարկան*, դէպի որն ուղղուած է զգացմունքը: Տարբերութիւնը թեւեւ ակնյայտ է (այլ կերպ չէր կարող լինել), բայց պետք է ասել որ Վեհանոյ Թեքեանի ստեղծագործական կեանքի անցեալը եւ ներկան բաւական մօտ են միմեանց. «Սաղմոսներ»ի աստուածաշնչեալ եղերերգութիւնը, նրանց ներշնչուած լեզուն եւ ռիթմը դարձել են աւելի իրապաշտական, աւելի եսակեդրոն, նրա հայեացքն աւելի ուղղուած է դէպի իր կեցութեան հիմքերը, դէպի իր կենսական եւ մշակութային միջավայրը, դէպի պատմութիւնը (պատահական չեն Վահան Տերեանին, Միսաք Մեծարենցին, Դանիէլ Վարուժանին, Էմիլի Տիքընսընին նուիրուած ձօները):

«Սաղմոսներ»ը մեր ազգային քերթողական արուեստի կատարեալ օրինակներ կարող են լինել, բոլոր տասներեք սաղմոսները գրուած են հաւասար ոյժով եւ մեծ ներշնչումով: *Ապոկալիպսիսեան* տեսիլքներն ու տրամադրութիւնները յաջորդում են մէկը միւսին, ստեղծում *աշխարհավերջեան* մի ցնցող, ողբերգական համանուագ, ուր ամեն ինչ փլուում է, ընկնում, հրդեհում, անէանում.

Ինչ պիտի խօսինք.

Փայտե մոլորակներու ներքեւ

Մեռելները ամեն գիշեր նոյն բանը կ'ընեն.

Լեզուները փաթած սեփական

շիրիմներուն շուրջ

Կամաց-կամաց կ'աւրեն

Փորագրուած անունները:

Այդպէս աւելի ապահով կը կարծեն:

Համատիեզերական այս աղետի մեջ մարդու նշանակությունը, նրա կեանքը, նրա գոյութեան ներքին նպատակը կորցնում է իր արժեքները, հասնում անկման եւ կործանման յատակին.

Ոսկի աղջիկներ որոնց մարմինի գինին
կը բխի արիւնի նման,
Որոնք անյի ծուկերու պէս լուռ ու մունջ
կը խարկուին արնաթոր ափերու միջեւ
Եւ դեռ կը սարսռան աղի լոյսերու ներքեւ:

Քսաներորդ դարի բանաստեղծների եւ մասնաւորապէս ակեր ու կործանում տեսած մի ժողովրդի բանաստեղծի համար այս ամենը օրգանական է, հասկանալի, եւ արդարացման որեւէ անհրաժեշտութիւն չկայ:

Վեհանոյ թեքեանը իր ժողովրդի եւ իր ժամանակի զաւակն է: Նրա լեզուն եւ բանաստեղծական արուեստը ինքնատիպ են, յագեցած, համարժեք իր ներքին բովանդակութեանը, իր, այսպէս ասած, «*ինֆորմացիոն միջուկին*», որի գեղարուեստական *մարմինը* հենց այդ *դրամատիկ*, պրկուած եւ լարուած լեզուական միջավայրն է, նրա ամբողջական գեղարուեստական կառուցուածքը: Չկայ հենց այնպէս գրուած որեւէ տող, արտայայտութիւն, ամէն ինչ դրուած է պատկերաւոր եւ արտայայտչական ուժեղ լիցքեր ունեցող փոխաբերութիւնների մեջ եւ կարիք ունի յատուկ ուսումնասիրութեան: Պէտք է ասել, որ իր արմատներով նա սերտօրէն կապուած է պոլսահայ բանաստեղծների՝ Դանիէլ Վարուժանի եւ առանձնապէս Սիամանթոյի, յատկապէս վերջինի հետ, որը հայ ժողովրդի մեծ աղետը դիտում էր կոսմիկական պլանում, այն համարելով համաշխարհային չարիքի մարմնաւորումը երկրի վրայ, ընտրելով հինաւուրց եւ քրիստոնէայ ազգին, ինչպէս ասուած է՝ «անմեղի արիւնը ակեյի քաղցր է եւ ակեյի թանկ՝ մահուան շուկայում»: Վեհանոյ թեքեանին բնորոշ է նաեւ մեծարենցեան «լոյսի մետաֆիզիկական», որը որոշակի երանգ է հաղորդում նրա ստեղծագործութիւններին:

Վերջում կ'ուզէի նշել, որ Սփիւռքի (ոչ միայն Սփիւռքի, բայց յատկապէս Սփիւռքի) հետզհետէ նուազող եւ նահանջող, արեւմտահայերէն լեզուով հրատարակուող գրականութեան մեջ Վեհանոյ թեքեանի բանաստեղծական այս ժողովածուն ունի առանձնայատուկ արժեք ու նշանակութիւն եւ արժանի է ամենայն ուշադրութեան եւ դրուատանքի:



ՍՓԻԻՌ

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Սփիւռք օրհնառաք եւ անիծապարտ
Լոյսի նման ծննդագօր
ստուերի պէս սերմնապահ
Լոյսի նման միահեծան
ստուերի պէս ինքնակոչ
Ստուերի պէս բաժանելի
լոյսի նման ինքնասլաց
Լոյսի նման ընթեռնելի
եւ ստուերի պէս անտիպ
Լոյսի նման հաւատացեալ
ստուերի պէս դիւրախաբ
Լոյսի նման ինքնուղի
ստուերի պէս հնազանդ
Լոյսի նման ինքնաբաւ
ստուերի պէս մակաբոյծ
Լոյսի նման բազմիմաստ
ստուերի պէս երկդիմի
Լոյսի նման յաւերժական
ստուերի պէս կարճատեւ
Լոյսի նման ստուերահաճ
ստուերի պէս լուսաբաղձ
Մեր երակներուն մէջէն դեռ հողի որբան
հոսանքներ պիտի անցնին որ հասնի Յոհն

Չորս

չոր ժամ

Գրանցումները շարունակում են (ձեր
 էջեր...), իր կերպով վերանայն էլ բնական շարժում
 է կլորացնում կ'արգելի կ'զարգան-
 անքան: Բնական դասերը կ'անո անուրի Երբան,
 Գրանցումը նոր ժամանակներ են, ժամերի և ժամ
 անուրի ժամերը կ'անանում, որ արդարև
 է հույս գրանցումը նոր է վերանայնում-ը:
 Անտես ժամը իր անուն է բերում իր
 Անտեսի ժամը իր անուն է բերում իր
 է անունի անունը համար: Իսկ ով ժամանակ
 է, նա թերի':
 Վերանայնումը բնական այն էրանի կերպով
 Ան: Անունը է հանդիս: Վերանայնում է նրա անունը,
 անունը...
 Անունը վերանայնում-ը նոր ժամանակներ
 է ժամ կ'անում...
 Կեր ինչ ժամը:
 Բայց ժամը Անտեսի ժամանակներ են:

Գուրգեն Մահարիի գրած «Մուսկ»-ը Կապույտ Ապրիլին

Օրհանգրք Վեհանային Թախտիս



Անունը վերանայնում-ը նոր ժամանակներ
 են: Անունը է հանդիս: Վերանայնում է նրա անունը,
 անունը...
 Անունը վերանայնում-ը նոր ժամանակներ
 է ժամ կ'անում...
 Կեր ինչ ժամը:
 Բայց ժամը Անտեսի ժամանակներ են:

ՍԱԿՍՎԵՎԻԿԱ - Բանաստեղծություններ
 Անունը վերանայնում-ը նոր ժամանակներ են: Անունը է հանդիս: Վերանայնում է նրա անունը, անունը...
 SAYT-NOVA - четверостишия
 Художник - Р. Иераев

Գրանցումները շարունակում են (ձեր էջեր...)
 Կեր ինչ ժամը:
 Բայց ժամը Անտեսի ժամանակներ են:

Շահան Շահնուրի Վեհանային Մասին

ՓՈԽԱԳԵՐՈՒԹԻՒՆԸ՝ ՍԵՓԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԻ ՍՊԱՍԻՆ

(ՄՕՏԵՑՈՒՄ ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆԻ ՔԵՐԹՈՂՈՒԹԵԱՆ)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՐՔՃԵԱՆ

*Կը սիրեմ էութեանս մթին պահերը:
Միտքս կը խորանայ անոնց մէջ:
Կը գտնեմ հոն՝ հին նամակներու նման
օրերը կեանքիս, արդէն աստուած,
դիմացած՝ առասպելի նման, եւ հասկցուած:*

*Յետոյ կը հասնի գիտնալու պահը - կրնամ բացուիլ
դէպի ուրիշ կեանք մը, որ ընդարձակ է եւ անժամանակ:*

Բ. Մ. Բիլքէ
(Վ.Թ.Ի ընտրած բնաբանը՝ իր *Մտունդ եւ անդունդ*
հատորին համար)

Բանաստեղծութեան *մասին խօսիլ*՝ ահա անհետեւ ձեռնարկութիւն մը:

Այն իմաստով՝ որ Բանաստեղծութիւնը ստեղծում է Բանի, ճիգ է ու փորձ վերադարձի մը՝ Խօսքի, Լեզուի նախնական, պայթուցիկ զօրութեան. ու այն չափով՝ որ կը մնայ այդպիսին առանց նահանջելու դէպի լեզուի ծառայական պաշտօնը՝ անմիջական ու արձակունակ նշանակութեան միտող, – այո՛, անոր մասին խօսիլը միայն ու միայն անհետեւ ձեռնարկութիւն է:

Բանաստեղծութիւնը, այնպէս ինչպէս կը պատկերացուի հոս, այս տեսութեան մէջ, պիտի չհանդուրժէր զինք մեկնաբանող որեւէ կրթանք: Այդպիսի մեկնաբանութիւն՝ սոսկական բանա...սիրութիւն, իր անունի թելադրանքով իսկ դատապարտուած մնալու *սիրողական*, – խեղճ մակարոյծն է *Բանին*, անոր հետքերով, մնացորդներով սնանող:

Ահա ինչու, հաւանօրէն, պիտի արժէր վերապահութեամբ դիմաւորել ընդհանրապէս ամէն յաճում քերթողական վաստակներու շուրջ, զանոնք դարպասող (ինքնին հասկնալի է՝ խօսքը վաւերական վաստակներու մասին է):¹

¹ Չեմ մոռնար գրական-վերլուծական փորձերու տեսակ մը, աւելի ճիշդ՝ ոճ մը, մօտեցում մը ամբողջ, որ՝ խուսափելով հանդերձ կրկնաբան մեկնաբանութիւններու հետեւակութենէն՝ միւս կողմէն լրիւ

Ահա ինչն, նաեւ, ներկայ փորձը ստորագրողը ինք եւս՝ խուսափեր է քերթողական վաստակներու այդպիսի ինքնանպատակ մեկնաբանութենէ. քերթողական գործերու «գրախօսում»:²

Միւս կողմէ, սակայն, պէտք է խօսիլ բանաստեղծութեան մասին, գրական երկի մասին՝ առհասարակ: Ու ասիկա՝ յատկապէս՝ մեր իրականութեան մէջ, ուր կ'անգիտացուի բանաստեղծութեան դերը,³ գրական ստեղծագործութեան կենսական դերը՝ առհասարակ: Խօսիլ բանաստեղծութեան մասին՝ *անհրաժեշտ է*: Այդ «խօսիլ»ը նաեւ կրնայ դառնալ *կարելի*, գերծանիլ հետեւեակ մակարոյծի հոս նշուած ճակատագիրէն, եթէ մերժէ բաւարարուիլ, հեշտանալ Բանաստեղծութեան հետքերուն, մնացորդներուն սպառումով: Եթէ դառնայ ճիգ՝ դիտարկելու, շողանկարելու ստեղծման արարքը, անոր սկզբնական ձգտումը, գրողական ծրագիրը...:

Այսպիսի մօտեցում, այսինքն ստեղծագործութեան «հանգչած» *արդիւնքին* փոխարէն ճգնում՝ շողանկարելու ստեղծագործութեան *արարքն ու արարողը*, կարծես արդէն յարմարագոյնը պիտի ըլլար պարագրկելու համար արեւմտահայ նորագոյն՝ սփիւռքեան գրականութեան վերջին յիսնամեակի այն երեւոյթը, որ Վեհանոյշ Թեքեանի բերքն է: Նկատի առած մանաւանդ՝ քերթողական այս բերքին նկարագիրը – յորդուն, հոծ, կիսալուսային:

Երեւոյթ եզրը հոս՝ չի գործածուիր ինչ-որ «արժեւորման» իմաստով: Սկիզբը ուրուագծուած առաջադրանքը՝ դիտարկելու, շողանկարելու ստեղծագործութիւն մը, **գրողական ծրագիր** մը՝ ինքնին կը բացառէ ատիկա. շողանկարողը կը գերծանէ արժեւորիչի, նիշ ու գնահատանք շռայլողի (կամ զլացողի...) հանգամանքէն: Արդէն անբաղձալի, անշահեկան հանգամանք՝ գոնէ մօտեցումի մը համար, որ կը մերժէ գրական վերլուծումը, կամ գրադատութիւնը, կամ ինչ անունով որ կ'ուզուի կնքել այսպիսի յածում մը գրական արտադրութիւններու շուրջ, նկատել գրադատութիւն, այսինքն գործի մը արժեւորում դատական ատեանի առջեւ...: Աւելի՛ եւս, երբ կատարուածը յիսնամեայ, հաստատուած վաստակի մը դէմ՝ սոսկ «մօտեցում» մըն է, կրկնելու համար խորագրիս բնորոշումը: Վաստակէն կատարուած անխուսափելի ընտրութիւններն ալ՝ քննարկումի համար՝ թո՛ղ

«կը շեղի նիւթէն»՝ զինք արտայայտութեան մղող գրական գործէն ու վաստակէն, զայն դարձնելով սոսկ պատրուակ՝ հասնելու ուրիշ տեղ, ըսելու ուրիշ խօսք՝ ի՛ր խօսքը, գրա-տեսական կամ գրա-իմաստասիրական «տեսութիւն»ը – սեփական ճամարտակումով, կամ՝ աւելի յաճախ՝ փոխառեալ:

² Միայլ պիտի չըլլար նոյն պատճառական բացատրութիւնը տալ լքութեան, որմով անցեալին դիմաւորեր եմ Վեհանոյշ Թեքեանի այսօր գրեթէ յիսնամեայ ասպարէզն ու տասնեակի հասնող հրատարակութիւնները՝ քերթողական սեռի տիրապետող ու առաւել բնորոշ համեմատութեամբ:

³ Հոս տեղը չէ, այս մատնանշումէն աւելի, անդրադառնալու արեւմտահայ-սփիւռքահայ մշակոյթի ահագանգային կացութեան ու նոյնքան ահագանգային համատարած անտարբերութեան, անգիտակցութեան՝ **գրականութեամբ լեզու կենսագործելու, ու լեզուով ինքնութիւն վերստեղծելու հրամայականներուն հանդէպ**: Աւելին՝ թերեւս աւելի վար...

նկատուին այդ մօտեցումեն թելադրուած հարկադրական ընտրանքներ, նոյնիսկ եթէ կը ցոյացնեն սեփական... նախընտրութիւններ:

Նման «կողմնակի» մեթոտային մօտեցում կրնայ թուիլ անբաւարար՝ երբ Թեքեանի բերքին մասին ցարդ գոյութիւն չունի համընդգրկուն վերլուծական աշխատանք մը, գոնէ ինծի մատչելի մատենագիտական տուեալներով:⁴ Բացակայութիւն, որ առաջին հերթին անշուշտ «կը պարտինք» սփիւռքեան մեր կեանքի խզումին՝ սեփական գրականութենէն. մշակութային մեր ընդհանրական անտիրութեան (եւ ոչ՝ տուեալ վաստակի այս կամ այն մասնայատկութեան – հոծու-

Երկերը բոլորն ալ կառուցուած են ո՛չ անպայման իւրաքանչիւրը ուրոյն թեմայի մը շուրջ, այլ ակելի՝ գոյացնելով մթնոլորտային միութիւն մը, համապատասխան՝ կեանքի տուեալ պահու մը տիրող ներաշխարհային յատկանիշներուն:

թեան, բարդութեան, բազմաձեւութեան...): Յամենայն դէպս հոս փորձուածը, ըսուեցաւ, կը հպատակի լրիւ տարբեր հակումի՝ դիտարկում ստեղծագործութեան մը ծրագրումին եւ ընթացքին, **գրողական ծրագիրին** – «երեւութաբանական» կարելի առարկայականութեամբ:⁵

Հոս, նախքան ակելի առաջ երթալը, անտեղի պիտի չըլլային քանի

մը «արտաքին» նշումներ, մեզ հետաքրքրող երկերու կառոյցին ու բովանդակութեան վերաբերող:

Անոնք, ըստ ծաւալի եւ ընդհանուր «շարժում»ի, կրնան բաժնուիլ մի քանի խումբերու.

ա- ամբողջներ՝ համեմատաբար սահմանափակ ծաւալով, կառուցուած փոխաբերային տարրի գործարկումով, տեղ-տեղ չափաւոր-կշռութաւոր, յաճախ եւ չափ-կշռոյթի զանցումով, խախտումով – յայտնօրէն գիտակցուած, եթէ ոչ՝ ուզուած. ինչպէս օրինակ՝ *Ոստրէ* ժողովածուն բացող «Ներանձնութիւն» ենթաշարքը:

բ- ամբողջներ՝ ակելի ծաւալուն՝ բազմախաւ-բազմալիք կառոյցով, միշտ հարուստ՝ փոխաբերային տարրով, երբեմն բազմաձայլ համափոխաբերութիւններով. երկարաշունչ, *օրաթորիօ* յիշեցնող կշռոյթով եւ այլ յատկանիշներով: Այսպիսին է «Մոխիրէ ծառ»ը, *Նշանագիրի* մուտքին ծառացող:

գ- ակելի սահմանափակ ծաւալով կտորներ՝ խորհրդանշականի կամ այլա-

⁴ Չեմ անտեսեր գրախօսականներ, նուիրուած Թեքեանի երկերէն մէկուն-միւսին, կամ երկու յաջորդականներու: Երբեմն շահեկան, եւ որոշ ընդհանրացումներու յանգող, անոնք սակայն ի վերջոյ կը մնան սահմանափակ՝ իրենց մասնաւոր գրախօսականի հանգամանքով իսկ:

⁵ Այս «մօտեցում»ը, հասկնալի է, չ'ընդգրկեր Թեքեանի արձակը՝ պատումային թէ փորձագրական: Նկատի կ'առնուին քերթողական գործեր, թիւով վեց (պարզ կեդրոնացման մտահոգութեամբ մը՝ կը բացառուի սկզբնական *Կասպոյտ Ապրիլը*. ապա՝ նաեւ, անշուշտ, *Նշանագիր* հատորի արձակ-պատումային երկրորդ մասը): Յղումներ միայն պիտի ըլլան փորձագրական Էջերու՝ այն չափով, որ անոնք կը լուսաբանեն քերթողութիւնը, ասոր պատկերացման զանազան իր երեսները:

բանականի գերակշռութեամբ, փոխաբերային տարրի զգալի գեղջումով, փոխարինուած՝ ներածեալ գաղափարական պատգամով: Ինչպէս՝ նոյն *Նշանագիրի* մէջ տեղ գտած որոշ էջեր, նուիրուած՝ Մ. Գալշոյեանի, Յ. Կարապենցի կամ «Սփիւռքի բանաստեղծին»:

դ- էջեր՝ չափով մը յիշեցնող՝ անմիջապէս նախորդող տիպը, բայց համախառն՝ տեղ-տեղ պատուաստուած լեզուա-բառափաղարկումով: Յաճախ եւ՝ բեմարկումով, մեծ մասամբ «առօրեայ» թեմաներով: Այսպէս կրնամ բնորոշել *Մնունդ եւ անդունդի* սկզբնական կտորներէն ոմանք, կամ մէկ մասը «*Աղօթքներ ուռկանի մէջ*»ի «*Աղօթքներ*»ուն:

ե- կտորներ՝ տեղ-տեղ սիստեմաթիկ կիրարկումով՝ աւանդական չափածոյի: Օրինակ՝ *Կիսակէտի «Բառէ մոլորակներ»*ը:

Երկերը բոլորն ալ կառուցուած են ո՛չ անպայման իւրաքանչիւրը ուրոյն թեմայի մը շուրջ, այլ աւելի՛ գոյացնելով մթնոլորտային միութիւն մը, համապատասխան՝ կեանքի տուեալ պահու մը տիրող ներաշխարհային յատկանիշներուն: Նոյնիսկ տուեալ գործի մը մէջ, ամկայ մասերը յաճախ կը տարբերին, կը կազմեն ուրոյն ամբողջներ, սեփական կնիքով, երբեմն բաւական հեռացող՝ իրարմէ:

Ա. «ԳՐՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ»

Թեքեանի բերքին բոլոր մասերէն կը թելադրուի, գոնէ կ'ընդգագացուի՝ ընդհանրական յատկանիշ մը – լեզուի հանդէպ, գրականութեան եւ գրական մշակոյթի հանդէպ խոր սէր ու յափշտակութիւն:

Այս յատկանիշը պարզ «գաղափարաբանական» կեցուածք չէ, գոյութենական-գրողական ծրագիր է. եւ իբր այդ է՝ որ կը մատնանշուի հոս: Եւ իբր այդ՝ իր հետ կը բերէ շարք մը ածանցեալ յատկանիշներ, որոնցմէ կ'արժէ առաջնահերթաբար հոս նշել երկուքը.

– հեշտալի մտերմութեան ապրում հանդէպ լեզուին, հանդէպ գրական արտադրութեան – արարք թէ արդիւնք.

– արտահայեաց դիրք եւ խոր ձրգտում հաղորդակցութեան. հաղորդակցութիւն՝ սկսած անմիջական ընթերցողէն ու հասնող մինչեւ գրչեղբայրներ, հայ գրականութեան եւ մշակոյթի սպասարկուներ – անվերջանալի գրոյց մը՝ կարծես ընտանեկան սեղանի շուրջ, հարազատներու հետ: Ուրկէ եւ՝ գործերու յաճախակի տռամային կառոյցը, բացայայտ կամ ներյայտ:

Թեքեանի բերքին բոլոր մասերէն կը թելադրուի, գոնէ կ'ընդգագացուի՝ ընդհանրական յատկանիշ մը – լեզուի հանդէպ, գրականութեան եւ գրական մշակոյթի հանդէպ խոր սէր ու յափշտակութիւն:

Ուրեմն՝ գրելու արարքը սիրոյ արարք է նախ եւ առաջ. անսակարկ, անխզելի սիրոյ՝ հանդէպ լեզուին, եւ աւելի յատկապէս՝ հանդէպ սեփական լեզուին. անով մշակուող գրականութեան: Յանդէպ հայ լեզուի, հայ գրականութեան:⁶

Եւ սեփական լեզուի այս սերը չ'ենթադրեր գրագետին ենթակայումը անոր: Շատ աւելի՝ խորքային գիտակցութիւնն է մտերմութեան կապի մը լեզուին հետ, գրութեամբ ինքնադրսեւորման արարքին հետ. ամենժամեայ գիտակցութիւն՝ ընտանութեան **եւ միանգամայն տիրութեան**: Իր մօտ լեզուին հարազատը ըլլա-

Այս յատկանիշը պարզ «գաղափարաբանական» կեցուածք չէ, գոյութենական-գրողական ծրագիր է

ծեր լեզուն՝ հայերէնը. ուղղակի ձուլուած է անոր հետ՝ խրախճական, տարփական, հեշտանքային յարաբերութեան մը մէջ (ասիկա՝ լրիւ անկախ՝ տուեալ գործի բովանդակութենէն, որ կրնայ ողբերգական թեմա շօշափել. խօսքս լեզուի՛ հետ կապի, մտերմութեան մասին է): Եթէ ֆրանսացի բանաստեղծին համար «բառերը

լու, անոր պաշտպանն ու տերը ըլլալու ապրումն ու դիրքորոշումը այնքան մնայուն են ու շեշտակի, որ կը փոխարինեն լեզուի ձեւային տիրապետման փոյթը...: Թեքեան չի գործա-

Թեքեան չի գործածեր լեզուն՝ հայերէնը. ուղղակի ձուլուած է անոր հետ՝ խրախճական, տարփական, հեշտանքային յարաբերութեան մը մէջ...

նոյնանան, պարտին նոյնանայ, քան շայտըն լեզուէ գատ ու լեզուին վրայ ուրիշ շատ բաներ ունեցող ժողովուրդներուն մօտ...

Լեզուի հետ յարաբերութեան բնորոշ այս եղանակը կ'արժէր ընդգծել.⁷ նշելու համար գոնէ, որ լեզուին եւ գիրին հետ յարաբերութեան պատմութիւնը, Թեքեանի պարագային՝ սիրոյ ու հեշտանքի պատմութիւն, պատճառական իր կա-

⁶ Հոս փակագծեալ՝ հարկ է նշել նոյնացում մը, կամ փորձութիւնը նոյնացումի մը, որ կը յաճախէ Թեքեանի մտածողութիւնը: Սեփական, ազգային լեզուի հանդէպ մտերմութեան այս ապրումը իր մօտ, ինքնաբերաբար կրնամ ըսել, կը փոխանցուի, կը փոխադրուի... այդ լեզուն խօսող ժողովուրդին վրայ: Փորձագրական էջերու կամ գրոյցներու մէջ, ան ուղղակի՛ կը բանաձեւէ գրագետին՝ **լեզուին հետ** «սիրաբանելու» հրամայականը. ու միանգամայն՝ հաւասարութեան նշան կը դնէ **ժողովուրդին հետ** նոյնօրինակ յարաբերութիւն մշակելու հրամայականին միջեւ...: Մինչդեռ, այսպիսի «սահում» մը ինքնին հասկնալի չէ բնաւ: Գրագետը ի՛նք ուրիշ տեղ, մոռցած սայթաքումը՝ նոյնացման այս որոգայթին մէջ, կ'աւաղէ ան-տիրութիւնը, որուն մէջ թողուած են լեզու, գրականութիւն եւ գրագետներ՝ սեփական ժողովուրդին իսկ կողմէ...:

⁷ Որովհետեւ լեզուի հետ յարաբերութեան եղանակները բազմակի են, եւ ո՛չ անշուշտ՝ բացարձակօրէն դրական, հեշտայի: Այսպէս, ուրիշ գրագետի մը յարաբերութիւնը լեզուին հետ՝ կրնայ կենսամահու ամենօրեայ պայքար մը ըլլալ, համր մանկութիւններու, կենսական բացակայութիւններու ստուերով յաճախուած...

պերը ունենալու է անպայման. անիկա կը յղուի անհատական «պատմութեան» կենսագրութեան, սկսած հեռու անցեալէն, բնածին ու մանաւանդ ստացական տարրերու յօրինումով: Մեզմէ ամէն մէկը մանուկ եղած է օր մը, ապա ընկալուչ պատանի, կազմաւորուած՝ ընտանիք-բուսահողին, ապա դպրոց-բուսահողին վրայ, ենթակայ ասոնց յատուկ պայմաններուն: Բայց այս մասին՝ հոս այսքան միայն:

Աւելի առաջ երթալով, մտերմութեան մէկ ուրիշ ձեւն է, կ'ըսէի, տիրութեան կեցումաժողով: Որ կը ստանայ զանազան արտայայտութիւններ, պատնէշի վրայ պաշտպանական անխնայ պայքարէ մինչեւ «տնային» մտերմութիւն, երբեմն հասնելով լեզուական անփութութեան – միշտ՝ հարազատի կամ տանտիրոջ իրաւունքով...: Նոյնիսկ եթէ հակասական թուի թէկուզ նուազագոյն անփութութիւնը՝ այսքան պաշտումած սիրահարի մը հանդէպ – լեզուին հանդէպ...

Լեզուի հետ կապի այս պատմութիւնը կ'ընթանայ բխումի կշռոյթով, ոչ միշտ հակակշռելի, բայց հպատակող՝ սեփական օրէնքի, սեփական օրէնքով ընթացումի յաճախ զգացուող գիտակցութեան մը: Այդ մասին բաւարար չափով կը վկայեն թեմաթիք-կառուցային նոյնութիւններ, կամրջումներ, հաղորդակցութիւններ՝ Էջէ Էջ, երկէ երկ...:

Գրութեան ծննդոցի այս քննարկումը աւելի կարծրատիպ բնորոշումով մը պիտի հարցադրէր **ներշնչում** կոչուած հոգե-մտաւոր վիճակը: Յոս՝ խուսափելով այդ կարծրատիպէն, կը հակիմ աւելի՝ դէպի «բխում»ը: Ու կը բաւարարուիմ նշելով, որ գրութեան արարքը Թեքեանի մօտ անմիջական է, անմիջական կ'երեւի: Իր բնագիրը չի թուիր ենթակայ մշակումի, գոնէ վերամշակումի, ու առհասարակ հեռու կը մնայ ձեւի մտասեւեռումէ, այդ արտայայտութեան զանազան իմաստներով ու աստիճաններով: Բայց պետք է նշել, որ նոյնիսկ անսեթեւեթ, ձեւային խնամքի անտեսումով վիրաւոր Էջեր կրուած են այնպիսի յուզական թափով, բխումով, որ հանածոյի իրենց վիճակին մէջ իսկ՝ յաճախ կ'արձակեն փնտռուած թանկագին հանքանիւթին փայլը:

Անշուշտ բխումը, ինքնա-բխութիւնը չի բացառեր նախնական խմորում մը, առաւել-նուազ երկարատեւ:

Ընդհակառակը՝ հաւանօրէն կը կանչէ մասամբ գիտակից, մասամբ եւ անգիտակից այդպիսի գործընթաց մը: Ապա, ինչպէս պիտի փորձեմ մատնանշել աւելի վար, յատկապէս «քառասյինի փորձութեամբ» յաճախուած Էջերու առջեւ, դժուար թէ կարելի ըլլար ասոնց զուգորդել վերամշակումի, յղկումի, յղկումով փայլեցման աշխատանք եւ ատով ստացուած արդիւնք: Գիտակցութեան

... գրութեան արարքը Թեքեանի մօտ անմիջական է, անմիջական կ'երեւի: Իր բնագիրը չի թուիր ենթակայ մշակումի, գոնէ վերամշակումի, ու առհասարակ հեռու կը մնայ ձեւի մտասեւեռումէ, այդ արտայայտութեան զանազան իմաստներով ու աստիճաններով:

հակակշիռը, նաեւ վերամշակում-յոկումն՝ հակակշիռը՝ ի վերջոյ՝ մինչեւ տեղ մըն է...:

Քննելով «գրողական ծրագիր»ին երկրորդ ածանցեալը՝ արտահայեցութեան կամ հաղորդակցութեան ձգտումը,– անոր անմիջական դրսեւորումը՝ **խօսքի տեսակի** մակարդակին, **երկխօսութիւնն** է: Թեքեանի գրութիւնը անպայման կ'ենթադրէ, ընթերցողէն անդին, ունկնդիր-մասնակից մը՝ խօսակից մը – բացառապէս կամ ներայտ: Որովհետեւ իր մօտ յաճախակի են, եթէ ոչ ամենաներկայ, ոճաձեւերը, որոնք այդ ունկնդիրը կը վերածեն գրուցակիցի, կ'ընթանան անոր հակադրեցութիւնները նախատեսող կշռոյթով, զայն կը հարցապնդեն ուղղակի...:

Այս ընթերցող-ունկնդիր-մասնակիցը կը թուի ըլլալ իր Նմանը՝ Մարդը, ընդհանրապէս: Բայց եւ՝ որոշ տեղեր՝ գրոյցը կ'ընթանայ անդրանցային Էութեան մը հետ, այդ Էութիւնը «աստուածային» բնորոշէնք թէ այլապէս...: Իսկ աւելի յստակ հասցեագրուած Էջեր են, ինչպէս վերը նշեցի, անոնք՝ որոնք կ'ուղղուին

Թեքեանի գրութիւնը անպայման կ'ենթադրէ, ընթերցողէն անդին, ունկնդիր-մասնակից մը՝ խօսակից մը – բացառապէս կամ ներայտ:

գրչեղբայրներու, գրեթէ միշտ՝ հայ, ու բացառապէս՝ դրական կերպարներ, սրտագրաւ հոգիներ՝ Գալշոյեան, Կարապետ, Վարուժան, Մեծարեան, վերջինները՝ փորձագրական, կամ «տպաւորական» Էջերու մէջ (մինչ միւս

կողմէն՝ զգալի է խուսափումը ոչ-գեղեցիկ հոգիներու կամ գրական երեւոյթներու առջեւ «շուրթեր պղծելէ անէծքով»): Այլապէս յստակ հասցէ ունին դեռ կտորներ՝ նուիրուած անձնական-արեւնական հարազատներու – մայր, զաւակներ: Եւ զարմանալի չէ, որ՝ բոլոր այս պարագաներուն՝ գրոյցը ըլլայ հոգեխօսութիւն, հոգեգրոյց:

Այսպիսի ընդհանրականութեամբ մը բեռնաւոր՝ հաղորդականութեան յատկանիշը – պիտի չզարմանանք – եթէ նոյնիսկ մենախօսութիւնները, ինքնախօսութիւնները գետեղէ գրոյցի, դրսեւորման, փոխանակումի նշանին տակ: Ատոնք իրենց կարգին, եւ շատ բնականօրէն, երկխօսութիւններ են – երբեմն նաեւ իբր այդպիսին ձեւաւորուած, ինչպէս կանուխ «Կազմալուծում եւ հոգեկայան»ի Էջերէն մինչեւ նորագոյններ՝ «Ինքնանկար» մը, «Դիտանկիւն» մը, կամ «Յաշուէ-յարդար» մը,⁸ մանաւանդ իրենց աւարտներով...: Նոյն գրուցային հակումը այլապէս կը դրսեւորուի, երբ Ա. դեմքով պատումը կամ պարզ խորհրդածութիւնն իսկ՝ կը փոխարինուին Բ. դեմքով՝ «դուն»ով...: Երկխօս-մենախօսութիւնը լսելի կ'ըլլայ մինչեւ համանուագային բազմաձայնութեամբ բնորոշուող «Մոխիրէ ծառ»ի Էջերուն:⁹

⁸ Առաջինին համար՝ տե՛ս Կիպակէտ (1978, Պէյրութ). հետեւողներուն՝ «Աղօթքներ ուղկանի մէջ» (2016, Միաց. Նահանգներ):

⁹ Տե՛ս Նշանագիր (1987, Միաց. Նահանգներ):

Չրոյցը՝ երկխօսութիւն կամ բազմաձայնութիւն՝ անշուշտ կացութիւն է, բեմադրում: Եւ գրութեան *տռամային* կառոյցը յաճախ ալ բեռնաւոր է *տռամ*ով, ներքին լարումով: Եւ այդպիսին է յատկապէս, երբ առկայ է՝ ինչ որ կրնամ բնորոշել իբր *քառսի փորձութիւն*: Այլ խօսքով, երբ իրականի պատկերումէն անդին՝ կը դիմագրաւուի գեր-իրական մը, հունաւորէն անդին՝ անհունի յաճախանք մը...: Բայց այս մասին եւս՝ աւելի վար: Առայժմ, խօսելով «բեմադրական»ի մասին, կարելի է ըսել, որ դեմյանդիման անձը տեղ-տեղ ստուեր է, երբեմն աննիւթ էութիւն մը, բայց միշտ՝ սիրուած, կանչուած – կարծես հեռու, անյայտ սէր մը...: Եւ ասքը կ'երթելէկէ, շատ խորհրդապահ ճօճումով մը, մենախօսութեան եւ երկխօսութեան միջեւ, կամ՝ երկուքէն ալ անդին:

Երբեմն, բեմական տարրերու յաւելումով, կը գտնուինք կացութիւններու ներկայացման, յաճախ բեմանկարներու կենդանի նկարման, զոնէ ուրուագծման առջեւ. միշտ ալ հեռու՝ անանձնականութենէ, այս էջերը կ'ուրուագծեն սեփական կացութիւններ, սեփական-ներքին «իրավիճակներու» արտաքնում, հեռարձակում: Այսպէս՝ շատ էջեր – «*Անհետացած Կամար...*»-էն մինչեւ «*Ժամացոյց*»ը, անցնելով «*Ճաշակեսցուք...*» խոհագիրէն, անշուշտ նաեւ՝ «*Իրավիճակ*»-էն ու «*Ընկերային հասարկոյթ*»-էն ու «*Տէր Չօր*»-էն...¹⁰ Առանց մոռնալու *Նշանագիրը*՝ իր կոյսանտառային հոծութեամբ, որ թեմաթիբ հարստութեան կողքին՝ կը շռայլէ նոյնպիսի տեսողական-բեմական գրգիռներ...

Բ. «ԷՌԻԹԵԱՆ ՄԹԻՆ ՊԱՆԵՐԸ»

Ր.Մ. Բիլքէի տողերը, որոնք իբր մակագրում կը ներածեն քերթողագիրքերէն մէկը – ինչպէս եւ ներկայ վերլուծումի փորձս – չէին կրնար աւելի բնորոշ կիրարկում գտնել այլուր, քան Թեքեանի ճիշ բերքի ծիրին մէջ, ու աւելի խտօրէն՝ անոր առաջին երեք կամ չորս ժողովածուներուն: Այս բերքի ամենահարազատ խաւերը իրօք կը կայացնեն բանաստեղծին «*Էութեան մթին պահերը [...], օրերը կեանքիկն*», որոնք՝ *դիմացած [են] առասպելի նման, եւ հասկցուած*: Ապա՝ ընդլայնումը «*դէպի ուրիշ կեանք մը [...], որ ընդարձակ է եւ անժամանակ*»:

Այս առասպելայինը, կամ գերիրականը՝ ինչպէս կը տեսնուի, շեշտօրէն անձնական է: Այլ խօսքով, անձի առասպելին, անձի միսթիքին կը վերաբերի. անձնական-գերիրական մըն է: Ինչպէս փորձեր եմ այլապէս բնորոշել, յաճախանք է անհունի, եթէ ոչ՝ անձեւի, քառսայինի: Փորձ ու փորձութիւն՝ անասելին լեզուէն անցընելու, ըսելու...

Այդ անհուն-անասելին, քառսայինը, լեզուի գեղարուեստական գործարկումով ասելի դարձող, ըսուող, մարտահրաւերն է, որ բանաստեղծը կը վերցնէ՝ այդ

¹⁰ Առանց համար, տե՛ս «*Աղօթքներ...*»:

երկերու գերխիտ, յաճախ եւ ծաւալուն փոխաբերութիւններու փայլատակումին մէջ: Փոխաբերութեան այս էական, բանայի գործարկման կ'արժէ անջատ անդրադառնալ, աւելի վար: Յոս շեշտուելիքը՝ առասպելային-անասելիի ոլորտին տռամային լիցքն է, որ իր ուժգնութեան մէջ կը համարկէ աճումի, ծաղկումի մնայուն ձգտում մը՝ ողբերգականի նոյնքան մնայուն խորքի մը վրայ: Եւ որ՝ ի յառաջագունէ արձանագրուած անձի գոյութեանական ծրագիրին մէջ, կարծես ծննդաբանական գաղտնագիրի մը մէջ՝ կը յայտնուի աճում-ծաղկումի եւ կորուսումի զոյգ հակումներով, փոխնիփոխ մէկուն կամ միւսին տիրապետութեամբ:¹¹

Բերթուածը դարձնելով տեւական գրկախառնում մը լեզուին հետ, անով **ըլլալու** տենդ ու տենչ, լինելութիւն եւ կործանում միանգամայն...: Ու ինքզինք կը պարտադրէ փաստը՝ յարակարծային բայց իրական՝ որ անհուն-անասելիի այդ կնիքը կրող, անձի առասպելային խորքերուն մէջ ընկլուզուած էջերն են ու երկերը՝ բերքին մէջ, որ աւելի կ'ըսեն, լաւագոյնս կը ցուցահանեն՝ Թեքեանի ճշմարտութիւնները, քան անհատին ու անոր կեանքին առաւել տեսանելի, առաւել «ասելի» երեսները բացայայտ եւ ուղղակի ըսող տողեր, թէկուզ քերթուածի կաղապարին հպատակող, բայց որոնք անխուսափելիօրէն պիտի դառնային աւելի արձակունակ:

Տռամայինի կանխամուտ այս ներկայութիւնը ընդգծելէ ետք, անոր մէջ ու հետ սերտօրէն ազուցուած՝ կենսային ուժի բխումներու եւ Աղէտի մը զգայնութեան կողքին, ընդգծելի է ասոնցմով եղող ու ասոնց ժամանակակից, ուրեմն նոյնքան կանխահաս, լեզուա-ստեղծագործական դրսեւորումով հաղորդակցելու խոր ձգտումը: Եւ նոյնպէս՝ փաստ, որ շատ կանուխեն՝ ամենաբնորոշ էջեր կնքուած կ'երեւին քառսային աշխարհատեսիլքի մը յաճախանքով, անձեւ անհունի մը քաշողականութեամբ: Անհուն ժամանակի եւ անհուն անջրպետի, քառսայինի փորձութիւն, որ հեւքոտ բխումով գրուած-կնքուած էջերէն կ'արտահանէ տպաւորութիւնը՝ փոխնիփոխ՝ անբաւարար մշակումի եւ... ստեղծողէն ուզուած էւ ստանձնուած քառսայինի ճիշդ ու հարազատ դրսեւորման: Եթէ ապրիլը կիրք է, երազ ու ձգտում խաղաղ, հաշտ գոյութեան մը, – բայց եւ լարուածութիւն է, հանդիպում Աղէտի հետ. հանդիպում՝ որ կրնայ դառնալ նաեւ մտասելեռում: Բայց ապրիլը մանաւանդ կիրք է դրսեւորուելու, գրելուն...

¹¹ Գիտենք, իրականը տռամային է, գեղեցիկի-տգեղի, դաշնութեան եւ բախումի, երջանկութեան եւ ողբերգականի անանջատելի խառնուրդ: Թեքեանի մօտ ատիկա փաստ է յաճախ, ողբերգականի գերակշռութեամբ, թէեւ ոչ տիրապետումով: Տռամայինը, հնոցն է, ուր խառն են, համաձոյլ՝ կենսային ձգտումը՝ աճելու, տեւելու, եւ Աղէտի մը ողբերգական ներայտնումը – սեր եւ պայքար՝ սուգին հետ շաղուած: Ու չեն գիջիր աժանկեկ «կենսագրական» բացատրութեան մը՝ այս զգայնութիւնը կապելու բացառապէս «կեանքի փորձառութեան», նկատելու գոյութեան դաժան պայմաններու «դասը»: Այդպէս չէ բնաւ. տռամայինը էական, խառնուածքային սկզբնական ներկայութիւն է, Թեքեանի շատ կանուխ արտադրութիւններուն մէջ արդէն առկայ, կանխահաս լրջութեան մը, ծանրութեան մը ձեւին տակ (մարդ կը դժուարանայ հաւատալ, որ *Ուտրէն* դեռատի, քսանհինգամեայ բխում մըն է - խօսք չենք ըներ հոս՝ յամեցող անհարթութիւններու մասին...): Եւ ի տես այսքան ներհայեցական լրջութեան՝ հարց կու տամ՝ արդեօք նախասահմանուած-գրուած չէր տեղ մը «կապոյտ ապրիլին խեղդուիլը» («Ինքնանկար», «Աղօթքներ...»):

Վերջին շեշտում մը. Բառերու, փոխաբերութիւններու շռայլ այս կոյս-անտա-
ռին մէջ, բանաստեղծը գիտէ կողմնորոշուիլ, գիտէ տիրապետել իր կառոյցնե-
րուն: Էջեր կրնան թուիլ առաջին բիւռմի արգասիք՝ անաւարտի տպաւորու-
թեամբ մը, բայց աւելի յաճախ կառուցային ծածուկ գիծեր կը մատնեն նախա-
մշակման ներքին գործընթաց մը, ու ամէն պարագայի՝ բացորոշ տիրապետում
նիւթի եւ հուճքերու...: Միւս կողմէ,
ինքնանկարումի ենթադրած ինքնա-
դիտարկումը հեռու կը մնայ ինքնա-
հաճութեան դարանակալ վտանգէն,
հեռու՝ մտաւորական թէ արուեստի
աշխարհներու մեծաթիւ յաճախող-
ներու եսակեղրոնութենէն – շնորհիւ
ինքնագիտակցութեան, շնորհիւ նաեւ
արտահայտեցութեան էական յատկու-
թեան: Խորհրդապահութեան զար-
մանալի, յարակարծային կարողու-
թիւն՝ ինքներգութեան մէջ ցուցանքէ
խուսափելու...: Վաւերական գրագէտներու ինքնութեան կնիքը կայացնող յատ-
կանիչը՝ ինքնագիտակցութիւնը, ինքզինք անթող ու անդիմակ տեսնելու ատա-
կութիւնը, որ առաւելագոյնս կը զգացուի Թեթեանի տողերուն տակ՝ իր տեղին
ու պատշաճ ձեւով...

Ըստ հոս փորձած գնահատումի արժեչափերուս, իւրաքանչիւր երկի մէջ
ներկայ սեփական առասպելի այս ասքը կը գրաւէ որոշ տեղ, որոշ մաս. այն մա-
սը՝ որ գործին յաճախողը «կը բռնէ կոկորդէն»: Այդ մասերը գրեթէ միշտ ինքնա-
տութիւններ են, այսինքն բանաստեղծին ներաշխարհին հետ աւելի ուղղակի եւ
աւելի խոր առնչուող հատուածներ...: Անոնք, այդ հոծութիւնները, կը կազմեն
գործերու կարծր կորիզը, միանգամայն վաւերական արտայայտութիւնը գրողա-
կան ծրագրին, հաւանօրէն աւելի՝ քան տուեալ գործերու մնացեալ էջերը, որոնք
նուազ անձնաշեշտ են, երբեմն եւ արձագանգող՝ ազգային կամ համամարդկային
ընդհանրութիւններու...:

Այսպէս, *Ոստրէն* իր հոծ կորիզը ունի «Ներանձնութիւն» մասին մէջ, ինչպէս
եւ՝ աւելի ցրուած՝ որոշ «Սաղմոս»ներու: *Կիպակետը* այդ հոծութիւնը կը վերա-
պահէ առաւելաբար «Կապմայրութեան եւ Զոգեկայան»ի էջերուն: *Նշանագիրի* մէջ՝
առաւելաբար «Մոխիրի ծառ»ն է որ կու տայ ինծի «ինքնասական» հոծութեան
տարրերը: «Բապմածուի աշխարհ»էն՝ «Աւք արարման եւ երկիրի»ն է որ կ'ա-
ռանձնացնեն նոյն նկատառումով: «Սնունդ եւ անդունդ» ժողովածուին մէջ՝ ան-
դնդային խտութիւնը, կրնամ ըսել, կը կրուի մանաւանդ «Քաղցրութիւն» խորա-
գիրը կրող հիանալի էջէն: Իսկ «Աղօթքներ ուռկանի մէջ»էն՝ բացող կտորներն
իսկ – «Ինքնանկար», «Անհետացած կամար», «Դիտանկիւն»...: Ասիկա՝ ո՛չ այլա-

**... ինքնանկարումի ենթադրած
ինքնադիտարկումը հեռու կը մնայ
ինքնահաճութեան դարանակալ
վտանգէն, հեռու՝ մտաւորական թէ
արուեստի աշխարհներու մեծաթիւ
յաճախողներու եսակեղրոնութենէն –
շնորհիւ ինքնագիտակցութեան,
շնորհիւ նաեւ արտահայտեցութեան
էական յատկութեան:**

տիպ հատուածներ անպայման ասոնց ստորադասելու ենթադրութեամբ. չափանիշը հոս՝ նախ եւ առաջ՝ **ինքնասութեան աստիճանն է**, տուեալ հատուածներու առնչումը՝ իմ կողմէ «սեփական առասպել» կոչուած կեդրոնական ոլորտին հետ:

Գ. ՓՈԽԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ՝ ՍԵՓԱԿԱՆ ԱՆԴՈՒՆԴԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ...

Այս հոծ կորիզներու սեւեռումը առիթ է բանալու փոխաբերութեան բանալի-գործառնոյթը Թեքեանի գրութեան մէջ:

Թեքեանի մօտ, փոխաբերութիւնը առհասարակ չի կրեր երկարաշունչ մշակումի մը կնիքը, կը ծնի փայլատակումի արագութեամբ, կը թուի – գոնէ կը թուի – թուական բխումի արգասիք: Ի դէպ. ատոր համար տեղ-տեղ դժուար-ընկալելի

Թեքեանի մօտ, փոխաբերութիւնը առհասարակ չի կրեր երկարաշունչ մշակումի մը կնիքը, կը ծնի փայլատակումի արագութեամբ, կը թուի – գոնէ կը թուի – թուական բխումի արգասիք:

է, ըլլայ պատկերումի գերիտութեան, ըլլայ չափազանց ենթակայականութեան պատճառով: Այս վերջին պարագային, ուրեմն, ընթերցողին կը դրուի ընկալելիութեան, «պատկերելիութեան» խնդիր:¹² Յամենայն դէպս, եթէ պատկերակերտման գործընթացը իր ինքնեկութեամբ մէկ կողմէ

տպաւորութիւնը կը ձգէ հեշտութեան (հեշտութիւն՝ հոմանիշ դիւրութեան, եւ ազգական՝ հեշտանքի), միւս կողմէ՝ անիկա անկասկած դիւրութիւն ըլլալու չէ բնաւ: Պարզապէս, պատկերակերտման այսպիսի ընթացք ու կերպ՝ հազուադէպ տեսակի են մեր գրականութեան մէջ, նոր թէ նորագոյն:¹³

¹² Պատկերակերտման չափանիշներու յարաբերականութիւնը յաճախ ընդգծուեր է, յաճախ ալ առիթ ու նիւթ է տուած բանավէճի: Ծանօթ են Մեծարեւոյցին ուղղուած հետեւեակ-արձակունակ քննադատութիւնը՝ իր «կայոյտ յածումներ» կամ «հոգիէն անցնող մանուկներ» տիպի պատկերներուն առթիւ, նաեւ իր բացատրութիւնները՝ բուրձ աշակերտներու առջեւ հարկադրաբար վարժապետի շեշտ ընդունած...: Բայց հոս, պէտք է նշել, պատկերներու ենթակայականութեան աստիճանը կ'երթայ աւելի հեռու: Եթէ Թեքեանի զգայարանական-զգացական ոլորտը մէկ կողմէ կը նուիրէ փոխաբերութիւններու բիւրեղային յստակութեամբ աստղահոյլեր ամբողջ, ինչպէս՝ «ձիւնահամ վեփիւր»ն է, «Մոխիրէ ծառ» մը, «լուսացնողը՝ Նայիրիին» մը», - կամ՝ նուազ ուղղափառ բայց նոյնքան սքանչելի՝ «երակներս պարսել դէպի աշուն», «... բառի տողի ոտին վրայ թառած...», «ջարդուած հայելին [եւ] քիս կրող պատկերներուն», - միւս կողմէ՝ բռնադատեալ ճիգի կարօտ կրնայ ըլլալ ընկալումը պատկերներու, ինչպիսին են «աղօթքներ ուռկանի մէջ», «խաչուած բիրեր», «ծանրացող փոսեր», «Երակներս դրի անակիպը [...] թարերու վրայ» : Յաւանօրէն անարդար չէ նման առարկութիւն. երբեմն կը գտնուինք «թերյղկումի» մեղքի մը առջեւ, անխուսափելի շրջօնը շեշտակի ենթակայականութեան, եթէ ոչ՝ անապարանքի, կամ –ըսուեցաւ սկիզբը– ինքնավստահ հեշտութեան մը...: Ամեն պարագայի, գործին պատկերա-փոխաբերական ոլորտը շատ աւելի յաճախ ինքզինք կը հաստատէ, լայնօրէն կը փրկէ՝ գերիրա(պաշտա)կանի հետ ինքնաբուխ, ընդօրին հարազատութեան մը փաստով...

¹³ Պատկերակերտական այս զգայնութեան դրացի տարրեր պիտի գտնենք արեւելահայ ժամա-

Թեքեանի մօտ, փոխաբերութիւնը կրնայ յղուիլ ամբողջ պատկերային կառոյցի մը, զգայարանական եւ զգացական բնոյթի, որ անպայման չի ներկայանար յստակ գիծերով, կը մնայ ներյայտ, գերխիտ եւ ենթակայական՝ մանրամասնային գիծերուն մէջ երբեմն բանականօրէն դժուարընկալելի դառնալու աստիճան, ինչպէս արդէն նշեցի: Բայց պատկերային լայն կառոյցները կրուած են այնպիսի համակարգային ենթակայականութեամբ մը, որ տեղ-տեղ կը բանայ, կը ցուցնէ, զոնէ կը թելադրէ իր ճարտարապետական համակառոյցը, եւ որ՝ ամենակարեւորը՝ միշտ ալ ստանձնուած-գիտակցուած է լրիւ:

Կը տեսնուի, որ փոխաբերութիւններու կերտումը, առհասարակ զգայարաններու եւ երեւակայութեան յղացում, Թեքեանի մօտ կը ստանայ տարբեր ընթացք. նշուած այդ պաշտօններուն կողքին, անիկա կը գործարկէ յուզական-զգացական ուժեղ, պայթուցիկ միջամտութիւններ: Լեզուի հետ կապը, սիրային կապ ու կենակցում, անշուշտ որ գործի պիտի լծեր ամբողջ քնարական-զգացական խորք մը:

Այս է, որ շեշտօրէն կը տարբերէ Թեքեանի ոլորտը գերիրապաշտականէ, անոր մասին մտածել տայով հանդերձ: Գրական տուեալ հոսանքի մը ենթարկուելէ հեռու, գերիրապաշտական որոշ յատկանիշներու ոչ-սիստեմայիկ, ազատանկաշկանդ որդեգրումը իր մօտ կը թելադրուի շատ աւելի ընդօժին, խառնուածքային մղումներէ, հանդիպած՝ գրա-մշակութային ընդհանուր մթնոլորտի մը:

Պատկերակերտական սարքը, չենք մոռնար, սերտօրէն կ'առնչուէր արդէն նշուած «բառսայինի փորձութեան», անոր գրեթէ մնայուն յաճախանքին: Իբրեւ յարմարագոյն արտայայտամիջոցը, նաեւ, Թեքեանի գրողական ծրագիրին՝ սեփական առասպելի, մտերիմ-խոր առասպելի ասումին:

Կ'ըսէի նաեւ, որ՝ գնահատումի հոս կիրարկուած չափանիշներով՝ յատուկ սեւեռման արժանի են ամէն մէկ երկի կորիզային այն մասը կամ մասերը, որոնք առաւելագոյն հոծութեամբ կը ներփակեն սեփական առասպելի ասքը, ըլլալով միանգամայն վաւերական արտայայտութիւնը գրողական ծրագրին, ի տարբերութիւն ազգային կամ համամարդկային ընդհանրացումներ բովանդակող Էջերու, նուազ անձնակնիք:

Քանի մը հպանցուած մէջբերումներ միայն կարելի են հոս, այսպիսի հատուածներու բնոյթը լուսաբանելու համար, միանգամայն ընթերցողը յղելով ամբողջ Էջին ու շրջագրութեան: Այսպէս, Ուտրէն բացող «Ներանձնութիւն»ը՝ թուելով գրուցել «միւս աստուածամօր» հետ՝ իրօք քերթողի սեփական գողգոթայի պատումը կը մենախօսէ. «Կանգնած եմ արդ անդունդեպրին գահավիժող / մէկէն

նակակիցներու մօտ, ինչպէս Պարոյր Սեւակի, Յենրիկ Էդոյեանի: Փոխաբերական սարքի այս ազգականութիւնը՝ շատ հաւանօրէն անոր կու գայ բանաստեղծութեան ժամանակակից զգայնութիւններու ընդհանուր մթնոլորտէն, որ Թեքեան շչւած է միւսներուն հետ միասին, եթէ ոչ՝ միաժամանակ, եւ ոչ՝ ստացած անոնցմէ:

ասոած ջրվեժի պես»։ ու աւելի վար՝ «Ա՛յ յանձնուի՛ն, / հեկեկամ թող, / Ներսը՝ հալած մոմերուս պես, (...) Անտես վերքէ մը / դուրս խուժող արիւնի պես, / Քանի որ ես / Ես սրբեցի՛ խունկ ու աղօթք / կապոյտ սրտես»։ Նոյն ժողովածուին մէջ, քիչ անդին՝ ինքներգակ բանաստեղծը «Տրումսհար գնչուհի»ի դաշնալարերով է որ պիտի ցնցէ խօսակից-ընթերցողը։ Կիպակետը այդ հոծութիւնը կը վերապահէ «Կապմալուծում եւ հոգեկայան»ի էջերուն, յատկապէս՝ սկզբնականներուն, որոնք «Լինելութեան ինքնակերտման» ճիգը կը սահմանեն՝ «Յող եմ ես ջուր եմ կրակ եմ եւ օդ (...) կաւահողն հնապատում...» եզրերով։ Կամ՝ «Կապմալուծում»ի փուլին՝ «Չիս այսքան բազմանդամ չէի պզտցած / ոտքերս կը գրկեն առաստաղէն մինչեւ սալայատակ բոլոր առարկաները / թելերս կը հանգչին սեղանի մը վրայ / իսկ միւս ձեռքերս կը յափշտակեն ինքնաքոյս մտածումները / հոն ուր շունչդ կայ / կը կառչին անդամներս...»։ Նշանագիրի մէջ՝ առաւելաբար «Մոխրի ծառ»ն է որ ինծի կու տայ հոծութեան այդպիսի տարրեր, այս անգամ՝ ուղղակի քանդումի տեսարաններու ուրուագծման մէջէն, ինչպէս՝ «Ես որ աղօթել չեմ սորված / ու մերկացած եմ ամենայն սրբութենէ / անծայր ճամբայ ունիմ քալելու / աղօթեցէք ինծի համար»։ կամ՝ «Պիտի այս արիւնը որ ծովուն մէջ սահած է (...) / անունքս քսեմ լեպուիս վրայ (...) / պիտի սպիտակ աչքերուս բոլորակին մէջ / (...) եռանկիւն քառանկիւն անանկիւն / որմապղներ փակցնեմ / Ու (...) խրիմ ծանրացող ճիչին մէջ / Միջերկրականի երկաթէ անկողինին վրայ»։ Ու քիչ մը աւելի անդին՝ «կախեցի նայուածքս պարաններու ծառին (...) / Բառին լոյսը իջաւ աչքերուս / որոշեց յայտնուիլ / իր յայտնումով թերեւս անցեալդ ամբողջանար / Յիշողութիւնս սկսաւ ուռիլ / եւ գանկիս մէջ երերածուի հասաւ բառը / այդ բառը որ չկար...»։ Անցնելով «Բապմալուծուի աշխարհ»ին, հոն եւս, նոյն նկատառումով, կ'առանձնացնեմ «Աւք արարման եւ երկիրի»ն, որուն հնադարեան գծագիրներու տեսիլքին կիսալոյսին մէջէն եւս կարելի է վերհանել ամբողջ գրողական ծրագիր-առաջադրանք մը՝ բազմածայ ու բազմերանգ, յայտնուող առաջին իսկ տողերէն. «Մարմնիս համը քարին մէջ / թաղանթիս վրայ աղը կակուղ (...) / դողը մտաւ ձեռքի անսկիւպ շարժման մէջ / դողը դարձաւ գիծ ու երանգ / Անասելի պատում է սա...»։

Ու վերջապէս, նախքան ընդհատելը մէջբերումներու այս շարքը, արդէն կիսատ-կրճատ, պիտի դիմեմ *Մնունդ եւ անդունդին*, ու ժողովածուն փակող «Քաղցրութիւն» աղօթք-գրոյցին, որ՝ միանգամայն յետադարձ եւ ապագահայեաց կանչով մը՝ հիանալի պատում-աղերս մը կ'ուղղէ իր յաւերժական խօսակիցին. «Յինգ տասնամեայ արեւներու պատեաններէն (...) / թռչներգեցի, մոխ-մոխ-մոխրացայ / ու վերջապէս / մատենացայ / Բարձրացուր փիւ աչքերուդ, / որ պարասպին մէջ ձեռքդ մինակ չմնայ, / որ անձայնութեան / այս մահագոյժ անդունդին / հեղեղ մը լո՛յս ծնանիմ»։ Ապա եւ՝ «Աղօթքներ...»ուն, որուն «Ինքնանկար»ը, արդէն յիշատակուած, խորապէս ինքնագիտակից պատկերում մըն է։ Յոս՝ քանի մը տող միայն. «Ամէն առտու կ'ելլեմ լոյսեր հաւաքելու (...) Մանկութիւնս՝ գորգի վրայ լուռ փոշի / Պատանեկութիւնս՝ փայլքը տաք փուռի (...) Յիմա պանգի նման

պահաջկոտ է կեանքը, / Եւ չեմ գիտեր՝ ինչ կ'ուլէ հետս քալող անծանօթը:» Ու աւելի վար՝ գրողական արարքը ուղղակի մօտէն սեղմող՝ «*Համեմներն ալ բառերու պէս իրար խառնել / ամէն անգամ տարբեր համ տալ կը սիրեմ. (...) Սեփական մարմնի տաք մոխիրներէն կը ծնին բառերը, արիւնլուայ ու սուրբ. (...) Ամէն գիշեր մոխիրները կը հաւաքեմ / Ամէն առտու հայերէն գիրք շինած կ'ըլլամ: / Հիմա որ ան գաղտնիքներս յայտնել եմ / պիտի մտնեմ անտառին հին տնակէն...»:*

Մեջբերուած այս մասերը, իրենց շրջագրութեամբ՝ ի հարկէ, առանց անպայման լրիւ անջատուելի ուրիշ տիպի էջերէ, շատ զգալի այդ **ինքնասական** յատկութեան կողքին կը գանազանուին մանաւանդ իրենց **արտայայտակերպով՝** թեքեանական **փոխաբերա-պատկերումի գործիքով**, իր առաւելագոյն ճոխութեան մէջ, գերիբականի հակող գիծերով-գոյներով, բոլոր նշաններովը՝ Լեզուսիրահարին հետ հեշտանքային-պաշտամունքային յարաբերութեան մը – անկաշկանդ ու անսանձ՝ մինչեւ յախումն յեղումներ...: Փոխաբերա-պատկերումը սիրեցեալ լեզուի բառերով, արտաշխարհէն փոխ առնուած, կ'անուանէ, կ'ոգէ սեփական յետնաշխարհը, սեփական անդունդ-աշխարհը, անոր ձեւերը, գոյները, բոյրերը. նաեւ ասոնցմէ բխած զգայնութիւններ, անոնց բնկեցուցած կամ արկոծած յուզական-տրամային աշխարհը, որ յաճախ ողբերգական ալ է, անկախ՝ լեզուի գործարկման հեշտական շունչէն – ճշդեմ անգամ մը եւս...:

Ուրիշ տիպի հատուածներ կրնան այլապէս գրական արժանիքի տէր ու հետաքրքրութեան առարկայ ըլլալ – այլ չափանիշներով: Ինծի գոնէ կը թուի, որ երբ ինքնաստութեան ձգտումը՝ թերեւս պահ մը սպառելով զանոնք կրողին ուժերը՝ կը նոսրանայ, կամ կը բացակայի, գործ կ'ունենանք ընթացիկ ասքի հետ, միշտ բանաստեղծական, բայց ուր գերիբականը կը գեղչուի յօգուտ գիտակցական-իրականին, անդնդային տեսիլքը կը փոխարինուի սոսկական «նկարագեղ»ով. կամ ողբերգա-քառսայինը կը դառնայ եղերերգական՝ դաշն բայց ի վերջոյ աւելի արձակունակ. մինչ տռամայինը կը նոսրանայ դէպի տրամախօսական-բեմադրական: Եւ՝ խոր-սեփականը կը հանրայնանայ, կը ստանայ կնիքը հաւաքական մտահոգութիւններու, փորձագրականի կամ բանավիճայինի շեշտերով, բայց ան համապատասխանող միայն ընթացիկ «բանաստեղծութեան» եզրով ընկալուած յղացքի յատկանիշներու, ընկերակցուող բոլոր համապատասխան գիշումներով...:

Ինքնաստութեան հրաշքը երբեմն կ'իրագործուի նաեւ անջատ, նկարագրապատումային էջերու մէջ, երեւութապէս պարագայական, կեանքի իրադարձութիւններու կամ դէմքերու առնչուող: Այս պարագային՝ անիկա կ'իրագործուի արագ, խիտ փայլատակումներով: Էջեր, ինչպէս «*Վեցամեայ Լիպային*», «*Հօրս աթոռը*», «*Այսպարպանը*», «*Ամուսնալուծումէն ետք*», «*Պայտած ձի*», «*Անյուսութիւն*»,¹⁴ իբր այլապէ՛ս բիւրեղացեալ յեղումներ, նոյնպէս կը մասնակցին սեփա-

¹⁴ Առաջինները տե՛ս՝ *Բազմածուի աշխարհ: Վերջինը՝ Սնունդ եւ անդունդ:*

կան առասպելի ասումին: Ի տարբերություն երբեմն երեւութապէս նոյնօրինակ էջերու, ինչպէս՝ «*Քնացաւ քամին ցանկութիւններուդ*», «*Դուն քիս մի՛ տանջեր...*», «*Տարիներու ընթացքին*», «*Աշնան եղանակներ*», «*Նիւ Եորք, Նիւ Եորք*», «*Տաճարացում*», «*Ջրվէժներ*» եւն.:¹⁵ Այս վերջիններու շահեկանութիւնը կրնայ գտնուիլ այլուր, բայց ոչ քերթողական-պատկերային խտութեան մէջ...:

Բերքի՝ «սեփական անդունդ»էն դուրս մնացող մասերը, հայրենասիրական թէ առօրեայ ասքի առարկայ, անպայման որ ունին շահեկանութիւն՝ քերթողական-գրական ընդհանրական մեր գանձարանին համար: Անոնք անկասկած արժէքաւոր երանգներ կ'աւելցնեն Պարոյր Սեւակներու, Յենրիկ Էդոյեաններու, Յովհաննէս Շիրազներու նմանաշէտ տողերուն վրայ, յատկապէս՝ արեւմտահայ լեզուի զգայնութեամբ առլցուն ու զայն վերա-կենսաւորող: Անոնք՝ դեռ՝ կ'արժեւորուին իրենց կաշառիչ անմիջականութեամբ, առօրեայի նկարային արտայայտչականութեամբ, յաճախ՝ նուրբ հիւմորով: Բայց ըստ հոս կիրարկուող չափանիշին, իրադարձութիւններու կամ դեմքերու առնչուող կամ գանոնք բեմադրող այդպիսի էջեր չեն գանցած իրենք զիրենք, իրենց պարագայականութիւնը, կը մնան ենթակայ պատկերային «նոսրացման», խորհրդածական փորձութեան, որոշ «արձակացում»ի, ու չեն հասնիր անձնականացման անդունդին. չեն մասնակցիր այն հսկայ գործընթացին, որ **գրողական ծրագիր** կոչեցի. Պարզապէս, կը թուի, խոր աշխարհին ծիրէն ներս է աւելի, որ բանաստեղծը կը յաջողցնէ անոր անդնդային ասքը:

Եւ զարմանալի կերպով՝ կառոյցի ուժեղ բնագոյը լաւապէս կը գործէ բարձր այդ ջերմաստիճանին. եւ յուզաշխարհի բուռն մասնակցութեամբ է որ մանաւանդ կու գայ բիւրեղացումի պահը, ինքնեկ ընթացքով, առանց կոչ ընելու մշակումի փոյթին, որուն պակասն ու կարիքը պիտի զգացուին աւելի՝ երբ անցած է այս օրհնեալ պահը...

Ինքնաբեր անդնդայինի բերրիութեան այս կենսական դերը հակառակի փաստով կ'ապացուցուի, ի մէջ այլոց, երբ կը հանդիպինք քերթողական այս կամ այն կանոնաւոր ձեւին, կիրարկուած՝ կարծես զուտ «փորձարկային» դրդումով եւ նուազ յաջող արդիւնքով: Այս է պարագան *Կիպակէտի* երկրորդ՝ «*Բառէ մոլորակներ*» բաժինին, գրուած կանոնաւոր ոտանաւորումով:¹⁶

¹⁵ Առաջին երկուքը՝ յաջորդաբար՝ *Ոստրէ* եւ *Կիպակէտ*: Յետեւող չորսը՝ *Բազմածուի աշխարհ*: Վերջինը՝ *Մնունդ եւ անդունդ*:

¹⁶ Այլ տեղեր, առանձին կտորներու մէջ եւս, ոտանաւոր կշռոյթի որդեգրումը կ'երեւի ի վերջոյ ոչ նպատակայարմար, պարզապէս որովհետեւ տեղիք պիտի տայ երբեմնակի խախտումներու եւ կաղացումի, հետեւանք՝ լսողականի հանդէպ անտարբերութեան, կամ անբաւարար մշակումի (օրինակ մը տե՛ս՝ «Լուսաշթում», *Բազմածուի աշխարհ*):

Փակելու համար այս այցը Վեհանոյ թեքեանի քերթողութեան ոլորտին, այց մը՝ հապճեպ ու անխուսափելիօրէն թերի, կ'արժէ անգամ մը եւս շեշտել անոր գրողական ծրագիրի եւ գործառոյթի հիմնական արժանիքն ու արժէքը – լեզուի ստեղծագործ կիրարկումը: Էական փաստը՝ սիրուած, իբրեւ գրականութեան լեզու գործածուած, տեւաբար վերստեղծուող լեզուի կիրարկումին:

Եւ գրողական այս ծրագիրը, ինչպէս անոր կիրարկումը, կ'ըսէի, կը յատկանշուին միանգամայն բխումի ոճով ու գրեթէ մնայուն տիրապետումով: Բխում, ինքնաբխութիւն՝ չի նշանակեր անկարգ-անկառոյց յղացում եւ ստեղծում: Կառոյցը, նիւթի ներքին միութիւնը առկայ են գրեթէ միշտ՝ նախամշակումի եւ արտադրութեան փուլերուն: Պարզապէս՝ թեքեան արհեստաւորը չէ մանրամասնային խնամքի, կրկնուող յղկումներու...: Իր մօտ՝ այդպիսի վերադարձներ, մանրամասնային խնամքներ, թերեւս դրական արդիւնք ալ չտային. ու կը մերժուին: Փոյթ չէ թէ, տեղ-տեղ, այս զանցումին գինը կ'ըլլայ տիրապետման նուագումը...

Արեւմտահայերէնով ապրելու, անով՝ բաբախուն ամբողջ աշխարհ մը ապրեցնելու կէտարեայ այս սիրելի, պատկառելի ճիգը միայն քերթողական գործով չէ որ կը կատարուի թեքեանի մօտ: Յոս չեմ առաջադրած, չեմ առաջադրեր անդրադառնալ իր արձակ ստեղծագործութիւններուն՝ այլապէս շահեկան, այլապէս համակիչ – յատկապէս՝ ինչ կը վերաբերի 80ականներէն ասդին արտադրուած գործերուն:¹⁷ Բայց պարզ յիշատակում մը փորձագրական իր որոշ Էջերուն՝ անհրաժեշտ է.¹⁸ անո՛նց յատկապէս, որոնք կը հարցադրեն, կ'ընդգծեն լեզուի եւ գրական ստեղծագործութեան խոր առնչութիւնը, կը կրկնեն **լեզուի վերապրումի եւ զարգացումի գործընթացին համար՝ գրական ստեղծագործութեան կենսական դերը:** «*Խօսող լեռան պատմութիւնը*» պատմութիւնն է հիւծուող, հիւծուած լեզուի. անձկութիւնն է՝ ի տես ստեղծագործ գրականութեան այդ կենսական դերը ողբերգականօրէն անտեսող կարճատես հաւաքականութեան՝ Սփիւռքին: Անոր՝ որ կը կործանէ խօսող լեռը, անփոյթ՝ անլեզու մնալու, արեւմտահայերէնը «անժողովուրդ լեզու»¹⁹ դարձնելու վերահաս վտանգին...

¹⁷ Թեքեանի արձակ բերքը ճամբայ կ'ելլէ *Ճեղքուած մանրանկար* պատմութեան քերթողութեան հատորով (Պէրոյթ, 1977), շարունակուելու համար *Նշանագիրի* բ. մասի փորձագրութիւններով, յանգելու համար *Տոնածառ*ին (Միաց. Նահանգներ, 1997):

¹⁸ Փորձագրական գործերը, բացի *Նշանագիրի* բ. մասէն՝ ամփոփուած են *Խօսող լեռան պատմութիւնը* հատորին մէջ (2015): Այս Էջերէն ոմանք, յատկապէս գրադատականները՝ գրիչի հարազատներու նուիրուած, եթէ չեն զգացներ պարագայական պարտքի մը բեռը, գոնէ աւելի դիւրահաճ կը թուին որակային արժեւորման իմաստով, աշխարհագրական, թէ՛ ժամանակային հեռաւորութեան բերմամբ (երբեմն եւ վերագրելի թերեւ կարօտախտի՞ մը՝ դեռատի տարիքի վերջի-շումներու հաշուին...): Կամ՝ Սփիւռքի իրավիճակի քննութեան մէջ՝ կը նախընտրեն ախտը սահմանափակել անոր մարմնին մէկ որոշ մասին վրայ, խուսափելով խորքային, ամբողջական ախտաճանաչումներէ: Բայց նոյն գործը նաեւ կը յորդի դիտողութիւններով, որոնք նշողակը կը հասցնեն ուղիղ վերքին, վերքերուն, բարդոյթներու կոյտին, **հայապահպանումի բանտին**. ասոր այլազան դրսեւորումներուն:


¹⁹ Բնորոշումը՝ Գր. Պըլտեանէն:

Թեքեանի բերքը բնորոշ է 20րդ դարու բ. կեսի հայախօս մնացած միջին-արեւելեան Սփիւռքի արշաւարանին, անոր բնորոշ անկայունութեամբ, բացակայութիւններով, շրջապատի ծաւալող պարապով, շարունակուող գաղթերով...: Անիկա իր փթթումը կը նշէր՝ մինչ արդէն աղօտած էր Եղեռնէ վերապրած նահապետներու ստուերն ու յուշը. մինչ՝ դեռ ներկայ էր (սակայն անբաւարար, եթէ ոչ բացասական ներկայութեամբ մը) հիներու արձագանգով ատեն մը թրթռացած, պատնէշ պահելով գանոնք կրկնող սփիւռքեան առաջին սերունդը...: Նորեկները կը գտնուէին պարապի մը առջեւ, որ կրնար ըլլալ բարերար, ըլլալ «բառս մը բերրի».²⁰ անոնք կրնային օգտուիլ Սփիւռքի

«Խօսող լեռան պատմութիւնը» պատմութիւնն է հիւծուող, հիւծուած լեզուի. անձկութիւնն է՝ ի տես ստեղծագործ գրականութեան այդ կենսական դերը ողբերգականօրէն անտեսող կարճատես հաւարականութեան՝ Սփիւռքին:

արշաւարանի բացուածքին տրամադրած առաւելութիւններէն, միւս կողմէ կրելով անոր յեղեղուկ, անկայուն դիմագծութեան կնիքը...:

Այս բերքը, սկզբնապէս արմատաւորուած՝ լիբանահայ գրա-մշակութային իրականութեան մէջ, հաւանօրէն լաւագոյնս կը ներկայացնէ Սփիւռքի երրորդ սերունդը՝ բնորոշ այդ գիծերով, իբր անոր ամենէն անխառն, հարազատ բխումը (բխում մը, գիտենք, կը գանցէ իր աղբիւրը՝ զայն արտայայտելով հանդերձ):²¹ Անիկա, ինծի կը թուի, աւելի՛ ինքնաբոյս է, մեկնակէտէն արդէն նուա՛գ ենթակայ՝ արտաքին ճառագայթումներու (արեւմտեան, նոյնիսկ՝ հայրենական...), թերեւս նուազ ձեւաւորուած, բայց աւելի ինքնուրոյն, քան ուրիշներ – նոյնիսկ յետագային շատ ուշագրաւ ծաղկումի հասած անուններ...

Արեւմտահայերէնի այս հրավառութիւնը՝ Վեհանոյշ Թեքեանի գործը, 21րդ դարասկիզբի հորիզոնին վրայ ուրուագծուող՝ իր շլացուցիչ փայլատակումներով, տեղ-տեղ յաճախուած անիշխանական անմիջականութեան փորձութեամբ, առկայծո՛ւմ մըն է, մայրամտային շքեղութիւն մը՝ աշխարհասփիւռ լեզուաճիւղի մը կենսաբի օրուան աւարտին, թե՛ այդ լեզու-մշակոյթի ներուժ ինքնանորոգման, նոր սերնդափոխներու կարելիութեան փաստն ու կանխիկ գրաւականը,– հարցումը կը մնայ բաց՝ ապագային դէմ... 

²⁰ Բնորոշումը՝ Նիկողոս Սարաֆեանէն:
²¹ Ասիկա ըսուած՝ աչքի առաջ ունենալով սերնդակիցներ, ներառած մինչեւ տասնամեակ մը ետ ու առաջ անուններ այ, որոնք կա՛մ իրենց վաստակով ու գրական գործունէութեամբ նուազ յանձնառու են եղած, կա՛մ մնացած են աւելի հեռու՝ իրենց բնավայրի գրական այժմէութենէն, մշակոյթի հաւաքական գրաւներէ: Թեքեանի վաստակին սկիզբը շեշտուած արտահայտեցութիւնը, անոր կանչի, կոչի եական յատկանիշը՝ օտար ըլլալու չէ այս գնահատումին:

ԱՆՏԻՊ

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

ՆԿԱՐ ԱՌԱՆՑ Ն-Ի

Յիմա յեղակարծ՝ աչքերուս առջեւ
 փրփրող գետակ ես
 դարձդարձող ջաղացք
 կուժի մէջ պարող կաթիլ մը ճառագայթ
 Յուշերու թափ-թաց ցողերու վրայ գիշերաբոյր դող
 ցերեկուան կորուսեալ վարդերէ արարեալ բուրումի գեղում.
 Ամառ արեգակը
 կը թափահարէր լուսամուտերէ
 ուր ոչ ապակի եւ ոչ ալ փեղկ կար,
 Յրճուակութիքի քաղաք էր այդ, որ իմս էր, որ քուկդ էր
 Լուսամատոյց էր ու դաւադիր, բայց չէր մոռցուեր:
 Իսկ այս պահուս՝ բուք ու քամի, խուժած մրրիկ
 չորս կողմը՝ խուլ փոթորիկ,
 Կամաց-կամաց պատկերը կը վերածուի վանդակի
 – այս տարիքիդ գիտես այլեւս թէ ճշգրիտ բառ չկայ.
 Յուշաթրթիւմ վանդակի
 Չկասող ու չմարմրող
 ցաւ կը բերէ
 դաւ կը լարէ
 լքուած ջուրակը կ'արտասուէ
 չի՛ փրկուիր բաբախումը կարօտի.
 Ո՛րք պահեմ ես այս վանդակը
 ետ պատկերի չվերածուած
 Ո՛րք գետեղեմ, ուր գետեղեմ. խօսք մը ըսէ՛ այլեւս:

ԱՂԱՂԱԿ ԱՌԱՆՑ Ա-Ի

Իր դեմքը երկու քիթ ունէր:
Մտունդը՝ հոսկէ հոնկէ
ինչ որ տրուէր
կը փորձէր կլլել:
Փողոցներէն կ'ելլէր կ'իջնէր
Գետինը խեղճ-խեղճ կը նստէր
խնձոր մը կ'ուտէր կեղեւով կուտով
յետոյ նորէն կ'ոստոստէր:
Ձեռքերուն մէջ՝ միշտ գնդիկներ գոյնզգոյն
Կը նետէր կը բռնէր կը շոյէր, ինչպէս մեծ մեծ կը ժպտէր.
Երբ նեղ փողոցին մէջ ընկերներով գնդիկները գլորէին
Ընկերները մէկէն ի մէկ իր ոտքերը խտուտ կ'ընէին,
Նեղսիրտ՝ կը մտնէր խուցի դռնէն
Ինչ որ գտնէր հում-հում կ'ուտէր:
Յետզհետէ սիրտը գէշ տրոփեց
Թոքերը՝ ջրհորի պէս ջուրով լեցուն
փորը՝ մեծցող գունդ
Գործողութիւն պէտք է - ըսին բժիշկները
եւ հոն է որ խեղճ տղեկին պնտուն հոգին
յոյսերուն մէջը մուտք գործեց
բոպիկ բամպակ ոտքերով:
Պզտիկ քիթը դեմքին էր
մեծը մէջքին մօտ՝ դեղին մոմի պէս,
Ժպիտը կէսէն կտրուէր էր:
Դուրսը հեղեղ ու փոթորիկ
ներսը լռիկ ժպիտի ճիչ -
Ընկերները դեռ լուր չունէին երբ լսեցի ես.
Որբո՛ւկ էր Սէմը, գլուխը գիրկս դրի
Օրօր երգեցի:

ՓՈՒՌ ԱՌԱՆՑ Փ-Ի

Ամեն կեսօր հացը տաք տաք կը գնեին
 Արաբական Յաց կ'ըսուէր,
 Ամեն գիշեր ընտանեկան աղօթքին
 «Տուր աշխարհին խաղաղութիւն» աւելցաւ.
 Ինչ ալ ըլլայ աղնուհացը թող անպակաս ըլլար տունէն:

Օր մըն ալ վախը հրէշի նման՝ խուժեց թաղին մէջ
 Յայրական տուներ դուռ պատուհան գոցեցին
 Չօրք-գինամթերք, թակոց-կրակոց, խունկը անգամ մտահոգ էր.
 Թարմ թերթերու վրայ լոգունգներ հոսեցան լորձունքի նման:
 Քաղաքը կիրապատ ամպերու վերածուեցաւ,
 Գինով կրակը առանց դուռները թակելու մտաւ
 Յրկիզուեցան գիրքեր, մոխրացան տան իրեր
 Մահճակալներուն կմախքը մնաց միայն.
 Այլեւս ճաշասեղանին վրայ պնակ չչարուեցաւ,
 Աղօթքը դարձաւ աղապատանք
 Աղաղակը համրացաւ լեղապատառ
 Յիշողութիւնը անթեղուած՝ կենսուրախ քաղաքին մէջ
 ծաղկավաճառ չմնաց:

Առաջ ամեն օր աղուոր-աղուոր պատմութիւններ կը պատմէր.
 Անջատուեցաւ գլուխը վիզէն
 Գլուխը մէկը կորզեց, մարմինը՝ մէկը
 Դիակ իսկ չկար գոյնի ու բոյրի, մեղքի ու սրբութեան
 ծննդավայրին մէջ:

Մայրեր երբեք ուժասպառ չէին,
 Խմորը շաղեցին հաց շինելու կրակ չկար:

ՁՍԵՌ ԱՌԱՆՑ Զ-Ի

ԲԱԽՏԱԳԱՂԹ

Խեցապատեաններ երբ դնես ականջիդ
ծովուն մրմուռը կը հասցնեն,
ժամերով երբ քշես յոզնած-խոնջած հասնիս նահանգդ
հին նեղիկ թաղերուդ տարածութեան չես կրնար հասնիլ,
երբ լռութիւնը լարուի ու լարուի
երկար ճամբորդութեան ընդմէջէն
կը հասնի թախիծը:

Այն օրերուն ինչեր կ'ըլլային
Անկողինները գետինը կը փռուէին
երբ թռվռալով մեծամային տունը գիշերէինք.
Լուացքը տանիքը կը փռուէր
Զիվիտով սեղմուած թօթուրուած սաւանները՝ Էն ծայրը,
անոնց առջեւ՝ հագուստեղէն
իսկ շապիկ շապրնկեր կրծկալ՝ ամենէն ներքեւ.
Օ՛հ, կենսալի բոյր էր երբ չորնային:

Կեսօրուան արեւը հաւկիթի ճերմկուց էր,
Տարբեր համ ու հոտ ունէին
լոյսին հացը եւ մութին գինին:
Կը նկարուէր կապոյտ ծիծերով աղջիկը
մտածկոտ ու տխուր,
Երբ կոշտացան կակուղ ալիքները:

Ծառերուն շուքերը չէին քայլեր միշտ հետդ ,
Գիւղերուն ճամբաները չէին շնչեր «Գիշերն անուշ է» երգով.
Արեւը կը ծախսէր ու կը ծախսէր փողոցներուն մէջ
տանիքներուն վրայ,
Անարատ աստղեր առանտ կը պսպղային,
Իսկ իրիկնային հովը անպայման կը քակէր
ցերեկուան հանգուցուած հոգերը:

Որո՞ւ հոգը
Յռովմեական բերդերու եւ նախապատմական քարայրներու
գոյատեւման վստահութիւնը:

Մշուշ մը անշուշտ կը ստեղծուի՝ կը խտանայ ու կ'ընդլայնի
ամբողջ գիշերուան ընթացքին,
Ամպերը գրկեր են երկինքը իրենց անոյժ ուսերուն վրայ
Իբրեւ թէ, իբրեւ թէ գարուն է:

Այս առտու երբ նորահաս թռչուններ կ'երգեն
Պարտեզիս երկարածին ծառերուն վրայ
Կը յիշեն որ Յուն՝
Թռչունները երբեք չգաղթեցին:

ՍԱԶ ԱՌԱՆՑ Զ-Ի

Ծառս ծաղկուն է
Թիթեռնիկներով
Բազում թրթիռով
Վարդէ պուրակ է

Ծառս մայր ունի
Որ հանգուցեալ է
Ծառս տարտ ունի
Յին պատմութիւն է

Ծառս՝ լերկ կամ յորդ
Կեանքի իմաստն է
Անգուլթ ձմրան մէջ
Ամառ կը հիւսէ

ԲԱՌԸ ԱՌԱՆՑ Ը-Ի

Երեւանի գիշերներն են կապուտակ
 Կապուտակն այս՝ կատակ չէ, երկու պուտ ակով սահման ճշդեր է.
 Գիշերն անոյշ է, նաեւ հեշտագին
 Եթէ հանդիպիս իր յուսեղէն ճամբուն՝ միայն Մեծարենց հաշիշով կ'օծէ.
 Եւ գիշերուան թեւերուն մէջ սպիտակ
 Թաթխուեցան Շուշանեան կիրք ու կրակ.
 Երէկ գիշեր
 Պոչաւոր աստղեր ճամբայ ելան, ուր հիացան՝ հոն կեցան
 պնդտուն աչք ունէին, սակայն բան չհասկցան:

Անբախտ բառեր՝ կ'ունենան գիշեր առանց խաւար ծնելու,
 Բախտաւորներն արեւի մէջ կ'արարուին:
 Սէրերդ չեն արձագանգեր
 Մէջդ կ'ապրին.
 Ծննդավայրդ չ'անհետիր
 Քեզ գրկած է.
 Ճամբաներդ չեն աւարտիր
 Կ'երերան.
 Դուն չես շարժիր
 Օրդ է որ շարժում ունի:

Նկատեցիր թէ ինչպէս վտակն արծաթ պահեր ունի ու կ'անցնի,
 Ոսկի խուրձեր գիշեր ցերեկ կը մնան
 երանի թէ երեւան:

Աս այլ յայտնեմ՝ մոռցեր էի. յուսամ տեսար
 Բիւրեղահոս մեղր խառնեցի բաժակիս՝ թմրահալ թոյն կաթեցաւ:

ԵՐԵՔ ՆԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՀԵՏ



Սիմոն Սիմոնեանի եւ իր կնոջ՝ Մարիի հետ

Մեր գիւղը՝ Մագրաա Զֆերզըայեն նշանաւոր էր իր մաքրամաքուր օդով: Պէյրութի բժիշկները իրենց սրտի հիւանդներուն կը յանձնարարէին այս գիւղը անցընել ամառնային օդափոխութեան ամիսները: Սիմոնեան գեթ ժամանակաւոր դարմանում կը նկատէր Մագրաա այցելել երբեմն Կիրակի օրերը, միշտ շքախումբով մը:

Գիւղի մեր տունը ամուր քարաշէն փոքրիկ տուն մըն էր, եւ անսահման պարտեզ մը – երկու աղբիւր, երկու աւազան, անհամար ծաղիկներ աշխարհի բոլոր գոյներով, եւ անհամրելի ծառեր, բեղմնաւոր ծառեր, ներառեալ խնձորենիներ, առանց մեղսագործութեան: Մեր հիւրերը տան առջեւի բակը կը նըստէին, հիւրասենեակ չկար:

Ամառը Պէյրութի մէջ հազիւ թեւակոխած՝ մօտակայ արաբական երկիրներէն, քիչ մըն ալ Եւրոպայէն, հայ գրականութեան մշակներ, հնձողներ ու համոտետողներ ոտք կը դնէին «Սիմոնեանին տպարանը»: Պաշտօնապէս կը կոչուէր Սեւան Յրատարակչատուն, պաշտօնապէս խմբագրատուն էր, ուր պէտք է յարգուէր խմբագիրին ժամանակը. սակայն իրականութիւնը իր պահանջները ստեղծած էր, ո՛վ կ'ուզէր կու գար, նրբ կ'ուզէր կու գար: Սիմոն Սիմոնեան անմիջապէս սուրճ կ'ապսպրէր իր քիւրտ պաշտօնեաներէն մէկուն միջոցով, եւ տպարանի դռնէն գրասենեակ կ'երթնէկէր: Իրարու կպած լայնածաւալ գոյգ գրասեղաններուն վրայ ձեռքը սաւառնակի

պէս կը պտտցնէր, եւ ամենայն անկանոնութեամբ սփռուած թուղթերէն, գիրքերէն, նամակներէն, թղթածորարներէն, սեղանին խուռներամ թաղէն իր փնտռած մէկ հատիկ էջը աճապարարի ճարտարութեամբ դուրս կը քաշէր:

Գրիչը աջ ականջին գետեղած, ակնոցները քիչ մը կախ, անոնց ետեւէն գոյգ մը աչքեր, միշտ հիւմրով առի, նոյնիսկ եթէ բարկացած էր, նախադասութեան վերջաւորութեան կը ժպտէր քովստի. եւ մուճակները թփթփացնելով կ'անցնէր յարաբերաբար խաղաղութեան մասը, այսինքն տպարանին ահագոռգոռ սրահը: Յոն կեանք կը ստանային մէկ կողմէ խմբագրական, մէկ կողմէ տպագրական, մէկ կողմէ վարչական որոշումներ. պաշտօնեաներէն ո՛վ ինչ պէտք է ընէր այդ պահուն (հոն կը լուծուէին նաեւ պաշտօնեաներուն անձնական ընտանեկան նիւթական խնդիրները): Ժամը վեցին երբ խաղաղէր աղմուկը, անհետացած ըլլային գրականութեան կամաւոր զինուորները, Սիմոնեան առանձնութեան մէջ կը գրէր պատմուածքներ, վէպեր, կը ստեղծէր անմոռանալի տիպարներ. ականախտիղ մթնոլորտը Սասունի, Պարսկաստանի, Լիբանանի, անոնց հանդէպ գուսպ սիրով ու յորդուն երգիծանքով: Յոգնիլ չէր գիտեր, բայց երբ իրիկունը հասներ, Սիմոնեան անձամբ վար կը քաշէր հսկայ փեղկը տպարանին, աջ ծռելով, ձախ ծռելով երկու խոշոր կղպանքներ կ'ամրացնէր, մինչ քովի միգահոտ սրճարաններէն դուրս կկուգ ըրած մուրացիկներն ու հաշիչամոլները իրենց հնամենի նայուածքով կը հետեւէին Մաթպաաթ Սեւանի պարոնին՝ «Ըսթէզ Սիմոն»ին եւ իր անհետացող թաքսիին:

Սիմոն Սիմոնեանի գերազնութեան մարմնացում կ'ինը՝ Մարին ստեղծած էր ամենատաքուկ բոյն մը իրենց հինգ գաւակներով – Յովիկ, Մարայ, Վարդան, Տարօն եւ Սասուն: Սիմոնեանի գուրգուրանքը անոնց՝ անսահման էր, բայց թեւին տակ շալկած «տոսիէ»ները հո՛ն ալ կը բանար ու դարձեալ – իր բառով – կ'աշխատէր:

Առտու կանուխ, ժամը վեցին տպարանը բացուելու էր. ուշ մնար՝ ուղուրը կ'երթար: Վեցը վեց էր: Կ'երեւի թէ Անթիլիասէն մինչեւ Պաթա երկարող ճամբան առտուան թարմ օդին թարմ գաղափարներ

կը ներշնչեր: Այդ թաքսիին մէջ է, որ իր գուրգուրանքը այժմու հայ գրականութեան նկատմամբ երփներանգ պատմունճաններու մէջ կը յայտնուէր. եւ ինչ պատմունճաններ:

Միմոնեանին աշխատասիրութիւնը, անկեղծութիւնը, հիւմորը, իր բառով «ճշմարտութիւն»ը բաթոսով արտայայտելու եռանդը անսահման էր: Օրինակ՝ 1954ին երբ այցելած է Սթալինի ապակեծածկ դագաղին, Սթալինը աչք ըրած է իրեն: Կը նեղուէր լսողներու թերահաւատութեան: Այո, Սթալինը բան մը ըսել ուզած է իրեն: Ունէր նաեւ գրական ծրագիրներու անհատնելի ցանկ մը: Իսկ իր հրատարակութիւնները – միս-մինակը տաս հոգիի արտադրութիւն, գիրքեր, գիրքեր համապարփակ, անթիւ անհամար. Դասագիրքեր, արեւելահայ գրականութեան հաստափոր հատոր, բառարաններու, նախկին դարերու եւ ժամանակակից գրողներու գործեր: Կը սիրէր մատենագիրներէն մեջբերումներ կատարել: Ունէր բազմաթիւ աշակերտներ Դպրեվանքի մէջ իբրեւ մատենագրութեան դասախօս: Եթէ Յայաստանի մէջ հեղինակի մը գործը խափանուէր՝ Միմոնեան լոյս աշխարհ կը հանէր հատորը: Պարոյր Սեւակի *Անլռելի Չանգակատունը*, Աբրահամ Ալիքեանի *Յրուանդանը*, Շիրազի անտիպները թելեր առած կը թռչէին դէպի Սեւան Յրատարակչատուն: Կը պնդէր որ յաճախ գրեմ – Վահրամ Մավեան պատմեց՝ Միմոնեանին ըսի՝ հանգիստ ձգէ մէջ մը համալսարանը թող աւարտէ: Մինչ այդ Միմոնեան հարկ տեսաւ որ խորէն Ա. Կաթողիկոսը ձեռքը զլիսուս դնէ եւ օրինէ *Կապոյտ Ապրիլի* հեղինակը: Հայրական խոհեմութեան հաւատարիմ՝ ինծի ուղարկուած նամակները կը պահէր, ցոյց չէր տար:

Իր հարցերը լուծելու ինքնատիպ ձեւ ունէր: Շատ կը սիրէր սու պէօրէկը – մայրս լաւագոյն վարպետն էր անոր: Տիկին Միմոնեան դեմ էր որովհետեւ Միմոնեան սրտի լուրջ հիւանդութիւն ունէր: Ես ալ շատ կը սիրէի քնէյֆի պժպին: Միմոնեան դասաւորեց – ինք իր տասնչորսամեայ քիւրտ պաշտօնեային հետ շաբաթը երեք անյգամ քնէֆի պիտի դրկէ ինծի, առտուան եօթին: Ամիսը մէջ մը մամաս իրեն «երկու տիլիմ» սու պէօրէկ պիտի դրկէր: Այնպիսի թոնով կ'ըսէր այս մէկը, այսինքն՝ ողորմեցէք ինծի, միայն երկու շերտ: Միմոնեան հաւատարմաբար կը դրկէր քնէյֆին, մայրս հաւատարմաբար կը շինէր սու պէօրէկը, ես ալ սիրով հաւատարիմ՝ կը ճաշակէի արաբական անուշեղէնի այդ հրաշալիքը:

Շաբաթ կէսօրէ ետք մը տպարան մտաւ. Միմոնեանի նախկին աշակերտներէն մէկը ըսաւ թէ կ'աճապարէ պէտք է հանրակառքը առնէ Դամասկոս երթայ, բայց եկեր է ըսելու թէ Թեքեանին գրածները կը կարդայ եւ կը կարծեն որ հատոր մը կը կազմեն արդէն, ուրեմն ինք պատրաստ է ծախսը ստանձնելու: Միմոնեան ըսաւ՝ կը ճանչնամ. եւ գիտ ներկայացուց: Օհանեան գարմացաւ, դեռատի՛ էի: Ծախքին առջեւ կանգ մի առնէք, ըսաւ գնաց: Խայծը մնաց, Միմոնեանին խանդավառութիւնը իմինիս տասը անգամն էր: Ես չէի ուզեր գիրք հրատարակել որովհետեւ սեփական ձայնս գտած չեմ, կը պնդէի: Որով կարծիքին կը հաւատաս, հարցուց: Գուրգէն Մահարիին, ըսի: Լաւ, անոր պիտի դրկեմ ըսաւ: Քանի մը ամիս չանցած վերադարձաւ ձեռագիրս Գուրգէն Մահարիի նրբագեղ խմբագրութեամբ եւ յառաջաբանով: Ռազմիկ Դաւոյեանն ու Կարիկ Պասմաճեանն ալ ինքնակամ խմբագրեր էին, մոլորակին շուրջ դարձող արբանեակի պէս: Չհաւատացի. Ո՛վ միտքէն կ'անցընէր թէ այդքան յափշտակութեամբ կարդացած գիրքերուս հեղինակը նամակ պիտի գրէր ինծի: Միմոնեան սկսաւ շարել, ըսի որ այս այսպէս չի հրատարակուիր, պէտք է սպասես, նոր բաներ ունիմ գրելիք: Եւ «Կապոյտ ճեղքեր»ու շարքը գրելէս ետք միայն համոզուեցայ որ է՛հ, կարելի է հրատարակել:

Օր մը ալ քանի մը հոգի նստեր ենք գրասենեակը, Միմոնեան խժալուր տպարանէն դուրս գալով վերցուց ընկալուչը, յանկարծ մէկ ձեռքը դրաւ ընկալուչին առջեւ եւ քովնտի ինծի նայելով ըսաւ. «Վեհանոյշը թող չլսէ, Մահարին մահացեր է. ան ալ գնաց» Ծաղիկներ կան խնկուող, որոնց բոյրը չգիտես:

Յիշողութեամբ գրեցի, կրնան մանրամասնութիւնները ճշգրիտ չըլլայ, սակայն պատկերը ամբողջական է: Ինչ ամբողջական, դեռ ինչեր կայ յայտնելիք անոր մասին որ հրաշալի պատմուածագիր եւ երգիծագիր էր: Սփիւռքի միակ չէգոք թերթի խմբագրապետն էր, որ շնորհալի գրական սերունդ մը հասցուց, այնքան մեծասիրտ, հասաւ բոլորին որ կարիքը ունէին իր պաշտպանութեան, հասկցաւ հոգեվիճակը մինչեւ իսկ ուսումնական հաստատութենէն դուրս դրուած տնօրէնին. եպիսկոպոս մը սպաննած բանտարկեալին: Որուն տիեզերքը հայ գիրքն էր – հին մատենագիրներէն մինչեւ նորօրեայ սկսնակ գրողը: Այդ տիեզերքը դարձնող ոյժը իր ընտանիքն էր, իսկ կեղորոնը ծննդավայր Մասունը:

ԱՐԱՎԱՍ ԱԼԻՔԵԱՆԻ ՀԵՏ



Բանաստեղծ Աբրահամ Ալիքեան, գաւակին հետ, Նոր ճրրգի

Ոսկեղէն բառերով օծուած բանաստեղծ՝ Աբրահամ Ալիքեան: Ինչ ուրախ էի որ Լիբանան չգացած (իր խօսքով՝ կէս դար ետք ծննդավայր չվերադարձած) մեզի պիտի մնար երեք շաբաթ իր տասնչորսամեայ տղուն՝ Շանթին հետ: Առաջին գիրքս երբ դրկեր էի իրեն, Մոսկուա, պատասխանը քաջալերական եւ դաստիարակիչ էր, վճիտ հոսող ջուրին մէջ խիւսեր եւ խճաքարեր պէտք չէ ըլլան, կ'ըսէր: Իր բանաստեղծութեան ակունքը՝ հեթիաթաշունչ էր, բառերու երաժշտականութեան, զոյներու նրբութեան այնպիսի համադրում մը որ կը զգլխէր ընթերցողը:

Առաջին ամտուն նախաճաշին Շանթը ըսաւ. «Ես ձու չեմ սիրում»: Նայիրին պատասխանեց. «Ասիկա ձուկ չէ, հաւկիթ է»: Եւ սկսաւ արեւելահայերէն-արեւմըտահայերէնի բանակցութիւնը:

Կը նստէր պատշգամը խիտ ծառերու ներքեւ վայելելով անսահման լռութիւնն ու արեւը, որ հրմըշտկելով իր վրայ կը հասներ:

Եւ ամէն ճոռոռողոյ թաշունի տեսակը կը յայտներ, մինչեւ իսկ բոյսերուն խոտերուն անունները գիտէր. «Դուն ասոնք կը յերիւրես կոր», ըսի:

Խօսեցաւ իր հայրենադարձութեան մասին, իր մտերիմ ընկերոջ Անդրանիկ Թերզեանի սպանութեան մասին, իր արհաւիրքներուն, Մոսկուա հաստատուելուն, Հայաստանի առաջնակարգ գրողներու իր հանդէպ դիրքորոշումին: Սիրելի առաջին տիկնոջ եւ գաւակին մասին: Իր ներկայ տիկինը իրենց փոքր մանչուն հետ Մոսկուա կը սպասէր որ Աբրահամը հաստատուելուն պէս երթան Պէյրութ:

Երկար կը խօսէինք մեր քերթողական գանձերուն, գրելու արուեստին, մանաւանդ Միսաք Մեծարենց հրաշքին մասին: Միշտ ազնիւ ու նրբանկատ. «Դուն ըսելիք ունիս: Միշտ ակելին կայ քան ինչ որ կ'ըսես. իրաւ բանաստեղծութիւնը անհատնելի է: Չ'աւարտիր, պարզապէս շունչ մը կ'առնէ, կեանքը շարունակելէ առաջ»:

Այնքան հոգատար էր իր Շանթին եւ իմ գաւակներուս նկատմամբ: Հանրային պարտեզ կ'երթայինք, անոնց հետ գնդակ կը խաղար: Նէշընըլ հիսթորիի թանգարանին մէջ կը հիանար *տինտուար*երուն, մոմիացած ծովու կրիաներուն, անշարժացած փիղերուն, շանաձուկերուն վրայ: Հին ցեղերու ապրելու հմտութեան եւ հայկական տաղաւարի ցուցադրուած իրերուն ու երաժշտութիւն բուրոզ վեղարներուն:

Օր մըն ալ Պոսթըն գնաց Յակոբ Կարապետնցին հետ անցընելու քանի մը օր: Վերադարձաւ լայն լայն ժպիտով, իւրաքանչիւր թելին հասակին չափ երկու հսկայ *սթաֆտ* կենդանիներ՝ փոկ մը եւ արջ մը: «Թիկնապահներով վերադարձար» կատակեցի Ինք ալ երեխայի չափ ուրախ էր: Ազնուութեան, նրբանկատութեան մարմնացում, ինքնատիպ բարձր հիւմըրով:

Այցելուներ կու գային զինք տեսնելու: Քաղաքավար կը նստէր, գրեթէ չէր խօսէր: Մէկը եկաւ եւ պատմեց ինչպէս *Ֆրէնչ Ֆրայ*ի մեքենայ տարեր է Հայաստան, որ անկէ պակաս չմնայ հայրենի ժողովուրդը: Աբրահամ աչքին տակէն մեզի կը նայէր, «այդպէս է այդպէս է», կը կրկնէր Պարոնեանի բառերը: Երբ տապկուող գետնախիւնները անհամ դարձան՝ հիւրը սկսաւ կարդալ ըստ իրեն Հայաստանը փրկող ութ միջոցներուն երկարապատում իր գրութիւնները, առանց որ մէկ պարբերութիւնը կապ ունենար միւսին հետ: Մեր համբերութիւնը անհամբեր դարձաւ երբ հիւրը դեմ վեցերորդ կէտը հասած չէր:

«Յուզիչը ան է որ կը կարծէ թէ օգտակար բան մը կ'ընէ: Աս ալ ի՞նչ ձեւն է: Հոգիդ սիրեմ Վեհանոյշ, հաճիս ինայէ զիս ասոնցմէ»:

Վերի նկարը Նիւ Ճրրգիի Վարդանանց եկեղեցին դուրսը նկարուած ենք, Չատիկի օրը:

Ըսի իրեն քանի անգամ որ իր երեւակայած՝ դրախտի համազօր Պէյրութը պիտի չգտնէ: Կրնայ մեծ հիասթափութիւններ ապրի:

Շանթը լուռ, նուրբ դիմագիծով զգայուն տղեկ էր, հորը քովիկը կեցած հասան Պէյրուժ:

Իր առաջին նամակները պարտկուած հառաչանք էին: Յետգիտէ սանձը քակուեցաւ եւ այս անգամ տարբեր կարօտի ակը երագեց: Երբ մայրս մահացաւ՝ այնպիսի նամակ մը գրեց որ կարծես հրեշտակներու ցեղ մըն էինք: Նոր գիրքերս ստացած էր, եւ իր դպրեվանքի աշակերտներուն թելադրած: Իր «Յեզ իրիկուն»ը ծփաց ու թեւեր առաւ դէպի անհունը, եւ վերադարձաւ իր տաքուկ անկիւնը:

Իր մահուան պարագաները սիրտս կը ճմլեն ու կը ճմլեն: Չեմ ալ գիտեր կ'անդրադառնամ ինչ կը պատահի իրեն, թէ ոչ՝ հեզ ու անխօս կը մտնէր ճակատագրի մութ սենեակէն ներս: Բայց ո՛ր են իր մայրամուտի պէս սրտայոյզ, հայերէնը ոսկեղէն գեղոր դարձնող տողերը: Մեծ բանաստեղծին արխիւն ու արժանի պատիւը:

Ո՛ր է հայ Բանի արարումին կարմիր հողը:

ԺԱԳ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ ՀԵՏ



Բանաստեղծ Ժագ Յակոբեանի հետ

Բանաստեղծը Պէյրուժ գտնուած շրջանին ամեն անգամ որ գիրք մը հրատարակէր, հայրս նոյն օրը անուրի տակ դրած կը մտնէր տուն: «Սուրբ Գիրքը թող միշտ բաց մնայ սեղանիդ վրայ» վերնագիրն էր իր մէկ բանաստեղծութեան: Սուրբ Գիրքը միշտ բաց մնաց մեր հիւրասենեակի ճիշդ մէջտեղի սեղանին վրայ:

Վարդանանցին մեր դպրոցի եկեղեցիի սրահին մէջ պիտի պատգամէր Ժագ Յակոբեան: Մայրս ու ես զացինք: Յակոբեանի մագերը Վահան Տէրեանի մէկ կողմի վրայ ինկած մագերը կը յիշեցնէին: Կը խօսէր, հաւանաբար ուրիշներ ալ ինծի պէս առինքնուած մտիկ կ'ընէին: Բաւական խօսելէ ետք յանկարծ ձայնը կերկերաց ու փղծկեցաւ: Գլուխը կախած՝ լացաւ: Ետ բարձրացուց, վերջին նախադասութիւնները ըսաւ ու նստաւ: Ընդամենը մէկ ժամուան մէջ բանաստեղծը տեսաւ Աւարայրը ու վերադարձաւ Ճերմակ Ջարդի վայրը: Ինչ մէկ ժամ: Ամ-

բողջ կեանք մը տագնապանք կորուստի ու փրկութեան միջեւ:

Բայց ծիծաղաշարժ բան մըն ալ պատահեցաւ: Կարծեմ Անդրանիկ Ծառուկեանն էր որ Ամերիկեան համալսարանի Ուէսթ Յոլին մէջ յիսնամեայ յոբելեանը պատրաստած էր Յակոբեանին: Ես «Մենք»ը պիտի արտասանէի: Քանի մը օր առաջ, կոկորդի գօրաւոր բորբոքում: Լուր տուի, եւ յանկարծ տեղական օրաթերթի մը մէջ յայտարարուած էր «Վահան Թէքեան պիտի չարտասանէ հազագային անհանգրստութեան պատճառաւ»: Այդ օր, անկիւն մը ցկկած հետեւեցայ ձեռնարկին «հազագային»ը փառահեղայինի վերածելով:

Նիւ Ճրրգիի Յամագայինը կազմակերպած էր Ժագ Յակոբեանի յոբելեանը: Յակոբեան գերագոյն ծնրադիր քարտուղարն էր Աստուծոյ: Մայրս ալ ապաշխարած էր: Յոգեւորները քոյր-եղբայրով կը դիմեն իրարու. «Ուրեմն դուք իմ մօրեղբայրս էք», եզրակացուցի:

Այն օրերուն մայրս հիւանդանոց հասաւ, երեք օր մինչեւ ուշ գիշեր ես ալ իր քով մնացի: Ժագ Յակոբեան ինքնակամ յանձն առաւ երեխաներուս հոգ տանիլ, դպրոցէն անոնց դարձին ան այնպիսի պատմութիւններ պատմէր է, զուարճացուցեր է զանոնք, որ տարիներ ետք դարձեալ կը կրկնէին. «Թող Պարոն Յակոբեանը գայ. մեզի նորէն պատմութիւն պատմէ»:

Նոյն օրերուն, նաեւ Գրիգոր Պըլտեան հիւր էր մեզի. նկար մը կայ ուր երկու բանաստեղծները գլուխ-գլխի կը խօսին: Ես նորէն դատարան պէտք է երթայի ամուսնալուծման անվերջանալի դատերը աւարտելու խաբուսիկ յոյսով: Երկուքն ալ ուզեցին ընկերակցիլ ինծի:

Երբ մամային հիւանդութիւնը բարդացաւ, Ժագ Յակոբեան ամէն օր կը հեռաձայներ, կը լսեր մեր հեծկլտուքը ու կը մխիթարէր թէ մաման իր պաշտած Աստուծոյն քով պիտի երթայ, ալ պիտի հանգստանայ: Մինչեւ իսկ ծրագրեր էր մեր քով գալ, սակայն իր տիկնոջ եղբօր ծանր անհանգստութեան պատճառով չէր կրցած: Այս մէկը յետոյ պատմեց մեզի:

Հրճուանք էր գինք հիւրընկալել երբ այս ավերը գար: Տանս մէջ մեծ սենեակ մը կայ, պատերը ծայրէ ծայր լայն պատուհաններ, մինչեւ իսկ առաստաղին վրայ բացուած մեծ պատուհաններ: Արեգնազ կը կոչեմ այդ սենեակը: Յակոբեան շատ կը սիրէր նստիլ այնտեղ ու աղօթել եւ գրել:

Քիչեր գիտեն որ երգիծական երակ մը ունէր: Օր մը իրիկուան դէմ հարցուց թէ մէկը եկած դուռը զարկամ է այսօր: «Ոչ», ըսի, «հոս այդպէս բան չի պատահիր»: «Ոեւէ մէկը չեկամ», հետապնդեց: «Մէկը կ'ակնկալէիք», հարցուցի: «Ատուռն աս փողոցը քալած պահուս», բացատրեց, «երկու դպրոցական աղջիկներ ելան դիմացս, հարցուցին թէ ես ճորճ Ուաշինկթընն եմ: Ոչ, պատասխանեցի եւ ձեր տունը ցոյց տալով ըսի՝ այդ տան մէջ կ'ապրի նշանաւոր գրող տիկին մը: Դուռը զարկէք եւ իր ստորագրութիւնը խնդրեցէք: Օր մը հպարտ կրնաք զգալ: Չեկան ուրեմն»: Ափսոսաց որ գիս չկրցաւ ապշեցնել:

Հակառակ որ դեղագործ էր, կեանքը նուիրած էր հայ լեզու եւ գրականութիւն ջամբելու հայկական վարժարաններէ ներս: Իր աշակերտները գրեթէ երեք սերունդ՝ հմայուած են իր դասաւանդութեամբ: Փոքրերուն հետ փոքր, մեծերուն հետ մեծ: Օր մը պատմեց թէ չորրորդ դասարանի աշակերտ մը, Թուրքիայէն եկած, որ նոր սկսած է հայերէն խօսիլ, պարտականութիւն ունէր իր դասընկերներուն նման շարադրութիւն գրելու Այբուբենի գիւտին մասին: Եւ տղեկը գրեր է. «Յէյ, Մետրոպ Մաշտոց, դուն եթէ ծնած չըլլայիր, սա պելան չէր գար գրուխնուս»:

Ժպիտըր անպակաս էր աչքերէն, դէմքէն: Միայն ազնիւ բաներու մասին կը խօսէր եւ շնորհակալութեան անհատնում առիթներ կը գտնէր: Գիշը ճաշէն

առաջ միշտ երկու գաւաթ գաղջ ջուր կը խմէր որ ստամոքսը նուազ տեղ ունենայ ուտելիքի:

Այնքան մարդկային եւ արդարադատ էր որ հակառակ եկեղեցիի դիրքորոշման՝ անձնասպանը առանց եկեղեցական արարողութեան թաղելու, ինք կը ստանձներ եւ մահացեալին վշտահար հոգիին համար աղօթք կ'ուղղէր Աստուծոյ:

Բանաստեղծութիւնը եւ նկարագրային որոշ գիծերը մեզ հարազատ դարձուցին իրարու: Չինք հոգեւոր հայրս կը նկատեմ: Կ'ըսեմ որ Աստուծուէ դառնացած եմ եւ տարտերս իրեն կը պատմեմ: Կը հաւատամ իրեն, որովհետեւ երբ քառորդ դար առաջ գաւազներս՝ իրենց հօր այցելութեան ընթացքին երբ ցերեկը հեռաձայնով աղերսեր էին որ ազատեմ գիրենք, գիշերուան՝ գիրենք սովորականին պէս վերադարձնելու փոխարէն իրենց մեծ մայրը հեռաձայնեց. «Պզտիկներդ այլեւս կեանքիդ մէջ պիտի չձգեմ որ տեսնես»: Երբ խենթի պէս կու լայի, Ժագ Յակոբեան հեռաձայնով ըսաւ. «Հայր Աստուած իր գաւազները կը պաշտպանէ: Միշտ յիշէ որ վաղը ուրիշ օր մըն է»: Յաջորդ առաւօտ գաւազներուս հայրը հեռաձայնեց առտու կանուխ. «Եկուր գաւազներդ տար, գիշերը հայրս մեռաւ»:

Միշտ կը կրկնեմ՝ վաղը ուրիշ օր մըն է: Եթէ յաջորդ օրն ալ դժուար ըլլայ, ժապաւենին ծայրը բռնած եմ: Վաղը ուրիշ օր մըն է:

Հիմա հարիւր երկու տարեկան է Ժագ Յակոբեան, կը գրէ ու կը խօսինք հեռաձայնով: Սուրբ Հոգիի նման խաղաղութիւն կուտայ:

Բայց ցաւս ու գայրոյթս կը զօրանայ: Սփիւռքը ծայրէ ծայր ներշնչող բանաստեղծը, Հայաստանի փառքն ու դրօշը եօթանասուն տարի յաղթապանծ ծածանող բանաստեղծը, երբեք Հայաստան չիրաւիրուեցաւ: Հայ հողը չհամբուրեց: Համբուրեց, ան ալ ինչպէ՛ս: «Հայաստանը հոգիիս աչքերով կը տեսնեմ», կ'ըսէ:

Հայաստանը գրկուեցաւ այս մեծ բանաստեղծը գրկարաց ընդունելէ:



ՍԱՂՄՈՍ Ք

ԿԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Մեծ քաղաքին պզտիկ աղջիկը
Ան ոտքեր չունի
Ուրիշներուն պէս թւեր չունի ան
Ան կը քնանայ ծերացած քրտնած կամուրջներու տակ
Մեծ քաղաքներու պզտիկ աղջիկը
Երկու ծակ ունի ժիր աչքերու տեղ
Որ սենեակները անլոյս կը տեսնէ
Եւ բոլոր դռներն անկուղպ և փտուկ
Որ գրատունին գոյն-գոյն կողքերը միայն կը տեսնէ
Եւ մայթին վրայ ծախու ծաղիկէն
հատ մը կը գողնայ խենթ ուրախութեամբ
Մեծ քաղաքներու պզտիկ աղջիկները
որոնք ժամ չունին
Յերեկները ցանկապատեր կը կրծեն
Իսկ գիշերները իրենց ձիւթահամ շրթները
կ'երթեւեկեն ծխամորճներու մէջ
Որոնք օր մը, օր մը միայն - մարդ էակին զարմանալի
թուելու չափ - ումպ մը գուտ սեր կը մուրան
Ոսկի աղջիկներ որոնց մարմինի գինին
կը փխի արիւնի նման
Որոնք անլի ձուկերու պէս լուռ ու մունջ
կը խարկուին արնաթոր ավերու միջև
Եւ դեռ կը սարսման աղի լոյսերու ներքև
Մեծ որովայնով պզտիկ աղջիկները
Որոնք հսկայ և խորունկ ձորեր կը տեսնեն
երազներու մէջ
Որոնց փակչող ավերը երկար շիշեր կը ճզմեն
երազներու մէջ
Որոնք առնական կուրծք մը կը գտնեն իրենց գլխուն
տակ՝ երազներու մէջ
Որոնք համբուրել գիտեն ամենաանջիղ ավերը անգամ
Որոնք կը գգուեն ամենաաղբատ մարմինը անգամ
Որոնք ունկ կու տան ամենահիւանդ մտքերուն անգամ
Եւ կը բարեւեն իրենցմէ խրտչող

շուներուն անգամ
 Որոնց փոքրիկ սրտերուն վրայ
 Հարիւր անկայան գիշերներ կ'եռան
 հազար ժանգոտած բուխերիկներ կան
 և հարիւր հազար աղօթք և անէծք
 սէր և հայիոյանք
 Որոնց երգերը շոգիի նման անգոյն և տաք են
 Որոնց աչքերը ջրուող կուտի պէս շուտով կը լռեն
 Որոնց թևերը անթեններու չափ յոգնած բայց բաց են
 Որոնց գլուխները ոլորուած պարաններու մէջ
 կը թափահարուին
 Եւ դեղնածոր արշալոյսներ կը սահին այդ
 թափահարումէն
 Եւ վիժած կայծակներ՝ այդ արշալոյսէն
 Եւ արծաթ ու ծուխ՝ այդ վիժումներէն
 Պզտիկ աղջիկները մեծ քաղաքներ են



ԿԻՆԵՐԸ՝ ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆԻ ԷԶԵՐՈՒՆ ԸՆԴՄԵԶԷՆ

ԱՆԻ ԱՍՏՈՒՐԵԱՆ

«**L** իբանանի մէջ... դիցուհիներ ոտաբոսիկ կը շրջէին հին երգերը շալերու պէս իրենց մարմիններուն փաթթուած...»

Վեհանոյշ Թեքեանի գործերուն մէջ այս նոյն կիներուն զանազան տարբերակները կը ճեմեն: Անոնք կ'անցնին Էջէ Էջ, կը ցատկոտեն տողէ տող. կը պահուրտին երկար ատեն, յայտնուելու համար կրկին՝ այլ Էջի մը անկիւնը: Հին երգերը, նորերու հետ շաղախուած՝ կը յամենան գիրենք փաթթող շալերուն մէջ: Անոնք երբեմն լուռ են. հազիւ լսելի անկէ, որ կը փորձէ հասնիլ իրենց. իսկ երբեմն կը թնդան այնքան ուժգին, որ սրտին պատուհանները կը դողդան. կը կոտրին:

«Լուռ» կիները կը պատկանին Թեքեանի կիներու այն խումբին, որոնց «խօսքը կղպանք» Է: Անոնք կը շարժին միայն: Չանոնք կը տեսնենք գրողական պատուհանի մը ետեւէն: Իրենց կեանքը կը ներկայացուի: Տիկին ճեմիլէն, օրինակ՝ կ'երթայ, կու գայ. հաւ կը պահէ երեխաներուն հակիթ հասցնելու համար. պատերազմի գացած եւ անկէ չվերադարձած ամուսնոյն կը սպասէ. հաւը, յոյսը, կը կորսնցնէ. կը փնտռէ, ամեն միջոցի դիմելով կը վերագտնէ (*Ճեղքուած մանրանկար*. «Տիկին ճեմիլէին Յաւը»): Գրողին ոսպնեակը կը նկարէ զինք, իր հնարամտութեան, տառապանքին ու քաջութեան խորապատկերով. բայց տիկին ճեմիլէն լուռ Է. կը պատմուի:

Այլ կին մը՝ տոթթ. Մուշարրաֆիէ, «Լուռ ու յետամնաց սիրով» խորաթափանց պատմուածքին մէջ, բանտարկուած Է հոգեկան խանգարումի ճաղերու ետին. իր երեւակայական հիւանդները կը հրաւիրէ քլինիքը կամ իր նախկին սիրահարը կ'ընդունի փակ փեղկերով տունը, բայց չ'արտայայտուիր զինք կրծող ցաւին մասին. ընթերցողին կը մնայ գուշակել զայն խելագար դարձուցած սիրոյ պատմութիւնը: Կինը կղպած Է խօսքը եւ այլացած:

Այլ տեղ մը՝ «Դեղձենիի եւ Գետնախնձորի պատմութիւն» բանաստեղծութեան մէջ (*Բապմածուկի աշխարհ*, էջ28), գիւղացի Ֆարիտան օրն ի բուն կ'աշխատի դաշտերուն մէջ, մինչ աղջիկը՝ Իգապէ, իր սպիտակ վարագոյրներով տան մէջ ծեծի կ'ենթարկուի տարիքոտ ամուսնոյն կողմէ. ան յաճախ կու լայ, գլուխը դրած ընկերուհիին ուսին, բայց չի բողոքեր:

«Լուռ» կիները կը պատկանին Թեքեանի կիներու այն խումբին, որոնց «խօսքը կղպանք» Է: Անոնք կը շարժին միայն: Չանոնք կը տեսնենք գրողական պատուհանի մը ետեւէն:

Կարծես որմնանկարմերու մէջ յայտնուող, նուրբ, երկարաւուն ու տխուր այս կիները կ'երեւակայենք փակած՝ պատերուն. դատապարտուած՝ մնալու հոն, այդ քարանձաւային եւ ամայի միակուրթեան մէջ, որ կը լռէ:

Կիներու երկրորդ խումբը հայ օրիորդներու եւ տիկիներու խումբն է: Խորքին մէջ, անոնք ալ իրենց անհատական կարծիքը չեն արտայայտեր. կ'ենթարկուին իրենց ապրած վայրի կանոններուն եւ առանց նոյնիսկ անդրադառնալու՝

Կիներու երկրորդ խումբը հայ օրիորդներու եւ տիկիներու խումբն է: Խորքին մէջ, անոնք ալ իրենց անհատական կարծիքը չեն արտայայտեր. կ'ենթարկուին իրենց ապրած վայրի կանոններուն եւ առանց նոյնիսկ անդրադառնալու՝ կը հետեւին տղամարդոց կողմէ հաստատուած ու հինէն եկած ընկերային սովորութիւններուն:

կը հետեւին տղամարդոց կողմէ հաստատուած ու հինէն եկած ընկերային սովորութիւններուն: *Նշանագիր* գործին մէջ կ'ըսուի. «հայ կիները տեղ մըն ալ չեն երթար. կ'երթըցուին: Օրիորդները ուսուցչութեան կ'երթան, արուեստագէտ օրիորդները դաշնակի դաս տալու կ'երթան, տիկիները Կարմիր Խաչ կ'երթան, բայց բոլորը մէկ այցելութեան կ'երթան» (Էջ 83): Այս այցելութիւններուն թեման զարգացած կը տեսնենք մասնաւորապէս *Տնամածառ* հատորին տարբեր պատմը-

ուածքներուն մէջ: Յեղինակը կը յիշէ իր ազգականներուն կամ դրացիներուն իրարու տուած այցելութիւնները:

Քանթարի թաղին մէջ, տանտիրուհիի մը այցելութեան օրն է. կիները նստեր են հիւրանոցին մէջ, նախ քոնեակ, յետոյ թէյ, յետոյ սուրճ...

– Յապա՛, երեք ամիս առաջ ալ տիկին Սրբուհին իր միջնեկը ամուսնացուց. լիմուզինով գնաց իջաւ եկեղեցի Նազիկը, աչքդ տեսնելու էր,– կ'ըսէ տանտիրուհին Նիսէն նոր եկած իր տալոջ մասին:

– Է՛, պատմէ՛ նայինք, տիկին Սրբուհի, ինչպէ՛ս են – ասոնց մէջ կան հետաքրքիր ձայներ եւ նախանձոտ ձայներ: («Խօսակցութիւն», Էջ 162)

Եւ կը պատմեն. այդ այցելութիւններու ընթացքին եղած խօսակցութիւնները հայելին են 70ական թուականներու Պէյրութի քաղաքէնի դասակարգի կիներու գըլ-խաւոր մտահոգութիւններուն. իսկ այդ մտահոգութիւններուն կարկինը կը սկսի աղջիկ ամուսնացնելու ճիգերէն, կ'անցնի սնտոի բամբասանքներու ու անպայման կը հասնի ունեցուածքի ցուցադրութեան կամ յիշեցման: Այս կիները կը խօսին, բայց ընթերցողը կ'անդրադառնայ, որ ձեւական, հանրային կանոններով սահմանուած խօսակցութիւն մըն է իրենցը: Արդեօք ինչ կը մտածէին անոնք իրենց առանձնութեան մէջ, կամ՝ արդեօք կրնային ազատօրէն մտածել, երբ գերին էին իրենց միջավայրին: «Կ'երթըցուին»ը նաեւ ակնարկութիւն է սյս իրականութեան:

Իսկ կին-մայրը. ան, որ մշտական ներկայութիւն հաստատած է Թեքեանի

Էջերուն մեջ. ան ալ կրաւորական դիրք բռնած եւ հոսանքին հետ գացող ու բարքերուն գերի՝ անկար տիպար մըն է: Կ'արժէ մտածել: Յոս նշելի է, որ Թեքեանի գործերուն մեծամասնութիւնը կը կրէ գրողին ձայնը: Մինչ այլ գրողներ կը յստակացնեն, թէ իրենց ստեղծած տիպարները երեւակայական են եւ ուրեմն՝ ո՛չ մէկ առնչութիւն ունին իրենց անձնական կեանքին հետ, Թեքեանի ձայնը միշտ ներկայ է եւ կ'ընդելուզուի իր նկարագրած հերոսներուն: Պատմողին եւ գրական արարքը կատարողին ձայները նոյնացած կը ներկայանան ուրեմն ընթերցողին: Այս կէտը նկատի ունենալով երբ նայինք Թեքեանի գործերուն՝ կը նկատենք, որ բազմաթիւ մայր հերոսներ իրենց տեղը գտած են հոն, բայց մօր երկու կերպարներ յստակօրէն կը գծուին ընթերցողին մտքի պաստառին:

Նախ՝ կայ հեղինակին մայրը, որ մեր գրականութեան մէջ յայտնուող հայ մօր ընթացիկ տիպարը կը յիշեցնէ. ան որ բուրդ լուացած է, հոլմ լեարդը առատ սոխով եւ քիմիոնով տապկած է, ընտանեկան համերաշխ եւ տաքուկ մթնոլորտ ստեղծած է: Անանձնական մայրութեան մարմնացումն է ան. գոհ մը՝ մայրութեան բազինին:

Մօր հանդէպ սերը այնքա՛ն գօրաւոր է եւ անսահման, որ Թեքեանի համար «մայր» բառը համազօր է «լոյս»ի:

Մայր, մայր, մայր, մայր կը կրկնեմ մեքենաբար
որպէսզի չկորսնցնեմ այս բառին լոյսը (*Մունն էւ անդունդ*. «Մայրս». Էջ 40)

Ընթերցողը ինքզինք կը գտնէ մայրացման ու սրբացման եղելոյթի մը դիմաց: «Յաւերժութիւն» բանաստեղծութեան մէջ (Էջ 105), մօրը շիրիմին առջեւ կեցած, Թեքեան կը հարցնէ.

Ո՛ր ես մայր իմ, ո՛ր ես մայր իմ
Աստուածութիւնն իմ յանգած

Այս մայրն է, որ խթանած է աղջկան սերը գիրի ու գրականութեան հանդէպ եւ մինչեւ վերջին շունչը քաջալերած է զինք, որ գրէ: Մօր մը լուռ անձնագրողութեան առընթեր՝ ան ստեղծած է վայր մը, ուր աղջիկ գաւակը, միջին արեւելեան տուններու մէջ չուզուած սեռին ներկայացուցիչը՝ կարենայ գործածել գրիչը եւ անկէ սահած բառերն ու խօսքը՝ որպէս կնոջական ինքնահաստատում:

Այս նոյն մայրն է, որ սրտի գործողութենէն ետք, ապաքինման սրահին անկողնին վրայ երկարած, անհամար խողովակներու արանքէն կիսախուփ աչքերը

Թեքեանի ձայնը միշտ ներկայ է եւ կ'ընդելուզուի իր նկարագրած հերոսներուն: Պատմողին եւ գրական արարքը կատարողին ձայները նոյնացած կը ներկայանան ուրեմն ընթերցողին:...երբ նայինք Թեքեանի գործերուն՝ կը նկատենք, որ բազմաթիւ մայր հերոսներ իրենց տեղը գտած են հոն...

աղջկան դարձնելով՝ հարցուցած Է. «յօղուածո վերջացուցի՛ր» (*Խօսող լերան պատմութիւնը*. Էջ 23):

Եւ կայ ինքը: Թեքեան-հեղինակ՝ Յայկին եւ Նայիրիին մայրը:

Բապմածուկ աշխարհին «Օրօր Յայկին» բանաստեղծութեան մէջ մայրը կը խոստանայ պաշտպանել զաւակը չար բաներու դէմ.

Պառկէ՛ հոգիս, պառկէ՛ սուրը մօրդ խօսքին
կապած կողէդ անյաղթ
ցաւիդ դէմ վախիդ կամ անորոշ վիռկին
ես կը ցցուիմ իբրեւ մայր (Էջ 19)

Յոս երկու մակարդակի պաշտպանութիւն մը մտածուած Է զաւակին համար:

**Մօր հանդէպ սերը այնքա՛ն զօրաւոր Է
եւ անսահման, որ Թեքեանի համար
«մայր» բառը համագօր Է «լոյս»ի:**

Սասունցի Դաւթին պէս ան իր կողին
կապած Է սուրը, որ ուրիշ բան չէ եթէ
ոչ՝ մօր խօսքը. իսկ եթէ չար վիռկը
յայտնուի՝ սուրը կը կերպարանա-
փոխուի եւ կը ներկայանայ որպէս

մայր: Մայրը եւ մօր խօսքը զաւակին պաշտպանութեան յատկացուած են ուրեմն:

Ան կը նախագգուշացնէ զաւակները հաւանական յուսախաբութիւններէ ու
խաբերայութիւններէ.

Մշիկ-մշիկ կը բնանաս,
Անշուշտ առանց անդրադառնալու թէ հիմա
Այս աշխարհի հագարաւոր կէտերուն վրայ
Կարմիր աղջկան կը խաբէ գայլը
Տգեղ բաղիկը լքուած կը զգայ ցուրտ լիճի մը վրայ,
Յովազը կը յօշոտէ եղնիկը, եղնիկը կը յօշոտէ թռչնիկը,
Թագաւոր մը չարութիւն կ'ընէ, բոլոր հսկաները մեռեր են,
Մոխրիկը կը լուայ տունը եւ պարահանդէսի չ'երթար

(*Բապմածուկ աշխարհ*. Էջ 23)

Կը կերտէ մարդը՝

Չգոյշ եղի՛ր հասուն խիղճդ
չխեղճանայ չմարմրի
Եղի՛ր զօրեղ որ շոյանքիդ կամ հարուածիդ
նուրբ նժարը չսասանի

Կը կերտէ հայը՝

Պիտի Երկիր երթանք տղաս
թէ՛ երագով, թէ՛ իսկապէս
ճանչցի՛ր դուն քեզ
որպէսզի մթնամրմուր պատմութեան մէջ
անմահութեան գօտին կապես (*Բապմածուկ աշխարհ*, Էջ 118)

Կը կերտէ նաեւ անհատականութիւն ունեցող եւ խօսող կինը:

Կարեւորը Ոչ ըսելը չմոռնայն է

(«Օրօր Նայիրիին», *Բազմածուկ աշխարհ*. Էջ22)

Ուրեմն, կարելի է մտածել, թէ խօսքին ու գիրին հանդէպ սեր ստեղծած հեղինակին մայրը աղբիւրն է միւս խօսքին, որ հեղինակ զաւկին քով վերածուած է պայքարի միջոցի եւ սուրի: Շրջանակը սկսած է զոհուող մայրով ու կը գոցուի վտանգներուն զգաստ, ազդու մայր-կինով: Բայց երկար ճամբայ կտրուած է լեզուն կնոջական ներգործօն եւ ազդեցիկ զէնքի վերածելու համար:

«Ո՛չ» ըսելու կամքը Թեքեանի կեանքին մէջ մուտք գործած է Միացեալ Նահանգներ հաստատուելէն եւ անձնական դառն փորձառութիւններ ապրելէն ետք: Անկէ առաջ, միամիտ, խնդուն եւ «աչքերը չբացուած» աղջկայ մը նայուածքը ունի շուրջիններուն վրայ:

*Տոհմածառ*ին մէջ տեղ գտած «Ճերմակ սփռոցին վրայ թափած սուրճ» պատմուածքին մէջ, նախապէս հնչուած կնոջական խօսակցութիւններուն սալիկին վրայ «գիլ» ձայն մը կը յայտնուի: Թեքեան դեռ չէ ձգած Պէյրութը, Ամերիկա չէ գաղթած եւ ամերիկեան փորձառութիւնները չէ ապրած: Յետեւաբար՝ երբ իր զարմուհիներէն մէկը կը դըրկուի Միացեալ Նահանգներ, կ'ազդուի կիներու ազատագրման շարժումէն եւ Լիբանան վերադառնալով ֆեմինիզմի մասին կը խօսի անդադար՝ Թեքեան անոր մտիկ կ'ընէ գրեթէ քմծիծաղով. «ըստ իրեն՝ պէտք է կինը ազատ զգայ կրծկալ չգործածելու, իր ուզած տղամարդը շարժապատկերի հրաւիրելու, զայն հրաւիրելու ամուսնութեան՝ հաւասար պատասխանատուութեամբ, զաւակ ուզելու կամ չուզելու, եւ հարկ եղած պարագային ամուսնալուծում պարտադրելու, կէտ առ կէտ բոլոր իրաւունքները պահանջելու: Կինը պէտք է արթուն ըլլայ, տէր կանգնի իր իրաւունքներուն»: Երկու աշխարհներու՝ Արեւմուտքի եւ Արեւելքի տարբերութիւնը եւ բախումը ի յայտ կու գան: Պէտք չէ մոռնալ, որ այդ օրերուն ո՛չ համաշխարհայնացում կար, ո՛չ դիմատետր: Այդ օրերուն, Թեքեան կը պատկանէր Արեւելքին. իսկ ըստ իր զարմուհիին՝ արեւելքցի կիները գիտէին «միայն երիտասարդութիւն եւ հոգի մաշեցնել, տիտիկ-տիտիկ սարմա փաթթել, կռկռոց կեսուրի մը տան մէջ շոր լուալ եւ անհաւատարիմ ամուսինի մը դիմաց հօնգուր-հօնգուր լալ» (Էջ 149): Ան այդ գունագեղ պարբերութիւնը կը վերջացնէ զարմուհիին ինքնապաշտպանական ճիւղոյի դասընթացքները եւ պատշգամբ գտնուող եօթը աղիւսները մէկ հարուածով կիսելը յիշելով:

Չարմուհիին ֆեմինիստի հաւատամքը ներկայացնելու ընթացքին, Թեքեան զայն կը դիտէ դուրսէն՝ թատրոնի եկած հանդիսատեսի պէս, որ թատրոնը տես-

...խօսքին ու գիրին հանդէպ սեր ստեղծած հեղինակին մայրը աղբիւրն է միւս խօսքին, որ հեղինակ զաւկին քով վերածուած է պայքարի միջոցի եւ սուրի:

նել է տոբ կը պատմե թատերական ներկայացման մաս կազմող զանազան տիպարներուն մասին: Ինք ամնչուած չէ անոնց գոնէ՝ ո՛չ տակաւին: Թատրոնին միւս հերոսուհիները՝ հօրաքրոջ ու մօրաքրոջ զաւակներ, կը ներկայացուին նոյն զաւելշտական շէշտով. մեծ զարմուհին կը յայտարարէ թէ իր չսիրած երիտասարդին հետ չի կրնար ամուսնանայ, նոյնիսկ եթէ հայրը «Ֆապրիքա» ունի. զարմուհիին քոյրը «Չայթովսքի Է. կենսութիւն, քիչ մը թեթեւ հոգիով». օրն ի բուն ծաղիկ եւ աղջիկ կը գծէ: Միւս քոյրը ամէն բանի մասին տեղեկութիւն կրնայ հաւաքել ու խօսիլ անոնց մասին, բայց երբ տղամարդու գայ հարցը՝ կը լռէ. «այնքան աննշան կ'անցնի այդ երրորդական նիւթէն, որ կարծես տղամարդիկ ուրիշ մոլորակի մը կը պատկանին, եւ դեռ ճշդուած չէ՝ իրապէս գոյութիւն ունին թէ չունին»:

Այս հանդիսատեսի դիրքը արմատապէս կը փոխուի, երբ արեւելքցի երիտասարդուհին խոզակէն դուրս կու գայ եւ կ'անցնի Արեւմուտք: Փարիզի փողոցներուն մէջ կը քալէ բարեկամի մը հետ եւ կը ցնցուի կնոջ մը աղիողորմ ճիչերը լսելով պատուհանէ մը:

«Երթա՛նք ոստիկանին լուր տանք», ըսի: «Չ'ըլլա՛ր», ըսաւ եւ կախեց գլուխը: «Պէ՛տք է անապարել» պնդեցի, «օգնութեան հասնող չկայ»: «Յոգ մի՛ ընէր», ըսաւ. «հիմա կը վերջանայ»: «Ելլե՛նք», ըսի: Բաւական տեղ լուռ քալեցինք: Սէքս շօփերը կը դիտէի:

...

«Ինչո՞ւ կը ծեծեն»:

«Սատիստ յաճախորդներու համար մասնաւոր այսպիսի կիներ կան», ըսաւ. «օրէնքով արգիւտած է, բայց ասոնք վարժուած կ'ըլլան»:

«Աւելի կը վճարուի՞ն»: Չուզեց պատասխանել: *(Լշանաագիր. Էջ 80)*

Իր ամուսնոյն կողմէ ծեծուած Իզապելին պատկերին կ'աւելնար տղամարդոց սեռային քմահաճոյքները գոհացնելու համար ծեծուող կնոջը: Աւելի ուշ՝ Ամերիկա հաստատուելէն, զաւակներ ունենալէն եւ դժուար ամուսնալուծումէ մը ետք Թեքեանի գրիչ-սուրը կը դառնայ աւելի հատու: Իր «Ապահարզան» բանաստեղծութեան մէջ ան ամբողջական պատկերը տուած է ամուսնալուծման իրականութեան: Դատարանի միջանցքները. սիրոյ կորսուած պահերուն յիշողութիւնը եւ վաղուան ցուրտ մինակութեան հեռապատկերը. բարկութիւնը անոր հանդէպ, որ դժոխքի վերածած է կեանքը: Իսկ շուրջը՝ իրեն պէս մեծ թիւով կիներ, որոնց ճակատագիրը կախուած է փաստաբաններէ եւ դատաւորներէ:

Պիտի գայրանան որ օր մը կրցեր ենք Ո՛չ ըսել
 Առատ ստրկութեան
 Բռնութեան Խարազանին
 Եւ մարդկայնութեան շնչահեղձման
 Կրցեր ենք Ո՛չ ըսել կեղծիքին
 Ինքնախաբէութեան վախը հեռացուցեր ենք
 Եւ օրերու հոսքը՝ վերադարձուցեր իրենց իմաստին:

Ընթերցողը կը տեսնէ այն «Ո՛չ»ը, զոր հեղինակը արդէն սորվեցուցած էր իր աղջիկ գաւակին («Օրօր Նայիրիին»): Բայց այլեւս մինակ չէ. ան բանքերն է հազար-հազարաւոր կիներու, որոնք չեն կրնար խօսիլ:

Նոյն «Ապահարզան»ին մէջ կը կարդանք հետեւեալը.

Այն ատեն ես քանի դար է՝ կ'ապրէի
 Մայրը կ'օրօրէր մանուկը երբ մտայ սենեակը
 Ըսաւ՝ պիտի գրե՞ս
 Պիտի գրեմ ըսի
 Ըսաւ՝ ես անցած կ'ըլլամ. վերմակը ամուր ծածկէ՛
 Չաւակս ապստամբութենէն թող չխանգարուի
 Քոյր, ես մանուկիդ փափուկ բարձ մը բերի
 Բայց վերմակը մինչեւ ականջները ո՛չ՝ չծածկեցի

Երբ ականջները բաց այդ մանուկը, ապագայի տղամարդը՝ լսէ տիկին Ճէմիլիին հաւուն երգը, ընտանեկան բրտութեան զոհ՝ Իզապէլին հեծկլտութքը, դատարանին մէջ իր իրաւունքներուն համար պայքարող կնոջ կանչը, երբ մօտենայ Վեհանոյ թեքեանի կիներու հոյլին ու զանոնք դուրս բերէ որմնանկարային իրենց դիրքերէն՝ անոնք պիտի խօսին իրեն եւ ըսեն. «Մենք Օրօրով կը քնացնենք թերեւս, բայց չենք քնանար. մենք որոշած ենք տեղ մը չերթըցուիլ, այլ մեր ազատ կամքով երթալ. որոշած ենք ո՛չ ըսել ամէն ձեւի անարդարութեան եւ բրտութեան»:

Թեքեանի բառերով՝

Մեր մաշկին տակ կին կայ եւ մայր որեւիցէ թոյն
 Պիտի չյաջողի անցնիլ անկէ ներս:

Այն ատեն պիտի անդրադառնայ մանուկը, որ Թեքեան լեզու տուած է բոլոր կիներուն:





Ռուպերթ Հատենանի հետ,
«Մարմարա»-ի գրասենյակ



Ժագ Յակոբյանի հետ
Լու Աննելու



Բաֆֆի Անենանի, Սոնիա-Սանան Քիլենանի, Յարուօին
Պերպերանի, Ժագ Յակոբյանի և Յարուօին Քիլբենանի հետ



Բանաստեղծ Յովհաննես Գրիգորյանի հետ,
Անթիլիաս



Սիլվա Կապուտիկեանի և Մարո
Մարգարեանի հետ



Յակոբ Կարապետցի և Պողոս
Մնացեանի հետ



Արքի Յովհաննիսեանի, Ռազմիկ Փանոսեանի, Եղուարդ Էղոյեանի, Վահե Օշականի,
Արթուր Եուզպաշեանի, Յարուօին Պերպերանի և Գրիգոր Հոյոյեանի հետ



Յակոբ Խաչիկեանի հետ



Ալեքսանտր Թովչանի հետ



Ալիսիա Կիրակոսեանի հետ



Մկրտիչ Փանոսեանի հետ



Վահագն Դաւթեանի հետ



Գրիգոր Պըլտեանի հետ



Լեւոն Անանեանի հետ



Գրիգոր Յակոբեանի հետ



Խաչիկ Թեօլեյեանի, Նազիկ Արթինեանի եւ Վրեժ Արմեն Արթինեանի հետ



Հրանտ Մաթեոսեանի հետ



Մարուշ Երամեանի հետ



Յակոբ Կարապենցի եւ Կարօ Արմենեանի հետ



Պօղոս Սնապեանի, Ժիրայր Աթթարեանի, Ա. Արփինէի եւ Յակոբ Կարապենցի հետ



Ռազմիկ Դաւոյեանի հետ

Խուզի ծառին տակի փայտե սեղանի ~~մոտ~~, ծառին շինած էր, մինչև
 իսկ դարակ մոտ ~~էր~~ ու մեծամասն իր ուսմայի, մամուլի կառույցները
 եւ կամ տեղափոխ կը պահէր: Ըն առաջ Կուրծիկը յիշեց ծառինն Խուզը
 "աս դաշտահոծ տէր տապաններէն մէկը օտին մ կը ինծի սնտուկը զնէ
 տանի նէ, գիտաէր քի էս եւս կու գամ, դուրս նստէր մատամ անքուն
 կաղաէր: "Կիտն մատամ անքուն հնչ եղեր է" սկսանք հաղալ, Կուրծիկը
 ձեւեր կային մէկը տեղէն չէր շարժէր, որչոյ սեւանիկը հագիւ հագ
 կայնող ոտքերով փակած էր պատուհանին" էս տեսնեմ" Տառին էկել է"
 սուս աղջիկ սաստեգ սուրբիկը որով մտիցաւ Կուրծիկը եւ ծուռեղուն
 փակաւ. սհանին կարգը էր երբոր Կուրծիկը մատամ անքուն տատկեոր, անուր
 կէս մնաց կարծրած Կուրծիկը սկսաւ սրբել, անոո մայ շուրթիկը սկսաւ լալ,
 աս կազր կազանք ինչու կուլար կոր, տառին բաւ որ ետ պիտի գայ
 հնրտեւորը գտե՞մ սուրբիկըրայա մենք գիտակցեալ էինքոր տայինն միծակր
 իրեն լառուկ միծակ չէր. անիկա տանս միծելուէ տանց ենդագնելու
 բաւ մո չէր քնէր: շիփշիտակ պտուկեզուտեր սուսիկ փուսիկ տարեր էին
 երթալը ձեռոր էր ուր մնաց գալը: սատամ անքո պիտի կազանք եղեր.
 պառապ բան: Կուրծիկը մորթուրը ձգեր են որովհետեւ մէկսններէն գուարթ է
 ներսը ձեռքերը ծուռեղին կը գարնէ, մարդի քուր կը կտէ կոր: Կուրծիկը
 կամ հետահետէ Թափ առահնք եւ հոնգուր հոնգուր լացինք, այնքան լագինք
 այնքան լագինք որ հոնգուր մտանք փիլաւին լէւմեծունին մեծ մար
 կերանք եւ դեռ գլուխնիս գրնգ գրնգ կը օսէր կոր: Կուրծիկը տարի է
 ճանչցեր էինք զինքը, "ուրիս կապէր քոյերը պէտքովէն նամակ նամակ
 ետեւէն գտեր էին յետոյ երեսունմեկ տարի ետ" լալ կուզամ Կուրծիկը եր,
 մեծմայրս անապարիտ էր Պոլիս, սնտուկը սատոաստեր, ետեալ շարք մը
 պտոտեր էին մտաք բարոմի եւ նաեւ հասեր էին Պէյրուէ մեծ մայրս
 եւ իր եօթանասունամեայ եղբայրը: Կուրծիկը Թագուհի քրոջ հետ
 հասեր էր այն քաղաքը ուր իր երե չորս քոյերը ա տեսնին ընտանիք
 կազմեր, Թոռներ ապահովեր էին: Կուրծիկը էր տային, չեմ գիտեր
 ինչ եղծա էր իր արհեստը բայց հաղալ իրենտիկը հաղեմ կը հնաւէր
 մեզի համար: Լուրջ կենալ չկար, ինչ է սուրաթի կախեր ես կրէր
 եւ դէմքը անանկ ծամածուռ ունիւն ու կը շինէր որ ուզած չուզած կը
 հնդայիր: Ամենէն շատ կիւնար աշխարհը փլած տակը չէօքմիւշ եղած
 ընաւորողութեան տէր անծերու հետ որոնգմէ մէկը իր երկրորդ օտրն էր
 միւսը մեծմայրս, հօրս հայրը: անոնց համար արւեր չի ծառի կրէր
 եւ Թեպետեւ սատեղին ու լիծերը իր պատմութիւններուն մէջ շատ տեղ
 կը գտաւէին, այսուհանդեմ զիշտոր լուսինն կարան էր. լուսինը կ
 փայլեր անոր որ ան օրը ամենէն ուրախ եղաւ եւ օգնեց մու ներուն
 ՅՏԱՅԻ ԼՐԱՍԻՆՈՒ ՈՐՈՒ ՀԱՄԱՐ ԿՐ ԹԱՅԻ ԿՐ, ԷՆՈՒՐ ՄԱՅ ՄՈ ՍՈՒՐ զԻՆԱՄ
 ՍԻԿԱՐՔ ԵՐ ՄԱՅԻՆՆՆ ՈՒ ՄԵԾՄԱՅԻՆՆՈՒ ԵՆԻՄԱՆՆՈՒ ՄՈՒԿԱՆ ԱՍ ԱՐԱՍ
 ԿՐ ԵՐ ՄԱՅԻՆՆՆ ՈՒ ՄԵԾՄԱՅԻՆՆՈՒ ԵՆԻՄԱՆՆՈՒ ՄՈՒԿԱՆ ԱՍ ԱՐԱՍ

Կիտն ապ անքուն
 յոյ՞նք ինչպէս չէր
 Կուրծիկը
 Կուրծիկը

Կուրծիկը
 Կուրծիկը
 Կուրծիկը
 Կուրծիկը

Կուրծիկը
 Կուրծիկը
 Կուրծիկը
 Կուրծիկը

Կուրծիկը
 Կուրծիկը
 Կուրծիկը
 Կուրծիկը

Կուրծիկը
 Կուրծիկը
 Կուրծիկը
 Կուրծիկը

Կուրծիկը
 Կուրծիկը
 Կուրծիկը
 Կուրծիկը

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ ԱՐՁԱԿԱԳԻՐ¹

ՐԱՖՖԻ ԱՃԵՄԵԱՆ

Վեհանոյշ Թեքեան ձեզմէ շատերուն հաւանաբար ծանօթ է իբրեւ բանաստեղծուհի: Առաջին երկու հրատարակած հատորները՝ 1969ին *Կապոյտ Ապրիլ* եւ 1974ին *Ոստրէ*, բանաստեղծական հատորներ են: Սակայն, ասոնցմէ ճիշտ ետք՝ 1977ին, արդէն կը հրատարակէ *Ճեղքուած մանրանկար* կոչուող երրորդ հատորը, որ կը խմբէ յիբանանեան պատերազմի առաջին տարիներու շունչով ու թեմայով գրուած արձակ գրութիւններ: Ասոր պիտի յաջորդեն կիսով արձակ գրութիւններ ընդգրկող երկրորդ հատոր մը, *Նշանագիր* 1987ին, ապա 10 տարի ետք՝ 1997ին, *Տոհմածառը* եւ վերջապէս 2015ին՝ *Խօսող լեռան պատմութիւնը*: Սա կը նշանակէ թէ գրողը առաջին օրէն արձակի միտում ունի: Ժամանակին, երբ Վահէ Օշականին, որ նոյնպէս բանաստեղծութեան հատորներէ ետք հրատարակած էր արձակ հատորներ, հարցուցած էինք արձակագրին մասին՝ կտրուկ պատասխանած էր պնդելով թէ Վ. Օշական բանաստեղծ է: Այսինքն՝ արձակը կը նկատէր երկրորդական: Ասիկա հաւանաբար բանաստեղծի հարց կրնայ նկատուիլ: Ո՛ր կը վերջանայ բանաստեղծութիւնը եւ ո՛ր կը սկսի արձակը: Գրողին համար կա՛ն այդպիսի յստակ տարանջատումներ: Այս հարցը չենք տուած Վեհանոյշ Թեքեանին, սակայն այս առիթով ուզեցինք աչքէ անցընել հեղինակին արձակը, անջատաբար բանաստեղծական հատորներէն, գուցէ ճաշակ մը կարենալ կազմելու համար ընդհանուր տպուած արտադրութեան մասին, ինչպէս նաեւ ըմբռնելու այս գեղեցիկ լեզուով եկող գիրը, որ կը կոչենք արեւմտահայերէն, եւ գիտնալու թէ արդեօք կարելի՞ էր գիծ մը գտնել որ կը շարունակուի հատորէ հատոր, ընդհանուր մտահոգութիւն մը, կամ նոյնիսկ լեզուական յառաջխաղացք մը: Գործերը կը գրուին ու կը տպուին իրենց ժամանակին մէջ, սակայն ապագայի ընթերցողը առիթը ունի զանոնք ընկալելու ժամանակին ընձեռած հեռաւորութեամբ ու կարկինով, մանաւանդ երբ զանոնք կը դնենք այսպէս կողք կողքի:

Առաջին հատորի՝ *Ճեղքուած մանրանկարի* բոլոր գրութիւնները ծնունդ կ'առնեն այդ օրերուն մայրիներու երկիրը բռնկած ու հրոյ ճարակ դարձուցած հրդեհէն: Պատերազմի առաջին տարիներն են եւ ցնցումը զօրաւոր է: Ո՛վ կրնար

¹ Այս գրութեան առաջին տարբերակը կարդացուած էր Վեհանոյշ Թեքեանի գիրքերուն նուիրուած շնորհահանդէսին՝ Մոնթրէալ, 17 Յոկտեմբեր 2017:

երեւակայել որ այդ բարդ կառուցով ու բազմաշերտ համայնքներու եւ յարանուանութիւններու վրայ վրայի դիզուած շերտերով երկիրը կրնար մէկ օրէն միւսը կրակ առնել ու այրիլ: Առաջին տարիներու այդ բռնկումը քաղաքակերտոնի թաղային կռիւներով ու թալանով շուտով պիտի տարածուէր ու ընկլուզէր ինքզինք Սփիւռքի միջնաբերդը ու սիրտը նկատող հայութեան քաղքենի դասակարգի մը հիմնական կեդրոնները: Մէկ օրէն միւսը քաղաքին հայահոծ թաղերը պիտի պարպուէին ու ծանրութեան կեդրոնը, մանաւանդ մշակութային ու մտաւորական գետնի վրայ՝ թերթեր, միութիւններու կեդրոնատեղիներ, եւայլն, կամաց կամաց պիտի անցնէին կանաչ գիծէն միւս կողմ՝ արեւելեան ար-

Ճեղքուած մանրանկարի բոլոր գրութիւնները ծնունդ կ'առնեն այդ օրերուն մայրիներու երկիրը բռնկած ու հրոյ ճարակ դարձուցած հրդեհէն:

ուարձաններ, Պուրճ Յամուտ ու աւելի անդին, ուր կրկին՝ կառուցներ, դպրոցներ ու հայահոծ նոր թաղեր պիտի կառուցուէին Լեռնայիբանանի փէշերը բարձրացած քաղաքի երկարաձգումին հետ: Քաղաքակերտոնը ինքնին պիտի դառնար սրտէն զարնուած ու մէջտեղէն երկուքի կիսուած հիւանդ մը՝ անցած փառքի օրերը երագող: Ասիկա ընդհանուր պատկերն է, սակայն բուն զոհերը անոր բնակիչներն են:

«Այս հատորը սովորական պատմութեամբներու հատոր մը չէ», կը գրէ Թեքեան ներածականին մէջ ու կը շարունակէ. «Ընթերցողը այստեղ հերոսներ չէ որ պիտի գտնէ, այլ՝ հոգեվիճակներ: Հոգեվիճակներէ աւելի՝ մասնայատուկ տրամադրութիւններ, որոնք կը ձգտին տարբեր տեսանկիւններէ բռնել մէկ ու միակ իրականութիւնը պատերազմին», ու աւելի վար՝ «այս հատորին մէջ փորձած եմ լուսարձակը բանալ խեղաթիւրումներուն վրայ իւրաքանչիւր մարդու եւ զոհի, որ նոյն քաղաքին մէջ կ'ենթարկուի անոր ակամայ»: Մէկ ու միակ իրականութիւնը պատերազմին: Ակնարկը անշուշտ յստակ է: Պատերազմը այն անբաղձալին է, ինչպէս կը պիտակէ զայն քիչ անդին, որմէ փախուստ չունի բնակիչը, եւ որ մէկ օրէն միւսը հրէշի պէս կը յայտնուի տակն ու վրայ ընելով անոր առօրեան: Ինչպէ՞ս դիմադրել անոր պատճառած բոլոր վերիվայրումներուն ու այլանդակութիւններուն: Յետադարձ ակնարկով պիտի ըսէինք՝ ինչպէ՞ս վերապրիլ անկէ: Որովհետեւ պատերազմները երկրաշարժի նման են, մէկէն խզում կը յառաջացնեն ժամանակին մէջ, ստեղծելով առաջ մը եւ վերջ մը: Մէջէն անցնող թէեւ մորթին վրայ կ'ապրի զայն, սակայն միտքը աւելի երկար ժամանակ կը պահանջէ կարենալ ինքն իրեն բացատրելու համար պատահածը: Ասիկա ճակատագրի նման մշտական իրականութիւնը եղաւ կարծես հայահոծ գաղութներուն, ու Գրիգոր Պըլտեանի *Տեղագրութիւն քանդուող քաղաքի մը համար* հատորին հետ՝ այդ մէկը բանաստեղծական, լոյս տեսած 1976ին, *Ճեղքուած մանրանկարը* առաջին գործերէն է ուր փորձ կը կատարուի դիմակալելու Լիբանանի պատերազմին իրողութիւնն ու հետեւանքները:

Գրողին մօտ կայ պատերազմը՝ անբաղձալին, հասկնալու կամ ինքնիրեն բացատրելու պետքը: «Ինքնապաշտպանութեան ձեւ մը, հաւանաբար», կը գրէ ան: Գիրը ձեւով մը կու գայ մեղմացնելու փլուզումին անյեղի իրականութիւնը: Կայ սակայն ապրուած իրականութիւնը իր տեղին ու ժամանակին մէջ արձանագրելու մղումը: Լիբանանահայութիւնը, նման Մերձաւոր Արեւելքի ընդհանրապէս բոլոր հայկական գաղութներուն, իր գոյութիւնը իբրեւ հայութիւն մշակած ու ապրած է երկրին ու տեղական շրջապատին մէջ ու կողքին միաժամանակ, աւելի կողքին, որպէս զուգահեռ իրականութիւն, քան մէջ: Այսինքն, թէւ կեանքը, անոր առօրեան, ակամայ խառնուիլ կը պահանջէ, եւ ասիկա կը պատահի բոլոր մակարդակներու վրայ՝ ամենէն անձնականէն մինչեւ քաղաքականն ու պաշտօնականը, սակայն ատոր անցքը գիրէն ու ընկալումը գիրով, որ հեռացում կը պահանջէ, միշտ մնացած է հարկատու այլեւայլ պարագաներու: Գիրը մնացած է կլանուած ինքն իր ոլորտին մէջ, անկարող տալու այդ ներսէն դուրս անցքն ու համախառնումը, կարծես գտնուէր պատուարի մը առջեւ: Պատերազմը, ուրիշ բաներու կողքին, ճիշդ այդ պատուարն է որ կը քայքայէ եւ գրողը որպէս գիրի մշակ զգայուն է ասոր նկատմամբ: Այնպէս որ երբ պատերազմը կը փրփրի՝ երբ անոր յառաջ բերած ցնցումը կը խորտակէ բոլորին գետինները միաժամանակ, հոն մէկէն գիտակցութիւնը կը ծագի ներանձնականէն կամ համայնքայինէն անդին՝ աւելի լայն համայնութեան մը կարելիութեան: Գրութիւնը ուրեմն կը փորձէ գտնել, մատնանիչ ընել հայկականէն անդին՝ պատերազմի անհետքերը ցոյց տուող ընդհանուր գետին մը: Գրքին առաջին մասը կը պարունակէ 13 կարճ պատմուածք, անմիջական ու իրապաշտ ոճով, զուցէ ըսենք մանրանկարային, ուր կ'ուրուագծուին պատերազմին մասնակցող կերպարներու իտեալիզմը մէկ կողմէ, հեծանիւով թերթ բաժնող ու ապագան երագող պատանին, քաղաքէն հեռացող երիտասարդներու վերջին հաւաքոյթն ու շէնքին տակ դրուած

Գրողին մօտ կայ պատերազմը՝ անբաղձալին, հասկնալու կամ ինքնիրեն բացատրելու պետքը: «Ինքնապաշտպանութեան ձեւ մը, հաւանաբար», կը գրէ ան: Գիրը ձեւով մը կու գայ մեղմացնելու փլուզումին անյեղի իրականութիւնը: Կայ սակայն ապրուած իրականութիւնը իր տեղին ու ժամանակին մէջ արձանագրելու մղումը:

... երբ պատերազմը կը փրփրի՝ երբ անոր յառաջ բերած ցնցումը կը խորտակէ բոլորին գետինները միաժամանակ, հոն մէկէն գիտակցութիւնը կը ծագի ներանձնականէն կամ համայնքայինէն անդին՝ աւելի լայն համայնութեան մը կարելիութեան: Գրութիւնը ուրեմն կը փորձէ գտնել, մատնանիչ ընել հայկականէն անդին՝ պատերազմի անհետքերը ցոյց տուող ընդհանուր գետին մը:

ռուսներին պայթուցիկ, եւայլն: Պատկեր մը կու տան այդ օրերէն եւ հետաքրքրութեամբ կը կարդացուին, թէեւ 40 տարի հեռաւորութենէն հին լուսանկարի տպաւորութիւն կը ձգեն երբեմն: Աշխարհ մը անցած է կարծես:

Թեքեանի լեզուն սկիզբէն ունի իւրայատուկ արձակում ու ազատութիւն:

Թեքեանի լեզուն սկիզբէն ունի իւրայատուկ արձակում ու ազատութիւն: Գաշակ մը տալու համար՝ քանի մը տող առաջին կտորէն որ կը կոչուի «Տեսիլքի եւ արարքի միջեւ».

Օր մը առաջ եկած էր մեզի: Յինգ ընկերներ էին, զէնքի ու երագի ընկերներ: Մտած էին քլաշնիքոֆներով, որոնց տեսքին ծանօթ էինք այնպէս ինչպէս տարիներէ ի վեր նոյն անտառին մէջ ապրող ճնճողկը՝ յովազին: Թելադրած էին որ չվախնանք, համբերենք, քանի մը օր պիտի կռուին մեր պատշգամէն. ինչ կարիք որ ունենանք ապսպրենք իրենց: Յամալսարանական տղաք՝ կարեւորը կեանքի մէջ իտեալ ունենալն է, ըսին. պիտի չլքենք մեր երկիրը, մեզմէ ամենավերջին կռուողին գոյութիւնը իսկ բաւարար է նոր Լիբանանի մը ձեւակերտումը հունաւորելու, ըսին: Մօտս նստողին տարիքը հարցուցի: Տասնութ: Անունը՝ Նասր: Ձեռքին մէջ ունեցած կլոր եւ գլանաձեւ ձեռնառումբերը *պոնպոն* եւ *հայթ տակ* կոչեց: Մեղք չե՞ս, մայրդ ի՞նչ դիրքորոշում ունի: Մայրս հինգ որդիները պայքարի հանեց, ես եղբայրներուս կրտսերագոյնն եմ, բացատրեց: Տասնութ տարիք չէր. տասնութ զարնան կրակ կար աչքերուն մէջ, տասնութ տարուան խենթութիւն: Խումբին ամենաբուռն կռուողն էր, արկածախնդրութիւններու ակնկալութեամբ լեցուած, պատրաստ զոհուելու: Գաղափարին պէս մահն ալ շարունակելի է, կ'ենթադրէր: (Էջ 9)

Երկրորդ մասը կը պարունակէ երկու քիչ մը ակելի երկար կտորներ՝ «Պուրճապատում» եւ «Հակահարուած» վերնագրերով, ուր կրկին նիւթը պատերազմն է, ենթարկուած՝ գեղարուեստական ծաւալումի: Ահաւասիկ առաջին կտորին առաջին պարբերութիւնը:

Տեսամ՝ ես Պէյրութի Պուրճի հրապարակը: Կազմը որեւէ հրապարակի պէս է, միայն թէ ամէն տեսակ մարդ չ'անցնիր այստեղէն: Անապատներէն հասած արաբը՝ տիւրզին, պարապ ֆիլմերով նկարիչները, անգործ բեռնակիրները, մանրավաճառները, նոր հասած հիփփիները հոս են: Մուրացկանները, թուրիսթները, գիւղագնացները, լրագրավաճառները, օթօպիւս սպասողները եւ մեծ լումայափոխները հոս են միշտ: Բայց օրինակ, մեծամիտ առեւտրականները, պզտիկ գեղասերները, սնոպ լիբանանցիները այս հրապարակին մասին վախժխելով կը խօսին. իսկ անուշավաճառ Վիթայիին կինը կեանքին մէջ չ'է անցած այստեղէն, սիրտը վեր կ'ելլէ եղեր: Բայց իրաւ գեղեցիկ է, գեղեցիկ է Պուրճի հրապարակը. գունաւոր, խոտերով ժամացոյց ունի, արմաւի երկար ծառեր ունի, այդ

ծառերեն ցած շենքեր ունի, հսկայակազմ սինեմայի աֆիշներ, ուր անպայման պորտապարուհի մը նկարուած է, եւ վստահ կրնաս ըլլալ որ անկէ քիչ մը անդին ձեռքը ատրճանակ բռնած մարդու մը նկարը կայ. իսկ վերը-վարը-աջին-ձախին աչքառու պէներով արաբական սինեմաշխարհի արթիսթներ: Այս հրապարակը գեղեցիկ է նաեւ անոր համար որ ամէն ինչ բնական է: Այստեղ գողը կը գողնայ, լուսայափոխը կը լոլոզէ, սմսարը կը խաբէ, տարիքոտ դատարկապորտը նարտի կը խաղայ, աւելի ծոյլը՝ մայթին վրայ նստած նարկիլէ կը ծխէ, աւելի երիտասարդը բոլոր անցնող կիներուն ձեռք կը նետէ, թուք ունեցողը կը թքնէ, լրագրավաճառը ճշմարտանման սուտեր կը շինէ: Օրինակ՝ եթէ պոռայ որ Յամրայի մէկ թաքստոցէն տասը բողբեր ձերբակալուած են եւ կամ՝ վարչապետը պիտի հրաժարի որովհետեւ այսինչ պլոքը տարակարծիք է իր հետ, իր այդ ժամուն թերթը հարիւրաւոր օրինակներով աւելի կը ծախուի: (Էջ 107)

Նկարագրուածը սկիզբի առաջին տարիներն են միայն, որմէ ետք պատերազմը շատ աւելի պիտի երկարէր ու տասնհինգ տարի ետք քաղաքին դիմագիծը ամբողջովին փոխուած պիտի ըլլար: Որմէ ետք ալ կողմերու սպառումին ու միջազգային իրավիճակի փոփոխութեան պիտի յաջորդէր հաշտութիւնը եւ ուշակորոյս մոռացում մը դէպքերուն ու քաղաքին: Կարծես տասնհինգ տարի այս մարդիկը զիրար չէին ատած ու մէկը միւսին գլխուն կրակ տեղացուցած: Մեռնողը մեռեր էր, մեկնողն ալ մեկներ: Մնացեր էին քաղաքին փլատակները, որոնց վրայ պիտի շինուէր նոր քաղաք մը իբրեւ թէ հինին տեսքով: Իրականութեան մէջ՝ շինծու քաղաք մը որ նախկինին ոչ շունչը ունէր, ոչ ալ բնակիչները: Միայն պարապ փողոցները:

Քառասունհինգ տարի ետք կեանքը կը շարունակուի անշուշտ ինքն իր ընթացքով: Այս պատմութեանը յատակին սակայն կը յամենայ տարօրինակ զգացում մը, որ կը յիշեցնէ քաղաքը լքողներուն երազները: Ո՛չ իբրեւ *նութի*: Ընթերցումին մէջէն ի յայտ կու գան ժամանակին ու այդ օրերուն *խտալիկ*ը, ջարդի ու աքսորի մոխիրներէն վերականգնած հայութիւն մը, հայեացքը հայրենիքին՝ թէկուզ հոգեկան, որ կը գտնուի իր ուժականութեան գագաթնակէտին: Լիբանանը՝ մեր երկրորդ հայրենիքը, կը լըսուէր այդ օրերուն բեմերէն աջ ու ձախ: Թեքեան բացայայտօրէն կը փորձէ լուսարձակը դարձնել երկրորդէն դէպի անմիջականը՝ լիբանանեան հայրենիքը: «Ես չեմ համարձակիր Լիբանանը նկարագրել, որովհետեւ հայրենիքը ամենագեղեցիկն է. աննկարագրելի» (Էջ 5), կը գրէ ան եւ քիչ մը անդին՝ «Փրկեցէք Փիւնի-

Քոլորն ալ կը մեռնին հայրենիքին համար, սակայն հայրենիքն է որ կը մեռնի քիչ մը եւս ամէն մէկուն հետ: Թեքեանի կատարածը այդ հայրենիքին ողբն է ձեռով մը, իր բաժինը, անոր հայ բնակիչին բաժինը, ինքն իր լեզուով գրելու անոր ողբերգութիւնը:

կեն»: Հայրենիքէ աւելի երազ մըն է, քիչ մը համատարած այդ օրերուն, որուն բնակիչները կը կոչուին Նասր, Մուսթաֆա, Համօ, Սահակ, Ռիմա, Տիկին Ճեմիլէ, Վահէ, Ֆրետերիք Պշարա, Պեռնար, եւն.: Իտէալ հայրենիք մը, բազմադէմ ու բազմախաւ, միայն թէ անոր բնակիչները չեն գիտեր թէ ինչու աջ եւ ձախ ռուսներ կը պայթին, մարդիկ կը մեռնին՝ երիտասարդ ու ծեր, երեխայ ու անտէր: Այո՛, հայրենիք: Ա՛յդ է ուժեղ գիծը այս պատմութիւններուն: Բոլորն ալ կը մեռնին հայրենիքին համար, սակայն հայրենիքն է որ կը մեռնի քիչ մը եւս ամէն մէկուն հետ: Թեքեանի կատարածը այդ հայրենիքին ողբն է ձեւով մը, իր բաժինը, անոր հայ բնակիչին բաժինը, ինքն իր լեզուով գրելու անոր ողբերգութիւնը: «Այս հատորը յուշարարն է մտքի սպանութեան», կը գրէ ան «Ներածական»ին մէջ ու կը շարունակէ՝ «նաեւ անշուշտ ծառացում մը», ու աւելի վար՝ «Գրութիւններէն մաս մը աշխատացուած են կատարեալ խաւարի մէջ, ուրիշներ՝ հագուագիւտ մոմի լոյսին տակ, բայց ամենէն աւելի՝ ահեղագոռ ռմբակոծումներու եւ հրդեհներու լայն բերաններուն դիմաց: Ինքնապաշտպանութեան ձեւ մը, հաւանաբար»: Հրատարակուած՝ 1977ին, չենք գիտեր որքան տպաքանակով կամ թէ ինչ եղած է անոր ճակատագիրը, սակայն 10 տարի տարի ետք՝ 1987ին, Թեքեան կը ձեռնարկէ երկրորդ տպագրութեան մը, հատորը եղածին պէս: Մեր ունեցածը այդ մէկն էր, Ասատուրէն կողքով:

Յաջորդը, լոյս տեսած նոյն տարին՝ 1987ին, կը կրէ *Նշանագիր* վերնագիրը եւ առաջին մասով ունի բանաստեղծութեան բաժին մը, որուն կը յաջորդէ արծակի ստուար բաժին մը, հատորին մէկ երրորդէն քիչ մը աւելի: Հոն կան երեք արծակ կտորներ, որոնք կը կրեն «Նշանագիր XIV», «... XIX», «... XXI» խորագիրները: Առաջինն ու վերջինը յարաբերաբար աւելի կարճ են եւ աւելի պատմողական, մէկը՝ Փարիզ, միւսը Նիւ Եորք տեղի ունեցող անցուդարձներով, մինչ մէջտեղինը՝ «Նշանագիր XIX» ամենէն երկարն է, կազմուած անջատ վերնագիրներ կրող մասերէ, ուր կը տրուին Հայաստան այցելուին զանազան խոկումներն ու նկարագրութիւնները, մեկնելով այցերէ կամ հանդիպումներէ: Երկար բաժինով մը կայ գրողին հանդիպումին դրուագը Յովհաննէս Շիրագին հետ, նախ նամակագրութեամբ, ապա՝ անձամբ: Յալիշտակութեամբ կարդացուող Էջեր են ասոնք՝ օրագրային, որ սակայն կը պարունակեն խանդավառութիւն մը գիրին հանդէպ որ վարակիչ է: Վարակիչ է որպէս գիրին հանդէպ սեր, բայց նաեւ որպէս տեղ ստեղծող գիր: Տեղը գրողին կեցած տեղն է, ուրկէ ան կը հանդիպի բանաստեղծի գործին ու անձին: Հետաքրքրական է, թէ Եղեռնի յիսնամեակի մթնոլորտին յաջորդող տարիներուն որքան մեծ եղած էր Շիրագի տաղերուն հմայքն ու տարածումը սփիւռքեան ոստաններուն մէջ, ուր գրողին գիրքերը պիտի ունենային բազմաթիւ հրատարակութիւններ ու հնչէին կանոնաւոր կերպով բեմերէ ու ռատիոժամերու ալիքներէ: Անոր տողերուն մէջ յայտնուող բանտուած Արարատի կարօտը կարծես կայծ կու տար իր աւաններէն աքսորուած սիրտերուն ու կը բռնկեցնէր այդտեղ կուտակուած թախիծն ու կարօտը: Հոն կայ նաեւ Վարդ-

զէս Պետրոսեանի «Յայկական Էսքիզներ» հատորին շուրջ անդրադարձը, մանաւանդ Պետրոսեանի որոշ մէկ արտայայտութեան հանդէպ, ուր ան որոշակի հեգնական կեցուածք մը ցուցաբերած էր Սփիւռքի մէջ ապրող եւ հին քարտէսներ երազող հայուն հանդէպ: Թեքեան կ'արտայայտէ իր ցասումը ընդդէմ այս Սփիւռքի վաւերականութիւնը արհամարհող խօսքերուն ու կեցուածքին: Գեղեցիկ տողեր են, որովհետեւ հոս կ'երեւի իր ճակատագիրը ստանձնած գրողին իսկական դէմքը պատմութեան ու կեանքին դիմաց: «Գոնէ դուն հիւրի պէս մի գար երթար: Ինքզինքդ ներս նետէ եւ յետոյ գրէ Էսքիզներդ», կը գրէ ան եւ ապա՝ «Դու պիտի գաս Յայաստան՝ ըսիր այդպէս, դիւրութեամբ: Դուն գիտես թէ ուրկէ եկայ ես հոս՝ եւ դուն հոն գացիր ուրկէ» (Էջ 116): Ահաւասիկ տեղը ուրկէ կը գրէ գրողը: *Ճեղքուած մանրանկար* հատորին մէջ այդ տեղը հայրենիք կոչած էր ան, հոս անոր կը յղուի որպէս «Յայաստանէն այս կողմ»: Գեղեցիկը գրողին մօտ հայութեան հանդէպ ջերմեռանդութիւնը այդ օրերուն Խորհրդային Յայաստանի քարտէսէն ներս չսահմանափակելն է: Կը նշենք այս գիծը այստեղ որովհետեւ վաւերական գրողին համար կարելոր է ոտքին տակ ունենալ հող, ունենալ տեղ, թէկուզեւ այդ հողն ու տեղը չգտնուին ներկայ Յայաստանի սահմաններէն ներս: Բայց պէտք է

Յաջորդ հատորով՝ *Տոմար*, լոյս տեսած 10 տարի ետք՝ 1997ին, Թեքեան կ'անցնի խոստովանական արձակի ու շատ մտերիմ շունչով կը պատմէ այս անգամ ի՛ր Պէյրութը:

ընդունիլ որ կը գտնուինք հողի մը վրայ որ մեր կեանքով կը դարձնենք բնակելի, գուցէ եւ հայրենիք: Բոլորս ալ գիտենք թէ ինչու եւ ինչպէս հոս հասանք: Սակայն արդէօք կը յիշե՞նք այդ բոլորը: Պիտի տեսնենք գրողին առճակատումը այս հարցին հետ աւելի ուշ:

Յաջորդ հատորով՝ *Տոմար*, լոյս տեսած 10 տարի ետք՝ 1997ին, Թեքեան կ'անցնի խոստովանական արձակի ու շատ մտերիմ շունչով կը պատմէ այս անգամ ի՛ր Պէյրութը: Կը սկսի Ամերիկայէն կամաւոր վերադարձած մեծ հօր կերպարով, որ կը մնայ Արեւելք, կը հաստատուի Պէյրութ ու կ'ամուսնանայ: Յոն շքեղօրէն կը գտնէք երազային Պէյրութը: Ծովուն եզերքը նստած քաղաքն է անիկա՝ հորիզոնը բաց ամէն կողմէ փչող հովերուն: Պատմութեան գրուած են 1977էն 1996ի միջեւ, այսինքն՝ թեւ կը սկսին անոր Պէյրութ կեցութեան վերջին տարիէն, սակայն մեծ մասը գրուած են 1978ին՝ ԱՄՆ փոխադրութենէն ետք, ուրեմն յետադարձ ակնարկով, որով նիւթերը ջախջախիչ կերպով կ'ամնչուին հեղինակի պէյրութեան տարիներուն: Թեքեան հոս կը կատարելագործէ մտերմիկը գեղեցիկին հիւստող սեփական լեզու մը, որ հատորին կու տայ իր իւրայատուկ շունչը: Ահաւասիկ պարբերութիւն մը:

Ճեփ-ճերմակ մագերը կիսաբոլորակ սարմայի պէս ծոծրակին փակցուցած, բոլոր փէշերը նոյն երկայնքով, ձգախեժէ ցած կրունկ կօշիկներով Օրիորդ Նոյեմին թուաբանութիւն կը բացատրէր. ըստ երեւոյթին՝ իր չամ-

բարած թուաբանութիւնը աւելի օգտակար էր քան ինչ որ կը սորվեցնէր: Վաթսուներկու տարեկանին առաջին անգամ ըլլալով ամուսնացաւ: Ծանօթները բացատրեցին պատճառը. «Ծերութեան որով պիտի դառնար խեղճը, եղբայրը իրեն պիտի հոգայ, թնձ, եղբայրը իր ընտանիքին հոգերը առեր նստեր է: Շատ լաւ ըրաւ, որուն ձեռք պիտի բանար աղջիկը»:

Բայց Օրիորդ Նոյեմին իր այս դաւը չլարած՝ մեր կարծիքն ալ առնելու էր, վնաս չունի որ նախակրթարանի չորրորդ կարգի աշակերտներ էինք: Նախ՝ յայտնի ալ չէր որ ուրիշ ուսուցչուհիներու նման՝ ամուրիի տագնապի խոր-խորատին մէջ ինկած էր. վեհանդորր ժպիտ մը ունէր, քայուածքը հանդարտ, մաշկը մաքուր, նայուածքը մեղմանոյշ. ինչ պիտի ընէր ամուսնութիւնը: Ամուսնացեր է եւ երեք ամիսէն Ամերիկայի մէկ անկիւնը՝ երկրորդ տիկին ասինչ պիտի կոչուի, ապագան պիտի ապահովէ եղեր, աս ձեւի կեանքը վերջ չունի եղեր: Ռ՛վ մեզի պիտի բացատրէր այդքան սիւթեմաթիք եւ անառարկելիօրէն, որ երկու անգամ երկու չորս կ'ընէ, երկու առաւել երկու ալ չորս կ'ընէ, երեք առաւել մէկ ալ չորս կ'ընէ, զէրօ առաւել չորս ալ չորս կ'ընէ, ո՛ր կողմէն դառնաս՝ ամէն բան չորս կ'ընէ:

Օրիորդ Նոյեմին շատ լաւ սորվեր էր թէ ինչ գործողութեամբ ալ զարնես գումարես բաժնես հանես՝ բանի մը գումարը ընդհանրապէս նոյնն է: Անոր համար՝ չմեկնած մեզի սկսաւ երգեր սորվեցնել անկասելի թափով: Մէկը չկրցաւ ըսել՝ «Օրիորդ Նոյեմին ամուսնացաւ», ամէնքը կ'ըսէին «Էրիկ մը գտաւ զնաց»: (Էջ 54)

Շատ համով ոճ մըն է եւ ծայրէ ծայր մեծ հաճոյքով կը կարդացուի: Տողերուն մէջէն ուրուագծուողը իր բնակիչներէն գողցուած քաղաքն է, քաղաք մը որ կ'ապրէր իր փառքի օրերը, այսինքն՝ կը գտնուէր ծաղկումի ու վերելքի իր գագաթնակէտին, ինչ որ փայլք մը կու տար մարդոց դէմքերուն՝ իբրեւ ինքն իր ճակատագիրը ստանձնած, ինքն իր հայութիւնը լիովի ապրող համայնք եւ գաղութ, Մերձաւոր Արեւելքի գոհարը նկատուող ոստանին մէջ: Ինչ որ ունինք այսօր այդ օրերէն, այսինքն՝ այդ քաղաքին հայկական օրերէն, վերակազմուած յիշողութիւն մըն է, գիրի, լուսանկարի եւ պատմուածի կուտակում, այնպէս որ Վեհանոյշ Թեքեանի Քանթարին եւ Էշրէֆիէն նոյնքան ներկայութիւն են հոն որքան ըսենք Գրիգոր Պըլտեանի Յայաշէնը կամ շուկաները:

Այս հատորին մէջ ինկած է նաեւ «Արեւմտահայերէնի վերջին ճգնաժամը» կոչուող գրութիւնը, նոյնիսկ սկիզբը դրուած, որ առաջին ականարկով տարօրինակ կը թուի հատորին մնացեալ պատմողական կտորներու կողքին, որով միակն է որ պատմուածք չէ: Իրականութեան մէջ սակայն ունի նմանութեան եզր մը անոնց հետ: Մինչ պատմուածքները կը պատմեն հեղինակին Պէյրութն ու անոր կորուստը, այս մէկը կու տայ լեզուին պատմութիւնը ու անոր կորուստը, փորձե-

«Արեւմտահայերէնի վերջին ճգնաժամը»

յով մատնանշել այդ կորուստին պատասխանատուները: Գրութիւն մըն է որ առաջին անգամ յոյս տեսած էր 90ականներու սկիզբը «Յորիզոն» շաբաթաթերթի «Գրական յաւելուած»ին մէջ եւ օրին պայթուցիկ տպաւորութիւն ձգած, իր ապշեցուցիչ յանդգնութեամբ ու պոռթկումով: Իրականութեան մէջ հալածող գրութիւն մըն է, իր անկեղծութեամբ ու ցասումով, որով տեսանելի կը դարձնէ ինչ որ բոլորս կը տեսնենք եւ որ սակայն կ'անգիտանանք: Ինչ կ'ըսէ անիկա: Մէկ նախա-

Մէկ նախադասութեամբ՝ օրն ի բուն կ'աւաղենք լեզուին հեռացումը մեզմէ, զայն վերագրելով պայմաններու բերման, մինչդեռ մենք ենք որ կը հեռանանք անկէ կամովին՝ կանոնաւոր կերպով ուրանալով անոր ապագան: Այս է իրականութեան մէջ Սփիւռքի բո՛ւն ողբերգութիւնը: Թեքեան հոս վերջ կու տայ սուտին: Թեքեան հոս վերջ կու տայ սուտին:

դասութեամբ՝ օրն ի բուն կ'աւաղենք լեզուին հեռացումը մեզմէ, զայն վերագրելով պայմաններու բերման, մինչդեռ մենք ենք որ կը հեռանանք անկէ կամովին՝ կանոնաւոր կերպով ուրանալով անոր ապագան: Այս է իրականութեան մէջ Սփիւռքի բո՛ւն ողբերգութիւնը: Թեքեան հոս վերջ կու տայ սուտին: Գրողը զանիկա կը զգայ առաջին գիծի վրայ, որով այդ հեռացումը լեզուէն՝ անոր լքումը՝

զինք կը դարձնէ թափանցիկ արարած, անտեսանելի եւ ուրեմն չգոյ: Գրողը կը շարունակէ անշուշտ իր ընթացքը, սակայն առանց լսողի, կարծես խօսէր երկինքին հետ: Ընդվզումի կողքին, Թեքեան կ'ուզէ պատմութեան համար արձանագրել հոս իրականութիւն մը, որ գերիվեր է գրողէն: Իրականութեան մէջ վերջաւորութեան արձանագրութիւն մըն է: Գրողը գոյութենական ու առօրեայ կերպով կը զգայ ատիկա իր գրչին իսկ տակ: Բոլորս կը զգանք, սակայն կը մերժենք ընդունիլ: Մինչդեռ եթէ ընդունէինք, զուցէ սկսէինք լսել այն կենդանի լեզուն որ կը խայտայ տակաւին մեր երեխաներու հագագներուն մէջ, զուցէ սկսէինք ընդունիլ զայն իբրեւ աշխարհի ստեղծող լեզու, փոխանակ նկատելու զայն կորուսած հայրենիքի մասունք ու սրբութիւն՝ արժանի կախուելու պատէն: Յարց տուէ՛ք դուք ձեզի թէ ո՞ր ազգը իր լեզուին այբուբենը կը կախէ պատէն իբրեւ սրբութիւն: Մեռածներուն նկարները կը կախեն պատէն: Իսկ մեզի համար ի՞նչ է այդ այբուբենը, եւ անով գրող անձը որո՞նք համար կը գրէ: Ինչ կ'ուզենք ընել այս լեզուով: Յարիւր տարի առաջ ճակատագրական խորտակումին յաջորդած էր վերապրելու անհաւատալի կամք մը, որմէ ետք անգտանելի միջոցներով մէկ սերունդի մէջ հաւաքաբար դարձած էինք հայախօս: Ըստ երեւոյթին այդ օրերուն գիտակցութիւնը կար թէ ինչ կ'ուզէինք ընել այս լեզուով: Այսօր աշխարհին լայնածաւալ միջոցները մեր տրամադրութեան տակ՝ կը պակսի կարծես գիտակցութիւնը:

Վերադառնանք սակայն գրութեան: Նոյն գրութիւնը մանր յաւելումներով կը գտնուի նաեւ վերջին հատորին մէջ, որ կը կոչուի *Խօսող լեռան պատմութիւնը*, յոյս տեսած 2015ին: Յատորը կը խմբէ զանազան առիթներով հեղինակին գրած

կամ խօսած խոհագրություններն ու ուսումնասիրությունները գրականության մասին: Գրություններ կան Մեծարենցի մասին եւ Տէրեանի, Վարուժանի, Թէթեանի, Ժագ Յակոբեանի, Մուշեղ Իշխանի, Կարապենցի, Մովսէս Պչաքճեանի, եւ այլն: Թէեւ գրություններուն տարեթիւերը կ'երկարին երեսուն տարիներու վրայ, սակայն ընթերցումը մէկ շունչով կը համախմբէ նիւթերու այլազանութիւն մը: Գրողին «ներսէն ըլլալու» հանգամանքը, ինչպէս կը խոստովանի ինք, այսինքն ինքն ալ գրող ըլլալու եւ իբրեւ գրող ուրիշ գրողներու արտադրութիւնը ընթերցելու հանգամանքը յաւելեալ գոյն ու լարում կու տայ գիրքին, հարազատութեան զգացում մը: Շատ յստակ է գրողին ներկայութիւնը, շունչը, նոյնիսկ սրտին բաբախումը ամէն մէկ տողի ետեւ, որով վարակիչ սէր ու գուրգուրանք կայ այդտեղ գիրքին ու մասնաւորաբար արեւմտահայ գիրքին հանդէպ: Նաեւ գրողին, Սփիւռքի մէջ ապրող գրողին, որ ամենէն աւելի անտեսուած «ապրանք»ն ըլլայ կարծես նոյնիսկ ու մանաւանդ անոնց մօտ որ ի պաշտօնէ կը բարբառին արեւմտահայերէնին ու անոր կորուստին կամ փրկութեան ի խնդիր: Հայ գրողին փորձառութիւնն է Սփիւռքի մէջ եւ ընդվզումը անոր տարիներու երկայնքին ապրած ապրումներէն:

Խօսող լեռան պատմութիւնը









Այս երկը կը հրատարակուի որպէսզի յետագայ ուսումնասիրողներու համար գոյութիւն ունենայ արձանագրութիւն մը, սեւով ճերմակի վրայ: Անհուն տխրութիւն մը, ամայութեան մէջ երկարաձգուող ճիչ մը, ամենէն առաջ վկայագիր մը որ տեսողական մակարդակի վրայ կը դնէ կեղծիքն ու պատեհապաշտութիւնը, ու պատմէ թէ ինչ պատահեցաւ փառաճանչ արեւմտահայերէնին եւ անոր հաւատացեալներուն: (Էջ xiii)

Աւելի անդին կը գրէ՝ «չենք գիտեր կարեւորութիւնը մեր գրողներուն. անոնք է որ կը զօդեն դարերը իրարու» (Էջ 189): Թեքեան խիստ խօսքեր ունի գրողը անտեսողներուն ու լռեցնողներուն հանդէպ: «Բարկացած եմ նպատակի մը համար» (192), կը գրէ ան ու ապա՝ «Գիտէ՞ք ինչու հալածուեցան՝ որովհետեւ իրենց անձը ուրացան եւ գրեցին ճշմարտութիւնը՝ զոր կը տեսնէին: Անոնք «պանծայի անցեալ»ը չերգեցին, այլ ներկան՝ իր սեւով ու մուրով, որովհետեւ այնքան սիրեցին իրենց ժողովուրդը որ տուին իրենց մտքի, հոգիի միաձինը անոր որպէսզի ան որ անոր հաւատայ՝ չկորսուի» (192):

Վեհանոյց Թեքեանի գիրքերն ալ ովասիսի նման են հայ գիրի ու բանի ծարաւով ապրող ընթերցողին համար...

Թախիծն ու ընդվզումը անհուն են, սակայն գրողին ոգին կը մնայ աննկուն: Ժագ Յակոբեանին ուղղուելով, ան կը գրէ. «Կեանքն անապատ մըն է, Ժա՛գ, երգը ովասիս կ'ընէ զայն» (98): Վեհանոյց Թեքեանի գիրքերն ալ ովասիսի նման են հայ գիրի ու բանի ծարաւով ապրող ընթերցողին համար ու մեր մաղթանքն է երկար կեանք եւ յարատեւ թարմ գրիչ քեզի՝ սիրելի Վեհանոյց Թեքեան:





ՄԻԻՌՈՆԻ ԵՒ ԱՍՏՂԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Մեծ հայրս վաթսուհինգ տարեկանին ամուսնացած էր Եղեռնին այրիացած երեսուն տարեկան մեծմօրս հետ, որ ունէր տասներկու տարեկան աղջնակ մը: Յաջորդ տարի ծներ էր մայրս, և հինգ տարի ետք – այո, հինգ տարի ետք – մօրեղբայրս: Այս իրողութիւնը մեծ հրճուանքով պատմեցի բանաստեղծ Աբրահամ Ալիքեանին, որ կը զարմանար թէ յիսունը անց ունեցեր էր իր վերջին մանչը: «Անցեալ դարուն բնական բաներ էին այս բոլորը», բացատրեց մայրս, «մարդիկ հիմակուաններուն պէս գէիս կեանք չէին վարեր»:

Եթէ Աստուած եղեմէն նմոյշ մը ձգած էր երկրի վրայ՝ անիկա մեծմօրս բնակարանն էր, արաբական Էշրէֆիէի լանջին, մարգագետիններով պարուրուած: Յողամասին ճիշդ մէջտեղն էր փոքրիկ տունը, երդիքը ամբողջութեամբ որթատունկով ծածկուած, ցանկապատը՝ թրթուռներով և թուփերով: Տան չորս կողմը ծառեր, նորաշխարհի ծառեր, նոնենիներ, ծիրանի ծառ, ձմեռնային տանձի ծառ, թուզի հըփ-հսկայ ծառ, սպիտակ թուփի ճիւղերի ծառ, անկիւնը բակի չափ հաւնոց, անոր ճիշդ կողքին՝ գոյգ պատուհաններով փայտանոց, ուրկէ տարին տասներկու ամիս հաւիկ-մամիկ մը դուրս կու գար իր նորածին ճուտիկներով. եւ անցնելով կարգապահ բանջարեղէններու թաղէն, առանց աջ-ձախ նայելու կ'ուղղուէր ուղղակի իր թաղը՝ հաւնոցը, ուր ճուտիկները անգամ ունէին իրենց ննջարանները: Փողոցին նայող ցանկապատը պատած էին յասմիկի թուփեր, եւ անոնց հպատակ՝ շուշաններու գլուխներ, վարդերու գոյներ, ազալիա և զամպագ, մեխակ ու ծաղիկէ զանգակ, ժամը ճիշդ չորսին բացուող ծաղիկներ, տարին մէկ անգամ ծաղիկ տուող թուփեր, բարեխնամ ծորակներ, թիթեղէ ցնցուղներ, եթերային թռչուններու երգեր ու հետքեր: Չոյգ աւազաններ կային, մէջը կարմիր ու ոսկի ձուկերով, եւ անոնց նուիրուած մեծմօրս երգերուն արծազանգներով: Այն ատեն դեռ «անպիտան կառավարութիւնը» պարտէզին լայնքէն վեց մետր չէր խլած՝ ճամբու շինութեան համար:

Ամառ է, գիշեր է. ընդարձակ թուփերով, դայլայլներով շրջապատուած նեղ բանեփային (loveseat պիտի ըսէին ամերիկացիները), սրճագոյնի երանգներով հինգած սաթէն-թաւիշի վրայ նստեր է մեծհայրս, ամուր սեղմեր է գիս կողքին եւ ... եղեմին մասին բացատրութիւն կու տայ: Օրինակ՝ կ'ըսէ որ եթէ այս եղեմէն կարենամ քառասուն տեսակ ծաղիկ հայթայթել, ինք երեք օրէն ինծի անուշահո-

տի էսանս կը պատրաստէ: «Էսանսը ինչ է»: «Դժուար է բացատրել, միմիայն ծաղիկի հիւթ է, առանց ջուրի. էսանսը շատ ժամանակ կ'առնէ, դիւրին չէ, մասնագետ պէտք է ըլլայ շինողը: Եթէ բանի մը էսանսը ունենաս, ըսել է անհկա խարդախուած չէ, ջուր խառնուած չէ»: «Միայն քառասուն տեսակ ծաղիկ», կ'ըսեն թեթեւցած այդքան դժուար էսանսին քով: «Քանի մը տեսակ ծաղիկով էսանս չի շինուիր, քառասունէն պակաս չ'ըլլար»: «Դուն կրնամ շինել, դուն», կը կրկնեն զարմացած: «Ես ամէն բան կրնամ շինել,– կ'ըսէ դրախտին տէրը,– ինչ կը սիրես ամենէն աւելի»: «Անուշահոտ», կ'երգեն քառասուն ծաղիկները արդէն մտքիս մէջ հաւաքած: «Եթէ շատ աշխատիմ,– կը մտածէ,– թերեւս մէկ օրէն ալ կրնամ շինել»:

Յետոյ մեծհայրս կ'ուզէ որ վերի աստղերը դիտեն: Բարակ վիզը ետեւ հրած, թորշոմած կոպերուն միջև գիշերային աւազանի պսպղուն նայուածքով կը հասնի աստղերուն. «Ո՛վ փայլուն պայծառ աստղեր»: Կ'երեւի աստղերը կ'առաջարկեն որ իր թռնուհիին ալ ժամանակ թողու անոնց հանդէպ իր հիացումը: Պայծառ լազուարթ է երկինքը, աստղերը ինկեր են անոր մէջը, մեծհայրս ձգեր է ձայնը, ես ալ կը կրկնեն ետեւէն. «Ո՛վ փայլուն պայծառ աստղեր, Արդեօք ինչ էք՝ չեն գիտեր, Երկնի վրայ կը պսպղաք, Ու ամենուն կը պլպլաք, Այբ Բեն Գիմ Դա Եչ Չա Է, Մինչեւ վերջը եւ Օ Ֆէ»:

Շատ շուտ տրվեցայ երգը որովհետեւ իւրացուցի հմայքը: Երկինքէն բան մը կը պսպղայ երկրի վրայ, կը պլպլայ անխտիր բոլորին վրայ: Մեծօրս երկար սրունքներուն վրայ նստեր եմ եւ անուշահոտ աստղերը կը դիտեն: Աս իմ աստղս է, ասիկա պապային աստղն է. երկրագունդին սահմանները ձգած՝ երկինքի աստղերը կը բաժնուինք: «Գիտէն, աստղերն ալ կ'իյնան կը մեռնին,– կը բացատրէ մեղմօրէն,– նայէ ինչպէս սահեցաւ այդ աստղը, նայէ միւսը, անդին նայէ», ան ալ ինկաւ, միւսն ալ ինկաւ կը զարմանամ, ետեւ-ետեւի շատ շատ աստղեր կը մեռնին հոսկէ հոսկէ: «Յիմա լաւ դիտէ, աս ամբողջ երկինքին մէջ որ աստղը կը սիրես ամենէն աւելի», կը հարցնէ մեծհայրս: Ամենէն փայլունը կ'ընտրեմ, փասփայլուն: «Ա՛ռ,– կ'ըսէ ավիս բանալով,– այդ աստղը ես հիմա ձեռքիդ մէջ կը դնեմ, անհկա քու աստղդ է, ուշադրութիւն ըրէ չկորսնցնես, ուրիշին չտաս, միմիայն քուկդ է»: Ու երբ աչքերովս տեսայ որ մեծհայրս ավիս մէջ դրաւ երկինքի ամենէն փայլուն աստղը՝ ձեռքս ամուր գոցեցի որ մէկէն աստղը չիյնայ:

Քանի մը տարի ետք ծերութեան միակ նշանը ալ ճերմակ մազերը չէին. զաւազանով կը քալէր, «ականջը ծանրացեր է» կ'ըսէին, հակառակ որ նոյն խոշոր ականջներն էին գլխուն երկու կողմերը: Նորէն պարտէզն ենք, այս անգամ հարաւային մասը, հոն ուր կանաչ սոխերը ցանուեր են. մեծօրս թոնիրը կայ, աղիւսէ ոտքերուն միջեւ կրակէ փայտերով: Լաւաշ հացին վրայ սոխերը ջարդած, հալլում պանիրը մանրած, եթէ իր ճերմակ մազերով՝ սեւ թոնիրի տաքութեան յանձնէ զանոնք, ակ եկուր դիմացիր...: Մեծհայրս ժուժկալ մարդ էր, բերնէն մտած

ամեն մեկ պատառին եւ ելած ամեն խօսքին ինքզինքին հաշիւ կու տար: Մանկապարտեզէն նոր շրջանաւարտ էի: Աւետարանական վարժարան յաճախելուն համար տարակոյս ստեղծուած էր մեծօրս մտքին մէջ, որ ահաւասիկ աստղերու մասին սորված երգերս չէր հարցներ, այլ ինչ «ազգային երգ կամ ոտանաւոր» գիտնալու: «Յայ եմ ես»ը գիտէ, անմիջապէս միջամտեց մօրաքոյրս և հրահանգեց ինծի.– Բառերը հատիկ հատիկ, կոնակո շիտակ, ոտքդ ամուր գարկ գետին:

Դիմացը կայնած սկսայ. «Յայ եմ ես, Յայ եմ ես, Սարսափեցէք իմ դէմքէս...», լայնցող ժպիտին հետ գլուխը վերուվար կը ճօճէր մեծհայրս, «Յայաստանը ազատող Քաջ Վարդանին թոռն եմ ես»: Մեծօրս ժպիտը կայծակի արագութեամբ մթազնեցաւ, և գաւազանը բարկութեամբ գետին զարնելով՝ «Դաշնակցականի թոռն եմ ես՝ կ'ըսէ», նայեցաւ շուրջիններուն: Մեծմայրս թոնիր-մոնիր ձգած մօտեցաւ – «Գէորգ, անանկ չ'ըսէր, Քաջ Վարդան կ'ըսէ», բացատրեց անոր: «Նորէն թող ըսէ տեսնեմ», ամփոփուեցաւ մեծհայրս, իր ճմռթկուած փեղկով խոշոր ականջները առջեւ հրելով: Սկսայ. «Յայ եմ ես... Քաջ Վարդանին թոռն եմ ես»: «Նորէն նոյնը ըսաւ, Դաշնակցականի թոռն եմ ես ըսաւ»: «Քաջ Վարդանը բարձր պոռալով ըսէ», հրահանգեց մօրաքոյրս: Յինգ վեց անգամ նորէն կրկնեցի, նորէն ականջները լարեց, ամեն անգամուն ալ բարկացաւ մեծկակ կապոյտ աչքերը ոլորելով կիններուն վրայ՝ «Ես խաղի չեմ գար հսն»:

Վերստին արտասանելու պատուէրին՝ պզտիկ խելքովս հնարք մը մտածեցի. երբոր կարգը Քաջ Վարդանին եկաւ՝ ամբողջ ոյժովս ոտքս գետին զարկի (բան մը որ աւելի մեղմ կերպով «Թոռն եմ ես»ին կը վերապահէի), հազիւ շնորայից կերպով աւարտած՝ մեծհայրս նոր վճիռ մը արձակեց. «Դաշնակցականի կ'ըսէ և ներշնչումով կ'ըսէ», բորբոքեցաւ: Այնքան սարսափած էի այս արարէն որ ժամ առաջ Դաշնակցականին ալ, Քաջ Վարդանին ալ սահմաններէն դուրս ելլել, օրօրոց նստիլ կը մտածէի. հազիւ շարժեցայ՝ մեծհայրս թեւէս բռնեց. «Դաշնակցական անունը բերանդ չառնես»: «Յայրիկ, ճիշդ չէ որ խեղճ չոճուխին ասանկ ըսես, աղջիկս ֆանաթիք պիտի չմեծնայ»: «Պիտի չերթայ մինչեւ որ ճիշդը սորվի,– վճռեց մեծհայրս,– անգամ մըն ալ արտասանէ»: Այս անգամ խոշոր ականջին առջև գետեղեցի կարճ հասակս և ամբողջ ոյժով գոռացի. «Յայ եմ ես, Յայ եմ ես, Սարսափեցէք իմ դէմքէս, Յայաստանը ազատող Յայ եմ ես, Յայ եմ ես», հայ ըլլալուս յայտարարութիւնը կատարեցի առանց այլևս Քաջ Վարդանին վիզէն կախուելու: «Յիմնմա եղաւ, լսեցիք, ճիշդ արտասանեց, օ՛ֆ», հանդարտեցաւ մեծհայրս եւ դատաւորի պէս գաւազանը գետին զարնելով հասկցուց որ կրնամ ուղղուիլ օրօրոց:

Այնքան սարսափեր էի Դաշնակցականին ինքնակոչ մուտքէն՝ Քաջ Վարդանի ծիրէն ներս, և անոր թեր ու դէմ լուռ ընտանեմարտէն, որ երբեք չհարցուցի թէ Դաշնակցականը ո՞վ է, ինչ ըրեր է որ մեծօրս ականջէն ներս կը մտնէ եւ այսքան կը փրփրեցնէ: Միայն «ներշնչում»ը և «ֆանաթիք»ը հարցուցի, մայրս բացատրեց թէ եթէ բան մը ամբողջ հոգիով կ'ընես ուրեմն ներշնչուած ես: Իսկ եթէ

ամբողջ հոգիով կը հաւատաս բանի մը և միտքդ չես գործածեր՝ ֆանաթիք կ'ըլլաս և շատ սխալներ կը գործես:

Տարիներով Դաշնակցականին ղվ ըլլալը, ինչ ըրածը չգիտցայ, մինչեւ որ հորենական մեծհայրս, այս մեծհայրս և իրենց տարեկիցները սկսան համախմբուիլ մեր տունը ամիսը, երկու ամիսը անգամ մը՝ այցելութեան նշանակեալ օրերուն. ու երբ իրենց կիները «ասդիէն-անդիէն» կը ճամէին, ասոնք մէկ նիւթի շուրջ կեդրոնացած էին – թէ ինչո՞ւ բաժան-բաժան եղաւ Յայաստանը: Թէ ինչպէս օտար ազգեր եկեր խռնուէր էին մեր հի՛ն ժողովուրդին աշխարհամասին մէջ և Արտաշէս Աշխարհակալի ժառանգորդներուն ձգեր էին հագիւ պատառ մը հող:

Աս սնանկութեան գլխաւոր պատասխանատուն Օսմանեան Կայսրութեան թուրքն էր, որ մեր պապենական հողերուն մէջ իր քիթը խոթած էր, եաթաղանն ալ հետը: Թուրքին դէմ կռուէր էին Դաշնակցականը, Յնչակեանը, Ռամկավարը. իսկ Յամայնավարները ըստ ոմանց՝ փրկած էին, ըստ միւսներուն՝ գերի բռնած էին Յայաստանը: Մինչ այդ՝ պատերազմէն անմիջապէս ետք Դաշնակցականները հախէն եկեր, շանսատակ ըրեր էին թուրք ոճրագործներուն էն մեծերը. այդ հայ հերոսները «ամերիկաները» կ'ապրէին հիմա, բայց մեր ծերերը գիտէին որ անոնց հոգին հանգիստ չէր պապամ, հանգիստ չէր: Ո՛վ որ էր սա Թուրքը՝ մեծհայրերուս խմած սուրճին չափ սեւ ըլլալու էր, խօսակցութեան չափ անվերջանալի, եւ ընդհանուր համաձայնութեան չափ՝ ոճրագործ-սրիկայ: Սատանայի պէս բան մը որ պլլուէր էր «մեր Քրիստոնէայ ազգին գլխուն», սպաններ էր իրենց քոյրերը, եղբայրները, ծնողքը, գիւղը, մանկութիւնը, ուրախութիւնը, եւ իրենք «դիպուածով» ազատեր էին, ինկեր էին «աս ափերը»:

Մեծհայրս Պուրսայէն անցած էր Եթովպիա, այնտեղէն Յիւսիսային Ամերիկա, իսկ վաթսուն տարեկանին երբ վաճառականութեամբ Պէյրութ կը գտնուէր, որոշեր էր հաստատուիլ «հայութեան մէջ»: Մեծ ու փոքր սեւ սնտուկներով գիրքեր ունէր, որոնց դեղնագոյն, յաճախ մաշած էջերու սիւնակներուն նօթեր հարեւանած էին, կամ գոյն գոյն մատիտներով ընդգծեր էր: Լուռ բարերար եղած էր Եւրոպա ուսանողներու, բայց մանաւանդ հաշմանդամներու, եւ իր պաշտպանեալներու նամակներն ու անոյշ խօսքերը գետեղած էր փոքր սնտուկին յատակը: Մեծ եռանդ ունէր իր կարծիքները պաշտպանելու «փաստացի տուեալներով»: Մերինները կը նեղուէին երբ հիւրերուն հետ վիճէր «անցած վերջացած հարցեր»ու շուրջ: Ամենէն աւելի կը վիճէր Կարօ Արմենեանին հօր հետ. «Դաշնակցական է, այդպէս կը մտածէ», կը մեղմացնէր մայրս, բայց մեծհայրս յաջորդ օրն իսկ փաստացի տուեալներ նօթագրած տետրակ մը եւս կը հասցնէր անոր խանութը:

Մեծ հաւատացեալ մը չէր մեծհայրս բայց Աստուծոյ հետ մեծ համաձայնութիւն մը ունէր: Ինիսուն տարեկան էր երբ քսան տարեկան զաւակը մեկնեցաւ Պելճիքա, Կանտի համալսարանը ելեկտրական երկրաչափութիւն ուսանելու: «Աստուծոմ ուզածս մէկ բան է, իրմէ նամակ մը առնեմ, գիտնամ որ լաւ է գոհ է տղաս, յետոյ մեռնիմ», ըսեր էր իր ընտանիքին: Երկուշաբթի կէսօր հասեր էր Տիգ-

րանին առաջին նամակը, մեծմայրս ծայրե ծայր երկու անգամ կարդացեր էր զայն «ահա սա՛ն արթոռին վրայ նստած», ապա մեծհայրս ամենայն քաղաքավարութեամբ «Էհ, մնաք բարով» ըսեր էր, պատին կողմը դարձեր էր, եւ... հոգին աւանդեր:

Իր աւանդածներէն քիչ բան մնաց յիշողութեանս մէջ, բայց կեանք մը լեցնող աւանդ մնաց: Շատ չտեսց՝ հասկցայ որ Էսանսը, օ՛ Էսանսը, քառասուն տեսակ փորձառութիւն կ'ուզէ Էութիւն շինուելու համար, ո՛չ մէկ օրէն կը շինուի, ո՛չ՝ երեք օրէն, բայց անգամ մը որ այդ Էսանսը շինեցի՝ ալ դուրս չելայ անխարդախէն: Եւ թէպէտ ոչ Դաշնակցականի թոռ էի, ոչ ալ Դաշնակցական եղայ, բայց որովհետեւ երազեցի ազատ ու անկախ հայրենիք մը, եւ հաւատացի ազգային ամենօրեայ պայքարի անհրաժեշտութեան, ունեցայ գաղափարի ընկերներ՝ որոնք այդ ծիրէն ներս էին: Դեռ պատանի՝ հասկցայ որ ներշնչումը ոտքը գետին զարնելով չ'ըլլար, այլ՝ անյայտ անկիւն մը ինքզինքիդ մէջ սուզուելով: Մեծ կարեւորութիւն չտուի ներշնչումին, բայց ինքը ինծի կարեւորութիւն տուաւ, իր կառկառուն քաղաքացին դարձուց: Իսկ աննման Սիմոն Սիմոնեանի Սփիւռքէն գատ, Դաշնակցական մամուլն է որ ոչ թէ արհամարհեց ու վարկաբեկեց, այլ առաջին օրէն գնահատեց ներշնչումի քաղաքացիութիւնս եւ հրաւիրեց որ իր մամուլին մէջ արտաշնչեմ: Յոն ալ երբեմն խեղդուեցայ, բայց Էսանսիս երբեք ջուր չխառնեցի: Եւ կեանքիս այս հանգրուանին կրնամ մարդկայնօրէն պարծենալ որ երբեք չքծնեցայ, անձնական շահերէ մղուած չխօսեցայ, աջէն ձախ, ձախէն աջ չդարձայ. գրողի կոչումս բարձր բռնեցի: Ազգապահպանում խաղցողները չսիրեցի, որովհետեւ անոնց դիմակը տեսայ, շատ՝ սրբազան նկատուած անձերու դիմակը տեսայ, եթէ հարկ եղաւ՝ ստախօսին ստախօս ըսի, կեղծաւորին՝ կեղծաւոր: Եւ թէպէտ օրերս լեղի եղան, բայց կեանքս անոյ՛շ բուրեց:

Յիշողութիւնը ունի անմեկնելի ճամբաներ տեղ հասնելու, ուղղութիւն փոխելու, առանց որ խորաբեմը փոխուի: Անցեալ օր երբ Ասպարէզի խմբագիրը հարցուց թէ՛ կ'ուզէի՞ որ աշխատակիցներու ցանկին մէջ դնէր անունս, ուրկէ ուր՝ յիշեցի առաջին հանդիպումս «Դաշնակցական» բառին հետ, եւ մտածեցի որ մեծ հայրս նոր օրերու լոյսին տակ՝ շատ գոհ պիտի ըլլար ժողովուրդիս ճակատագրին մաս կազմելու Էութենէս, այլեւս նոր «փաստացի տուեալներ» հաւաքած պիտի ըլլար, եւ պիտի չբողոքէր եթէ Քաջ Վարդանին փոխարինէր Դաշնակցականը: Թող Յայաստանը ազատողը Քաջ Վարդանը ըլլար, Ռամկավարը ըլլար, Յնչակեանը ըլլար, Դաշնակցականը ըլլար, որոնն թոռը ուզէր՝ թո՛ղ ըլլար, կ'ուզէր՝ թող սարսափեցնէր իր դէմքով, կ'ուզէր՝ թող սարսափեցնէր իր քաղաքականութեամբ, միայն թէ ... ազատէր Յայաստանը իր ներքին եւ արտաքին թշնամիներէն, միայն թէ՛ մեր սուրբ Արցախը օտար պետութիւններու խաղալիք չմնար, Յայոց պատմութիւնը միշտ վիրաւոր չմնար...

Իսկ ամառնային այդ գիշերուան լուսածորուն երգը մինչեւ հիմա կը մնայ ամենէն ներոյժ բանաստեղծութիւնը: Եթէ մանկութեան դրախտին մէջ այդքան

չհմայուէի, եթէ աննկարագրելիօրէն հրապուրիչ, անդրերկրային չըլլար բանաստեղծութեան հետ առաջին հանդիպումս՝ ինչպէս պիտի փնտռէի բանաստեղծութեան աստղայնութիւնը, եւ մանաւանդ ինչպէս պիտի ճանչնայի անոր միւռոնը: Ո՛վ փայլուն պայծառ աստղեր, արդեօք ի՞նչ էք՝ չեմ գիտեր: Մինչեւ հիմա ալ, իսկական բանաստեղծութենէ մը քառասուն տեսակ ծաղիկի բոյր կ'առնեմ, երբեմն պահէն գինովցած, երբեմն թոշնած, երբեմն կոխկոտուած ծաղիկներ, բայց անոնց էութենէն անկարելի է չգրաւուիլ:

Իսկ փայլուն աստղերը – երբեմն գիտցայ որ պայծառ են, երբեմն չգիտցայ. աստղ կարծեցի՝ փայլուն ածուխ դուրս եկան: Բայց ամէն անգամ որ վեր նայեցայ, արեւելեան լագուարթ երկինքին ճիշդ կեդրոնը դրախտի նման պարտեզ մը տեսայ, որուն սաթէնէ քանեփային վրայ դեռ նստած գտայ մեծհայրն ու թոռնուհին: Տեսայ որ անոնք տիեզերքի բարդութիւնը ձգած՝ կը խաղային փայլուն աստղերուն հետ, ամէն օր զանոնք կը բաժնէին իրենց մօտիկ ու հեռաւոր հարազատներուն, եւ կը հրճուէին որ աստղերը միայն երկնի վրայ չեն պսպղար, այլ ամենո՞րն կը պլպլան: Այդ աստղերը թէ լուսեղէն ճրագներ են մարդկային հոգիէ փրթած, և թէ Այբուրբենի բոցեղէն խորհուրդներ:

Այս տարիներուն, երբ շատ դառնանամ այժմու հայ գրականութեան մշակներուն հանդէպ եղած պատմական արհամարհանքէն՝ անոր պահակներուն իսկ կողմէ, անկիւն մը կը քաշուիմ եւ կը բանամ ափս: Մեծօրս տուած աստղը, այդ ամենափայլունը, կը ժպտի ինծի: Առաջ հրճուագին կը ժպտեր, հիմա թախիծով կը ժպտի: Եթէ նոյնիսկ ափս լայն բանամ՝ ան նոյն հմայքով կը պսպղայ ու չի խախտիր տեղէն: Ան մաս կը կազմէ ձեռքիս, այլեւս ձեռքես դուրս չ'իյնար: 🐦

Տոնիստ

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՃՈՅՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՆՍԵԱՆ

Խօսող լեռան պատմությունը հատորը¹ ի մի կը բերէ Վեհանոյշ Թեքեանի գրական խոհագրութիւններու շարք մը, գրուած՝ երեք տասնամեակներու ընթացքին (1984-2015): Յեղինակը իր հայեացքը սեւեռած է Սփիւռքի վրայ, ու այդ նպատակով՝ տարբեր ժամանակներու գրուած ու տարբեր դեմքերու նուիրուած յօդուածները շարայարուած են ըստ յստակ ծրագրի: Առաջին ու վերջին խոհագրութիւններն ալ տարբեր ձեւերով, թէեւ ակնյի հրապարակագրական ոգիով (երբեմն՝ “J'accuse”² ի մակարդակով), կը շօշափեն սփիւռքեան օրինավիճակի հիմնագոյն խնդիրներէն մէկը՝ արեւմտահայերէնի հարցը, զայն առնչելով թէ՛ այդ օրինավիճակի գրական արտայայտութեան եւ թէ՛ այդ գրական արտայայտութեան կաշկանդումին ու անտեսումին հետ՝ անոր իսկ ծնունդ տրուող հանրութեան եւ զայն առաջնորդելու կոչումով ապրող հաստատութիւններու կողմէ:² Անոնց տեղադրումը նոյնպէս «ազգամովարական» նշանակութիւն ունի հեղինակային միեւնոյն ծրագրին մէջ:

Արդարեւ, տարբեր ուսումնասիրութիւնները իրարու ազուցուած են սերունդներու հերթափոխութեան գաղափարով եւ, գոնէ մասնակիօրէն, հեղինակի նախասիրութիւններով կամ հետաքրքրութիւններով: Նախ կու գան արեւմտահայ վերջին սերունդի սփիւռքեան նախահայրերը՝ Միսաք Մեծարենց, Վահան Թեքեան, Դանիէլ Վարուժան, որոնց կողմնակի կերպով կը կապուի արեւելահայ Վահան Տէրեանը՝ Մեծարենցի հետ գուգակչիոյ մը ճամբով: Այնուհետեւ՝ այդ սերունդին «դասական» երկարածգումը Սփիւռքի մէջ՝ յանձինս Մուշեղ Իշխանի եւ Ժագ Ս. Յակոբեանի, եւ վերջապէս՝ ժամանակակից շրջանը, ուր կը տեսնենք ամերիկահայ գրականութեան 1960-1984 շրջանի ուսումնասիրութիւն մը, երկու արձակագիրներու՝ Յակոբ Կարապետցի ու Մովսէս Պչաքճեանի նուիրուած գլուխներ, եւ սփիւռքեան բանաստեղծութեան մեկնաբանութեան փորձ մը:

Այստեղ կ'արժէ վեր հանել տարբեր էջերու մէջ առաւել կամ նուազ ընդարձակութեամբ Սփիւռքի գրականութեան (բայց նաեւ սփիւռքեան իրավիճակի)

¹ Վեհանոյշ Թեքեան, *Խօսող լեռան պատմությունը*, Միացեալ Նահանգներ, Վեհարթ հրատարակչատուն, 2015, 201 էջ: Այնուհետեւ՝ բոլոր մէջբերումները պիտի յղուին այս հատորի էջերուն:

² Բերելով Յակոբ Օշականի, Կոստան Չարեանի եւ Չապէլ Եսայեանի անտեսման օրինակները, հեղինակը կը գրէ. «Պատմությունը կը փորձէ սորվեցնել մեզի թէ մենք չունինք մեծերու փաղանգ մը, որ անոնցմէ մէկ երկուքին կորուստը աղէտայի հետեւանքներ չունենայ մեր վրայ, մենք իրաւունք չունինք կոխկռտելու մեր յուսասփիւռ գրողները, անոնք շա՛տ հազուադէպօրէն կը ծնին» (էջ 190):

հիմնական հարցին՝ օտարը դիմագրաւելու խնդրի մասին կատարուած դիպուկ նկատողութիւններ, որոնք թերեւս կրնային նիւթը դառնալ առանձին ուսումնասիրութեան մը: Յատկապէս պէտք է նշել Թեքեանի ամերիկահայ գրականութեան վերջին յիմնամեակի համապատկերային ներկայացումին այն դիտարկումը, թէ «վերջաւորութեան՝ հայ հեղինակը անպայման, թերեւս ենթագիտակցաբար, կը մեռցնէ օտարը...: Ուրեմն օտարը կ'ընդունուի ու կը հեռացուի միաժամանակ, երբ կեանքը զայն մեզի կը կապէ ամէն օր» (Էջ 130):

Եթէ ընթերցողը այս գիրքին մէջ խորասուզուի՝ այսպէս ըսած գիտական ուսումնասիրութեան մը ակադեմական բարիքները քաղելու յոյսով, բնականաբար սխալ ճանապարհէ մը ընթացած պիտի ըլլայ: Պէտք է ընդգծել, որ Վեհանոյշ Թեքեան, որ լայնօրէն կը տիրապետէ իր շօշափած հեղինակներուն ու նիւթերուն եւ նաեւ՝ անկասկած, օտար գրականութիւններու ընթերցումէն բխած բաղդատական կարելիութիւններու, «գրականագետ» չէ՝ բառի այն իմաստով, որ սովորաբար կը կցուի գրականութեան ակադեմականներու, եւ անշուշտ, վերջին-

ներուս կողմէ ընկալուող պիտակով, այնպէս ինչպէս մօտ երկու տասնամեակ առաջ սպանացի փիլիսոփայ Խոսէ Օրթեկա ի Կասեթի եւ ֆրանսացի քննադատ Ռոլան Պարթի գործերը ընկալուած են՝ անոնց արեւելահայերէն թարգմանութիւններուն առիթով. «Նկատեմ, որ վերոյիշեալ հեղինակների գրքերը *եսսէ*ներ են եւ ի հարկէ չեն կարող յաւակնել հարցադրումների ակադեմիական գրուածքի եւ հանդուրժում են երեւոյթների քննարկման *սուբյեկտիւ*, ինչ-որ տեղ

...տարբեր գրողներու աշխարհին մէջ Վեհանոյշ Թեքեանի թափանցումները ո՛չ միայն քիչ կամ չնկատուած ճանապարհներ ցոյց կու տան կարգ մը պարագաներու, այլեւ՝ հիւթեղ լեզուով անոնց բանաձեւումները ընթերցողին կը պարզելեն գեղագիտական այն հաճոյքը, որ զինք պիտի մղէ այցելելու կամ վերստին այցելելու տուեալ անունի մը գործը.

հետաքրքիր ու գրաւիչ՝ որպէս անհատական ճաշակի արտայայտութեան, սակայն կասկածելի՝ *օբյեկտիւ*-գիտական գնահատման տեսակէտից»:³ Բայց կը կարծենք, որ տարբեր գրողներու աշխարհին մէջ Վեհանոյշ Թեքեանի թափանցումները ո՛չ միայն քիչ կամ չնկատուած ճանապարհներ ցոյց կու տան կարգ մը պարագաներու, այլեւ՝ հիւթեղ լեզուով անոնց բանաձեւումները ընթերցողին կը պարզելեն գեղագիտական այն հաճոյքը, որ զինք պիտի մղէ այցելելու կամ վերստին այցելելու տուեալ անունի մը գործը. «Եւ եթէ Լեզուն մեր գիտակցութիւնն է, ուրեմն գրականագիտութիւնը այն արուեստն է որմով կարելի կ'ըլլայ հասնիլ գիտակցութեան ենթախորքը» (Էջ xii):

³ Սերգէյ Սարինեան, «Անդրադարձ-1 հայոց նոր գրականութեան վերագնահատման հարցին», *Գրական թերթ*, 2 Յունիս 2000, էջ 6:

Շատ դիւրին է գրագետի մը՝ ուրիշ գրագետի մը նուիրուած ակնարկը կամ ուսումնասիրութիւնը *դիլետանտիկ* նկատել եւ անոր դերը լրիւ անտեսել՝ բոլոր «իզմ»երէն առաջ ու անոնց գուգահեռ, գրականութեան խորհուրդը (չարչրկուած բառերու ցուցակի մը թեկնածուներէն մէկը, կ'ընդունինք) ընթերցողին բացայայտելու գործին մէջ: Ի վերջոյ, ինչ է գրական գործի մը ծայքերուն թափանցելու որեւէ փորձ, եթէ ոչ սեփական ընկալումով լուսամուտ մը բանալ ընթերցողին՝ այդ գործը աւելի եւս ըմբռնելու ուղղութեամբ: «Փիլիսոփայական չորս մեծ տարածքներ՝ *Էպիստենցիալիզմ*, մարքսիզմ, հոգեվերլուծութիւն, կառուցուածքաբանութիւն» ընդունողներն անգամ «քննադատութեան *հումանիտար* մեթոդներ»⁴ պարտադրաբար պիտի կիրարկէին ենթակայական ընկալումով: Այլապէս, այն ակադեմականը, որ խորհրդային ժամանակաշրջանին գրած էր, թէ «քննադատութիւնը գիտական է դառնում մարքսիստական *սոցիոլոգիայի* եւ փիլիսոփայութեան հիմքի վրայ, որը բանալի է տալիս բացատրելու գրական երեւոյթների, ուղղութիւնների, ոճերի ծագման ու զարգացման *օբյեկտի* պատմական օրինաչափութիւնները»,⁵ իսկ անկախութեան առաջին տարիներուն կը համարէր, թէ «չի կարելի նրանց նեղմիտ ձեւով մարքսիստ գրականագետներ համարել եւ արժեզրկել նրանց գործը», պատճառաբանելով, որ հայրենի գրականագետները՝ Մարքս, Էնգելս եւ Ստալին կարդալու կողքին, նաեւ կարդացած էին դասական եւ արտասահմանեան գրականագիտութիւն,⁶ ի՞նչ հիմքերու վրայ պիտի գար պնդելու՝ հազիւ հընգամեակ մը ետք, որ «ազգային չափանիշ հասկացութիւնը տեղայիններփակ մակարդակ չէ, այլ գեղագիտական ու պատմական *կամեզորիս*, որ համարժեք մեծութիւն է, այսպէս կոչուած, համաշխարհային չափանիշի հանդէպ»,⁷ եթէ ոչ ենթակայական մօտեցման:

Երբեմն Վեհանոյշ Թեքեանի յօդուածները ծնունդ առած են յրելեաններէ (Վարուժան, Տէրեան, Մեծարեանց), երբեմն՝ այս կամ այն գրագետին նուիրուած ժողովածուներէ (Թեքեան), երբեմն ալ՝ ժամանակակից հեղինակներու նոր լոյս տեսած գործերէ (Կարապենց, Պչաքճեան): Բայց, առհասարակ, նոյնիսկ երբ

Հեղինակը իր լեզուական շնորհքն ու գրական հոտառութիւնը գիտէ բանեցնել՝ բոլոր իր փորձագրութիւններուն մէջ ըսելիք մը յառաջ բերելու, ուր թարմ ու խորհրդածութեան առիթ տուող տարրեր անպակաս են:

⁴ Անդ:

⁵ Սերգէյ Սարինեան, «Ներածութիւն», տե՛ս *Յայ քննադատութեան պատմութիւն*, հատոր Ա., Երեւան, 1985, էջ 8:

⁶ «Գրականութեան ճակատագրով մտահոգուած. ասուլիս ԳԱ գրականութեան ինստիտուտում», *Նպաստակ*, Մարտ 1994, էջ 2:

⁷ Սերգէյ Սարինեան, «Անդրադարձ-2 հայոց նոր գրականութեան վերագնահատման հարցին», *Գրական թերթ*, 9 Յունիս 2000, էջ 5:

տուեալ գրութիւն մը որոշ պարագայի մը կրնայ ծնունդ առած ըլլալ, պարագայականութենէ չի տառապիր: Յեղինակը իր լեզուական շնորհքն ու գրական հոտառութիւնը գիտէ բանեցնել՝ բոլոր իր փորձագրութիւններուն մէջ ըսելիք մը յառաջ բերելու, ուր թարմ ու խորհրդածութեան առիթ տուող տարրեր անպակաս են:

Մնացեալը՝ արդէն, խօսող լերան պատմութեան ծանօթանալու հարց է: 🐦